

Ցանկ

Աստուածաբանություն և կրօնների ընդհանուր պատմություն:.....	2
Կրօնի էությունը փիլիսոփայական տեսակետից: (Ըստ Ռուդոլֆ Օիկեի):.....	6
Հին Կտակարանի մնայուն նշանակությունը:	13
Բերթոլետ Ալֆրեդ: - Քրիստոնեություն եւ բուդդայականություն:	24
Պաուլ Սէն Ֆրիդրիխ: - Հեզնությունը Յիսուսի գրութեան եւ խօսքի մէջ:	36
Նաուման Ֆ. :- Հողի վաշխառությունը: (Քարոզ: Փոխադրեց Ե.վ.)	43
Նաուման Ֆ.: - Պիղատոսը: (Քարոզ):.....	45
Նաուման Ֆ.: - Մեծամասնութեան վճիռը: (Քարոզ):	47
Նաուման Ֆ. – Կրօնական ճշմարտություն:	49
Բաբելոն և սուրբ գիրք:	50
Յիսուսի Կեանքն ու Գործունէությունը:	65
Հին Հունական և Միջնադարյան Քրիստոնեական Փիլիսոփայության ատմություն, անտիպ	121
Փիլիսոփայություն.....	133

ԱՍՏՈՒԱԾԱՆՈՒԹԻՒՆ և ԿՐՕՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Արարատի մայիս-յունիս համարի առաջնորդողում Կ. Վ. նպատակ է դնում պարզաբանել պատմական տեսակետից քրիստոնեության իսկությունը, նրա էականն ու մնայունը՝ ծանօթացնելով պրոֆ. Հառնակի «Քրիստոնեության իսկությունը» գրքի հետ, որ շատ անտեղի և մոլեռանդ յարձակումների ենթակայ եղաւ և, դեռ մի տարի չլրացած՝ արդէն 5 հրատարակություն է տեսել, մօտ 25000 օրինակ տարածուած է:

Մի այլ կարևոր վէճ, որ բաւական ժամանակ է տևում է, արժանի է նոյնպէս ոչ պակաս ուշադրութեան, մանաւանդ որ վերև յիշուած խնդրի հետ սերտ կապ ունի, Կ. Վ.-ի դրած խնդիրը մի այլ կողմից պարզաբանում է և նոյն պրոֆ. Հառնակի մի ուրիշ նորագոյն գրուածքի նիւթ է դարձել: Դա իսկապէս մի կենսական խնդիր է աստուածաբանութեան համար. ամէն կողմից վաղուց ի վեր լսելի են ձայներ, նշանաւոր գիտնականներ անգամ (Պաուլ դ'Լագարդէ) գոչել են և գոչում են. «Աստուածաբանական ֆակուլտետն այնպէս ինչպէս որ նա այժմ կայ, իրաւունք չունի միւսների կողքին գոյութիւն ունենալու. նրա շրջանը խիստ սահմանափակ է, նա կամ պէտք է փիլիսոփայական ֆակուլտետին միանայ, կամ՝ ընդհանուր կրօնների պատմութեան ֆակուլտետ դառնայ (Allgemeine Religionsgeschichtliche Facultät), որի մէջ բուդդայականութիւնը, մահմեդականութիւնը և այլ կրօններ նոյնչափ ուսումնասիրութեան նիւթ պիտի լինեն, նոյնչափ դասախօսուին, որչափ քրիստոնէականը»: Աւելի չափաւորները պահանջում են միայն մի կամ մի քանի ամբիոն աստուածաբանական ֆակուլտետում յատկացնել ընդհանուր կրօնների պատմութեան: Յայտնի է, որ այս շարժումները պատճառ դարձան Հոլլանդիայում աստուածաբանական ֆակուլտետների վերացնելուն. այլ երկիրներում, օրինակ Ֆրանսիայում, սպասւում է նոյնը, որից երևում է որ խնդիրը լուրջ կերպարանք է ստանում:

Այս խնդրի մասին պրոֆ. Հառնակ մի ճառ խօսեց օգոստոսի 3-ին Բերլինի համալսարանում, իբրև համալսարանի այժմեան տեսուչը¹, որ 5 օրուայ մէջ արդէն տպագրուած հազարաւոր օրինակներով տարածուում էր. ճառի վերնագիրն է. «Աստուածաբանական ֆակուլտետների նպատակը և ընդհանուր կրօնների պատմութիւնը»²:

Հառնակ նախ մէջ է բերում համառօտ կերպով հակառակորդների 3 հիմքերը. *ա*. կրօնները ներկայացնում են մի սանդուխք, ասում են նոքա, այդ պատճառով անհրաժեշտ է բոլոր աստիճաններն ուսումնասիրել, բոլոր կապակցութիւնները պարզել, այն միջոցներն ըմբռնել, որոնցով ազգերը կրօնը բարձրացնել են ձգտել: Այս տեսակետից կարող է շատ իրաւացի թուալ պահանջը և

¹ Գերմ. համալսարաններում, ինչպէս յայտնի է, տեսուչը մի տարով է ընտրուում, հերթով, այս կամ այն ֆակուլտետի ուսուցչապետներից:

² Die aufgabe der theologischen Facultäten und die allgemeine Religionsgeschichte. A. Harnack. Giessen. 1901:

միայն մի կրօնով զբաղուելը մի անհմաստ կրճատումն: Բ. Բոլոր կրօնները կարելի է միմիայն միևնույն պատմագիտական եղանակով ուսումնասիրել, որ կամայականօրէն կրճատուելու ենթակայ չէ. ինչպէս որ այդ պատմագիտական եղանակը ոչ մի ժամանակական սահման չէ ճանաչում, այնպէս էլ անցնում է մի ազգակից նիւթից դէպի միւսը, առանց որևէ ստիպման. նա չի ճանաչում առանձին առանձին անդամներ, այլ միայն կապակցեալ միութիւններ, շղթաներ: Քրիստոնէութիւնն ևս նոյն եղանակով պիտի ուսումնասիրել, ուրեմն կապակցուած միւս կրօնների հետ: Գ. Վերջապէս, հեթանոսների մէջ առաքելութեան գործը կատարելու համար նոյնպէս խիստ կարևոր, մինչև իսկ անհրաժեշտ է բոլոր հեթանոսների կրօնները հիմնովին իմանալ, ուսումնասիրած լինել: -Ահա այն երեք գլխաւոր հիմունքները, որոնց պահանջմամբ այժմեան աստուածաբանական ֆակուլտետները պէտք է վերացնել և ընդհանուր կրօնների մի ֆակուլտետ կազմակերպել:

Կաշխատենք այժմ, Հառնակին հետևելով, շատ անգամ բառացի թարգմանելով, ցոյց տալ յիշեալ երեք առարկութիւնների սխալ լինելը և այն հիմունքները պարզել, որոնց համաձայն աստուածաբանական ֆակուլտետը պիտի կազմակերպած լինի այնպէս, ինչպէս ներկայումս:

Ամէնից առաջ պէտք է ի նկատի ունենալ, որ որևէ ազգի կրօնի ուսումնասիրութիւնը ամենամեծ դժուարութեամբ կարելի է, մինչև իսկ անհնար է, բաժանել նորա պատմութիւնից, որի մէջ մտնում են լեզուն, գրականութիւնը, ընկերական և քաղաքական դրութիւնը:

Միայն կրօնը իբրև մի առանձին ամբողջութիւն ուսումնասիրելը կլինէր մի այնպիսի պարզամտութիւն, ինչպէս օրինակ ամբողջ բոյսի փոխարէն, նորա արմատը կամ կատարը միայն ուսումնասիրել: Ի՞նչպէս կարելի է օրինակ մի ազգի կրօնը առանց նրա լեզուին ուսումնասիրել. չէ՞ որ մասամբ լեզուն է կրօն ստեղծում, և լեզուի պատմութեան մէջ է արտացոլում կրօնի պատմութիւնը: Ոչ ոք չէ կարող ուրանալ, որ մի ազգի քաղաքական դրութիւնը նրա կրօնական գաղափարների և ծէսերի կազմակերպութեան համար վճռական նշանակութիւն է ունենում: Պէտք է ուրեմն աստուածաբանական ֆակուլտետը զբաղուէ՞ ընդարձակօրէն լեզուաբանութեամբ և պատմութեամբ, ուրիշ խօսքով այն, ինչ որ փիլիսոփայական ֆակուլտետի գործն է, պէտք է այն աստուածաբանութիւնը կատարէ, և վերջապէս մի՞թէ այն ժամանակ աստուածաբանական ֆակուլտետը խիստ ընդարձակ չէր լինի: Իսկ եթէ այդտեղ միայն կրօնների պատմութեամբ, առանց լեզուի և պատմութեան, զբաղուել է առաջարկուում - դա ոչ թէ գիտութիւն կդառնայ, այլ անօգուտ դիլետտանութիւն: Առանց այն էլ աստուածաբանութեան սահմանը բաւական ընդարձակ է և, եթէ աւելի ընդարձակուի, նա չպիտի կարողանայ այլ ևս իւր պարտաւորութիւնները հեշտութեամբ ու լաւ կատարել, այն ինչ այժմ Յոյն և Եբրայական լեզուաբանութեան հետ սերտ կապուած, այլ կրօնների յարաբերութիւնը քրիստոնէութեան հետ պարզելով այնքան, ինչքան կարևոր է, և կրօնական ու պատմական հետախուզութիւնը միաւորած պահելով՝ նա ոչ մի պատմական գիտութիւնից յետ չէ

մնում: Ընդհակառակը, վստահորեն պնդել կարելի է, որ նա իւր սահմանում իրեն ազգակից գիտական դիսցիպլինների համար օրինակելի գործեր է կատարել:

Ուսումնասիրութեան պատմական եղանակի կամայական կրճատման, միայն մի կրօնով զբաղուելու մասին խօսք լինել չէ կարող. որովհետև այս այն կրօնն է, որի սեպհականութիւնը ս.Գիրքն է, որի պատմութիւնը անընդհատ 3000 տարի է բովանդակում իւր մէջ, որը այսօր ևս իբրև *կենդանի* կրօն ուսումնասիրուել կարող է: Նա այնպէս է գերազանցում այս բոլորով բոլոր մնացած նման երեւոյթներից, որ մարդ համարձակ ասել կարող է. ով այս կրօնը չէ ճանաչում, նա ոչ մի կրօնի ծանօթ չէ, իսկ ով այս կրօնը իւր պատմութեամբ հանդերձ գիտէ, գիտէ բոլոր կրօնների պատմութիւնը: Ամէնից առաջ նրան է պատկանում ս.Գիրքը - այդ Հին դարերի, Միջին դարի և դեռ այսօրուայ, թէև ոչ հրապարակի վրայ, ինչպէս առաջ, գիրքը: Ի՞նչ են Հոմերոսը, Վեդաները և Ղուրանը ս.Գրքի հետ համեմատած, որի բովանդակութիւնը անհատնելի է, որից իւրաքանչիւր դար իրեն կարևոր մի նոր կողմ է գտել և որ այսօր դեռ այնքան նոր է, որքան հազարաւոր տարիներ առաջ:

3000 տարուայ պատմութիւն է այստեղ թագնուած. ի հարկէ թուերն ըստ ինքեան շատ բան չեն նշանակում. Եգիպտոսը, Հնդկաստանը և Չինաստանը կարող են աւելի երկար ժամանակից խօսել. տարբերութիւնն այն է, որ այստեղ կրօնի պատմութիւնը մի և նոյն ժամանակ ամբողջ պատմութիւնն է ներկայացնում: Հին Կտակարանի կրօնը սկիզբ է առնում իբրև մի միամիտ ազգային կուլտ և աստիճանաբար զարգանալով Սաղմոսերգուի կրօնը դառնում: Ով որ այս զարգացումը հետախուզելով, քրքրելով, խորը մտածելով և իսկապէս պատկերացնելով ուսումնասիրել է, նա այլ ևս կարիք չունի այլևայլ կրօններ ուսումնասիրել իմանալու համար, թէ ինչպէս է զարգանում կրօնը, և կրօնի պատմութիւնը ինքն ըստ ինքեան պարզ կլինի նորա համար: Այս կրօնի պատմութիւնը կարող է միւսների տեղը բռնել, մինչև անգամ աւելին կասենք՝ ո՛չ թէ աստուածաբանը կարիք ունի մի կրօնների պատմաբանի, այլ սա նորան: Հին Կտակարանի կրօնի պատմութիւնը հասկանալի է կացուցանում միւս կրօններին վերաբերեալ շատ և շատ խնդիրներ, որոնք առանց նորան անլուծելի կմնային: Այս կրօնի պատմութիւնը լեզու է տալիս անցած գնացած հին կրօնների աւերակներին և նրանց արձաններին կյանք ներշնչում:

Բայց այս բոլորը դեռ միայն նախապատմութիւնն է. նոր հանդէս են գալիս Նոր Կտակարանն ու քրիստոնէութիւնը: Սա կրօնի պատմութեան երկրորդ աստիճանն է, որի վրայ բոլոր հին երևոյթները զարմանալի կերպով կրկնուում են: Վերցրէք օրինակի համար արևմտեան կաթոլիկութիւնը միջնադարի հետ միասին և քննեցէք ուշադրութեամբ. դուք կգտնէք, որ ոչ մի կրօնական վարդապետութիւն, ոչ մի ծէս չկայ պատմութեան մէջ, որ այնտեղ իրեն զուգահեռականը չգտնէ. ոչ մի կրօնական տրամադրութիւն, սկսած խոնարհագոյն և քնքշագոյն անձնուիրութիւնից դէպի

սրբութիւնը՝ մինչև իշխանասիրական ծայրագոյն տենչը, որ այնտեղ իւր ներկայացուցիչը, այո՛, մինչև իսկ պատուէրներն ու օրէնքները չունենայ: Ամբողջ կրօնի պատմութիւնը իւր երևոյթների հետևականութեամբ կրկնուել է և ձևաւորուել կաթոլիկութեան մէջ: Ով որ ուզում է, սակայն, իմանալ թէ ինչ կապակցութիւնների մէջ *կարող* է մտնել կրօնը գիտութեան, տիեզերագիտութեան, բարոյագիտութեան, քաղաքականութեան և արդարադատութեան, քաղաքատնտեսութեան հետ, թող ուսումնասիրէ Օրիգինէս, Օգոստինոս, Թովմա Աբուինացի և Շլայերմախէր. աւելի մեծ աստուածաբաններ չի կարելի գտնել: Գրիգորների և Իննոկենտիոսների պատմութիւնը պարզում են կրօնի քաղաքականութեան կապը: Այս բոլորից յետոյ ի՞նչպէս կարող է մի եկեղեցական պատմաբանի մտքովն անցնել, թէ մինչև անգամ նա ամենամեծ հետաքրքրութիւն էլ ունենայ կրօնի համար՝ Բաբելոն, Հնդկաստան, Չինաստան, կամ Նեգրերի և Պապուասների մօտ գնալ: Եւ որ գլխաւորն է, վերջապէս, այստեղ նա իւր առաջ ու շուրջը տեսնում է կենդանի կրօնը, որից միայն կարելի է ճշմարիտ հաստատուն ըմբռնումն, ճանաչողութիւն ձեռք բերել: Յայտնի է վաղուց «բիօլօգի»ից և լեզուագիտութիւնն էլ նորերս հաստատեց, որ մարդ միայն կենդանի օրգանիսմը ճիշտ կերպով հասկանալ կարող է: Եթէ քրիստոնէութիւնը համեմատենք էլ միւս կրօնների հետ, կտեսնենք, որ նա ամէնից բարձր է կանգնած և քննութեան դէմ բաց ճակատ ցոյց տալ կարող է. ո՛չ նրա համար, որ հետախուզողները քրիստոնէաներն են, այլ որ նրա մէջ են հանդէս գալիս կրօնական կեանքի ամենահարուստ և ամենաբազմազան ձևերը:

Գնանք մտքով ֆրանսիացի մի գրչի հետ Lourdes, այնտեղ հրաշք փնտրող ջերմեռանդութիւնը դիտելու համար. ապա մտնենք նի աւետարանական պաստորի տուն, ուր Լուսերի և Շլայերմախէրի աւանդութիւններն են իշխում. ուսումնասիրենք ռուս ժողովրդի ջերմեռանդութիւնը, ինչպէս այն Տալստոյն է նկարագրում իւր գիւղական պատմուածների մէջ, և նրա կողքին դնենք մի ամերիկացի Պուրիտան կամ փրկութեան բանակի մի սպայ: Անշուշտ Բուդայականութիւնն ու Իսլամն էլ ունին նման երևոյթներ, սակայն այն, ինչ որ մենք մեզ մօտ հաստատ իմանալ կարող ենք, այնտեղ, և այն էլ ամենայաջող դէպքում, անհաստատ է: Քրիստոնէութեան շատ բարձրագոյն և լաւագոյն ջերմեռանդութեան տիպերը պակասում են այնտեղ, այն ինչ ընդհակառակն ասել չենք կարող: Մինչև անգամ կատաղի դերիշներն ունեցել են բոլոր շրջանների եկեղեցական պատմութեան, մինչև իսկ նորի մէջ, իրենց նման երևոյթը:

Սակայն այն հանգամանքը, որ քրիստոնէութիւնը բոլոր միւս կրօնների տեղը բռնել կարող է և ահագին նիւթ տալ ուսումնասիրութեան, դեռ բոլորը չէ: Հէնց միայն նորա համար աստուածաբանական ֆակուլտետները պիտի մնան իբրև քրիստոնէութիւն ուսումնասիրող կեդրոններ, որովհետև քրիստոնէութիւնը իւր մաքուր ձևով ոչ թէ *մի* կրօն է այլ կրօնների կողքին, այլ նա իսկական կրօնն է: Սա *կրօնն* է, որովհետև Յիսուս Քրիստոսը ոչ թէ *մի* վարդապետ է միւսների

մօտ, այլ նա է իսկական վարդապետը, որի անձնաւորութիւնն իսկ կազմում է աստուածաբանական ուսման բովանդակութիւնը, որին իւր աշակերտները Փրկիչ ընդունեցին և իրենց նրա շնորհիւ փրկուած, և այնպէս քարոզեցին ամէնուրեք: Սա մի երևակայութիւն չէ, այլ մի անընդհատ գործող իրականութիւն, ուստի և չկայ մարդկութեան համար աւելի նշանաւոր բան, քան այս, և շատ իրաւացի բան է այս կրօնին իւր արժանավայել տեղը տալ գիտութեան միւս ճիւղերի մէջ, որովհետև սա է մարդկութեան ամենաթանգագին և ամենասուրբ գանձը, որ նրան բնութիւնից բարձրացնում է, իսկական ազատութիւնն ու եղբայրութիւնը հաստատում և նրա առաջ մի բարոյական անփոփոխ նպատակ դնում:

Աստուածաբանական ֆակուլտետների նպատակն է այդ բարձրագոյն բարիքը գիտութեան մէջ և գիտութեան միջոցներով պահպանել, նրա մաքուր մնալուն հսկել, թիրիմացութիւնների առաջն առնել և նրա պատմական յայտնի ընթացքը պարզ հասկանալի կացուցանել: Դրանով նոքա ընդհանրապէս կրօնով են զբաղուած լինում և պէտք է մերժեն երկրի բոլոր կրօններով զբաղուելու ծանր բեռն առնել իրենց վրայ:

Թող ինդօլօգները, արաբիստները, սինօլօգները ևլն. բարեմտաբար զբաղուեն նաև այն ազգի կրօնով, որի լեզուի և պատմութեան ուսուցման նոքա նուիրել են իրենց՝ տեղեկացնեն դասախօսութիւններով ու գրքերով նոցա մասին. աստուածաբանական ֆակուլտետը մեծ շնորհակալութեամբ կօգտուի նոցանից, ինչպէս մինչև այժմ արել է:

Կրօնի էութիւնը Փիլիսոփայական Տեսակէտից

Արարատի Յուլիս-Օգոստոս համարում մենք ծանօթացրինք ընթերցողներին մի նշանաւոր Աստուածաբանի կարծիքների հետ՝ քրիստոնէական կրօնի մասին. այժմ կամենում ենք մի հռչակաւոր փիլիսոփայի մտքերն ու դատողութիւնները նոյն կրօնի և առհասարակ կրօնների մասին ի մի ամփոփել, որպէս զի ընթերցողները տեսնեն, թէ ի՞նչ են մտածում ու խօսում կրօնի մասին 20-րդ դարու Եւրոպայի, լուսոյ այդ կենտրոնի՝ պատուականագոյն ներկայացուցիչներն ու ապագայ սերունդ պատրաստող իմաստուն գլուխները:

«Արարատ»ի մեջ յիշուած էր, թէ ինչպէս երկու տարի առաջ Իենայի համալսարանի բնական գիտութիւնների ուսուցչապետ Հեքելը (Häckel) իւր «Տիեզերքի հանելուկը» (Welträthsel) գրքով հանդէս եկաւ և մոնիսմուսը, կամ աւելի ճիշտ՝ նիւթապաշտական համաստուածութիւնը իբրև միակ ուղիղ աշխարհայեցողութիւն հռչակեց և դրանով մեծ աղմուկ հանեց. այժմ նոյն Իենայի համալսարանից յառաջ է բերուում մի նոր ուղղութիւն, բոլորովին հակառակ առաջնին, որի

առաջնորդն ու քարոզիչն է անուանի գիտնական Ռուդոլֆ Օյկեն (Eucken): Մենք թողնում ենք նրա ուրիշ խիստ հետաքրքրական աշխատութիւնները, որպիսիք են «Ներկայ ժամանակի հիմնական ըմբռնումները» (Die Grundbegriffe der Gegenwart), «Հոգևոր կեանքի միութիւնը մարդկութեան գիտակցութեան ու գործի մէջ» (Die Einheit des Geisteslebens in Bewusstsein und That der Menschheit), «Մեծ մտածողների հայեացքները կեանքի մասին» (Die Lebensanschauungen der grossen Denker), «Մաքառումն կեանքի մի հոգևոր բովանդակութեան համար» (Der Kampf um einen geistigen Lebensinhalt), որոնք բոլորն էլ իդէալականութեան նոր հիմնաքարեր գտնելու փորձեր են: Մենք կամենում ենք ծանօթացնել նրա նորագոյն (այս տարի լոյս տեսած) «Կրօնի բովանդակած ճշմարտութիւնը» (Der Wahrheitsgehalt der Religion) մեծածաւալ գրուածքի հետ, որ սիրով ողջունուեց Պերմանական մամուլի կողմից և համարուեց առաջին նշան մինչև այժմ միմեանց դէմ թշնամական դիրք բռնած փիլիսոփայութեան ու կրօնի հաշտութեան համար: Բացի յիշեալ գրուածքից՝ ծեռքի տակ ունինք նոյն փիլիսոփայի մի փոքրիկ բանախօսութիւնը, որ նա արել է սոյն տարուայ Ապրիլի 17-ին Քեմնիցում՝ նոյն խնդրի մասին, և որը միայն մի սիրուն համառօտութիւն է մեծ գրուածքի. դորանից և գլխաւորապէս օգտուում ենք ու մեծաւ մասամբ նրա մտքերը հարազատաբար տալիս:

Այն մեծ բաժանումը, որ ցարդ եղել է կրօնի և փիլիսոփայութեան մէջ, Օյկենն ընդունում է իբրև անբնական, որովհետև նրանց երկուսի նպատակը, և մասամբ նիւթը, մի և նոյնն է. մի փիլիսոփայութիւն, որ իւր միջից արտաքսել է կամենում այն խորին խնդիրները, բացարձակ ճշմարտութեան և հոգևոր ինքնապահպանութեան (Geistige Selbsterhaltung) պորբլեմները, որոնք նկատուած են իբրև կրօնի թոյլ կողմը, չի կարող ապահովել իրեն անկումից, դէպի մի դատարկ ու անմիտ բովանդակութիւն: Ընդհակառակն եթէ կրօնն ուզենայ իւր բոլոր յարաբերութիւնները փիլիսոփայութեան հետ կտրել, ոչ միայն կվնասէ իւր ազդեցութեանը կեանքի ամբողջութեան վրայ, մերժելով մարդկային քաղաքակրթութիւնը, այլ և կստանայ չափից աւելի անձնական, աֆֆեկտիւ ու չնչին կերպարանք:

Կրօնն էլ, փիլիսոփայութիւնն էլ հակառակում են իրերի առօրեայ ըմբռնման ու գործադրութեան. երկուսի էլ նպատակն է եռանդուն մաքառմամբ հնի տեղ մի նոր աշխարհի հաստատել: Փիլիսոփայութիւնը տեսնում , թէ ինչպէս քանի գնում զօրանում է կրօնը և իւր բարերար ազդեցութիւնն աւելացնում, թէ ինչպէս գեղեցիկ գրականութիւնը օր աւուր աւելացող լրջութեամբ կրօնական խնդիրների բացատրութեամբ է զբաղում. երաժշտութիւնն ու արուեստը նրանից են վերցնում իրենց նիւթը և պետք է նրան իւր ազատ տեղը տայ: Կրօնն ու փիլիսոփայութիւնը ոչ թէ իբրև հակառակորդներ պէտք է գործեն, այլ միացած, թէ և տարբեր ճանապարհներով դիմելով դէպի ընդհանուր նպատակը, առանց հարկաւ իրենց առանձնահատկութիւններն ու անկախութիւնը կորցնելու:

Մինչ կրօնը սիրոյ ու շնորհի թագաւորութեան յայտնութիւնը, իբրև մի մեծ աշխարհածաւալ իրականութիւն՝ ներկայացնում է պարզօրէն մարդկութեան առաջ, փիլիսոփայութիւնը սկսում է փոքրից և միայն կամաց կամաց հասնում այնտեղ, ուր կրօնի մատուցած իրականութիւնը իւր սեպհական ձգտման համար էլ անհրաժեշտութիւն է նկատուում: Փիլիսոփայութեան ճանապարհն այսպիսով աւելի ընդարձակ է և բազմազան, որ սակայն իրեն յատուկ առաւելութիւններն ունի կրօնի անհրաժեշտութեան հաստատութեան համար:

Կրօնի համար անշուշտ էական է մի նոր, ներկայիցս բարձր աշխարհի գոյութիւնը. սակայն լոկ որ և է իրականութեան գոյութիւնը դեռ շատ քիչ է կրօն յառաջ բերելու համար: Եպիկուրեաններն էլ ընդունում էին աստուածային էութիւնների գոյութիւնը, սակայն նոցա ոչ մի դեր չտալով մեր աշխարհում՝ մերժում էին կրօնը: Հերբերտ Սպենսերի ընդունած իրերի անքննելի հիմունքն ևս աւելի կրօնի բացասութիւն է, քան թէ հաստատութիւն: Այստեղ ոչ միայն էական է նոր աշխարհի գոյութիւնը, այլ գլխաւորապէս նրա յարաբերութիւնը մեզ հետ, նրա կենդանի ներկայութիւնը մեզ կարիքից ազատելու և մի նոր կեանք ծեռք բերելու համար:

Ի՞նչ օգուտ մեզ այն բոլոր իրերը, որոնք թէ և ինքն ըստ ինքեան կան, սակայն մի գործունեայ «Մեզ համար» չեն դառնում:

Գերբնական աշխարհի կենդանի ներկայութիւնն ու գործունէութիւնը մարդկութեան մէջ, ահա թէ ինչն է կրօնի համար էական: Ինչպէս պէտք է ապացուցանել այս: Հնումը երկինքն ու երկիրը իրենց համապատասխան ու ներդաշնակ կարգաւորութեամբ բաւական էին Աստուծոյ գոյութիւնը ապացուցանելու համար: Սակայն այս ժԸ. դարու հայեացքը մեզ համար հնացած է. քննական փիլիսոփայութիւնը և բնական գիտութիւնները զգուշացնում են մեզ հեշտութեամբ բնութեան ոյժերի և գերբնական ազդեցութիւնների մասին վճիռ տալուց. որտեղ է վերջանում բնութեան կարողութիւնը, և ուր սկսում գերբնական ներգործութիւնը՝ անկարելի է որոշել: Կրօնն ինքը ցոյց չէ տալիս մեզ այն միջոցը, որով մենք այս հաստատել կարողանայինք: Անպէտք է նաև այն մեթոդը, որ կրօնն ու գիտութիւնը իբրև իրար թշնամի ներկայացնելով, մէկի գոյութիւնն ու ծաղկումը միւսի ոչնչացումն ու վնասն է համարում: Այդ նպատակի համար ամենից աւելի յարմարութիւն ունի փիլիսոփայութիւնը, որի ամբողջ բովանդակութիւնը մարդու և մարդկութեան հոգևոր ու մտաւոր կեանքն է: Այստեղ ոչ թէ եզրակացութիւններն են իշխում, այլ անմիջական իրականութիւնը, փորձառութիւնը(Erfahrung),որ մեզ համար և մեր մէջ գործունեայ է:

Սակայն զգոյշ պիտի լինել այս դէպքում, մի աւելի մեծ փորձանքի՝ ենթակայականութեան (Subjectivism) մէջ չընկնելու համար: Անմիտ բան կլինէր բարձրագոյն աշխարհի , ընդ նմին և Աստուծոյ գոյութիւնը՝ հաստատել ու հիմնել աշխատել մարդու ներքինից: Այդ նոր աշխարհը յառաջ չէ գալիս բնութեան ոյժերի աստիճանաբար զարգանալուց, ոչ էլ մարդն իբրև անհատ կամ կապուած

ուրիշների հետ պատմական-ընկերական կենակցութեամբ՝ կարող է նոր կեանքի ստեղծող լինել, ինչպէս թոււմ էր ժԹ. դարու շատ փիլիսոփաներին: Ղա պարզ ի պարզոյ մի հակասութիւն է: Եթէ այդ ընկերական միութիւնները բնութեան մէջ են լինում և գործում լոկ բնական ոյժերով, այն ժամանակ պարզ է որ այդ աշխատանքի բոլոր միացումներից ու գումարից մի *էապես* այլ կեանք յառաջ գալ չէ կարող. իսկ եթէ նրա մէջ գործում են գաղտնապէս նաև այլ զօրութիւններ ու կարգեր, դրանով ընդունւում է գերբնականի իրականութիւնը:

Ամբողջ խնդիրը պարզոււմ է այս կերպ. կամ հոգևոր կեանքը իւր բոլոր երևոյթներով ու մասերով միայն լոկ ստուեր է, որ խիստ ճշմարտութեան առաջ դիմանալ չէ կարող, կամ թէ չէ նա մի նոր անյայտ աշխարհի բացատրութիւն, երևոյթ ու յայտարար է: Սրանով ընդունւում է այդ աշխարհի իրականութիւնը և մարդ դիմում է դէպի կրօնը, որը միայն նորան իւր անհրաժեշտանկախութիւնն ու վեհութիւնն է շնորհում ընդդէմ ներկայ կեանքի: Մարդկութեան պատմութիւնը մի փառաւոր ապացոյց է վերև ասածի, որովհետև ներկայացնում է անընդհատ կռիւ մի իսկական անկախ հոգևոր կեանքի մարդկային փոքրամասնութեան ու չնչինութեան դէմ, որ ուզում է բարձրը խոնարհեցնելով իրեն հասցնել, իւր նպատակին ծառայեցնել. բայց որը նրան երբէք կատարելապէս ու վերջնականապէս չէ յաջողւում: Ուր որ քաղաքակրթութիւնը բոլոր կապը այդ աշխարհի հետ կտրել և մարդկութեանը միայն ներկայ կեանքը ցոյց տալ և նրանով բաւականանալ սովորեցնել աշխատեց՝ ընկաւ և անբովանդակ դարձաւ:

Հոգևոր կեանքը և կրօնը՝ ընդհանուր մտքով, խիստ սերտ կապուած են իրար հետ. առաջինը մղում է մարդուն դէպի երկրորդը. միայն չնչին ու անպտուղ բնութիւններն են կրօնը ամենայն սառնութեամբ ու խստութեամբ մերժել: Սակայն հոգևոր կեանքը, աստուածայինը միշտ յաղթական կերպով չէ ընթանում. ոչ միայն արտաքին աշխարհի երևոյթներն են նրա ճանապարհը փակում, այլ և հէնց իւր մէջ հակառակող տարրեր ունի նա. խոհականութեան հետ հանդէս է գալիս անխոհականութիւնը և սպառնում ոչնչացնել նրան, ստորինը շատ անգամ յաղթահարում է վեհին, բնական ձգտումները հոգևոր ոյժերին, մարդկային եսականութիւնն ու անարդարամտութիւնը հոգևոր կեանքի բարիքներին: Այո՛, մարդկութեան մէջ հոգևորը վտանգի է ենթարկւում. չարը իւր թուլութիւնից բարձրանում է և իբրև մի իրական զօրութիւն հակառակել է սկսում բարուն, մինչև իսկ յաղթահարում է նրան և սատանայական ուրախութիւն զգում իւր աւերածի վրայ: Շատ դժուար թէ մարդկութիւնը այնքան զբաղուէր սատանայի բնութեամբ ու կերպով, եթէ հէնց մարդկային բնութիւնը դրա համար առատ նիւթ չտար: Այսպիսի խոչընդոտների և անդունդների առաջ ընկճւում է մարդը և լոկ մարդկայինը իւր անզօրութիւնը խոստովանում: Սորա վրայ ավելանում է նաև այն միգապատ խաւարը, որ մեր ճակատագիրն է շրջափակում. մի չնչին կոյր արկած, մի անբացատրելի զարհուրելի պատճառ իշխում է կեանքի վրայ՝ ոչ արդարութեան կարգն է երևում և ոչ էլ սիրոյ իշխանութիւնը:

Հասկանալի է, որ այսպիսի դրուֆինը շատերին դէպի յոռետեսութիւն (Pessimism) է տանում: Սակայն այդ կեանքի վերջաբան լինել չէ կարող: Ցաւը, տանջանքը հենց նրա համար աւելի դառն է դառնում մեզ համար, որովհետև բարին առաջներս է, բայց իրականութիւն չէ գտնում. մենք ձգտում ենք, շարժում ենք գործում ձեռք բերելու այն, սակայն մեր գործողութիւնները շեղում են և աննպատակ մնում: Վտանգի մէջ եղածը կամ կորածը պէտք է մեզ համար որ և է գին ունենայ, եթէ նրա կորուստը մեզ ցաւ է պատճառում: Եթէ բարին ոչ թէ իրականութիւն, այլ լոկ ստուեր լինէր, այն ժամանակ ցաւն ու կսկիծը իրենց ճշմարտութիւնն ու ոյժը կկորցնէին: Բայց իրօք այդպէս չէ. մենք տանջւում ենք յիրաւի, որովհետև կեանքի իսկական բարիքներին հասնել չենք կարողանում. ուստի կեանքը իբրև գուտ չարութիւն ու տանջանք մերժել ու ոչնչացնել, ինչպէս այդ անում է յոռետեսութիւնը, կարելի չէ. դա հակասութիւն կլինէր:

Մի և նոյն ժամանակ բարւոյ կատարեալ հաստատութեան համար մենք ու մեր աշխարհը տկար ենք: Ի՞նչ է մնում ուրեմն անել մեզ, եթէ երկուսն էլ մեզ համար անկարելի են, իսկ միւս կողմից կեանքի անհրաժեշտութիւնը և ապրելու հոգսը ստիպում է մեզ շտապով վճիռ տալ:

Այստեղ արդէն հասնում ենք այն կէտին, ուր միայն, իսկապէս ասած, կրօնի կարիքը խիստ զգալի է դառնում, ուր մենք մի փոփոխութիւն սպասում ենք բարձրագոյն ոյժի և բարութեան միջոցաւ. միայն մեր աշխարհից բարձրն ու վսեմը՝ հոգևորն իբրև մի ամբողջութիւն, կարող է այդ փոփոխութիւն յառաջ բերել և դրանով մարդուն կեանքի մի նոր խորհուրդ ու վեհութիւն շնորհել. դրանով դառնում է հոգևորը մեր իսկական եսը և անձնաւորութիւնը. իսկ հոգևոր կեանքի կատարելագոյն պսակը կրօնն է:

Բոլոր կրօնների նպատակն է մարդուն Աստծոյ հետ սերտ յարաբերութեան մէջ մտցնել և նրան առօրեայ հոգսերց ու կարիքներից բարձրացնել. սակայն նրանց բովանդակութիւնն ու որակը ի հարկէ խիստ բազմազան է ու տարբեր: Ամէնից առաջ նոքա բաժանւում են երկու տեսակի. օրէնքի և փրկութեան կրօններ: Առաջինների նպատակը չէ հիմքից նոր մարդ պատրաստել. աշխարհի խառնիճաղանձութիւնը նրանց համար դեռ այնքան մեծ չէ, որ յոյս չունենան որոշ օրենսդրութիւններով նպատակին հասնելու, առանց որ և է մեծ յեղաշրջման. վարձն ու պատիժը բաւական է համարւում այստեղ, որպէս զի մարդուն ստիպեն իւր սեպիական ոյժերով արդարն ու իրաւացին գործել:

Փրկութեան կրօնների համար խնդիրը բոլորովին այլ է. ազատութեան բոլոր յոյսը կապուած է այստեղ մի ամբողջական ներքին յեղաշրջման հետ. այստեղ *Նոր* աշխարհի համար *Նոր* մարդ է հարկաւոր:

Փրկութեան կրօնները երկու են. Բուդդայականութիւն և Քրիստոնէութիւն:

Բուդդայականության բոլոր ոյժը նրա վճռական մերժման մէջ է. նա մերժում է կեանքը իւր բոլոր չարիքներով: Եւ այս բոլորն է: Գլխաւորը, որ պակասում է այստեղ՝ այն է, որ նա չի կարողանում չարիքը յաղթահարելու ու բարին ձեռք բերելու ոյժը ներշնչել: Այդ պատճառով Բուդդայականության վերջին իմաստուն վճիռը մնում է՝ ըստ կարելոյն դադարեցնել գործունեութիւնը և ոչնչացնել դէպի գործունեութիւն դրդող եռանդը (Energie):

Ով քրիստոնէութիւնն իւր ամբողջութեամբ ճանաչում է,-ոչ ի հարկէ զանազան հասկացողութիւններին ու կեանքին յարմարեցրած ու ստորացրած քրիստոնէութիւնը,- նա կնկատէ այնտեղ մի հսկայական մերժումն ու վճռական բացասութիւն՝ ո՛չ թէ կեանքի և հասարակական կազմակերպութեան այս կամ այն կէտի, այլ նրա ամբողջութեան հաւասարապէս: Սակայն այս բոլոր ոչնչացումից և աւերից յետոյ, այդ ծանր պայքարից յետոյ, նա էլի գտնում է նոր կեանքի ճանապարհը, որ նրան դէպի մի նոր աշխարհ է տանում, ուր Աստուծոյ արքայութիւնը, անվերջ սէրն ու շնորհն են իշխում:

Բայց հակասութիւնը միայն յաղթահարուած է այստեղ, ոչ թէ ոչնչացած. ընդհակառակն այժմ տանջանքն ու խաւարը աւելի դառն ու անտանելի են դառնում՝ նոր աշխարհի վեհ իրականութեան պարզութիւնով, և միւս կողմից նոր կեանքի երանութիւնը ևս առաւել մեծ է դառնում, որչափ ցաւալի է շրջապատող կեանքը: Մարդկութիւնը մնում է սրանով երկու ծայրայեղ հակասութիւնների մէջ, տարութերում է մէկից դէպի միւսը. աշխարհի կարգը դրանով չէ փոխւում, բայց մարդու ներքին ճնշումը արդէն վերացած է և վեհութեան ճանապարհը բաց նրա առաջ:

Նոր, աստուածային յարաբերութեան վրայ հիմնուած աշխարհի հանդէս գալը այլ ևս ոչ մի կասկած չէ թողնում յաղթութեան մասին. հերոսութիւնը, որ այստեղ աւելի է պէտք մարդուն, քան որ և է այլ տեղ, ստանում է իւր ամուր հիմունքը, և հակառակ բոլոր ահալի «Ոչ»երի դուրս է պրծնում մի ուրախ «Այո» մարդկային կրօնքից՝ կեանքի համար:

Սակայն քրիստոնէութիւնը այս բոլորը իբրև լոկ վարդապետութիւն չէ քարոզել, այլ տիեզերական-պատմական աշխատանքով ու ծանր մաքառմամբ՝ արտաքուստ աւելի զօրեղ ոյժերի դէմ, մի իրականութիւն է դարձրել, որն ազգեր ու ժամանակներ ի ներքուստ սերտ կերպով կապում է և իւր ամրացնող ու բարձրացնող ոյժով նաև անհատներին առ ինքն է քաշում, միշտ վտանգների ու փոթորիկների ժամանակ իւր ապաստանարանը իւր ուսուցչի՝ Յիսուսի արտասովոր անձնաւորութեան մէջ որոնելով. նա իւր հերոսի մաքառումների, տանջանքների և յաղթութեան շնորհիւ նոր կեանքի իրականութեան անդրդուելի համոզումն է կազմել, իւր վարդապետի մէջ այդ կեանքի հրաշալի վեհութիւնը դիտել, առանց ի հարկէ մոռանալու այս աշխարհի խորտակիչ ողբերգութիւնը, որ միայն ամենադառն տանջանքից ու ամենածանր զոհողութիւնից յետոյ աստուածայինին ու հոգևորին յաղթանակ է շնորհում: Այսպիսով քրիստոնէութիւնը՝ կեանքի ուրախ և

յաղթական վերջաբանի հետ, այնու ամենայնիւ նրա մեծ լրջութիւնն է ներկայացնում: Այս բոլորով Քրիստոնէութիւնը ներկայանում է մեզ ոչ թէ իբրև մի կրօն առհասարակ, այլ նա կրօնների կրօնն է և յաւիտենական ճշմարտութեան մարմնացումը. նա մի ժամանակաւոր գործողութիւն չէ, այլ մի մնայուն ճշմարտութիւն՝ մի բան, որը ոչ մի յեղաշրջումն կործանել չէ կարող, որը ժամանակի յառաջ բերած բազմատեսակ փոփոխութիւնները միայն աւելի ամրապնդել կարող են:

Քրիստոսի քարոզած և Նրա անձնաւորութեան մէջ կենդանի Աստուածը մի զօրութեան ու սիրոյ Աստուած է, որ նոր աշխարհ է ստեղծում, նոր էութիւն տալիս, աստուածային կեանքին հաղորդակից անում, և դրանով մարդուն մի անջնջելի արժէք շնորհում. այդ Աստուածը կպահպանէ մարդոց մէջ նոր կեանքը, նրա հոգևոր արմատը կսնուցանէ և բոլոր վտանգների դէմ կպաշտպանէ:

Ինչքան կուզէ թող այնուհետև արտաքին արտաքին աշխարհը մնայ ինչպէս էր առաջ՝ հակառակութեան ու խաւարի մի վայր. թող ներքին ու արտաքին արգելքները շարունակուին ու մարդուն իւր հոգևոր կարողութիւնների հետ նեղեն, և ըստ երևոյթին ոչնչացնեն. թող ամէն ինչ այստեղ ի զուր ու կորած թուի. այնու ամենայնիւ նոր կեանքի և նոր աշխարհի հանդես գալով ամէն ինչ յեղաշրջուած է արդէն և խաւարի բոլոր անդունդները միայն լուսոյ արեգակնային պայծառութեան զգացմանը կնպաստեն, և մինչև իսկ չարը ստիպուած կլինի միայն բարու զարգացմանը ծառայելու:

Այս բոլորը տալիս է մեզ քրիստոնէութիւնը, ուստի և մենք նոյն իսկ փիլիսոփայական տեսակէտից ամենակատարեալ բաւականութիւնը գտնել կարող ենք նորա մէջ: Այո՛ մենք կարիք չունինք նոր կրօնի. քրիստոնէութիւնն է իսկական կրօնը:

(Ընթերցողը թող չմոռանայ, որ այսպէս խօսողն Աստուածաբան չէ, այլ 20-րդ դարու նշանաւորագոյն Գերմանական փիլիսոփաներից մէկը):

Սակայն Օյկէնը այստեղ կանգ չէ առնում. նա ի նկատի ունենալով ժամանակի և քաղաքակրթութեան փոփոխութիւնը, անհրաժեշտ է գտնում քրիստոնէութեան միջից հանել այն, ինչ որ ժամանակաւոր է, և միայն անմահն ու մնայունը թողնել, որպէսզի աւելորդ հին ձևերը գայթակղութեան և փորձի քար չդառնան շատերի համար և սառցնեն քրիստոնէութիւնից: Շատ բաներ կրօնի մէջ, ասում է նա, շնորհիւ կեանքի, քաղաքակրթութեան ու պահանջների փոփոխման՝ երևում են փոքր, մարդկային ու ժամանակաւոր. այն, ինչ որ մի ժամանակ լիովին բաւականութիւն տալ կարող էր բոլոր պահանջներին, այժմ դատարկ ձև է դարձել և պիտի անհետանայ: Քաղաքակրթութիւնը այդ պահանջում է, և պէտք է բաց ճակատով իրերին նայել ու ճշմարտութեան համար կռիւն սկսել: Ի զուր այդ պայքարը շատերին իբրև կրօնի. համար վտանգաւոր է երևում, ընդհակառակն այդ մաքառումը առիթ կտայ աւանդական ստացուածքը նոր եղանակով կազմակերպելու՝ յօգուտ կրօնի. փոքրագութիւն ու անհաւատարմութիւն է այդ կռուից խոյս տալը: Եթէ մեր անդրդու ելի համոզմունքն է, որ քրիստոնէական կրօնի մէջ հոգևոր իրականութեան

ամենախորին յայտնությունն է իշխում, այն ժամանակ թող քաղաքակրթության աշխատանքի այլ և այլ փոփոխությունները մեզ՝ մարդկանցս համար աշխատանքի ու հոգսի դուռ բանան. իսկական գործին նոքա միայն օգնել կարող են՝ նրա վեհությունը և սքանչելիությունը՝ ասելի լուսաւորելով, որովհետև մի ճշմարիտ յաւիտենական բան չի կարող ժամանակի մէջ կորչել, այլ նրա մէջ մտնելով, յաղթում է նրան:

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

1901 թուի Հոկտեմբերի 16-ին (ն. տ.) Հալլէի համալսարանի Հին Կտակարանի աստուածաբանութեան հռչակաւոր ուսուցչապետ Էմիլ Կաուչը կարդացել է վերև բերած վերտառութեամբ մի դասախօսութիւն, որն այս օրերս տպագրուած լոյս տեսաւ: Մեր նպատակն է համառօտակի, առանձին կարևորութիւն ունեցող մասերը թարգմանելով, տալ այդ խիստ հետաքրքրական դասախօսութեան բովանդակութիւնը «Արարատի» ընթերցողներին:

Հին կտակարանի վրայ յարձակումներն սկսուել են քրիստոնէական եկեղեցու մէջ շատ հին ժամանակներից: Արդէն Մարկիոնը, Բ. դարու առաջին կէսում, բոլորովին մերժում էր Հին Կտակարանը, Մովսիսական օրէնքի մէջ յայտնուած Աստուծուն բոլորովին այլ, ասելի ստոր աստիճանի վրայ գտնուող՝ Աստուած համարելով, քան թէ Քրիստոսի մէջ յայտնագործուածը: Կրօնական յեղափոխութեան ժամանակ էլ նոյն խնդիրը մեծ դեր էր կատարում այսպէս կոչուած «Հակաօրինական վէճերի» մէջ: Կանտի նման մեծ փիլիսոփան նոյն իսկ՝ հետևելով իւր ժամանակի

սխալ հասկացողութեան, օրէնքի մէջ էր տեսնում Հին Կտակարանի կրօնի հիմքն ու ծուծը, այդ պատճառով էլ բացարձակօրէն մերժում էր. մանաւանդ որ Հին Կտակարանի մէջ չէր գտնում մի հատուցման վարդապետութիւն հանդերձեալ կեանքի համար: Մինչև անգամ Շլայերմախէրը, չնայելով իւր խոր ըմբռնման, չկարողացաւ անաչառ վերաբերուել դէպի Հին Կտակարանը և յայտարարեց այն իբրև երկրորդական, և մինչև իսկ աւելորդ, մի հեղինակութիւն քրիստոնէութեան համար:

Այս բոլոր մերժումներն ունին սակայն տեսական, մասամբ նաև կրօնական հիմունքներ: Բոլորովին այլ տեսակի են այն յարձակումները, որ կրեց Հին Կտակարանը նոր և նորագոյն ժամանակներում. այստեղ խօսքը ոչ թէ Հին Կտակարանն աւելի ստոր աստիճանի վրայ դնելու մասին է, քան թէ նորը, այլ բացարձակ կերպով արտաքսելուն՝ թէ եկեղեցուց և թէ դպրոցից: - Ղոցա հաշուում չէ ի հարկէ Հեքէլի «Աշխարհի առեղծուածի» (Weltztsel) 17-րդ գլուխը, որ միայն իւր հեղինակի փայլուն տգիտութիւնն է ապացուցանում, ուրիշ ոչինչ. իւրաքանչիւր փոքր ի շատէ գեղարուեստական ճաշակ ունեցող ընթերցողի զգուանքը միայն կարող է բաժին լինել այդ տեսակ «գիտութեան»:

Սոցիալ-Դեմոկրատներն ևս, Հին Կտակարանը համարելով ներկայ ընկերական կազմակերպութեան գլխաւոր օժանդակիչ սիւներից մէկը, խիստ յարձակումներ են գործում նորա վրայ. սոցա նպատակն է Հին Կտակարանի օրինակելի անձնաւորութիւնների բարոյական բնոյթը կասկածելի դարձնել, դորա հետ միասին նաև նոցա ներկայ հետևողներինը: Վտանգաւորն այստեղ այն է, որ այս մարդիկ գիտութեան անվիճելի փաստերն են իրենց նպատակին ծառայեցնում, բայց բոլորովին խեղաթիւրելով և ծուռ կերպով պատկերացնելով այն:

Վերջապէս, վերջին տասնեակ տարիներում յարձակումներ եղել են հակա-սեմիտական և մանկավարժական տեսակէտից: Առաջինները պնդում են, որ արդէն հին Կտակարանի մէջ հանդէս են գալիս եբրայեցիների առանձնայատկութիւններն՝ առանձնապէս եսականութիւնն ու անազնութիւնը առուտուրի մէջ: (Այդ բանը հաստատելու համար ի չարն են գործ դնում Ծննդոց ԺԸ. 23 և հետևեալ համարները): Այդ պատճառով ամէն կերպ աշխատում են Հին Կտակարանը դպրոցներից հեռացնել տալ: 1899 թուին Համբուրգում գերմանական սոցիալական բարեփոխութեան կուսակցութեան (Deutsb-Sociale Reformpartei) ընդհանուր ժողովում մինչև անգամ այդ մասին առաջարկ եղաւ, որի գործադրութեան վերաբերութեամբ խօսք անգամ լինել չէ կարող հարկաւ:

Մանկավարժական տեսակէտից տարակուսանք յայտնողն էր Կատցերը 1893 և 1896 թուին գրած մի երկու գրքոյկներով: Շատ սխալ կլինի Կատցերի շարժառիթները նոյն համարել, ինչ որ հակա-սեմիտականներինը. Հին Կտակարանի պատմական նշանակութեան և յարաբերական բարձրութեան նկատմամբ նա էլ նոյն կերպ է մտածում, ինչպէս մենք աստուածաբաններս: Սակայն

քրիստոնեայ մանկան ներմուծելը Հին Կտակարանի կրօնի մէջ նկատում է նա իբրև անբարոյ յետագնացութիւն դէպի կրօնի մի աստիճան, որն արդէն վաղուց յաղթահարուած է քրիստոնէութիւնից և յետ մնացած: Ռա ոչ միայն անբարոյ է, Կատցերի կարծիքով, այլ և միանգամայն վնասակար, որովհետև առիթ տալ կարող է մանկան մտքի մէջ զանազան աստիճանները խառնելու: Սա էլ մի յարձակումն է Հին Կտակարանի մնայուն նշանակութեան վրայ, բայց բոլորովին այլ մտքով և շարժառիթներով, քան թէ բոլոր վերև յիշուածները:

Հին Կտակարանը պէտք է, սակայն, պաշտպանել այս բոլոր յարձակումների դէմ, և այդ կարող ենք մենք ամենայն յաջողութեամբ, եթէ հետևեալ 3 բանը աչքից չփախցնենք.

- 1) Հրաժարուել պէտք է բոլոր սխալ ջատագովական ասպացոյցներից.
- 2) Աշխատել ասպացուցանել Հին Կտակարանի նշանակութիւնը պատմական և գեղասիրական տեսակէտից.
- 3) Վերջապէս պարզել Հին Կտակարանի իսկական նշանակութիւնը բարոյական, և յատկապէս կրօնական՝ տեսակէտից.

Ամէնից առաջ հիմնովին սխալ է ընդունել մեքենական ներշնչման վարդապետութիւնը, որը Հին Կտակարանի իւրաքանչիւր տառին անսխալականութիւն է վերագրում և նորա բոլոր մասերին հաւասար արժէք տալիս:

Ոչ ոք չպիտի վստահանայ Մնացորդաց ազգաբանութիւնները և օրէնքի զանազան ժողովածուները Եսայի մարգարէի գրքի Ա. գլխի կամ Ա. սաղմոսի հետ հաւասարարժէք հրատարակել: Գործնականապէս այս արդէն ընդունուած է. դպրոցներում ոչ ոք այդ բաներին հաւասար նշանակութիւն չէ տալիս: Բայց պէտք է վերջապէս այդ ընդունուի նաև տեսականապէս: Յայտնութեան *ոգին*, որով լցուած է ամբողջութիւնը, պէտք է տարբերել մարդկային մտքի ստեղծագործութիւնից, որ այդ յայտնութիւնը գրի է առել:

Եթէ դեռ այնպիսի մարդիկ կան, որոնք Հին Կտակարանի բոլոր մասերը հաւասարարժէք համարել կարող են, թող իմանան, որ մինչև անգամ հրէական ժողովարաններն իրենց աւանդութիւններով այդ բանը չեն անում, այլ օրէնքն են միայն ամէնից բարձր դասում, մնացածը՝ մարգարէք և այլն, իբրև բացատրութիւն օրէնքի ի նկատի առնելով, և այդ պատճառով անհրաժեշտ չեն համարում նոցա գոյութիւնը: Հին Կտակարանի յայտնութեան այսպիսի հիմնական սխալ հասկացողութիւն կարելի է միայն ռաբբիական տառապաշտութիւնից սպասել, որ օրէնքը երկինք է բարձրացնում, իսկ մարգարէութիւնը, Իսրայէլի կրօնի իսկական յայտնութիւնը կազմող տարրը՝ անբարոյ ստոր աստիճանի վրայ դնում:

Այս պէտք է արդէն սովորեցնել մեզ, որ հին աւանդութիւնների վրայ հիմնուելով բան անել չի կարելի: Մեր չափը բոլորովին ուրիշ պիտի լինի: Հին Կտակարանի օրէնքը մեզ համար չունի այլ ևս

այն նշանակութիւնը, ինչ որ ունէր մի ժամանակ հրէաների համար, որովհետև Քրիստոսի միջոցով լրացած է և անհրազորժելի դարձած: Թէ ինչ է նշանակում Հին Կտակարանի իւրաքանչիւր տառն իբրև կենդանի պատգամ պաշտպանել, ցոյց է տալիս հետևեալ փոքրիկ պատմութիւնը՝ անգլիացի եպիսկոպոս Կօլենզօի կեանքից, որ նոյնպէս խիստ կերպով պահանջում էր՝ հին Կտակարանի իւրաքանչիւր տառի ներշնչուած լինելն ընդունել: Երբ այդ եպիսկոպոսը թարգմանում էր Հին Կտակարանը ցուլուների լեզուով և հասել էր Ելից ԻԱ. 20-21 համարը, ուր ասած է. «Եթէ տէրը ծառային կամ ստրուկին խփէ և նա այդ հարուածից մեռնի, տէրն ազատ է պատասխանատուութիւնից, եթէ ստրուկը խփելուց յետոյ անմիջապէս չէ մեռնում, այլ մի կամ երկու օր ապրում է, որովհետև իւր փողի գինն է», - այն ժամանակ եպիսկոպոսին օգնող ցուլուն բոլորովին վհատած հարցնում է. «Իսկապէս Աստուած ի՞նքն է այդ ասել»: Անշուշտ նա պիտի մտածէր ինքն իրեն. «Եթէ նոր աւետիքն այս է քարոզում, ուրեմն մեզ ստրուկներիս համար ամէն ինչ անփոփոխ է մնում: Բայց դուք երևակայեցէք Կօլենզօի դրութիւնը. ցուլուի այդ մի հասարակ հարցը պարզեց նրան, որ չի կարելի Աստուծուն Հին Կտակարանի բոլոր տառերի համար պատասխանատու հրատարակել, և նա նոյն թույլին խորին համոզմամբ ցուլուի հարցին բացասական պատասխան տուեց. «Ո՛չ, Աստուած չէ ասել այդ և դրա նման շատ ուրիշ խօսքեր»: Հակառակը պնդել՝ նշանակում է Հին Կտակարանը մէջտեղից վերացնելուն օգնել: Այլ այնտեղ, ուր մարդկային մտքերն ու չար խորհրդածութիւնները չափի տակ են դրում, ուր նա աշխատում է այդ բաները ոչնչացնելը նախապատրաստել՝ այնտեղ է Աստուծոյ ոգին ու խօսքը, այնտեղ է մնայունն ու անյեղեղը, և փա՛ռք Աստուծոյ, Հին Կտակարանը լի է այդ անանցանելի բարիքով:

Ինչ որ ասացինք Հին Կտակարանի բարոյական տեսակէտի մասին, նոյնը պիտի կրկնել նաև կրօնականի մասին:

Անհնարին է մերժել, որ Հին Կտակարանը մի նախապատրաստող դեր ունի, և այդ պատճառով էլ շատ կրօնական խնդիրներում անկատար հասկացողութիւն կայ այնտեղ: Պէտք է մանկավարժական տեսակէտից այն ամէնը մի կողմ թողնել, ինչ որ նախապատրաստող է և Նոր Կտակարանի մէջ արդէն իւր կատարելութեանն է հասել: Խիստ անտեղի բան է երեխաներին ժամերով չարչարել վկայութեան խորանի կազմութիւնը՝ քահանայի զգեստների ձևը, զոհերի տեսակները և այլն անգիր անել տալու համար:

Այդ բոլորն ունին իրենց հնագիտական և կրօնա-պատմական նշանակութիւնը, բայց կրօնի դասաւանդման համար ոչ մի կարևորութիւն չունին, և պէտք է ջնջուին բոլոր դասագրքերի միջից: Միանգամայն սխալ է և մերժելի նաև Հին Կտակարանի իւրաքանչիւր խօսքի մէջ մեսիական գուշակութիւն որոնելը: Ի հարկէ սրանով չենք ուզում ասել, թէ քարոզիչն իրաւունք չունի ամենևին մեսիական գուշակութիւնների մասին խօսելու. ընդհակառակն շատ լաւ է, որ նա այդ գուշակութիւնից

սկսելով մատնացոյց անէ նրա կատարման վրայ. սակայն պէտք է վերջնականապէս վերջ տալ այն տեսակի բացատրութեան, որ իբր թէ գուշակութիւնն ու կատարումը տառացի կերպով համապատասխանում են իրար: Սա էլ մի տեսակ ջատագովութիւն է, որ աւելի քանդում է, քան թէ շինում: Անմտութիւն է Հին Կտակարանի մէջ իւրաքանչիւր «Սիոն» բառը «Երկնային Սիոն», «Աստուծոյ արքայութիւն» դարձնելը. շատ աւելի ճիշտ են հասկանում այդ կտորները հրէաներն իրենք, որոնք տարիներով փող են յետ ձգում, որպէս զի Երուսաղէմ երթան, այնտեղ մեռնեն և այդպիսով յարութեան ժամանակ Յովսափաթի դաշտին մօտիկ լինին:

Այս օրինակը ցոյց է տալիս, որ քրիստոնէական եկեղեցու մէջ մարգարէական խօսքերը չպէտք է տառացի բացատրել, ոչ էլ պէտք է բոլորովին խեղաթիւրել. այլ պէտք է ցոյց տալ, որ կատարումը բոլորովին այլ կերպ՝ այսինքն շատ աւելի մեծ և սքանչելի է եղել, քան թէ գուշակողն այդ զգալ կարող էր: Այն ժամանակ Հին Կտակարանի այդ կտորներն ևս, որոնք շատերին գայթակղութեան առիթ են տալիս, բոլորովին այլ. և շատ աւելի պայծառ՝ լուսով երևան կգան, և գայթակղութեան պատճառներն էլ կվերանան:

Այն մարգարէն, որ Նոր Կտակարանից է խօսում, ուր օրէնքը մարդու ներսն է լինելու և սրտի մէջ գրուած. կամ թէ միւսը, որ սրտի և շրթունքների թլփատումն է պահանջում՝ սրտի և ոչ թէ հանդերձի պատառոտելը ցանկանում. Սաղմոսերգուն, որ ընկճուած ու ջարդուած հոգին ու սիրտն է իբրև իսկական «պատարագ Աստուծոյ» ընդունում,– ունեցել են յիրաւի զգացումն Աստուծուն հոգով և ճշմարտութեամբ երկրպագելու մասին, հասկացել են, որ Հին Կտակարանը Նորի նկատմամբ դեռ շատ անկատար է: Կրկնում ենք, ամենուրեք ուր այսպիսի ըմբռնումն է հանդէս գալիս, այնտեղ է և Աստուծոյ ոգին ու խօսքը. այնտեղ կանգնած ենք մենք իսկական մնայունի և անանցի առաջ:

Այս կամաւոր հրաժարումը բոլոր անընդունելի ըմբռնումներից կարևոր է Հին Կտակարանի յաջողակ պաշտպանութեան համար: Սակայն նախ քան իսկական ուղն ու ծուծը պարզելը, մի քանի խօսքով պարզենք նրա գեղարուեստական և պատմական նշանակութիւնը առանց ի նկատի առնելու նրա յայտնութեան աղբիւր լինելը:

Գեղարուեստական տեսակէտից ի նկատի պիտի ունենալ, թէ որչափ աչքի ընկնող կերպով զարգացած է պատմելու արուեստը և բանաստեղծութիւնը Հին Կտակարանի մէջ: Այդ արուեստի կատարեալ բարձրութեան վրայ են կանգնած օր. Ծննդոց Ա. ԺԱ. ԺԸ և հետևեալք. ԻԴ. ԽԳ. 24 և հետևեալք. Դատաւորաց Թ. գլուխը զարմացրել է Ալֆրեդ ֆոն Գուդշմիդի նման նշանաւոր պատմաբանին: Պատմելու արուեստի զագաթնակէտին են հասնում Բ. թագաւորաց Թ-Ի գլուխները և Գ. Թագաւորաց Ա. գլուխը: Առաջին հայեացքից թւում է թէ Դաւթի տան այդ պատմութիւնը շատ կասկածելի կէտեր է պարունակում իր մէջ, Դաւթի համար ամօթաբեր բաներ է պատմում. այնպէս որ մինչև անգամ կարծիքներ են յայտնուել, որ այդ գլուխները Դաւթի թշնամի մի մարդու ձեռքից պիտի

լինին, Բենիամինի ցեղից: Բայց երբ որ մարդ ուշադրութեամբ հետևում է, տեսնում է, թէ ինչպէս Ղաւիթը, չնայելով իւր բոլոր պակասութիւններին ու թուլութիւններին, դարձեալ խիստ լատպաւորութիւն է թողնում ընթերցողի վրայ և իբրև իսկական մեծ մարդ, որին միայն յարգել կարելի է՝ հանդիսանում մեր առաջ: Այն ժամանակ միայն կարող է մարդ այդ արուեստն ըստ արժանւոյն գնահատել, հասկանալ այն զարմանալի նուրբ պատճառաբանութիւնը և հոգեբանական բնութագիրը, որ այնպէս համոզեցուցիչ է և Ղաւթին իբրև օրինակելի անձնաւորութիւն է ներկայացնում:

Հին Կտակարանի բանաստեղծական արժանիքի մասին երկար խօսել պէտք չէ. բաւական է միայն մատնացոյց անել Սաղմոս ԻԳ, ԽԳ, Ղ և ՃԳ իմանալու համար, թէ ինչպիսի կրօնական քնարերգութիւն է բովանդակում իւր մէջ Հին Կտակարանը: Յովբի ամբողջ գիրքը իւր զարմանալի կազմակերպութեամբ և բնութեան հրաշալի նկարագիրներով (գլ. ԼԸ և հետևեալները) միայն բաւական է, որ Հին Կտակարանին իւր վայելուչ տեղը տայ ընդհանուր գրականութեան բանաստեղծական արտադրութիւնների մէջ:

Իբրև պատմական աղբիւր նոյնպէս Հին Կտակարանը անգնահատելի է: Վերջին ժամանակներս նոր գիտերն ու սեպածև արձանագրութիւնները ահագին լոյս են սփռել հին ազգերի պատմութեան վրայ, մինչև անգամ Հին Կտակարանին վերաբերեալ շատ խնդիրներ պարզուել են դրանով. սակայն կարծել, թէ այդ նոր լոյսը աւելորդ է դարձնում Հին Կտակարանը, միանգամայն սխալ է, բացի այն, որ արձանագրութիւնների շատ կէտերը միայն Հին Կտակարանի օգնութեամբ ճշմարիտ կերպով հասկանալ կարելի է, կան նաև շատ բաներ, որոնց համար միայն Հին Կտակարանին ենք դիմելու. Ասորեստանի սեպագրերը միայն մի քանի թագաւորների անունն են յիշում Իսրայելի և Յուդայի համար, այն ինչ Հին Կտակարանի մէջ երկու տէրութիւնների թագաւորների շարքը լիովին ունինք: Ծննդոց գրքի Ժ գլուխը, այսպէս կոչուած «Ազգերի ցուցակը» մնում է դեռ, չնայելով բոլոր սեպածև արձանագրութիւններին, մի անփոխարինելի ազգագրական ա. կարգի աղբիւր: Հասկանալի է նոյնպէս, որ Հին Կտակարանը խիստ մեծ նշանակութիւն ունի նաև իբրև մի աղբիւր Իսրայելի, ինչպէս և հարևան ազգերի, քաղաքակրթութեան և կրօնի պատմութեան համար, և այն՝ անընդհատ 1000 տարի տևող պատմութեան: Բոլորովին մի կողմ ենք թողնում այն ահագին ազդեցութիւնը, որ նա ունեցել է և ունի քրիստոնէայ ազգերի վրայ, ով որ կարծում է, որ այդ կապը հեշտութեամբ կտրել կարելի է՝ դեռ լիապէս չի հասկանում նորա զօրութիւնը:

Մնում է Հին Կտակարանի նշանակութիւնը բարոյական և կրօնական տեսակէտներից ապացուցանել, և այդ ամենագլխաւորն է:

Որ Հին Կտակարանի բարոյական հասկացողութիւններն ու նախադրութիւնները պակասաւոր են, որոնք և անկարելի են դարձնում այն իբրև օրինակելի և մանկավարժական տեսակէտից

բացարձակապէս գործածական հռչակելու՝ արդէն առաջ առանց այլ և այլի ընդունեցինք: Սակայն ինչքան էլ որ անյարմար բաները խստութեամբ ջոկուին և հեռացուին, դեռ որքա՞ն նիւթ է մնում, որ բարոյական դրդիչ լինել և օրինակելին ցուցնել կարող է:

Մի անփոխարինելի կորուստ կլինէր, օրինակ, եթէ քրիստոնէական մանկավարժութիւնը հրաժարուէր սքանչելի կարճ ու կտրուկ նախադասութիւններից կազմուած տասնաբանեայ պատուիրանները, իրենց անպայաման հրամայական «Պիտի»-ով, (կամ մեր գրաբառի «Մի»-ով), իւր սանիկներին սովորեցնելուց:

Ինչո՞վ կարելի է հապա փոխարինել նախահայրերի պատմութիւնը. Ռոբինզոններո՞վ, ազգային նախապատմական հէքիաթներո՞վ, թէ՞ Ոդիսևսից վերցրած պատմուածքներով. ի հարկէ ոչ մէկը չէ կարող նախահայրերի պատմութեան տեղը բռնել: Սկզբում մանուկը շատ չնչին բան կհասկանայ այդ պատմութիւնից. սակայն այդ քիչը ընդունում է նրա բնագոյաբար իբրև մի խորին և նշանաւոր բան. այդ զգացման հետևանքն է լինում մի սուրբ ահ, մի զգացումն, որ ասում է թէ սուրբ հողի վրայ ես կանգնած: Եւ այս է իսկապէս այս պատմութիւնների ամենալաւ կողմը. միայն սրանք են կարողանում այդպիսի զգացում յառաջ բերել և խորապէս ազդել մանկան հոգու վրայ: Այդ պատճառով էլ շատ լաւ կլինի այդ պատմութիւնները բոլորովին այնպէս սովորեցնել, ինչպէս որ կան Հին Կտակարանի մէջ, առանց որ և է փոփոխութիւնների և բացատրութիւնների՝ դրանով միջոց տալով, որ պատմութիւններն իրենք իրենց բովանդակութեամբ ազդեն: Ի հարկէ նիւթի ընտրութիւնը պէտք է լինի, և այն խիստ՝ ըստ կարելւոյն:

Մայրերը, ուսուցիչները, և վերջերս միսիոնարները՝ խոստովանում են, որ Յովսէփի պատմութեան տեղ ոչինչ աւելի լաւ և ազդու նիւթ դնել չէ կարելի: Շատերը կարծում են, թէ այդ ազդեցութիւնը յառաջ է գալիս նրանից, որ այդտեղ պատմուած են ընտանեկան դէպքեր, տպաւորութիւն գործող իրողութիւններ մարդկային՝ ընդհանուրին ըմբռնելի, յարաբերութիւններից. բայց այդ չէ հիմնականը: Հիմնականն այն է, որ այդ պատմուածքների մէջ փայլում է այն մխիթարիչ հաւատը, թէ մարդոց բախտը գտնուում է Աստուծոյ զարմանալի և բացարձակ արդար կառավարութեան ներքոյ: Յովսէփն ինքն այն նշանաւոր նախադասութիւնն է արտասանում, իբրև իւր պատմութեան ամբողջ բովանդակութիւն, թէ «Դուք մտածեցիք ինձ հետ չար վարուել, բայց Աստուած մտածեց այն բարի դարձնել»:

Ամբողջ բարոյական աշխարհայեցողութիւնը Հին Կտակարանի մէջ շատ վեհ է առհասարակ. այդ յառաջ է գալիս ամենից աւելի այն կենդանի հաւատի շնորհիւ, թէ Աստուած բացարձակ սուրբ է և արդար, ուստի նրանից պիտի երկնչել: Աստուծոյ երկիւղն է բոլոր իմաստութեան սկիզբը, ասում է Հին Կտակարանի իմաստունը:

Թէ ինչպիսի բարոյականութիւն էր յառաջ բերում Իսրայէլի կրօնը կեանքի մէջ, երևում է ոչ թէ օրէնքի պատուիրաններից, որոնցից մի քանիսը հարկաւ խիստ նուրբ բարոյական հասկացողութիւն են ցոյց տալիս, ինչպէս Ելից ԻԳ. 4 ... կամ Երկրորդ օրինաց ԻԲ. 1 ..., և գլխաւորապէս ԻԴ. 10. - այլ այնպիսի յանկարծական վկայութիւններից, որպիսին օր. մեզ Հռութի փոքրիկ գիրքն է տալիս: Այդտեղ արդէն կեանքն իւր ամբողջ էութեամբ կրօնական գաղափարի ներքոյ է և նրանից բղխող բարոյական տեսակէտն է իշխում: Այդ փոքրիկ գրքի նմանը չունի ամբողջ հեթանոսական գրականութիւնը:

Հին Կտակարանի անփոխարինելիութիւնը կրօնական տեսակէտից յառաջ է գալիս Աստուծոյ գաղափարի խոր և մաքուր լինելուց: Ջարմանալին այն է, որ Աստուծոյ գաղափարը զարգանալով և աւելի ու աւելի լուսաւոր կերպով ըմբռնուելով պատմութեան ընթացքում՝ մի տեսութիւն չէ դառնում, այլ Իսրայէլի Աստուածը կլենդանի Աստուած է մնում միշտ. նա այն ապահով ժայռն է, որի վրայ հաւատն է հանգչում՝ այն նպատակը, դէպի որն ուղղուած է բարեպաշտի յոյսն ու անծուկը:

Մինչև անգամ Աստուծոյ յաւիտենականութիւնը, ամենուրեք լինելը և ամենագիտութիւնը զարմանալի կերպով իսկոյն կրօնական հիմքի վրայ են դրուում, և ոչ թէ բացատրութիւնների յետևից ընկնելով՝ անոնց մէջ կորչում, ինչպէս այդ անում էր միջնադարեան սքոլաստիկը: Սաղմոսերգուն ասում է միայն խիստ պարզ կերպով. «Տէ՛ր Աստուած, Դու՛ ես մեր ապաւէնը ընդ միշտ»: Այո՛, միայն Աստուած, որ աշխարհի ստեղծումից առաջ կար, կարող է մարդու մխիթարութիւնն ու ապաւենը լինել: Շատ գեղեցիկ և անօրինակ է նմանապէս Աստուծոյ գաղափարը ՃԼԹ. սաղմոսի մէջ բոլոր բնագանգական խնդիրները մի կողմ են թողնուած և միայն կրօնականը ի նկատի առած. «Տէ՛ր, Դու քննում ես և ճանաչում ինձ, նստիլս ու կանգնելս յայտնի է Քեզ, իմ մտքերս հասկանում ես Դու արդէն հեռուից»: Աստուած ճանաչում է և գիտէ մարդկային սրտի ամենախորին գաղտնիքները և Նրա առաջից ոչ մի կերպով փախչել չի կարելի, ոչ դէպի երկինք և ոչ դէպի դժոխք. ամէն տեղ հասնում է նրա ամենակարող ձեռքը և ամենախորին խաւարը լոյս է Նրա առաջ: Այսպէս ազդեցիկ կերպով Սաղմոսերգուն դժուարին վերացական խնդիրները մարդու սրտի և խղճի ազդարար է դարձնում. և այն աստուածագիտութիւնը, որ նրան այդ շնորհքն է տալիս, անշուշտ մարմնոյ և արեան յայտնագործածը չէ: Աստուծոյ գաղափարը Հին Կտակարանի մէջ արդէն այն աստիճանի է հասել, որ Նոր Կտակարանը նրա վրայ աւելացնելու գրեթէ բան չունէր այլ ևս: «Մանուկ էի և ծերացա, բայց չտեսայ, որ բարեպաշտը երեսի վրայ թողած մնայ և նրա ժառանգները հաց մուրան» (Սաղմ. ԼԷ. 25). «Եթէ մարմինս ու հոգիս բոլորովին կորչի էլ, Աստուած է հոգուս ապաւէնը և իմ բաժինը» (Սաղմ. ՀԳ. 26). – միայն այս նախադասութիւնները, որ բղխում են մի ներքին կռիւ մղողի բերանից, ցոյց են տալիս, թէ ինչ է եղել Հին Կտակարանի Աստուածը: Այնպիսի աղօթք է այս, որի մէջ փայլում է անսասան յոյսն առ Աստուած, և առհասարակ Հին Կտակարանի մէջ աղօթքը ներկայանում է իբրև

կրօնական կեանքի պիտանացու գործը և կրօնական հոգու անհրաժեշտ շունչը: «Արժանի չեմ այն բոլոր շնորհներին և ողորմութեան, որ դու քո ծառային ցոյց տուիր» - Յակովբի աղօթքն է այս: Բայց անմենասքանչելին Յովբի կարճ խօսքերն են. Իահուէն¹. տուել էր, Իահուէն առաւ, օրհնեալ լինի Իահուէի անունը: Այս խօսքերից ոչ մէկը չի կարելի ինքն իրեն առանձին վերցնել և կապակցութիւնից տանել, եթէ չենք ուզում, որ նոքա իրենց ազդեցութիւնը կորցնեն:

Սակայն դեռ այս չէ բոլորը. ամենաբարձրը դեռ յետոյ է գալիս: Հին Կտակարանի մնայուն նշանակութիւնը հիմնուում է այն բանի վրայ, որ նրա մէջ է պահպանուած խիստ որոշ կերպով աստուածային փրկութեան նախագիծը և փրկութեան ճանապարհի էութիւնը՝ այն փրկութեան, որ Նոր Կտակարանի մէջ, յանձին Յիսուս Քրիստոսի, իւր վերջն ու կատարումն է գտնուում:

Անշուշտ հեթանոսական կրօնների և փիլիսոփայութեան մէջ էլ հանդէս են գալիս բարոյական մեծ լրջութիւն և կրօնական խոր հասկացողութիւն, բայց մենք այստեղ փրկութեան նախագիծ չենք էլ մտածում որոնել:

Իսրայէլի կրօնի մէջ մի բան կայ, որ բարձր է բոլոր մարդկային տեսութիւններից և մարդկային մտքով բացատրել չի կարելի՝ որ բացարձակապէս խայտառակում է բոլոր զարգացման տեսութիւնները: Դա Իսրայէլի կրօնի մարգարէութիւնն է: Կարճ ասելով, եբրայական մարգարէներն ուսումնասիրել՝ նշանակում է Աստուածային յայտնութեան էութիւնը ուսումնասիրել ամենալաւ աղբիւրներից. այդ մի կողմ դնել, նշանակում է արհամարհել կրօնական ըմբռնման և հաւատի հաստատութեան ամենաէական խթանը: Ով որ Հին Կտակարանի մարգարէութեամբ զբաղուէ, նրա համար այլ ևս ոչինչ նշանակութիւն չեն ունենայ միւս գայթակղութիւն յառաջացնող տեղերը և կկորցնեն իրենց յետ մղող ոյժը: Այս մարգարէութեան առաջ ամբողջ Հին Կտակարանն ոտի տակ տուող սոցիալ-դեմոկրատներն անգամ կանգ են առնում և հին Իսրայէլին խիստ կերպով յանդիմանում, որ իւր մարգարէներին և նրանց վարդապետութիւնը արհամարհել է. այդ վարմունքով նոքա ի հարկէ ցոյց են տալիս մարգարէութեան իրաւունքն ու արժէքը ընդհանրապէս:

Մարգարէների նշանակութիւնն այն չէ, ինչ որ սովորաբար նրանց տրուում է՝ մի կարողութիւն առաջուց գուշակելու գալիք երևոյթները այլ այն հաստատուն իրականութիւնը, որ նոքա Աստուծոյ անմիջական գործիքներն ու կենդանի վկաներն են, որի անունից խօսում են՝ երաշխաւորը այն բանի, որ մի կապակցութիւն կայ յաւիտենական Աստուծոյ և Իւր ընտրեալ գործիչների մէջ: Ինչպէ՞ս, դա մի գաղտնիք է և կմնայ գաղտնիք: Այսպիսի գաղտնիք է օրինակ մի հոգու ունեցած ազդեցութիւնը միւսի վրայ. բայց այդ ինչքան էլ անբացատրելի, այնուամենայնիւ իրականութիւն է և հաստատ

¹. Այսպէս է Իսրայէլի Աստուծոյ իսկական անունը: Իեհովա ընթերցուածը թիրիմացութիւն է՝ այն հանգամանքից յառաջ եկած, որ հրէաները Աստուծոյ անունը տալ մեղք էին համարում եւ Աստուածաշունչի մէջ բոլոր այն տեղերը, ուր Իահվէ է գրած՝ Ադոնայ (Տէր իմ) էին կարդում, դնելով սորա ծայնաւորները «Իահվէ» բառի վրայ:

իրականութիւն՝ նման ելեքտրական կայծի, որ դատարկ օդի միջով էլ կարող է իւր նպատակակէտին հասնել և ներքին հաղորդակցութիւն յառաջ բերել:

Բայց մի՞թէ մարգարէութիւնը բացառապէս Հին Կտակարանին է պատկանում միայն. մի՞թէ հեթանոսական կրօնները միշտ այդպիսի երևոյթներ չեն ունեցել. մի՞թէ յունական և այլ ազգերի տեսանողները, Աստուծոյ ոգուց բռնուածները, բոլորը խաբեբաներ և կեղծաւորներ են եղել. մի խօսքով, ինչո՞ւ համար Հին Կտակարանի մարգարէութիւնը այս բոլոր երևոյթներից տարբեր է նկատուում և ուրոյն կերպով գնահատութեան արժանանում: - Ճշմարիտ է, որ այլ կրօնների մէջ էլ այդ տեսակ երևոյթներ՝ արևելքում ընդհանրապէս մինչև Մուհամէդ, եղել են. բայց ի՞նչ համեմատութիւն Իսրայէլի զարմանալի և անչափ բարձր մարգարէութեան հետ: Որոշիչ նշանը և գլխաւորն այստեղ այն է, որ Հին Կտակարանի մարգարէութիւնը ծառայում է մի աստուածային փրկութեան նախագծի (Heilsplan): Ի՞նչ անհեթեթ և անիրագործելի բան կլինէր ընդհակառակն Թերեզիասին կամ Կասսանդրային Ջեսի կամ Ապօլլոնի փրկութեան նախագծի յառաջ տանողներ համարելու գաղափարը միայն: Եթէ սոցա թողնենք և անմիջապէս Եսայի կամ Երեմիա մարգարէին դառնանք, իսկոյն կնկատենք, թէ ի՞նչ մեծ նշանակութիւն ունի այս մարգարէութիւնը Իսրայէլի կրօնի համար և թէ ինչպէս մինչև այսօր էլ մեզ համար պահպանում է իւր նշանակութիւնը: Մարգարէանալ նշանակում է այստեղ մի նպատակի ծառայել, որից ինքը մարգարէն ոչ մի ուժով խուսափել չէ կարող. ի զուր և անօգուտ է նրա համար դէպի Արևմուտք փախչել, երբ Աստուծոյ ձայնը դէպի Արևելք է կանչում: Այդպէս է սովորեցնում Յոնան մարգարէի փոքրիկ պատմութիւնը:

«Առիժը մռնչում է, ո՞վ է որ չի վախենայ. Տէր Իահուէն է խօսում՝ ո՞վ է որ չի մարգարէանայ» (Ամովս Գ. 8). ահա այն ոյժը, որ կապած է պահում Իսրայէլի մարգարէին իւր առաջ դրած նպատակի հետ: Երեմիա մարգարէի տարօրինակ խոստովանութիւնը (Ի. 7. և այլն) ուղղակի մի բանալի կարելի է համարել, որ պարզում է Հին Կտակարանի մարգարէութեան էութիւնը. «Դու ինձ յիմարացրիր, Իահուէ, և ես թոյլ տուի ինձ յիմարացնելու. բռնեցիր ինձ և յաղթահարեցիր, ծանակ եմ դարձել ընդհանուրին, ամէնքը ծաղրում են ինձ: Ես մտածեցի - էլ չեմ յիշի նրա անունը և նրա անունից էլ չեմ խօսի. բայց դա դարձաւ ինչպէս մի բորբոքած կրակ իմ ներսը, ոսկորներս վառուեցան. ես աշխատեցի դիմանալ, բայց չկարողացայ »:

Աւելի ուժեղ և աւելի ազդեցիկ կերպով չէր կարող արտայայտուել մարմնաւոր կամքի և Աստուածային յայտնութեան խօսքի ճնշող ուժի հակառակութիւնը և ով կարող է յանդգնել պնդելու, որ Երեմիան այս ներքին մարտը միայն հնարել է իրենից, կամ թէ ինքն իրեն խաբել է դրանով:

Այս բոլորից յետոյ իսկոյն կերևայ, որ Հին Կտակարանի մարգարէութեան գլխաւոր և հիմնական կէտը մեսիական գուշակութիւնները չեն: Յիրաւի մենք Բաբելոնի գերութիւնից առաջ եղած մարգարէների մէջ համարեա ամենևին չենք պատահում մեսիական գուշակութեան, և հիմնական

գիծն այդ չէ առնուազն: Ի հարկէ այնտեղ էլ կան մի քանի մխիթարական խօսքեր՝ մեսիական նշանակութեամբ, բայց ամենագլխաւորն է՝ մի կողմից մեղքի ծանրութիւնը, որը ժողովրդի յանցանքների շնորհիւ աւելի և աւելի է մեծանում և որի նկատմամբ պակասում է ժողովրդի ինքնագիտակցութիւնը, միւս կողմից՝ մի այլ փրկութեան, քան Աստուծոյ կողմից եկածի, անհնարին լինելը. այս երկու գիտակցութիւնը զարթեցնել և անոնց սնունդ տալ, ահա մարգարէների սուրբ նախանձախնդրութեան նպատակը: Սոքա են այն հաստատուն սիւները, որոնց վրայ ապա հիմնւում է նաև Նոր Կտակարանի քարոզը: Ապաշխարութեան յորդորը բերանին է հանդէս գալիս Յովհաննէս Մկրտիչը իւր քարոզով. փրկչի քարոզն անգամ դրանով է սկսւում. «Ապաշխարեցէ՛ք, որովհետև երկնքի արքայութիւնը մօտ է»:

Այն հանգամանքը, որ Քրիստոսի քարոզն ևս սկսւում է մարգարէների քարոզի հիմնական կէտից, ցոյց է տալիս պարզ, որ Քրիստոսի մէջ յայտնագործուած Աստուածը այն Աստուածն է, որ մի ժամանակ Իսրայէլի մէջ մարգարէների միջոցաւ խօսել է: Նա կատարելագործում է միութեան այն կապը, որ Հին Կտակարանի մէջ սկսուած էր: Տիրոջ այս վկայութեամբ Հին ու Նոր Կտակարանը կապւում են միմեանց հետ անբաժան կերպով: Եւ յիրաւի՛, ոչ ոք չէ կարող Նոր Կտակարանը ճշմարտապէս հասկանալ, եթէ լաւ ծանօթ չէ Հին Կտակարանին: Իսկ Հին Կտակարանի այս անհրաժեշտութիւնն արդէն ամենալաւ ապացոյցն է նրա մնայուն նշանակութեան: Սակայն եթէ մենք կամենում ենք, որ Հին Կտակարանն ամենևին չկորցնէ իւր նշանակութիւնը, պէտք է մի կողմ թողնենք անցանելին ու փոփոխականը նրա մէջ և եռանդ գործ դնենք անփոփոխն ու մնայունը աւելի ևս բարձրացնելու՝ թէ Եկեղեցում և թէ Դպրոցում:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԵՆ ԲՈՒԴԴԱՅԱԿԱՆԻԹԻՒՆ*

Առաջին հարցն է այստեղ, թե արդեօք այդ կրօններից մեկը միւսի վրայ անմիջական ազդեցություն ունեցե՞լ է՝ արդեօք 6-5 դար առաջ հրապարակ ելաղ բուդդայականությունը որեւէ ազդեցություն գործել է քրիստոնեության ծագման վրայ: Շատերը կարծում են, որ այդ ազդեցությունը տեղի է ունեցել, քանի որ շատ նման գծեր կան երկու կրօնների աւանդությունների մէջ: Սրմէօն ծերունու, սիրեցեալ Յովհաննէսի, Յուդայի, աւետեաց, հրաշալի ծննդեան, փորձութեան, առաքեալների քրոզութեան ուղարկելու, Սամարացի կնոջ-պատմությունների՝ մինչև իսկ աւետարանի խօսքերի եւ առակների, համեմատ կամ նման աւանդություններ կան նաև բուդդայականութեան մէջ: Այս հանգամանքը առիթ է տուել շատերին կարծելու, որ բուդդայականության ազդեցութեամբ են այդպիսի բաներ գտնուում նման քրիստոնեության մէջ: Բոլորովին մի կողմ ենք թողնում մի քանիսի, գլխաւորապէս Նօտովիչի՝ այն երևեկայական և անմիտ ենթդրությունը, թէ Քրիստոս իւր մկրտութիւնից առաջ Հնդկաստանում բուդդայականութեան աշակերտ է եղած: Ռուդոլֆ Ջայդէլը կամէնում էր ապացուցանել, որ մեր ներկայ աւետարանների վրայ բուդդայական գրականությունը մեծ ազդեցություն է ունեցել. այս ենթադրությունը ըստ ինքեան կարող էր հաւանական լինել, բայց Ջայդէլի ապացոյցները շատ թոյլ են: Այդ ենթադրությունը ապացուցանելու միջոց առ այժմ չունինք և չենք էլ կարող որոշել թէ ինչ ճանապարհով է եղել ազդեցությունը, բայց բոլորովին հաւանական համարել պէտք չէ: Եթէ այժմ հաստատապէս պնդում են շատերը, թէ Յոյների Եզովպոսի առակները հնդկական ծագումն ունին, այն ժամանակ հասկանալի կլինի նաև այդպիսի ազդեցություն քրիստոնեության վրայ: Սակայն շատ հաւանական է, որ այդ ազդեցությունը բանաւոր, և ոչ գրաւոր, ճանապարհով կատարուած լինի: Ինչ որ է, այս հնարաւոր աւանդություններից ոչ մեկը չի վերաբերում քրիստոնեության որևէ *էական կէտին*, այլ նրա ազդեցություններին միայն. ուրեմն կրօնի էութեան տեսակէտից միանգամայն անհետաքրքրական են դոքա: Բախտի մի խաղն է սակայն, որ յետոյ Բուդդան իբրև Յովսափաթ ընդունելություն է գտել կաթոլիկ եկեղեցու սրբոց շարքում և միևնոյն ժամանակ այսպէս կոչուած «Թովմասի (Յիսուսի աշակերտ) գործեր»ը, Գուտշմիդի ապացուցման համաձայն, գտնուում են ներկայումս մի բուդդայական սրբի պատմութեան մէջ:

* Այս յօդուածը քաղում ենք նորերս լոյս տեսած մի գեղեցիկ գրքոյկից, որի հեղինակն է Բազելի համալսարանի աստուածաբանութեան անուանի ուսուցչապետ Ալֆրեդ Բերթոլետ և որ իւր կողմից հիւսուածք է Օլդենբերգի նշանաւոր գրուածքից և այլ յայտնի գրքերից:

Կարելի էր համեմատութիւնը երկու անձնաւորութիւններից, Յիսուսից և Բուդդայից, սկսել և դրանց տարբերութեամբ կրօնների առանձնայատկութիւնները բացատրել: Սակայն այդ անձնաւորութիւնների պատկերը մի կողմից բաւականաչափ սուր կերպով գծագրուած չէ, միւս կողմից շատ զարդարուած է: Այնուամենայնիւ ինչպէս քրիստոնէութեան ոյժը Քրիստոսի, այնպէս և բուդդայականութեան ոյժը Բուդդայի մեծ անձնաւորութեան մէջ պէտք է որոնել. թէև նրա մեղանաղծոտ խրատները շատ հեռու են Յիսուսի սրբազան գայրոյթից, որ արտայայտուած է օրինակ սքանչելի կերպով փարիսեցւոց դէմ ասած ճառի մէջ. այլ և չի կարելի համեմատել երկուսի ուսուցման եղանակը. Բուդդայի ուսուցման եղանակը յոգնեցուցիչ և սքօլաստիքական բնաւորութիւն ունի, Յիսուսինը պարզ է և բնական: Այնուամենայնիւ Բուդդան մեծ անձնաւորութիւն է. այդ երևում է Բենարէտում տեղի ունեցած յայտնի տեսարանից, ուր 5 ձգնաւորներ Բուդդային, իբրև ուրացողի (որովհետև առաջ նա էլ նոյն ձգնաւորական խմբին էր պատկանում), ոչ մի պատիւ չեն տալիս, սակայն շուտով յաղթահարում են նրա վեհ երևոյթից և դէմքի արտայայտութիւնից և դառնում են նրա առաջին ու յարգանքով լի աշակերտները. «այդ թոպէից ի վեր աշխարհում 6 հատ սրբեր կային». բաւական է միայն յիշել այն խօսքերը, որ ասում է նրանցից աւագագոյնը, Սունիտան. «Ծագմամբ հասարակ սերնդից եմ, աղքատ և սակաւապետ. հասարակ էր այն գործը, որ ես կատարում էի՝ ես հաւաքում էի թառամած ծաղիկներ. մարդիկ արհամարհում էին ինձ և ծաղրում՝ ես հեզ հոգւով յարգանք էի մատուցանում շատերին, այդ ժամանակ տեսայ Բուդդային իւր ձգնաւորների խմբի հետ, երբ նա, մեծ հերոսը, ներս էր մտնում Մագադայի ամենավեհ քաղաքը: Այն ժամանակ ես դէն նետեցի իմ բեռը և մօտեցայ նրան յարգանքս մատուցանելու. խղճալով վրաս կանգնեց մարդկանցից մեծագոյնը. ես ընկայ վարդապետի ոտները և խնդրեցի նրան, բոլոր էակներից ամենաբարձրին, ինձ իբրև ձգնաւոր ընդունելու: Այն ժամանակ ողորմած վարդապետը, ամբողջ աշխարհի վրայ գթացողը, պատասխանեց. «Արի՛ ինձ մօտ, ո՛վ ձգնաւոր». այս էր այն ձեռնադրութիւնը, որ ես ընդունեցի»:

Ամենայն իրաւամբ Հոպկինսը համարում է Բուդդային այն մարդկանցից, որոնց լոկ անձնաւորութիւնը բաւական է ոչ միայն առաջնորդ, այլ և կուռք դարձնելու նրանց մարդկանց համար: Աւելի միամիտ կերպով արտայայտում է Մարկո Պօլօն միևնոյն միտքը. «Si Budda fuisset Christianus, fuisset apud deum maximus factus» («Եթէ Բուդդան քրիստոնէայ լինէր, Աստուած նրան ամենաբարձր տեղը կդասէր»):

Ինքը Բուդդան իւր անձնաւորութեանը այդպիսի կեդրոնական տեղ տալ չէ կամէնում. նա համարում է իրեն միայն առաջինը այն շատերից, որոնք անգիտութեան ձուն կոտրել են և նրա միջից դուրս եկել. իւր մահից անմիջապէս առաջ պահանջում է նա իւր աշակերտներից, որ իւր անձնաւորութիւնը բոլորովին մի կողմ թողնեն. նրա վերջին խօսքը իւր սիրելի Անանդային հետևեալն է. «Կարող է պատահել, որ դուք այսպէս մտածէք. *խօսքը* կորցրեց իւր վարդապետին, մենք այլ ևս

վարդապետ չունինք. բայց Դուք այդպես չպիտի մտածեք, Անանդա՛. այն վարդապետութիւնը, Անանդա՛, և այն օրէնքը, որ ես Ձեզ ուսուցի և քարոզեցի՝ ձեր վարդապետը կլինի, երբ ես մեռնեմ»։ Ով որ բուդդայականութեան սկզբնական երթիւնը ճանաչել է ուզում, չպիտի մոռանայ այս խօսքերը։ Միանգամայն իրաւացի կերպով է Օլդենբերգն ասում. «Բուդդայական վարդապետութիւնը կարող է բոլոր էական կէտերում այն լինել լինել, ինչ որ է, առանց Բուդդայի անձնաւորութեան էլ»։ Այստեղ արդէն տեսնում ենք մի մեծ տարբերութիւն բուդդայականութեան և քրիստոնէութեան մէջ, և սա խիստ նշանաւոր է այն տեսակէտից, որ մենք այստեղ անձնական տարրի յետադասումն ենք նկատում կրօնի մէջ։

Երկու կրօնների համեմատութեան համար աւելի լաւ է մի այլ կէտից սկսել, որ երկուսին էլ յատուկ է. երկուսն էլ կամէնում են «փրկութեան կրօն» լինել (Erlösungsreligion). բուդդայականութեան ամենայայտնի մտքերից մէկն է՝ «ինչպէս որ մեծ ծովը, ո՛վ աշակերտներ, միայն մի համ ունի իւր մէջ, այն է աղի համը. այնպէս էլ, ո՛վ աշակերտներ, այս վարդապետութիւնն ու օրէնքը միայն մի համով՝ այն է փրկութեան համով է լցուած»։ Որ քրիստոնէութիւնը նոյնպէս փրկութեան կրօն է, կարիք չկայ ապացուցանելու. բաւական է միայն յիշել, որ նրա հիմնադիրը փրկիչ է կոչւում։ Դէպի փրկութիւն մղողը քրիստոնէության մէջ մեղքի, մարդկային յանցանքի զգացումն է։ Ինչ որ Բուդդային է դէպի փրկութիւն մղում, այդ, համաձայն յայտնի աւանդութեան, որ անշուշտ ուղիղ կերպով է ըմբռնուել՝ ծերութեան, հիւանդութեան և մահի նրա վրայ արած ճնշիչ տպաւորութիւնն է։

Բայց ծերութիւնը, հիւանդութիւնը և մահը մարդոց դրութիւններ են, և ոչ *գործ*՝ այս աշխարհի ցաւ ու տանջանք են, բայց ոչ *չարք*. կարճ ասած, դոքա բնական երևոյթներ են, և ոչ բարոյական։ Բայց այդ երեքը Բուդդայի համար բաւական են փրկութեան ձգտելու. «Եթէ երեք բան աշխարհումս չլինէին, ո՛վ աշակերտներ, այն ժամանակ չէր գայ կատարեալը՝ սուրբ և բարձրագոյն Բուդդան, այս աշխարհը. այն ժամանակ աշխարհս չէր լուսաւորի այն վարդապետութիւնն ու օրէնքը, որ *Կատարեալն* է քարոզում. ի՞նչ են այս երեք բաները. ծնունդ, ծերութիւն և մահ»։ Բուդդայական հաւատամքի առաջին նախադասութիւնն է դարձել այդ պատճառով. «Ո՛վ ճգնաւորներ, այս է ճշմարտութիւնը տանջանքի մասին. ծնունդը տանջանք է, ծերութիւնը տանջանք է, հիւանդութիւնը տանջանք է, մահը տանջանք է, չսիրածի հետ միացած լինելը տանջանք է, սիրելուց բաժանուելը տանջանք է, չստանալ այն, ինչ որ մարդ կամէնում է, տանջանք է. կարճ ասած, աշխարհայինից հնգակի կերպով կախուած լինելը տանջանք է»։ Ուրեմն բուդդայականութիւնը կամէնում է տանջանքից, զուտ երևութական դրութիւնից փրկել. «Մի բան են միայն քարոզում այսօր, ինչպէս առաջ, ո՛վ աշակերտներ, տանջանք և տանջանքի ոչնչացումն»։ Այստեղ տեսնում ենք արդէն երկու կրօնների տարբերութիւնը. նոքա ծնունդ են բոլորովին տարբեր տրամադրութիւնների։

Հնդիկ ժողովուրդը, որ անշուշտ մի ժամանակ գործունեայ և կենսունակ ազգ էր, քանի դեռ թերակղզու հիւսիս արևմտեան մասում էր բնակւում՝ ենթարկուեց հասարակածային տաք ու խեղդող կլիմայի ազդեցութեան, հայրենիքը փոխելուց յետոյ: Այդ փոփոխութեան հետևանքն եղաւ այն կենազուրկ և յոգնած զգացմունքը աշխարհայինի իւր տանջանքների, որի լի ու լի պատկերը Բուդդան է ներկայացնում, որը մինչև անգամ ընտանեկան երջանկութիւնն է մերժում: Բուդդայականութիւնը յառաջ չէ գալիս միայն Բուդդայի անձնական զգացմունքից, այլ մի ընդհանուր պատկեր է իւր ժամանակի տրամադրութեան, և Բուդդան յաջողութիւն ունեցաւ ոչ այն պատճառով, որ նա աւելի պակաս հնդկական եղանակով էր մտածում, քան ուրիշները, այլ ընդհակառակը, որովհետև նա իւր բարեփոխութիւնները հնդկական ժողովրդի հոգուն էր յարմարեցնում և ինքն անձնապէս այդ տրամադրութեան կատարեալ ներկայացուցիչն էր:

Բոլորովին այլ կերպ է ընթանում զարգացումը Իսրայէլի ժողովրդի մէջ: Այստեղ չկան այլ ևս այն հայեցողական կամ սպեկուլատիւ ձգտումները, ինչ որ հնդիկների մէջ. դորա փոխարէն մի երկար շղթայ կենդանի և փոխադարձ յարաբերութեան՝ պատմութիւն ստեղծող և պատմութիւնը ղեկավարող Աստուծոյ հետ. մի Աստուծոյ, որ սկսած Իսրայէլի ազգ դառնալու օրից, Եգիպտոսից ելնելուց, ուր Նա իւր հզօր օգնութիւնը ցոյց տուեց, միշտ ի նորոյ ստեղծագործում և իւր հզօր բազուկը աշխարհի վրայ տարաւելով յառաջ է տանում իւր կամքը, չնայելով իւր ժողովրդի անհասկացողութեան և հակառակութեան, չի կամէնում բաժանուել նրանից, որովհետև մի հաստատուն նախագիծ ունի նրա համար: Նա իւր ազգին մեծ փառքի հասցնել է կամէնում, բայց այդ դեռ տեղի չի ունենում շնորհիւ հակառակող զօրութիւնների և ժողովրդի մեղքի: Այս ձգտումների և յոյսերի միջից, այս դէպի ապագան ուղղուած տրամադրութեան մէջ յառաջ եկաւ ու ծնունդ առաւ քրիստոնէութիւնը: «Աստուծոյ արքայութիւնը մօտեցել է»- քարոզով է սկսում Յիսուս, և նրա վարդապետութիւնը մինչև վերջն էլ դէպի գալիքն ուղղուած է մնում: Նրա ամբողջ քարոզի նպատակն է զարթեցնել մարդկանց խիղճը յաւիտենականութեան հանդէպ: Սա բոլորովին այլ բան է, քան միայն այս աշխարհի տանջանքից փրկելը: Նոր յառաջացած կրօնը այստեղ չի հիմնւում յոռետեսական հայեցողութեան վերջին նախադասութեան վրայ՝ այլ մի կենդանի և անձնական պատմութեան փաստի վերայ, մի պատմութեան Աստուծոյ և իւր ժողովրդի մէջ, և կամէնում և այն արգելքները ոչնչացնել, որոնք այս պատմութեան կատարելութեան խոչընդոտ են հանդիսացել: Այդ պատճառով այս կրօնը հէնց ինքը դառնում է մի կտոր պատմութիւն Աստուածութեան և մարդկութեան մէջ, մի պատմութիւն ողորմած հօր իւր որդուց մէջ, ինչպէս որ Յիսուս «Հայր մեր»-ի միջոցաւ ուսուցանում է,- մի պատմութիւն մարդկային հոգու և իւր Աստուծոյ մէջ: Օգոստինոսն ասում է. «Աստուծուն և Հոգուն են կամէնում ճանաչել, ուրիշ ոչինչ. ոչինչ»:

Այս է քրիստոնեության և բուդդայականության ամենախոր տարբերությունը: Այստեղ կրօնի հիմնաքարը պատմությունն է, այնտեղ ընդհակառակը հայեցողությունը (Spekulation):

Եթէ այդ հայեցողությունը մօտիկից քննենք, կտեսնենք որ բուդդայականության հաւատամքի երկրորդ նախադասությունը մեզ առաջնորդել կարող է այս կէտում. «Տանջանքի յառաջ գալու սուրբ ճշմարտությունն այս է. ո՛վ ճգնաւորներ. սա մի ծարաւ է, որը մի վերածնութիւնից դէպի միւսն է առաջնորդում... մի ծարաւ՝ ցանկութիւնների, ծարաւ՝ լինելու, ծարաւ զօրութեան»: Այստեղ ամէնից առաջ մեր ուշադրութիւնը գրաւողը մի երևոյթ է, որն ինքն ըստ ինքեան աւելի հին է, քան բուդդայականութիւնը, բայց որ այդ կրօնի համար էական նշանակութիւն է ստացել: Ամէնից առաջ պէտք է նկատենք որ այստեղ ևս բուդդայականության մի անհետևողականութիւնն ունինք մեր առաջ, որովհետև հէնց վերածնութեան գաղափարի մէջ մի ահագին կտոր բնագանցութիւն կայ, որից իբրև թէ բուդդայականութիւնը ազատ պիտի լինի: Թէ ինչ չափով ֆանտաստիքական է այս վերածնութեան պատկերացումը, կարող է ցոյց տալ Բուդդայի ճառը 30 անապատականների առաջ: «Ի՞նչ եք կարծում, ո՛վ աշակերտներ, ձեր արի՞ւնն է շատ, որ այս վերածնութեան ճանապարհի վրայ միշտ և միշտ ձեր գլխատուելու ժամանակ հոսում է, թէ չորս մեծ ծովերի ջրերը»:

-«Ո՛վ տէր, ինչքան մենք վեհի ուսմունքը հասկացել ենք, որով միշտ դէպի նոր ծնունդ և նոր մահ ենք ընթանում, մեր գլխատուելու ժամանակ աւելի արիւն ենք թափել, քան թէ 4 մեծ ծովերի մեջ ջուր կայ»: Այնուհետև Բուդդան գովում է նրանց պատասխանը և կրկին հաստատում, որ յիրաւի իւր աշակերտները աւելի արիւն են թափել, քան թէ 4 մեծ ծովերի ջրերը, մինչ նոքա վերածնուել են իբրև ոչխարներ, գառներ, եզներ, կովեր կլն: Ի՞նչ հիմունքներով բուդդայականը կարող է այս ձևի վերածնութեան գաղափար յառաջ բերել իւր սեպիական փորձերից. արդեօք այստեղ դեր է կատարում անցեալ էակների մասին եղած յիշողութիւնը: Բայց բուդդայականութիւնը հերքում է այդ լիովին: Ինչպէս յայտնի է, Պղատոնը ուզում էր այդ երևոյթի վրայ հոգու անմահութեան ապացոյցը հիմնել: Սակայն գոյաւոր հոգի (Substantielle Seele) բուդդայականութիւնը ամէնևին չի ընդունում. «Ո՛վ աշակերտներ, ինչ որ մարդիկ հոգի, միտք կամ հասկացողութիւն են անուանում, զիշեր ու ցերեկ յառաջանալով և ոչնչանալով միշտ փոփոխուում է»:

Այստեղ նկատում ենք բուդդայականության մի նոր անհետևողականութիւնը. հակառակ բոլոր գոյաւոր իմացականութեան և հոգու մերժման, բուդդայականութիւնը կատարեալ լուսաւորեալին (Բուդդա), այլ և առանձնապէս քանքարոր մարդկանց, մի կարողութիւն է վերագրում՝ դիտելու իւր բոլոր նախկին եղելութիւնները (Existenz). հասարակ մահկանացուին, որ այդ շնորհը չունի, մնում է միայն հարցնել, թէ արդեօք իւր այժմեան տանջանքները կարող են անցեալ մեղքերի քաւութիւն համարուել, թէ ոչ: Վերջապէս բուդդայական վերածնութեան դէմ է և ժառանգականութեան օրէնքը: Ըստ Բուդդայի մարդ միայն իւր նախկին գործերի, իւր «կարման»ի արդիւնքն է. «Իմ գործը այն

որովայն է, որ ծնուն է, իմ գործը այն սեռն է, որին ես ազգակից եմ»: Սա մերժումն է ամենայն ժառանգականութեան, որ սակայն ամեն թույլ հոր և որդու մէջ նկատել կարելի է: Այս մերժմամբ զանց է առնում բուդդայականութիւնը մի բարոյական պարտականութիւն, որ ունի իւրաքանչիւր ծնող դէպի իւր որդին կրթութեան տեսակէտից. եթէ ամէն մէկը իւր նախկին գործերի ծնունդն է միայն, ապա ուրեմն ծնողն ազատ է բոլոր պարտականութիւններից:

Այն շատ լուսավորուածները, որոնք կարծում են, թէ բուդդայականութիւնը աւելի բարձր է, քան քրիստոնէութիւնը, որովհետև որոշ բուդդայական ուղղութիւններ իհէնց համաձայնութիւնն են շեշտում նորագոյն գիտութեան հետ, մինչ օրինակ այն հարցին թէ արդեօք հրաշք կայ՝ բացարձակ «ոչ» են պատասխանում, -թող լաւ դիտեն, որ մժուկներ չքամէն և ուղտեր կլանեն. բուդդայականութեան վերածնութեան գաղափարը բաւական է նորա խեղճութիւնն ապացուցանելու համար. նա հիմնուած է լիովին բնագանցական հողի վրայ:

Ասացինք որ քրիստոնէութիւնը ներկայացնում է մի պատմութիւն հոգու իւր Աստուծոյ հետ ունեցած հաղորդակցութեան. մինչ բուդդայականութիւնը հոգու էականոր գոյութիւնը մերժում է. չի խնայում միևնոյն ժամանակ նաև Աստուծուն. յայտնի է որ Բուդդան իւր սիստեմի մէջ Աստուծուն ոչ մի տեղ չէ տալիս: Սակայն կրօն առանց Աստուծոյ ըստ ինքեան մի հակասութիւն է. այդ պատճառով շատերը հարցրել են, թէ արդեօք բուդդայականութիւնը կրօն կոչուելու իրաւունք ունի: Բուդդայականութեան բարեկամները մեղմացնում են խնդիրը նրանով, որ ասում են՝ բուդդայականութիւնը գէթ անաստուած չէ, այլ միայն մարդուն ամենաբարձր Աստուծոյ գահը բարձրացնել է կամէնում: Սա ի հարկէ բառերի կռիւ է. գլխաւորն այն է, որ բուդդայականութիւնը մարդուն բոլորովին անօգնական, ինքն իւր գլխին է թողնում. «Քո ես-ով գրգռիր քո ես-ը, քո ես-ով քննիր ես-դ. այն ժամանակ կարող ես ես-դ պահպանել և երջանկութեան մէջ ապրել, ո՛վ ճգնաւոր. որովհետև «ես»ի պահպանը «ես»ն է, «ես»ի ապաստանը «ես»ն է:

Քրիստոնէութեան տեսակէտից այս խօսքերին ի պատասխան կարելի է դնել Օգոստինոսի խօսքը. «Դու ստեղծեցիր մեզ ուղղեալ առ քեզ, և մեր սիրտը անհանգիստ է, մինչև որ քեզ մօտ իւր հանգիստը գտնէ»: Կամ Սաղմոսի խօսքերը. «Հոգիս ծարաւ է Աստուծոյ, կենդանի Աստուծոյ» (Սաղմ. 42,3): Նման զգացում ունեցել են մի ժամանակ նաև հնդիկները. «Ո՞վ պիտի օգնէ մեզ ոչ մի գթացող չկայ, բացի նոցանից. այդ պատճառով կարօտս դէպի աստուածները դարձաւ», կարդում ենք դեռ Ռիզվեդայի մէջ:

Աստուած աւելի մեծ է, քան մեր սիրտը (Ա. Յովհ. 3,20). ահա քրիստոնէութեան պատասխանը մարդկային սրտից այն կողմ չանցնող բուդդայականութեան: Ըստ բուդդայականութեան մարդն ինքն իրեն պիտի փրկէ. սրանով նա ցոյց է տալիս իւր կատարեալ անպատմական բնաւորութիւնը. որովհետև իւրաքանչիւր անձնականի ձգտումն է իրենից այն կոմը անցնել, կատարելանալ այլ

անձնական էակաների հետ. նա կարօտ է այս ցուրտ աշխարհի մէջ մի սրտի, որ իւր համար է բաբախում: Դորա հակառակ բուդդայականութիւնը դարձաւ միայնութեան ամենամեծ կրօնը. իսկ սա մարդկային ամենամեծ թշուառութիւնն է, որ մենք բոլոր մեզ նման և մեզնից բարձր հոգիների հետ յարաբերութիւն ունենալուց զրկուած ենք և միայնգամայն մենակութեան մէջ:

Եւ յիրաւի բուդդայականութիւնը չկարողացաւ իւր զարգացման ընթացքում առանց Աստուծոյ մնալ. Բուդդան դարձաւ բուդդայականների Աստուածը. և այս հաւատը դէպի Բուդդան և ոչ թէ նրա վարդապետութեանը եղաւ պատճառ, ըստ Բենդերի, բուդդայական եկեղեցու կազմուելուն: Դեռ 1858 թուականին Յեյլօնում, ի պատիւ Բուդդայի մի ատամի՝ ահագին տօն կատարուեցաւ: Այս էր այն արդար դատաստանը, որ բուդդայականութիւնը իւր անաստուածութեան վրա իւր ձեռքով կատարեց:

Բուդդայի անաստուածութիւնը մեզ աւելի հասկանալի է կացուցանում նրա յոռետեսութիւնը: Հարկաւ քրիստոնէութեան հիմնադիրն էլ ասում է, որ կան մարդիկ, որոնք աւելի լաւ կլինէր ծնուած չլինէին (Մատթ. 26, 24): Բուդդայի «ծնունդը տանջանք է» ասացուածքի նման. բայց ինչպէս յայտնի է, այդ խօսքը վերաբերում է Բուդդային: Առհասարակ ամբողջ հնագոյն քրիստոնէութիւնը մեղքի գօրութեան հանդէպ այն կարծիքի է, թէ ամբողջ աշխարհը չարութեան մէջ է (Ա. Յովհ. 5, 19, համեմատել՝ Գաղատ. 1,4): Սակայն Քրիստոսի միւս աշակերտների համար մի այլ խօսք է ասած, «Երանի այն աչքերին, որ այն են տեսնում, ինչ որ դուք» (Ղուկ. 10, 23). ուրեմն ոչ թէ ծնուած կամ չծնուած լինելը, ոչ թէ զուտ երևութական դրութիւնն է, որ Յիսուսի համար զլխաւոր դեր է կատարում, այլ դարձեալ «կեանքի պատմութիւնը»՝ այն, ինչ որ մարդու զլխով անց է կենում և այն, ինչ որ մարդ իւր կեանքից շինում է: Այստեղ հանդէս է գալիս քրիստոնէութեան մէջ ևս այն գաղափարը, ինչ որ մենք բուդդայականութեան մէջ տեսանք.... վերածնութեան գաղափարը, այն տարբերութեամբ միայն, որ մինչ բուդդայականութեան համար վերածնութիւն նշանակում է յայտարարել որ *կեանքը* առհասարակ ապրելու արժանի չէ, քրիստոնէութեան պահանջն է մի վերածնութիւն, որ նոր *կեանք* է բերում, ապրելու արժանի կեանք: Յիսուս կարող էր այսպէս մտաւել և այսպէս զգալ, որովհետև նորա համար տանջանքը Աստուծուց է գալիս, և մարդ միայն հնազանդել կարող է. ոչ մի ճնճղուկ գետին չի ընկնում առանց Երկնաւոր Հօր կամքին (Մատթ. 10, 29): Այս հաւատը տալիս է մինչև անգամ այնպիսի լաւատեսութիւն բնութեան եւ կեանքի մասին, որ նա թռչուններին ու ծաղիկներին մարդկանց համար իբրև օրինակ գործ դնել կարող է (Մատթ. 6, 26 և հետևեալք):

Հիւանդութիւնը տանջանք է, ասում է բուդդայականութիւնը. քրիստոնէութեան պատասխանն է. «Թէպէտ և մեր արտաքին մարդը ոչնչանում է, սակայն մեր ներքին մարդը օր ըստ օրէ նորոգում է» (Բ. Կորնթ. 4, 16). Արտաքին տանջանքներից ոչ մէկը հոգուն չի հասնում, այլ բոլորը միայն արտաքին մարմնին են վերաբերում: Այս հասկացողութիւնը անըմբռնելի է յոռետեսութեան համար.

այդ պաճառով շատ ուղիղ է նկատում Ֆրիդրիխ Ֆիշերը. թե յոռետեսութիւնը իսկապէս նիւթապաշտութիւն է, քանի որ նա կեանքի բարոյական գործօնները առ ոչինչ է համարում, այն պատճառով միայն, որ նոքա շօշափելի բաներ չեն:

Մի այլ կողմից ևս դէմ առ դէմ կանգնած են քրիստոնէութեան աստուածականութիւնն ու բուդդայականութեան աստուածութիւնը. քրիստոնէութիւնը սովորեցնում և զգալ է տալիս, որ հաւատացեալին ոչ մի բան չէ կարող Աստուծոյ սիրուց յետ կասեցնել (Հռովմ. 8, 38...): Այդ տեսակէտեից էլ Պօղոս առաքեալը այլ կերպ է հասկանում տանջանքը. նա ոչինչ է համեմատած այն երանութեան հետ, որ մեզ պէտք է յայտնուի: Այսպիսի մտքերը ստիպում են քրիստոնեային ոչ թէ տանջանքն ըստ ինքեան ուշադրութեան առարկա դարձնել, այլ ուղղել հայեացքը դէպի յուսոյ երանելի դաշտը, և հէնց սորանով քրիստոնէութիւնը բուդդայականութեան վրա անկասկած հաղթանակ է կանգնեցնում. որովհետև բուդդայականութիւնը ընդհակառակն սովորեցնում է, կանոններ և մտադիրութեամբ դիտել իւր տանջանքը և այդ տանջանքի մէջ իւր հայեացքը խորացնել, և ի վերջոյ, եթէ հնար է, ոչնչացնել այն: Այդ է բուդդայականի իսկական նպատակը. և բուդդայականութեան հաւատամքի երրորդ նախադասութեան բովանդակութիւնն է՝ «դէպի կեանք ձգտող ծարաւի վերացումն, ցանկութեան ամբողջական ոչնչացմամբ»: Սա միանգամայն բացասական իդէալ է՝ ամէն ցանկութիւն մեռցնել մարդու մէջ, մարդուն անօգնական մենակ թողնել, որպէս զի նա իրեն ոչնչացնէ, և ապա այդ իբրև բոլոր յաղթութիւններից ամենամեծը հրատարակել, ինչպէս անում է բուդդայականութիւնը. «Ոչ թէ նա է ամենամեծ հերոսը, որ պատերազմի դաշտում հարիւր հազարաւորների է ընկճում, այլ նա, որ միայն իրեն է յաղթահարում»: Այսպիսով մարդը հասնում է մի դրութեան որ բարու և չարի սահմանից այն կողմն է, և այդ դրութիւնն է վերագրում Բուդդային իրեն: Սա մի կատարեալ կրաւորականութիւն է, մի կեանք, ուր մելաւ է ամէնայն ցանակութիւն և ամէնայն ձգտումն. և երկու կրօնների պահանջած կեանքն ու նրանց տարբերութիւնը շատ լաւ տեսնել կարելի է նրանց հիմնադիրների վախճանի մէջ: Բուդդան մեռնում է 80 տարեկան հասակում հանգիստ, բնական օրէնքի համաձայն. իւր վերջին խօսքերն են իւր սիրելի աշակերտ Անանդային. «Ո՛չ այդպէս, մի՛ ողբար, մի՛ լար, չէ՞ որ առաջ եմ ասել քեզ Անանդա, որ մարդ պէտք է բաժանուի, զրկուի այն բանից, ինչ որ իրեն սիրելի է և հաճելի. ինչպէս կարելի է, Անանդա, որ ծնուածը, զարգացածը, անցաւորութեան ենթական, չանցնի. այդպիսի բան չի կարող լինել»: Այսպէս է խօսում կատարեալ կրաւորականութիւնը:

Դորա հակառակ Յիսուս, որ Պետրոսի իրեն խնայելու համար տուած խորհրդի մէջ սատանայական միտք է տեսնում (Մատթ. 16, 25), երիտասարդ հասակում տանում է իւր անձը կոչման կռուի մէջ դէպի բռնի մահ խաչի վրայ, որպէս զի մեռնելու բոլորին ասել կարողանայ կատարելագոյն ներգործականութեան խօսքը՝ «կատարեալ է»:

Իզուր է աշխատում նոր բուդդայական ջատագովութիւնը ապացուցանել, որ կրաւորական չէ իւր կրօնը. այդ բանը կրկնակի կերպով ապացուցանելու համար բաւական է յիշել, թէ ինչ դիրք է բռնում բուդդայականութիւնը ամուսնութեան խնդրի նկատմամբ: «Իմաստունը պիտի զգուշանայ դրանից (ամուսնանալուց) այնպէս, ինչպէս որ մարդ այլուղ ածուխից է զգուշանում»: Դրայ վրայ աւելացնենք և այն, որ Բուդդայի իւր խօսքերով որդի ունենալը ոչ թէ ուրախութիւն է իւր համար, այլ տանջանք, որովհետև որդին մի շղթայ է իւր համար. կամ Բուդդայի աշակերտ Սանգամայի վարմունքը դէպի իւր կինը և որդին: Բուդդայականութեան այդ սուրբը թողնում է իւր կնոջը և որդուն անօգնական և չի արժանացնում նրանց մի հայեացքի անգամ. իւր կնոջ և որդու դժբախտութեան առաջ կանգնած է նա առանց որևէ զգացմունքի, և Բուդդան որ այդ տեսարանին ներկայ է, կնոջ հեռանալուց յետոյ հետևեալն է արտասանում.

«Եկողը (կինը) նրան չի ուրախացնում,
«Գնացողը նրան տրտմութիւն չի պատճառում.
«Կարօտից ազատուած ճգնաւորին,
«Այո՛, նրան միայն *սուրբ* կանուանեմ ես».

Ահա Բուդդայի բերած օգուտը Հնդկաստանին, որի ժողովուրդը սկզբում այլ կերպ էր մտածում այդ խնդիրների մասին և դժգոհ էր անորդիութիւն, անկնութիւն քարոզող Բուդդայից:

Հասարակ մահկանացուից խլում է Բուդդան փրկութեան բոլոր յոյսը. նրա ճանապարհի վրայ միայն իսկական ճգնաւորը յաջողութիւն ունենալ կարող է. մինչև անգամ աշխարհական հետևողները Նիրուանային չեն հասնում՝ նրանց բաժինն է առառաւելն փոքր ի շատէ բարւոք վերածնութիւն. իսկական նպատակը, Նիրուանայի հասնելը, մնում է միայն ճգնաւորի (Բհիկշու) բաժինը: Ուրեմն առանց աշխարհից փախչելու չկայ փրկութիւն. բուդդայականը միայն ճգնաւորն է: Այս բոլորն արդէն ցոյց է տալիս, որ բուդդայականութիւնն իսկապէս թշնամի է որ և է քաղաքակրթութեան:

Այստեղ շատերը կարօղ են մեզ ասել, թէ քրիստոնէութիւնը նոյնպէս աշխարհը մերժող և քաղաքակրթութեան թշնամի է. ինչպէս այդ անում են Շտրաուսը և Շոպէնհաուէրը: Այս մարդիկ ի նկատի ունին գլխաւորապէս քրիստոնէական ճգնաւորութիւնն ու վանականութիւնը, և նրանց կարծիքով քրիստոնէութեան բուն էութիւնը և նրա դրած պահանջն այդ է. սակայն հեշտ է տեսնելը որ այդ կարծիքը հիմնովին սխալ է: Ինքը Յիսուս շատ հեռու է ճգնաւոր լինելուց և ճգնաւորի նման մտաւելուց. այս բանը հաստատելու համար բաւական է յիշել նրա մասնակցութիւնը Կանայի հարսանիքին, նրա բռնած դիրքը դէպի ամուսնական խնդիրը-(միայն պոռնկութիւնը կարող է առիթ տալ պսակալուծման), նրա դիրքը դէպի երեխաները (Մատթ. 19, 14). վերջապէս պէտք է յիշել, որ շատերը նրան «ուտող և արբեցող» են անուանել, մաքսաւորների և մեղաւորների բարեկամ (Մատթ. 11, 19), որ նա ամէնևին չի պահել հրէից պահքերը իւր աշակերտների հետ միասին: Այս բոլորը ցոյց է

տալիս թէ որքան հեռու է Յիսուս ճգաւոր լինելուց և թէ որչափ գնահատում է նա կեանքի անմեղ գուարճութիւնները. և եթէ Քրիստոս աշխատանքի մասին շատ բան չէ ասել, միայն այն պատճառով, որ նրա համար ամէնից գլխաւորը հոգու փրկութիւնն է: Քրիստոնէութիւնը գործ ունի մարդու ներքինի հետ միայն և այդ է պատճառը, որ նա իւր զարմանալի ճկունութիւնը պահպանել է:

«Ձեզնից ոչ ոքի մօտ զուր հաց չենք կերել, այլ զօր ու գիշեր ծանր աշխատել ենք, որպէս զի ոչ ոքի վրայ ծանրութիւն չլինենք.... ձեզ մօտ եղած ժամանակ այս ենք պատուիրել ձեզ, ով որ աշխատել չէ ուզում, նա չպէտք է նաև ուտէ» (Բ Թեսաղ. 3, 8-10). այսպէս է խօսում Պողոս առաքեալը աշխատանքի մասին, նա, որ իրեն միայն տնկող է համարում Աստուծոյ անդաստանի (Ա Կորնթ. 3, 6 ...): Քրիստոնէութեան այսպիսի մտքերը և սկզբունքները հազարաւորների և հարիւրհազարաւորների մղիչ են եղել դէպի քաղաքակրթական աշխատանքը, և հէնց քաղաքակրթական տեսակէտից ահագին աշխատանք է կատարել քրիստոնէութիւնը:

Ի՞նչ է արել դրա փոխարէն բուդդայականութիւնը, բացի միլիոնաւոր ժողովրդների աշխատանքից յետ պահելուց և թմրեցնելուց: Ֆօն Հելլվալդը անուանում է բուդդայականութիւնը ծուլութեան կրօն, և իսկապէս մարդ կարող է կասկաւել, թէ արդեօք բուդդայականութեան մեծ յաջողութիւն ունենալու գաղտնիքը նրա այդ դէպի մարդկային ծուլութիւնն ունեցած բարեհաճ տրամադրութիւնը չպիտի համարել: Քրիստոնէական վանականները անապատները պարտէզ են դարձրել իհէնց ձեռքի աշխատանքով, իսկ բուդդայականութիւնը արգելում է միանգամայն իւր ճգնաւորներին ծառ տնկելը կամ ծաղիկներ ցանելը: Ամէն ինչ խառն ի խուռն է բուդդայականութեան մէջ. ամենամեծ պատուէրի կողքին ամէնամանր ու հասարակ բաներ յիշատակած. օրինակ, մի կողմից արգելում է սպանել ու կողոպտել, միւս կողմից հացահատիկներ ընդունել,- և սոքա երկուսը իրար յետևից իբրև նման ու հաւասարաթէք բաներ: Մի խօսքով էականն ու երկրորդականը զանազանելու կարողութիւնը, իսկական մեծութիւնը տեսնելու ընդունակութիւնը պակասում է բուդդայականութեան:

Սակայն և այնպէս բուդդայական բարոյագիտութիւնը նրա ամէնաբարձր ու զօրեղագոյն կողմն է և քրիստոնէութեան ամէնից աւելի մօտիկը: Օրինակ, բուդդայականութիւնը միայն արտաքին գործը պահանջելով չէ բաւականանում՝ նա պահանջում է նաև համապատասխան ներքին զգացմունք. ամէնից առաջ սէր կամ իսկական ցաւակցութիւն ու բարեհաճութիւն է կամէնում նա: Ցաւակցութիւն դէպի կենդանիները, որը սակայն չափազանցութեան է հասնում և միանգամայն արգելում է մսակերութիւնը: Ընդունուած բան է, որ Հնդկաստանը միայն այն ժամանակ նոր ոյժ և կեանքի ընդունակութիւն կստանայ, երբ մսակերութիւնը կրկին տարածուի այնտեղ: Այս է բուդդայականութեան բերած օգուտը Հնդկաստանին և մարդկութեան: Բուդդայի աւետած փրկութիւնն անգամ չէ վերաբերում ամբողջ մարդկութեան, այլ իսկապէս միայն ճգնաւորներին: Ի

նկատի պիտի ունենալ սակայն նաև, որ մի ամբողջ շարք հիւանդութիւններ ունեցողները ամէնևին ճգնաւոր դառնալու իրաւունք իսկ չունին, ուրեմն միանգամայն զրկուած են փրկութիւնից, այն ինչ քրիստոնէութեան հիմնադիրը ոչ թէ միայն առողջների, այլ առաւել հիւանդների համար եկաւ՝ նրանց մխիթարելու և փրկութիւն քարոզելու:

Երկար ժամանակ մարդիկ սիրում էին Բուդդային փառաբանել իբրև սոցիալական բարենորոգչի և նրան վերագրում էին մի մեծ յաղթութիւն ընդդէմ դասակարգական խտրութեան, սակայն այսօր բոլորը գիտեն լաւագոյն աղբիւրներից, որ նա այդ բանում յաղթող լինել չէր կարող, քանի որ դրա դէմ կռիւ չէ մղել: Այսքանը միայն ուղիղ է, որ նրա միաբանութեան մէջ յիրաւի դասակարգ գոյութիւն չունի. այնտեղ իրար հաւասար ճգնաւորներ են ամէնքը: Սակայն այն մարդիկը, որոնց հետ Բուդդան սովորաբար գործ ունի, ոչ թէ աղքատներն ու ստորիններն են, այլ հարուստներն ու բարձրերը՝ նոքա իսկապէս, որոնց հետ բարձր բաների մասին խօսել կարելի է: Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել այնտեղ, ուր որ ոչ թէ մարդկային հոգու կապը իւր Աստուծոյ հետ գտնել են աշխատում, այլ իրենց անգիտութեան մէջ ձգտում են մարդկային տանջանքի գաղտնիքը բաց անել: Ինքը Բուդդան ասում է, որ իւր օրէնքը ծանր ու խորին է և հասարակ մահկանացուների համար անհասկանալի:

Յիսուս բոլորովին այլ կերպ է մտածում. Նա փառաբանում իւր Երկնաւոր Հօրը, որը իւր յայտնութիւնը իմաստուններից ու գիտուններից ծածկել է, տղաներին ու տիասներին յայտնագործելու համար (Մատթ. 11, 25). նոյն կերպ է մտածում նաև Պօղոս առաքեալը (Ա Կորնթ. 1, 27): Եւ չնայելով որ քրիստոնէութեան այս ոչ արիստոկրատական ուղղութիւնը շատերին ատելի է, այնուամէնայնիւ ցոյց է տալիս մեր կրօնի իսկական մարդկայնութիւնը և հանրամատչելիութիւնը:

Շատ հետաքրքրական է նաև երկու կրօնների բռնած դիրքը դէպի կանանց հարցը: Բուդդայականութեան տեսակէտից կանայք անհասկանալի և անքննելի են այնպէս, ինչպէս ձկների ճանապարհները ծովերում: Նոքա ճշմարտութիւնը ստի և սուտը ճշմարտութեան տեղ են ընդունում, անհաստատ են ինչպէս անապատի աւազը, ահռելի ինչպէս օձը: Բուդդան և իւր սիրելի աշակերտ Անանդան միանգամ խօսում են միմեանց հետ. «Ինչպէ՞ս պէտք է պահենք մեզ կանանց նկատմամբ», հարցնում է Անանդան: Բուդդան պատասխանում է. «Կանանցից միշտ խոյս պէտք է տալ, Անանդա».- «Իսկ եթէ արդէն ստիպուած տեսել ենք նրանց, այն ժամանակ», հարցնում է աշակերտը.- «Չխօսել նրանց հետ, Անանդա», ասում է վարժապետը: «Իսկ եթէ հետը խօսել ստիպուած լինինք».- Այն ժամանակ լաւ պէտք է հսկէք ձեզ վրայ», ասում է Բուդդան: Այդ պատճառով էլ Բուդդան կանանց չէր ուզում ընդունել իւր միաբանութեան մէջ իբրև ճգնաւորներ, բայց երբ զիջանելով իւր մօր թախանձանքներին, թոյլ տուեց, նոյն ժամանակ ասաց իւր Անանդային.- «Ինչ միաբանութեան մէջ որ կանայք մուտք գործեն, այնտեղ կդադարի սուրբ կեանքը»: Անդամ

ընդունելուց յետոյ էլ կինը մարդուն հաւասար չի ճանաչում. կանանց պարտքն է, եթէ նրանք 100 տարի առաջ էլ անդամ ընդունուած լինին, իւրաքանչիւր նորամուտ ճգնաւորի առաջ ոտքի կանգնել և խորին հարգանքի նշաններ ցոյց տալ: Կնոջ ամենամեծ մխիթարութիւնը մնում է, որ նա մի այլ վերածնութեան ժամանակ այլևս իբրև կին աշխարհ չգայ:

Քրիստոնէութեան մէջ այլ է պատկերը. այստեղ շատ սիրող կնոջ շատ մեղքերին է թողութիւն տրուում (Ղուկ. 7, 47). Քրիստոսին օծող կնոջ պատմութիւնը պիտի պատմուի ամէն տեղ, ուր որ աւետարանը քարոզուի (Մատթ. 26, 13). կանայք են կանգնած խաչի տակ, ուր Քրիստոս իւր մօրը ցոյց տալով ասում է իւր աշակերտին՝ «Ահա քո մայրը» (Յովհ. 19, 27). և կանանց հետ այսպէս վարուողը միայն քրիստոնէութիւնն է:

Այս բոլորով չենք կամէնում ի հարկէ բուդդայական բարոյագիտութեան բարձրութիւնը ուրանալ. միայն այսքանը հաստատուն է, որ աւելի բարձր դասել այն քան քրիստոնէութիւնը ոչ մի կերպով կարելի չէ: Բուդդայականութիւնն էլ ասում է որ թշնամուն թշնամաբար չպիտի վերաբերուել, բայց ի՞նչ մտքով. «Թշնամութիւնը չի վերջանայ թշնամութեամբ, այլ ոչ թշնամութեամբ». ուրեմն միայն խաղաղութիւն գտնելու համար է, որ բուդդայականութիւնը ներելը աւելի լաւ է գտնում, քան վրէժը: Բուդդայականութեան մէջ գոյութիւն չի կարող ունենալ նաև անձնագրհութիւն, որովհետև բուդդայականութեան համար կեանքը տանջանք է և ոչ մի արժէք չունի, իսկ արժէք չունեցող բանի գոհելը նմանապէս անարժէք է: Մինչև անգամ ապագայ կեանքի յոյսը չէ կարող զուտ և անկեղծ լինել, որովհետև եթէ մէկին այս կեանքը անարժան բան է երևում, չէ կարող մի ապագայ կեանքի համար ցանկութիւն ունենալ. անարժէք կեանքի տանջանքները կխեղդեն նրա մէջ ամէն ցանկութիւն և յոյս, նաև այն ապագայ կեանքի նկատմամբ:

Եւ այս կրօնը համեմատում են շատերը քրիստոնէութեան հետ և աւելի բարձր են գտնում, միևնոյն ժամանակ միամտաբար հաւատալով, թէ իսկապէս Քրիստոսից 5-6 դար առաջ աշխարհ եկած բուդդայականութիւնը լիովին համապատասխանում է ներկայ գիտութեան: Մեր ամբողջ յօդուածից երևում է, թէ որքան ծիծաղելի է այդ կարծիքը:

Մենք քրիստոնէաներս կարող ենք ասիական այդ մեծ մտքի վերայ զարմանալ, բայց նրան թողնել, որ մելաւ մնայ, քանի որ մենք կարող ենք կեանքը փնտռել այնտեղ, ուր գտնել կարելի է, այնտեղ ուր մարդկային հոգու և իւր կենդանի Աստուծոյ պատմութիւնը կայ:

ՀԵԳՆՈՒԹԻՒՆԸ ՅԻՍՈՒՄԻ ԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՕՍՔԻ ՍԷՋ . .¹

Յիսուսին սովոր ենք պատկերացնել հանդիսաւոր և վեհ լրջութեան արտայայտութիւնն երեսին, մի քիչ խառը խորին տխրութեան հետ. նկարիչներն այդպէս էլ նկատում են նրան, և նորա անծի հիմնական խառնուածքին լիովին համապատասխան է այդ: Սակայն կարելի է Յիսուսի մէջ նաև մի գիծ գտնել, որ շատ ուշադրութեան չէ առնուած և քիչ էլ աչքի է ընկնում, այն է՝ մի հեզմական ժպիտ. աւետարանի մի քանի կտորները միայն այն ժամանակ ուղիղ հասկանալ կարելի է, երբ այդ կտորներն իբրև հեզմական ժպիտն երեսին ասած ենք պատկերացնում Յիսուսին:

Նախ մի քանի խօսք առ հասարակ հեզմութեան էութեան մասին:

Հեզմութիւնը մտածողութեան և խօսքի այն դրութիւնն է, որ առաջ է գալիս, երբ մի իրապէս բարձր մարդ ինքն իրեն բարձր երևակայող և ինքնահաւան շրջապատողների նկատմամբ իւր անձն իբրև աւելի ստոր է ցոյց տալիս, կամ իւր վերայ է վերցնում շրջապատի նրան վերագրած դրութիւնը և այդ դրութեան համապատասխան խօսում կամ գործում:

Այսպէս օրինակ Սոկրատէսը, յունական փիլիսոփայութեան մէջ այդ մեծ հեզմողը, սոփեստների հետ ունեցած յարաբերութիւնների ժամանակ իրեն իբրև չիմացնող է ձևացնում. ի հարկէ ինքը մի խեղճ ու անկիրթ մարդ է այդ՝ ամբողջ յունական աշխարհը զարմացնող, գիտութիւն և կրթութիւն վաճառողների մօտ. նա գիտէ միայն, որ ինքը դեռ ոչինչ չգիտէ, ուստի կամենում է նրանց իմաստութիւնից օգտուել. բայց որովհետև նրանց երկար ճառերին հետևելու կարողութիւն չունի, այդ պատճառով յարմար է գտնում փոքրիկ հարցերով նրանց իմաստութեանը տեղեկանալ: Իրօք իւր հարց ու փորձով նա այնտեղ է հասցնում, որ այն մեծ մարդիկն էլ վերջը մոլորում են իրենց մեծ իմաստութեան մէջ: Վերջն այն է լինում, որ Սոկրատէսը հանդէս է բերում, թե երկուսն էլ իսկապէս գործին կարգին տեղեակ չեն, և դժբախտաբար ինքը յոյս է ունեցել թէ՛ ահա գտայ վերջապէս մեկին, որ իւր հարուստ իմաստութեամբ իմ աղքատութեանն օգնել կարող էր:

Ձևական տեսակէտից Յիսուսի դիրքը իւր շրջապատի նկատմամբ շատ էլ աննման չէ. տարբերութիւնը միայն այն է, որ այստեղ համաձայն Եբրայական ազգի ընդհանուր յատկութեան յունականի հանդէպ, գործը ոչ թե մտաւոր, այլ աւելի կրօնա-բարոյական սահմանում է կատարում: Ինչպէս Սոկրատէսը կանգնած էր սոփեստների հանդէպ, այնպէս Յիսուս՝ փարիսեցիների և դպիրների հանդէպ. ինչպէս նոքա գիտութեան և իմաստութեան՝ այնպէս սոքա օրենսգիտութեան և

¹ Այս յօդուածը քաղում ենք Բերլինի համալսարանի փիլիսոփայութեան հռչակաւոր ուսուցչապետ Ֆրիդրիխ Պաուլսէնի մի փոքրիկ գրուածքից . Das Ironische in Jesu Stellung und Rede .

սրբութեան տէր էին համարում իրենց: Նրանց խորին համոզումն էր, որ իրենք են իսկական բարոյական օրէնքին բոլորովին համապատասխանող մարդիկը. նոքա չեն անամօթ կեղծաւորներ կամ սրիկաներ, ինչպէս և սովեստները դատարկ ու իրենք իրենց ուռցնող յիմարներ չեն. շաբաթը երկու անգամ ծոմ են պահում և բոլոր ունեցածից տասանորդ են վճարում:

Սոքա են այն մարդիկը, որոնց մէջ մտաւ Յիսուս: Նա բոլորովին նոյն տպաւորութիւնը թողեց այս կատարելութեան տէրերի և նրանց յագեցած ինքնագիտակցութեան՝ ինչ որ Սոկրատէսը Սովեստների վերայ. ինչպէս որ Սոկրատէս այդ ճանաչուած և ընդունուած իմաստունների աչքում մի տարօրինակ և անբնական մարդ նկատուեց, այնպէս էլ Յիսուս փարիսեցիների աչքում. նա կամենում է իրեն իբրև ժողովրդի ուսուցիչ, կրօնա- բարոյական կեանքի վերանորոգիչ ցոյց տալ, բայց չգիտէ և չէ պահում Մովսիսի օրէնքը: Շաբաթն անգամ չէ պահում նա, ասում են նրա մասին այդ կատարեալ արդարները: Նրա աշակերտներին նոյն մարդիկ հասկացնում են. «Ձեր վարդապետը կարծես առանձին սէր ունի դեպի վատ ընկերութիւնը. նա ուտում է մաքսաւորների և մեղաւորների հետ, և կամենում է մեր Աստուծոյ, Աբրահամի Աստուծոյ առաքեալը լինել: Նա անշուշտ Բեէղզեբուդի ուղարկածն է, աւելացնում են նոքա. այդպէս կբացատրուի խիստ բնական կերպով նաև նրա իշխանութիւնը դևերի վրայ, որի պատճառաւ այնքան աղմուկ է հանւում»:

Ինչպէս որ Սոկրատէսի համար իբրև կռուի գէնք մէջ տեղ եկաւ ինքն իրեն հեզնութիւնը սովեստների դէմ, այնպէս էլ Յիսուսի համար նոյն գէնքը հանդէս է գալիս իւր հակառակորդների դէմ. և այս հասկանալի է: Բաւական է միայն, որ Յիսուս իւր վրա ընդունէր փարիսեցիների նրան վերագրած դիրքը և այդ դիրքից խօսէր այն «կատարեալ»ների հետ՝ իսկոյն խօսքը հեզնական կերպարանք պիտի ընդունէր:

Մի քանի օրինակներ աւետարանից ասածներս հաստատելու համար: Նախ նկատենք, որ այսպիսի դէպքում իրաւունք ենք համարում աւետարանի մի բառով կամ նշանով արտայայտած խօսակցութիւնը կամ դրութիւնը մի քիչ աւելի ընդարձակել, այսպէս ասած, տողերի մէջ էլ կարդալ. չէ՞ որ աւետարանի հէնց այդ յատկութեան վրայ է հիմնուած նրա քարոզի այդպէս յաջող նիւթ լինելու գաղտնիքը:

Յիսուսի առաջին հանդիպումը փարիսեցիներին պատմում է Մատթեոս Թ. 9. Յիսուս անցնում է մի մաքսատան առաջից, տեսնում է Մատթեոսին և կանչում նրան՝ արի՛ իմ յետևից: Երբ նա ներս է մտնում վերջինիս տունը, գալիս են նաև շատ մաքսաւորներ և սեղան են նստում նրա և նրա աշակերտների հետ: Մի քանի փարիսեցիներ այս տեսնելով չկարողացան համբերել և ասացին նրա աշակերտներին. Չէ՞ք տեսնում թէ ինչ ընկերութեան մէջ է բերել ձեզ այն Յիսուսը, որի յետևից էք ընկել. Յիսուս լսեց այս և դառնալով ասաց նրանց. «Ոչ թէ առողջները կարիք ունեն բժշկի, այլ հիւանդները», - անշուշտ ոչ թէ ուսուցչական տաք եղանակով, այլ մի հեզնական ժպիտով. ի հարկէ,

այդպիսի քաջառողջ բարոյականի տէր, այնպիսի ուղիղ կեանք վարող մարդիկ, ինչպէս դուք փարիսեցիներդ էք, ինձ կարիք չունիք. ձեր ի՞նչ պէտքն է Փրկիչը: Իսկ այն մարդիկ ընդհակառակը, որոնք վտանգաւոր կացութեան մեջ են, սոցա պէս, որ իմ շուրջն են խմբուած,- բժշկի կարիք ունին. այդ պատճառով էլ ինձ մօտ են եկել, և ես պէտք է նրանց մօտ մնամ՝ լաւ թէ վատ, որովհետև ես ինձ միանգամ արդէն իբրև հոգւոյ բժիշկ եմ ցոյց տուել: Ապա շարունակում է նա, և այստեղ ժպիտը փոխւում է մի խորին լրջութեան. իսկ դուք, որ կարծում էք թէ օրէնքն ու արդարութիւնը ամբողջովին հասկացել էք ու գիտէք՝ «Գնացէ՛ք և սովորեցէ՛ք, թէ ինչ է նշանակում՝ Գութ եմ պահանջում և ոչ թէ զոհ»:

Որ Յիսուսի խօսքն այդ բժշկի կարօտութիւն չունեցող առողջների մասին հեզնական է, չի կարող որևէ կասկածի տեղիք լինել, քանի որ յայտնի է, թէ ինչ կերպ է մտածում Յիսուս փարիսեցիների առողջութեան մասին. նրանք կոյր են, և կոյր առաջնորդ լինելով՝ իրենց ժողովրդին դէպի անկումն են տանում. ուզում են օրենքի միայն արտաքինը պահել, բոլորովին զանց անելով էականը՝ ընկերսիրութիւնն ու արդարութիւնը: Բայց ամենամեծ չարիքն այն է, որ նոքա կոյր լինելով, իրենց շատ լաւ տեսնող, մինչև անգամ միակ տեսնողն են համարում. եթէ նոքա զգային իրենց կուրութիւնը, այն ժամանակ կարելի էր նոցա օգնել. բայց այժմ անհնար է, որովհետև նոքա իրենցն են համարում ամենայն արդարութիւն: Ամէն օր տաճար են գնում՝ Աստծուն իրենց գոհացողական աղօթքը մատուցանելու, ի հոտ անուշից. «Շնորհակա՛լ եմ քեզնից, Աստուած, որ ես էլ ուրիշ մարդկանց նման չէմ՝ աւազակ, անարդար, շնացող կամ – նրա հայեացքը ընկնում է այնտեղ անկիւնում կանգնած մի հարևանի վրայ – կամ ինչպէս այդ մաքսաւորը»: –Հազիւ թէ այս առակն ևս առանց ժպտի ասած լինի Յիսուս, առանց հեզնութեան և մի ներքին գոհունակութեան ժպտի, որ և ամէնից աւելի նպաստում է պատկերի այդպէս լաւ յաջողուելուն: Յիսուսի միայն այս հոգեբանական պատկերը՝ մի կողմը փարիսեցին, ինքնավստահ և համոզուած, որ ինքն ամենալաւ մարդն է աշխարհում, միւս կողմը մաքսաւորը մի անկիւնում՝ կարծես ամաչելով այս արդարից, իւր կուրծքն է ծեծում և վա՛յ ինձ մեղաւորիս ասում,- միայն այս պատկերը բաւական է նրա հեղինակին գրականութեան մէջ առանձին տեղ տալու համար:

Միևնոյն հեզնական ժպիտն է նկատւում նաև շնացեալ կնոջ պատմութեան մէջ: Առաւօտ էր, Յիսուս քարոզում էր տաճարում. փարիսեցիներն ու դպիրները մի կին բերին, որ բռնուած էր շնութեան մէջ և հարցրին Յիսուսին. Մովսիսի օրէնքով սրան պէտք է քարկոծել, դո՞ւ ինչ ես ասում: Նրանց միտքն էր անշուշտ, թե հիմա Յիսուսն էլի այդ անառակի դատը կպաշտպանէ, և նրա հետևողները կտեսնեն թե ում հետ գործ ունին: Յիսուս պատասխան չտուաւ. նա քաշ արեց գլուխը և սկսեց գետնի վրայ գրել, կարծես ասելիս լինէր՝ իմ ի՞նչ գործն է այդ, դատելը ձեր, բարոյականներիդ բանն է. դուք խօ շատ լաւ էք հասկանում ընկերներին դատելու ձևը: Սակայն փարիսեցիներն

ստիպում են նրան պատասխան տալ, և ահա Յիսուս ասում է. «Ով որ ազատ է մեղքից, թող առաջինը քարը ձգե՛ նորա վերայ», - ով որ այնպէս անմեղ է, ինչպէս դուք, նրանցն է այստեղ առաւելութիւնը: Նա նորից կռացաւ և սկսեց գրել գետնի վրայ. երբ յետոյ աչքերը վեր բարձրացրեց, ոչ ոք չկար իւր շուրջը, բացի անառակ կնոջից, որին այն ժամանակ ասաց Յիսուս՝ այս անգամ մի աստուածային բարեգութիւն ժպտով. «Ես էլ չեմ դատապարտում քեզ, գնա՛, այսուհետև մի՛ մեղանչիր»:

Մի անգամ էլ ինքը Յիսուսն է դատապարտուողը. Սողոմոնի սրահում շրջապատեցին նրան հրէաները և հարցրին. «Երի՞ք եղաւ, ինչ որ մեզ դէս ու դէն ձգեցիր, եթե դո՞ւ ես Քրիստոսը, համարձակ ասա՛ մեզ: Յիսուս պատասխանում է. «Ես ասացի ձեզ, բայց դուք չհաւատացիք, թեև այն գործերը, որ ես հօրս անունով եմ անում, վկայում են իմ մասին»: Այս խօսքերի վրայ հրէաները քարեր բերին նրան քարկոծելու համար. իսկ նա պատասխանեց. «Շատ բարի գործեր կատարեցի ձեր առաջ հօրս կողմից, նոցանից որի՞ պատճառով էք կամենում ինձ քարկոծել» (Յովհ. 10. 32):

«Եզնական են նաև Յիսուսի շատ հարցումները. «Ո՞րը ձեզանից շաբաթ օրը իւր էշը կամ եզը ջուրը չէ տանում, կամ ո՞րը ձեզանից շաբաթ օրը հորից իւր անասունը չի հանի. մի՞թէ մի Աբրահամու դուստր իւր ցաւից փրկելը մեղք է շաբաթ օրը» (Ղուկ. 13, 15. 14, 5): Մի քանի անգամ էլ Յիսուս հարցերով դպիրներին ու փարիսեցիներին նեղ տեղն է ձգում. «Ի՞նչպէս է որ Ղաւիթը Մեսիային տէր է անուանում, թէև նա իւր որդին պիտի լինի» (Մատթ. 22, 43), կամ Սողոմոնի մի այլ կտորը. «Ես ասացի, Աստուածներ էք դուք», - գործ է ածում ցոյց տալու համար, թէ ոչ մի հայիոյանք չկայ այն բանի մէջ, որ նա իրեն Աստուծոյ որդի է կոչում (Յովհ. 10, 35). կարծես ուզում է ասել, դուք կարող էք ձեզ գրքի այդ խօսքի հիման վրայ Աստուածներ անուանել և հիմա ինձ արգելում էք Աստուծոյ որդի համեստ անո՞ւնն անգամ:

Մի անգամ էլ Պետրոսին է դիմում նա կատակով, երբ իրենից հարկ են պահանջում տաճարի համար. «Սիմո՛ն, ասում է նա, ի՞նչ ես կարծում, աշխարհի թագաւորներն ուննի՞ց են հարկ առնում՝ իրենց սեփական զաւակների՞ց, թէ օտարներից. – Պետրոսն ասում է. Օտարներից.- Յիսուս պատասխանում է. Ուրեմն իբրև Աստուծոյ որդիներ մենք պէտք է իսկապէս տաճարի հարկից ազատ լինէ՞ինք»:

Նոյնպէս հեզնական են Մատթ. 21, 28 կլն, Ղուկաս 7, 36 կլն (500 դինար և 50 դինար պարտքի թողութիւնից յետոյ ո՞րն աւելի կսիրի պարտատիրոջը):

Մի այլ տեղ հեզնութիւնը փոխւում է դառն երգիծանքի. Ղուկաս 13, 31 կլն պատմւում է, թէ մի քանի փարիսեցիներ եկան Յիսուսի մօտ և ասացին նրան. «Փախի՛ր այստեղից, որովհետև Հերովդէսը կամենում է քեզ սպանել. նա պատասխանեց. Ասացէ՛ք այն աղուէսին, այսօր և վաղը դեռ այստեղ եմ, դևեր եմ հանում և բժշկութիւններ անում. երրորդ օրը պրծած կլինիմ. սակայն այն ժամանակ պէտք է Երուսաղէմ գնամ, որովհետև չի կարելի, որ մի մարգարէ Երուսաղէմից դուրս

մեռնի»: - Վերջին խօսքերի ծաղրը հասկանալի է լիովին. իբրև մարգարե իրաւունք ունիմ ես էլ Երուսաղէմում, այն սուրբ քաղաքում, ուր իսկզբանէ անտի մարգարէներին կոտորում էին, սպանուել: Ուրեմն Հերովդէսը ժամանակ ունի միայն այսօր ու վաղը ինձ սպանելու. բայց այդ էլ չի յաջողուի նրան, որովհետև մարգարէն Երուսաղէմում պիտի մեռնի: Արդէն Ղուկ. 11, 47 կ'ըն, ծաղրուում է Երուսաղէմն իբրև մարգարէներ կոտորող. վա՛յ ձեզ, փարիսեցիներ, դուք, որ մարգարէների գերեզմաններ էք շինում, և ձեր հայրերը նրանց սպանեցին. շատ սիրուն էք բաժանել աշխատանքը՝ հայրերը սպանեցին մարգարէներին, որդիքը գերեզմաններ են շինում նրանց համար, որ իրենց հարց գործի յիշատակը յաւերժացնեն:

Նոյնպիսի հեզնութիւն կարելի է նկատել Յիսուսի խօսքերի մէջ նաև հարստութեան և հարուստների մասին. «Աղուէսները որջ ունին, երկնքի թռչունները բոյն, բայց մարդու որդին գլուխը դնելու տեղ էլ չունի», ասում է նա մի դպրի, որ իրեն հետևել է ցանկանում: Անշուշտ այս խօսքերն ասելիս ժպիտ է եղել Յիսուսի երեսին, և ոչ թէ տխուր լրջութիւն. նա կամեցել է նորեկին հասկացնել միայն, որ ինքը երկրային վայելքների վրայ առանձին ուշադրութիւն չէ դարձնում և եթէ նորեկը, դորա հակառակ, երկրայինից հրաժարուել չէ կարող, այն ժամանակ ի զուր է եկել իւր մօտ, թող երթայ, ուրիշ վարդապետ գտնէ իրեն համար:

Եւ այստեղ էլ կարծեցեալ յիմարութիւնը աշխարհի իմաստութեան առաջ յաղթող է մնում, ինչպէս փարիսեցիների արդարութեան առաջ: Մահն է, որ խնդիրն այստեղ էլ պարզաբանում է: Հարուստի մէկի դաշտերը լաւ պտուղ բերին. խոհեմութեամբ կարգադրեց նա հաւաքել իւր արդիւնքը և ամբարել, ապա ասաց ինքն իրեն. «Սիրելի հողի՛, այժմ ունիս շատ բարիքներ, շատ տարիների համար ամբարած, կեր, խմիր և ուրախ եղի՛ր. բայց Աստուած ասաց. – Յիմա՛ր դու, այս գիշեր հողիդ կառնուի քեզնից. ո՞ւմ պիտի մնայ այն ամէնը, ինչ որ դու ձեռք բերիր»: - Այսպէս՝ աշխարհի հարուստները զանձ են հաւաքում ցեցերի և ուտիճների համար, կամ գողերին աւար տալու համար. շատ աւելի լաւ կանէին նոքա, եթէ դիտէին, թէ ինչպէս են ապրում երկնքի թռչուններն առանց սերմանելու, կ'ըն:

Հարստութիւնը հեշտութեամբ, մինչև անգամ կարելի է ասել անխուսափելի կերպով՝ դէպի կորուստ է տանում մարդու, մինչ արգելք է դառնում յաւիտենական բարիքների մասին մտածելու. բայց դրա վերջն էլ սարսափելի հիասթափութիւն է. այս ցոյց է տալիս հարուստի և աղքատ Ղազարոսի առակը: Յիսուս նկարագրում է, թէ ինչպէս մէկը փարթամ, միւսը ողորմելի կերպով ապրում է, յետոյ գալիս է մահը. Ղազարոսը մեռնում է և մի անկիւնում թաղուում, իսկ հրեշտակները նրան Աբրահամու գոգն են տանում. մեռնում է նաև հարուստը և մեծ պատուով ու փառաւորութեամբ թաղուում, դրան հետևում է սակայն դժոխքի տանջանքը: Ուրեմն հարուստի հաշիւները աշխարհի վերայ սխալ էին: Ղառն հեզնութիւն է հնչում ամբողջ առակի մէջ. բաւական է միայն յիշել Աբրահամի

հարուստին ուղղած այն հանդարտ սառը խօսքերը. Մտածիր, որդիս. դու քո բարիքն ընդունեցիր կեանքիդ մէջ, իսկ Ղազարոսը դրա փոխարէն միայն դժբախտութիւն տեսաւ կեանքում. արդարացի է, որ այժմ էլ դրա հակառակը տեղի ունենայ:

Հեզնութիւն է արտայայտում նաև անօրէն տնտեսի առակը. միտքն այդտեղ այն է, որ հարստութիւնը լոկ աշխարհային բան է և պատկանում է այս աշխարհի իշխանին՝ ձեռք բերուած միշտ անարդար միջոցներով. ինչքան լաւ կլինէր, որ հարուստները հասկանային այդ հարստութիւնից այն ձևով օգուտ քաղել, ինչպէս անիրաւ տնտեսը, և ինչպէս որ սա հարստութիւնից օգտուելով իրեն համար ապագայ ապաստանարան պատրաստեց երկրի վրայ, այնպէս էլ նոքա հետամուտ լինէին անօրէն մամոնայի միջոցով յաւիտենական բարիք ձեռք բերելու:

Յիշենք նաև հարկի դահեկանի պատմութիւնը (Մարկ. 12,13 կլն): Փարիսեցիներն ու Հերովդէսի կուսակիցները գալիս են Յիսուսի մոտ և մի նշանաւոր հարց են առաջարկում նրան՝ նոյն ժամանակի մեծ, ազգային-քաղաքական խնդիրը. Պէ՞տք է կայսերը, այդ օտարին, այդ հեթանոսին՝ հարկ տալ, թէ ոչ: Յիսուս հասկանում է խորամանկութիւնը, բայց այնպէս է ձևացնում, իբրև թէ ինքը խնդիրը լուրջ է ընդունում. նա խնդրում է ցույց տալ իրեն այն դահեկանը, որով հարկը պէտք է տալ: Ղահեկանը դիտելով, ասում է նա, կարծես զարմացած. Սրա վրայ պատկեր ու գիր կայ, ու՞մն են սոքա. նրան պատասխանում են թէ՛ Կայսրինը. Ուրեմն տուէ՛ք կայսրինը կայսեր,- ի՞նչ դժուար բան է եղել այդ հասկանալը. նրան է պատկանում, նրան էլ պէտք է տալ: Այստեղից փոխում է Յիսուս իւր խօսքի կէս դժկամակ կէս կատակ ձևը և ասում մեծ լրջութեամբ. բայց մի՛ մոռանաք այն, ինչ որ կարևորագոյն է. տուէ՛ք Աստծուն, ինչ որ Աստծունն է:

Ի հարկէ, այստեղ Յիսուսի համար գլխաւորը դարձեալ վերջինն է և ոչ առաջինը, ինչպէս մարդիկ շատ անգամ հասկանալ են ուզում. առաջինը նրա համար աշխարհային է և երկրորդական՝ երկրորդն է, որ մեծ է և որից կախուած է ամէն ինչ:

Յիսուսի հեզնութեան ամենալաւ կտորներից են նաև հետևեալները. «Աւելի հեշտ է, որ մի ուղտ ասղի ծակով անցնէ, քան թէ մի հարուստ Աստուծոյ արքայութիւն մտնէ» (Մատթ. 19, 24), կամ՝ «Ղուք քանում էք մժղուկները, բայց ուղտերը կուլ էք տալիս» (Մատթ. 23, 24):

Նոյն հեզնութիւնը կարելի է գտնել նաև նրա դրութեան մէջ դէպի իւր դատաւորները: Քահանայապետներն ու հոգևոր իշխանութիւնը գտնում են, որ Յիսուսի մահը միանգամայն անհրաժեշտ է, եթե նոքա չեն կամենում, որ իրենց հայրերին աւանդած հին աստուածային նուիրապետութիւնը խորտակուի և ժողովուրդը հեթանոս դառնայ: Ամբողջ դատաստանի նպատակն է այդ պատճառով՝ որ և իցէ հիմունք գտնել Յիսուսին մահուան դատապարտելու համար. սկզբում չի յաջողում պատճառ գտնել, վերջապէս քահանայապետը վերջին մեծ յարձակումն է գործում. «Երդուեցնում են քեզ կենդանի Աստուծով, որ դու մեզ ասես թէ՛ դո՞ւ ես Քրիստոսը, Աստուծոյ

որդին»։ Այս հարցին պատասխանում է Յիսուս, մինչ նա մինչև այդ ժամանակ լռում էր, անշուշտ մի ցաւակից–հեզնական ժպիտով. «Դո՛ւ ասացիր»։ այո՛, դու ասում ես արդէն, ինչ որ ես պէտք է պատասխանէի. ես գիտեմ, որ դու կարիք ունիս այդ խօսքին քո նպատակիդ համար, ուրեմն թող այնպէս լինի, ինչպէս դու ես ասում. մի բան էլ կաւելացնեմ, որ թերևս ձեզ համար դարձեալ կարևոր կլինի. «Կարձ ժամանակից յետոյ կտեսնէք մարդու որդուն նստած զօրութեան աջ կողմը և գալիս երկնքի ամպերի վրայով»։

Ուրիշ տեսակ է խնդիրը Պիղատոսի առաջ. նա տեսնում էր, որ Յիսուսին դատապարտում են նախանձից և դաւադրութեամբ, ուստի կամենում էր նրան ազատել. նրա առաջին հարցը կարելի է միայն իբրև բացասական պատասխան հասկանալ. «Դո՞ւ ես հրէից թագաւորը»։ դո՛ւ, խեղճ մարդ, որ կապուած ես իմ առաջ, խօս չե՞ս կամենայ քեզ այս ամբողջ երկրի թագաւոր հռչակել։ Սակայն Յիսուս պատասխանում է հաստատելով նրա հարցը, փոխանակ ցոյց տուած ճանապարհով խոյս տալու վտանգից, և դրանով նա Պիղատոսի մօտ վերջին խօսքն է ասում. Պիղատոսի բոլոր յետագայ հարցերին նա ոչ մի բառ չէ պատասխանում, համաձայն 3 առաջին աւետարանիչների, այնպես որ Պիղատոսը շատ զարմանում է. այդպիսի դատապարտեալ նա դեռ չէր տեսել։ Կապուածի դէմքը նրան կարող էր հասկանալի կերպով հեզնօրէն ասած լինել.– տեսնում եմ որ դու էլ վատ դրութեան մեջ ես. դու, խեղճ մարդ, որ այստեղ ամենաբարձր իշխանութիւնն ունիս երկրի վրայ, ցանկանում ես ի հարկէ արդարացի լինել, բայց միևնոյն ժամանակ ուզում ես ամբողջ աշխարհի հետ լաւ լինել և լաւ մնալ. ներկայ դեպքում այդ արդէն միանգամայն անկարելի է, ուստի ցաւում եմ քեզ վրայ, բայց քեզ օգնելու ոչ մի յարմարութիւն ու միջոց չունիմ։

Պիղատոսը դեռ աշխատում էր նրան ազատել. փորձեց Բարաբայի հետ փոխել նրան, բայց այդ էլ չյաջողուեց։ Բանն այնտեղ հասաւ, որ Յիսուս պիտի մեռնէր. նրան խաչեցին և երկու կողմը նոյնպէս երկու չարագործների, որպէս զի նա մահուան ժամանակ էլ ունենայ այն ընկերութիւնը, ինչ որ էր կենդանութեան ժամանակ՝ մեղաւորների ընկերութիւնը։

Ուրեմն մինչև անգամ մահուան րոպէին սարսափելի հեզնական վիճակ. **մարդկութեան ամենաանմեղ եւ ամենամաքուր զաւակը չարագործների շարքում դատուած։**

Եւ, դարձեալ, զարմա՛նք. հեզնութիւնը (Ironie) նրա մահից յետոյ էլ կապուած է մնում նրա և իւր գործի հետ։ Ասում են թէ՛ քրիստոնէութիւնը աշխարհին տիրեց։ Այդ ճշմարիտ է. այժմ ամէն տեղ ունևորները Յիսուսին են խոստովանում. բայց աղքատներն ու տանջուածները, որոնք մի ժամանակ ամէնից առաջ քրիստոնէութեան յարեցան, այժմ պաղել են և հեռացել քրիստոնէութիւնից, համարելով այն միայն տէրերի կրօն, և ոչ թէ աղքատ մարդկանց։

Եթէ Յիսուս այսօր աշխարհի գալու լինէր, անշուշտ պիտի ասէր մեզ. - «Շատ տարօրինակ է, որ աղքատներն ու փոքր մարդիկն այդպէս մի կողմ են քշուած. իմ ժամանակ այդպէս չէր, եւ իսկապէս ես ոչ մի ժամանակ հարուստների եւ երկրի մեծերի կողմը չեմ բռնել»:

ՀՈՂԻ ՎԱՇԽԱՌՈՒԹԻՒՆԸ

«Վայ այնոցիկ, որ յարեն տուն ի տուն և ազարակ առ ազարակ մերձեցուցեն, զի զընկերին հանիցեն: Մի՞թէ միայն բնակելոց իցէք յերկրի»: Եսայի Ե. 8.

Հողը ժողովրդին է պատկանում և նրա համար է, որ մարդիկ շնչեն նրա վրայ, ապրեն, աշխատեն ու զուարճանան: Այն հողը, որ որևէ կերպով չի նպաստում մարդու կեանքին, կորցնում է իւր նշանակութիւնը: Չենք ուզում ասել թէ հողը մասնաւոր սեպիականութիւն լինել չէ կարող, բայց պէտք է պահանջել, որ հողատիրութիւնը ընկերոջ ապրուստի ու զարգացման արգելք չհանդիսանայ: Այս է Եսայիի նման պատկառելի մարգարէի կարծիքը:

Ի հարկէ մենք Եսայի մարգարէից շատ առաջ ենք գնացել. մենք տանում ենք, որ ահագին հողեր մասնաւոր մարդկանց ձեռքում լինի և շատ տնատէղիներ սրա նրա իշխանութեան տակ: Մենք

չենք վրդովուում այլ ևս, երբ տեսնում ենք մեծ անմշակ տարածութիւններ, որոնց վրայ հարիւրաւոր ու հազարաւոր ընտանիքներ բնակուել կարող էին, բայց տէրը դեռ չի կամենում վաճառել, որպէս զի գինը մի քիչ աւելի բարձրացնէ: Մեր հովիւները չեն քարոզում այլ ևս Իսրայէլի մարգարէի հնացած կարծիքի մասին. հին կտակարանի այդօրինակ մտքերը մարդկային պատուիրան են համարում և չեն ուզում ոչինչ լսել հին մարգարէական ոգու մասին: Այն հաւատը, որ Աստուածաշնչի այդպիսի խօսքերը բառացի էր ընդունում, չկայ այլ ևս. ամենաուղղափառ հաւատացողներն անգամ մարգարէի կռիւը հողատէրերի դէմ համարում են միայն այն ժամանակուայ դրութեան հետևանք: Ի՞նչ կարիք կայ, որ մարդ գործնական դժուարութիւնների մէջ ձգի իրեն Ս. Գրքի խօսքերի համար: Դրա համար չէ Ս. Գիրքը, այլ սեղանի վրայ դնելու ու առաջը մոմ վառելու. չկայ այլ ևս այն հարցը թէ ի՞նչպէս կարգաւորենք մեր կեանքը, որ Աստծուն հաճելի լինի:

Եսային ի հարկէ իւր ժամանակի պայմանների մասին է խօսում և իւր ժամանակակիցների հետ, այնպէս որ կարելի էր մտածել, որ նրա «Վա՛յը» մեր ժամանակի համար անտեղի կլինի: Բայց իւրաքանչիւր ուժեղ զգացմունքի տէր մարդու խղճի ձայնը հէնց այս դեպքում պիտի ասէ՝ Եսային իրաւունք ունի: Նա իրաւունք ունի, որովհետև այսօր էլ մեր մէջ մարդիկ են ապրում, «որոնց համար տեղ չկայ» կարծես երկրի վրայ: Տեղի այս կրճատումը մի բռնութիւն է մարդկանց կեանքի վրայ. տեսէ՛ք, ինչքան դեղին են նեղ ծակերում ապրած երեխաները. տեսէ՛ք, որքան աստանդական ու տեղագուրկ է խեղճ ժողովուրդն այնտեղ, ուր արտը արտին են կպցնում, մինչև մեծ կալուածքներ կազմելը: Դու՛րս արի, Եսայի՛, քո գերեզմանից և օգնի՛ր մեզ, որ ապրում ենք այժմ անարդարութեան դէմ կռիւ մղելով:

Մեր հովիւները թող քաղաքականութեամբ չզբաղուեն, բայց իրական կեանքը լուսաւորեն աստուածային լուսով: Այնպէս է թւում շատ անգամ, թէ սպանութիւնը, շնութիւնն ու գողութիւնը միակ մեղքերն են, որոնց դէմ արժէ մաքառել. հապա ազահութի՞ւնը. հապա Աստուծոյ պարգևների եսական շահագործո՞ւմը. այստեղ ոչ մի մարգարէ ոչինչ ասել չի՞ կարող. թէ՞ դուք ասում էք, բայց լսող չկայ: Եթէ այդպէս է, խնդրում են, միանգամ էլ ասացէ՛ք, ասացէ՛ք բարձրաձայն, այնպէս ազատ թիրիմացութիւններից, ինչպէս Եսային:

Հին ու նոր կտակարանների մէջ մի ներքին զօրեղ հակումն կայ դէպի հասարակ ժողովուրդը: Սուրբ Գիրքը կուսակցական է. նա այնպէս կոկիկ ու ողորկ չէ, այլ ունի ներքին նկատելի կոշտութիւններ: Մի՞թէ սա մի կարելոր հանգամանք չէ բոլոր քրիստոնեայ լինել ցանկացողների համար: Շատ մեծ վտանգ կայ, որ Սիրոյ աւետարանը մարդիկ անտարբերութեան աւետարան դարձնեն: Հին մարդկային ծուլութիւնն ու երկչոտութիւնն է այստեղ կրկին, որ թագչում է սիրոյ վարագուրի յետևը, որպէս զի ստիպուած չլինի *բնաւորութիւն* ցույց տալու: Անշուշտ մեղաւորին էլ սիրում է Աստուած, հողի վաշխառութեամբ զբաղուողին էլ, բայց նրա յանցանքի դէմ իւր առաջին մեծ

մարգարէի բերանով մի «Վա՛յ» է նետում, որ այսօր էլ կայուն է և զգացում: Վա՛յ նրանց, որոնք տունը տանն են կայցնում ու արտը արտին, ընկերին զրկելու համար:

ՊԻՂԱՏՈՍԸ

*Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի,
առեալ ջուրլուաց զծեռս առաջի ժողովրդեանն և ասէ:
քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ:
Մատթ. ԻԷ. 24:*

Լուա՛, լուա՛. լուա՛ ձեռներդ, լողացի՛ր Յորդանանում, ձգի՛ր քեզ ծովը, որ ալիքների հեղեղը վրայիցդ անցնի. ի զո՛ւր է բոլորը: Ո՛չ մի ջուր չի կարող քո խիղճը մաքրել: Եթէ մինչև անգամ բոլոր սրբերի կողմից օրհնած ջուրը եղունգներիցդ կաթէ, դու էլի միշտ նոյն Պիղատոսը կմնաս: Դու կամենում ես պատասխանատուութիւնը լուանալ վրայիցդ, բայց չես կարող:

Հռովմում էր, որ դու վիճում էիր երիտասարդ բարեկամներիդ հետ. բոլորդ ուզում էիք առանց տանջանքի ճշմարտութիւնը գտնել. այնպէս էիք խաղ անում զանազան փիլիսոփայութիւնների հետ, կարծես նրանք *զարեղ* լինէին արծաթեայ բաժակների մեջ: Դուք վիճում էիք՝ արդեօք մարդը ազատ կամք ունի՞, թէ ոչ: Եւ դու այն ժամանակ կարծում էիր, որ լաւ է այդ խնդիրը անվճիռ թողնել: Առանց իմանալու՝ կամք ունիս, թէ ոչ, կեանք մտար: Օրեր եկան, որ դու Հռովմէական սուրդ շրխկացնելով՝ ոտդ բարբարոսների հողի վրայ էիր դնում և նրանց հանդէպ իբրև մի ամբողջական մարդ ու Հռովմայեցի ասում. «Ես կամենում եմ»: Բայց եկան նաև այնպիսի ժամանակներ, երբ ծովափում արևի տակ նստած խաղ էիր անում կանանց հետ, ամբողջովին թոպէին նուիրուած և ուրախ էիր, որ կարող էիր պնդել թէ՛ «Կամք չկայ»: Դու հոսանքի մէջ ընկար և այդ էր լաւը քեզ համար, որովհետև հոսանքը տարաւ քեզ դէպի վեր. օրին մէկը տէր դարձար ամբողջ Հրէաստանին. մի պաշտօն՝ կէս հետաքրքրական, կես սրտնեղիչ Հռովմայեցու համար: Բայց ի՞նչ կա որ. կարելի է դիրք տալ իրեն,

հրապարակով խիստ լուրջ կերպարանք ցոյց տալ, իսկ ծածուկ ծիծաղել բոլոր քահանաների, սաղուկեցիների ու փարիսեցիների վրայ, Ի՞նչ կարիք կայ ամեն բանի վրայ լուրջ աչքով նայելու: Հռովմայեցին էլ տխմարի մէկն է, բոլորս տխմար ենք, ոչ ոք չի իմանում, թէ ո՞րն է ճշմարտութիւնը. կեանքը մի թատրոնական խաղ է, կուզես ողբերգութիւն, կուզես կատակերգութիւն. . . :

Քեզ էր վիճակուած լինել այն մարդը, որի մօտ ապաստան պիտի որոնէր արիւնոտ ճշմարտութիւնը: Քեզ մօտ եկաւ Յիսուսը դատաստան խնդրելու. ողորմութիւն չեմ ուզում, այլ արդարութիւն: Մի դժուար հարց: Ծերակոյտը արժանի էր մի հարուած ստանալու՝ անմտութիւնն ու նախանձն է, որ նրանց ստիպում է խեղճ մարդուն մինչև ի մահ տանջել: Բայց քահանաների հետ այսպէս կոչուած հաւատոյ խնդիրներում վէճի մտնելը առհասարակ դժուար բան է. չի կարելի իմանալ, թէ ինչ խորամանկութիւն կայ մէջ տեղը. և վերջապէս չարժէ, որ դու քեզ որ և է վնաս հասցնես *մի գալիլիացու* պատճառով: Ուզում ես նրա երեսը տեսնել, զինուորները բերում են սփրթնած, տանջուած Գալիլիացուն: Դու հարցնում ես, արդեօք նա թագաւոր է և անսպասելի պատասխան ես ստանում. կարծես յաւիտենականութիւնն է խօսում նրա մէջ. այնպէս է հնչում նրա ձայնը: Այդպիսի հրէայ, կարելի է ասել, ընդհանրապէս այդպիսի մարդ չես տեսել մինչև այդ օրը: Այստեղ աւելի մեծ ոմն է կանգնած քո առաջ, քան թէ Հռովմի դպրոցներում. աւելի *անհատականութիւն*: Որ այդ մարդը օրէնքով դատելով, հանցաւոր չէ, պարզ է. դու նրան ազատ պիտի թողնէիր, որովհետև մեղք չգտար նրա վրայ: Բայց այդպիսի բան անելու համար պէտք է մարդ *կամք* ունենայ, որ դու չունիս. կամք ունենալու համար պէտք է *պատասխանատութեան զգացումն* ունենալ, որ պակասում է քեզ: Հռովմայեցի փիլիսոփաները քո առանց այն էլ շատ բարոյականութիւն չպարունակող գլխից բոլորովին հանել են ամեն բարոյականութիւն, նոքա բնաւորութիւնից զուրկ են դարձրել քեզ. այդ պատճառով էլ այժմ դու ողբերգութիւն կամ կատակերգութիւն ես ներկայացնում: Յիսուսին ու Բարաբբասին կանգնեցնում ես կողք կողքի և թոյլ ես տալիս այն ամբոխին, որին դու արհամարհում ես, խնդրելու քեզնից ազատ արձակելու Բարաբբասին, զանահարում ես Յիսուսին, զարդարում փշեայ պսակով և խուժանին արիւն ցոյց տալուց յետոյ, նրա գթասրտութեանն ապաւինում. յետոյ էլ ջուր ես բերել տալիս ու ձեռներդ ես լուանում բոլոր ամբոխի առաջ, դու՛, Պիղատո՛սդ:

Լուա՛, լուա՛, լուա՛ ձեռներդ. ի զուր է ամենը: Քո ձեռները արիւնոտ կմնան, քանի կայ մարդկային ազգի պատմութիւնը: Բոլոր յետագայ սերունդները տեսնում են քեզ ձեռներդ լուանալիս, բայց նրանք բոլորը ծաղրում են ջուրն ու Պիղատոսին:

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ՎՃԻՌԸ

*«Եւ նոքա աղաղակէին ամենայն բազմութեամբն եւ ասէին.
բարձ, զդա և արձակեա՛մեզ զԲարաբբա. որ էր վասն
խռովութեան իրիք եղելոյ ի քաղաքին և սպանութեան
մտեալ ի բանտ»:*

Ղուկ. ԻԳ. 18-19.

Ճշմարտութիւնն ու իրաւունքը բախեցին Կայիափա քահանայապետի դուռը և նա ասաց. «*Այսօր* չեմ կարող ձեզ լսել, որովհետև գործը վերաբերում է մեր եկեղեցական կարգ ու կանոնի կենսական խնդիրներից մէկին: Եթէ այս Յիսուսը յաղթէ, այն ժամանակ եկած կլինի մեր բոլոր օրէնքների ու զոհաբերութիւնների վերջը. այդ պատճառով պէտք է խնդիրը գործնական կերպով վճռել. Նա պիտի մեռնի, որպէս զի ամբողջ ժողովուրդը չփչանայ»: Եւ երբ ժողովրդի այս *ազատարարը* այսպէս խօսեց, ճշմարտութիւնն ու իրաւունքը գնացին Պիղատոսի մօտ՝ տեսնելու, թէ նա ինչ վճիռ կտայ: Նա ասաց «Ի՞նչ է ճշմարտութիւնը». և «Ես անմեղ եմ այս արդարի արիւնից»: Բայց այնուամենայնիւ Պիղատոսն էլ յանձնեց նրան խաչուելու, որովհետև նա էլ այդ համարեց ամենագործնականը:

Ով որ ապացուցանել է կամենում, թէ հոգևոր և աշխարհիկ իշխանները շատ անգամ վճիռ են տալիս խիստ սովորական և մարդկային տեսակէտներով առաջնորդուելով, այդպիսին թող օրինակ բերէ միայն Կայիափային և Պիղատոսին: Յաճախ գլուխն է անպէտքացած լինում, և այդ պատճառով մարդիկ արմատին են դիմում. հարցնում են ամբոխի, մեծամասնութեան կարծիքը: Յոյս ունին այնտեղ մի առողջ զգացումն գտնել ճշմարտութեան ու արդարութեան համար: Անհատները կարող են սխալուել, ասում են մարդիկ այդպիսի դէպքերում, բայց *մասսան* իւր մութ ձգտումների մէջ գիտակից է ուղիղ ճանապարհին: Բազմութեան համար ոգևորուելով ապա ասում են՝ ժողովրդի ձայնը Աստուծոյ ձայնն է, «Ձայն բազմաց ձայն Աստուծոյ»:

Ապա մի տեսէ՛ք Երուսաղէմի բազմութիւնը. նա փոփոխական է, ինչպէս մարտ ամսի եղանակը: Կիրակէ օրը նոքա թռչկոտում էին Գալիլիացի մարգարէի շուրջը, ծառերից ճիւղեր էին կտրատում, վերարկուներն էին փռում ճանապարհի վրայ, ովսաննա՛ էին կանչում և արբած էին Մեսիայի գալստեամբ: Այնուհետև մի երկու օր բազմութիւնը չէր երևում. Յիսուսը մաքրեց տաճարը

խարազանը ձեռին և եօթնապատիկ վաճ կարդաց փարիսեցիների ու դպիրների գլխին. նա խօսեց սուրբ քաղաքի կործանման մասին և առհասարակ այնպես դառն ու սուր էին նրա խօսքերը խաբեբայութեան, ստութեան ու կեղծաւորութեան դէմ կռիւ մղելիս, որ շատ անդորր հոգիների համար անտանելի դարձաւ նա: Մէկը միւսի յետևից գաղտնի կերպով ամաչել սկսեցին, որ մի այդպիսի մարդու ովսաննա՛ են կանչել. և հազիւ մի քանի օր անցած, բազմութիւնն արդէն նրան հակառակ էր: Ուրբաթ օրը ամբողջ խուժանը բղաւում էր «Կորչի Նազովրեցին»:

Չէ կարելի ասել, թէ այդ ամբոխը կազմուած էր առանձնապէս վատ մարդկանցից. նոքա Երուսաղէմի գործաւորներն ու բանուորներն էին՝ դերձակ, բրուտ, կտաւ գործող, առևտրական ու աղքատ: Բոլորն էլ փափուկ մոմի նման. գալիս է քամին արևելքից, նրանց նաւը շարժում է դէպի արևմուտք և ընդհակառակը: Այսօր փչում են քահանայապետներն ու դպիրները և նրանց փչածի համեմատ գոչում է *մասսան* «Խաչել, խաչել»:

Այդպիսի մեծամտութիւնը նման է ալեկոծուած ծովի, որ իւր զոհն է պահանջում. մէկը պիտի ընկնի, իսկ միւսը դառնայ օրուայ հերոսը: Կեցցէներով է ընդունւում ազատ արձակուած յեղափոխական Բարաբբասը: Թէև նրա ձեռներն արիւնոտ են, բայց այժմ մոռացուած է ամեն ինչ. այժմ բոլորն էլ խնդրում են այն մարդու համար, որից շատ քիչ ժամանակ առաջ վախենում էին ինչպէս ոչխարը գայլից: Կեցցէ՛ Բարաբբասը. կորչի՛ Յիսուսը. կեցցէ՛ մարդասպանը, մեռնի՛ Փրկիչը. ապրի՛ սպանողը, ի խա՛ջ անմեղը. ապրի՛ արիւնոտ մարդը, կորչի՛ հաշտարարը: Ահա՛ այն Ուրբաթ օրուայ բազմութիւնը:

Իրաւունք չունի՛ Առաքեալը՝ ոչ մի տարբերութիւն չկայ, բոլորն էլ մեղաւորներ են:

Թէ՞ այսօր աւելի լաւ կլինէր: Եթէ Յիսուսը գար, ի՞նչպէս կընդունէին նրան հոգևոր ատեաններն, իրաւաբաններն ու դատաւորները, կուսակցութիւններն ու *բազմութիւնը*: -Ի՞նչպէս կընդունէինք մենք նրան՝ *Հգօրին*:

ԿՐՕՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Ես եմ ճշմարտութիւն:

Յովհ. ԺԴ. 6

Ծերութեան հասակում մարդիկ ճշմարտութեան մասին ուրիշ տեսակ են մտածում քան երիտասարդ ժամանակ: Հազիւ պատահի մէկը, որ ծերութեան հասակում նոյն իդէալներն ու աշխարհայեացքն ունենայ, ինչ որ պատանեկութեան հասակում: Մարդը ծիծաղում է յաճախ իւր անցեալի վերայ և հարցնում ինքն իրան. «Ի՞նչ է ճշմարտութիւնը»: Ճշմարիտ, ի՞նչ է այն: Վարդապետութի՞ւն է, ուղղութի՞ւն, ի՞նչ է այն: Այնպիսի բա՞ն է, որ միշտ փնտրում ես և չես գտնում, թէ մի երա՞զ է այն:

Փիլիսոփաները յաջորդում են միմեանց: Ամէն մէկը հաստատում է, թէ իւր նախորդը ճշմարտութիւնը չէր գտել: Նա ջնջում է տախտակից իւր նախորդի պատկերը, որ ա՛յնքան ջանքերով դրոշմուած էր այնտեղ և նորա փոխարէն իւրն է նկարում, բայց դեռ ևս նորա նկարելու ժամանակ, յետին նստարանների վերայ նստած երիտասարդները ծիծաղում են այդ ճշմարտութեան վերայ և անուանում են այն ծերացած վարպետի ուղեղի ցնորք: Յոգնած ու ջարդուած տուն է գնում նա, պառկում է իւր սենեակում և մեռնում: Նա երկար մտածել էր և շատ բան գտել, բայց նորագոյն ճշմարտութիւնը իւր հակառակորդների աշակերտների կողմից փառաբանւում է արդէն:

Եկեղեցիները հետևում են միմեանց և իւրաքանչիւրն ասում է, թէ ինքն է ճշմարիտ: Աբեսինայի քրիստոնեաները, Բաղդադի նեստորականները, արևելքի ուղղափառ վանականները. Հռովմի պապերը, լուտերականները, տիեզերական ժողովները, ամենքն էլ քարոզում են առանձին առանձին, թէ նգովուած է նա, ով տարբեր է ուսուցանում, քան իրենք: Նոքա քարոզում են այնպիսի մտքեր, որոնցով լցուած է նոցա գլուխն ու սիրտը և որովհետև այդ մտքերը թանգ են նրանց համար, կարծում են, թէ միակ մտքերն են, որ կարող են գոյութիւն ունենալ: Բայց եկեղեցու պատմութիւնը ամէն մէկին իւր տեղն ու արժէքն է տալիս: Իւրաքանչիւրը նրանցից ունէր ճշմարտութեան մի մասը, բայց այդ ճշմարտութիւնը չէր ամբողջովին:

Վարդապետական-դաւանական նախադասութիւնները չեն ճշմարտութիւնը, այլ եկեղեցին, մի միտք, որ էական էր հին եկեղեցու գաղափարների մէջ: Վարդապետութեան ձևակերպութիւնները փոփոխական են, բայց այդ փոփոխական երևոյթի մէջ կայ մի մնայուն բան, ճշմարտութիւնը: Եկեղեցին ճշմարտութիւն է, նա չի սխալւում, չի տատանւում, նա լուսաւորուած է Ս. Հոգւով: Եկեղեցին ճշմարիտ և ուղիղ ճանապարհի ապահովութիւնն է. արտաքոյ եկեղեցու չիք փրկութիւն:

Յաճախ այս միտքը քարոզում է ամենայն եռանդով և ջերմեռանդութեամբ, հարիր հազարաւորներ գորանում են այն հաւատով, թէ եկեղեցին ճշմարտութիւն է, բայց և այնպէս հաւանելի չէ, որովհետև ո՞րտեղ է այն եկեղեցին, որն այդքան մեծ նշանակութիւն ունի. նա արդեօք Հռովմո՞ւմն է Լևոն Ժ.-ի՞, թէ Աղեքսանդր Զ.-ի կառաւարութեան ժամանակ: Ո՛չ, եկեղեցիներն էլ մարդկային գիւտեր են և անցաւորութեան ու փոփոխականութեան ենթակայ: Ով ճշմարտութիւնն է կամենում որոնել, պէտք է հասնի մինչև սրբազան գետի ակունքները՝ մինչև Յիսուս Քրիստոսին:

Յիսուս ասում է. «Ես եմ ճշմարտութիւն»: Այս խօսքի մէջ մեծ խորհուրդ կայ: Նա մի ճեղքուած, խորտակուած, բազմամաս անձնաւորութիւն չէ, ինչպէս մենք, միւս մարդիկս, նա իւր մէջ մի է և պայծառ, որովհետև նա մի է և անբաժան Աստուծոյ հետ: Նա գնում է իւր ճանապարհով առանց երկրորդական ցանկութիւնների, առանց եսականութեան: Նորա անձնուիրութիւնը յստակ է, նոյն իսկ խաչի վերայ Նա չի զանազանուում իւր անցեալից, Նա ճշմարիտ է մինչև խորքը, ճշմարիտ մինչև ի մահ: Ոչինչ արուեստական չէ նորա մէջ, ընդօրինակուած, ճարտարամտութեամբ ծրագրուած: Նա վեր է բոլորից իւր ազատութեամբ: Նա պայծառ երկնքի թափանցկութիւնն ունի և ճառագայթող լոյսի ազատութիւնը: Նա հին սուրբերից չէ, որոնք եպիսկոպոսական խոյր են կրում և մեծ ու ծանր գրքեր ունին իրենց ձեռքին, նա ուսումնական չէ, այլ Աստուծոց բղխած՝ անմիջապէս յաւիտենականութիւնց, անանց իւր տպաւորութեամբ, բոլոր ժամանակների Փրկիչը, հոգիների առաջնորդը, յաւիտենական առաքինութեան աստուածային մարմնացումը: Մեր սրտերը նորա հետ են կապուած, և եթէ ժամանակի բոլոր փոփոխական ճշմարտութիւնները մեզ դառնացնում են, նայում ենք Նորան և ասում. «Դո՛ւ ես ճշմարտութիւնը»:

ԲԱԲԵՆՈՆԱԿԱՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ¹

(Հավելված՝ «Գիլգամեշի վեպը»)

Վերջին տարիներս քաղաքակիրթ աշխարհի հետաքրքրությունը ավելի ու ավելի կենտրոնանում է Միջագետքի վրա, ուր մի ժամանակ բարձր զարգացման հասած քաղաքակրթություն է եղել և ավելի հաճախ լսելի են դառնում ex oriente lux=Արևելքից է լույսը գալիս

¹.Դասախոսություն, կարդացված Գևորգյան ճեմարանում, 1908թվականի հոնվարի 29-ին: Գլխավոր աղբյուրները, որոնցից քաղված է ամբողջ նյութը, հետևյալներն են. H. Zimmern, Biblische und babylonische Urgeschichte Leipzig, 1901; H. Gunkel, Israel und das Alte Testament, 3. Auflage von H. Zimmern und H. Winckler. Berlin, 1903 Դողվածն առաջին անգամ տպագրվել է «Բաբելոն և Սուրբ Գիրք» վերնագրով, «Արարատ» ամսագրի 1908 թվականի N3-ում:

խոսքերը: Այդ մեծ հետաքրքրության պատճառը մի կողմից այն է, որ բաբելոնական քաղաքակրթությունը մինչև այսօր էլ ազդեցություն է գործում մեր հասկացողությունների վրա, իսկ մյուս կողմից, և ավելի մեծ չափով այն, որ բաբելոնական քաղաքակրթությունը ամենասերտ կապերով կապված է Իսրայելի ժողովրդի, ուրեմն նաև Հին Կտակարանի հետ: Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան և Ամերիկան, ուր այնքան տարածված է աստվածաշնչի ընթերցանությունն ու ուսումնասիրությունը, մրցում են միմյանց հետ գիտական էքսպեդիցիաներ կազմելով, որպեսզի հնարավոր լինի ընդարձակ պեղումներ կատարել և լույս աշխարհի հանել այն քաղաքակրթության գրավոր մնացորդները, որ կարելի է ասել մեր այժմյան քաղաքակրթության հիմքն է կազմում, և որը այնքան առատ լույս է սփռում արդեն աստվածաշնչի շատ անհասկանալի տեղերի վրա, և մեզ գլխավորապես միջոց է տալիս ըմբռնելու այն գրույցներն ու առասպելները աշխարհի ստեղծագործության և առաջին մարդկանց մասին, որոնք պատմված են Ծննդոց գրքի առաջին 11 գլուխներում:

Սեպագիր արձանագրությունների ընթերցումը մարդկային մտքի ամենահոյակապ գործերից մեկն է. նրա շնորհիվ մեր հասկացողությունը հին և հնագույն արևելքի մասին կարելի է ասել վճռական կերպով փոխվել է: Մինչ նախորդ սերունդների գիտնականները ստիպված էին հին արևելքի պատմության համար բավականանալ Ս. Գրքի և հույների տված կցկտուր տեղեկություններով, այսօր մենք հնարավորություն ունենք արևելքը ճանաչելու իր իսկական աղբյուրներից. իսկ այդ աղբյուրները սկսվում են ամենաքիչը 3000 թվականին մ. թ. ա.: Երկու հազար տարով ընդարձակվում է մեր աչքի առաջ պատմությունը և մենք տեսնում ենք, թե ինչպես այդ մեծ ժամանակամիջոցում ազգեր են ծաղկում ու անհետանում, հսկայական տիեզերական աշխարհակալ պետություններ են առաջ գալիս և կռիվ մղում միմյանց հետ իշխանության համար: Եվ այդ բոլոր ժամանակը արևելքի կենտրոնը Բաբելոնն է: Այստեղ արդեն 3000 թվականին մի քաղաքակրթություն է տիրում ամենածաղկած դրության մեջ, որի սկզբնավորությունը անհիշատակ ժամանակներից է: Այդ կուլտուրայի հիմնադիրներն են սումերները, հավանորեն Միջին Ասիայից գաղթած մի ժողովուրդ, սենական բաբելոնացիք այդ քաղաքակրթության աշակերտներն ու շարունակողներն են միայն: Բայց Բաբելոնից տարածվում է այն ամբողջ արևելքում և մինչև Եգիպտոս է հասնում: Բաբելոնը արևելքում այն դիրքն է ստանում, ինչ-որ հազարավոր տարիներ հետո Հռոմը արևմուտքում: Մի քանի օրինակներ բավական են պարզելու համար այդ քաղաքակրթության նշանակությունը: Մի քանի տարի միայն առաջ գիտական աշխարհը հանկարծ պարզև ստացավ Բաբելոնի թագավոր Համմուրաբիի օրենսգիրքը (2250)¹: Այդ օրենսգրքի մեջ նկարագրված սոցիալական դրությունը շատ

¹ Համմուրաբիի ժամանակը ճշգրիտ որոշված չէ: Այս հողվածը գրելու ժամանակ նա համարվում էր 2250-2200 թվականներին ապրած ամենավորություն: Այժմ Համմուրաբիի թագավորության տարիները համարվում են կամ 1792-1750, որ առավել հավանականն է համարվում, կամ 1728-1686 թվականները: Համմուրաբիի ժամանակի թվագրումից է կախված նաև Միջագետքի պատմության՝ նրան նախորդած շրջանի թվագրումը (Ե. Տ. Մին.):

ավելի բարդ է և օրինական հարաբերությունները շատ ավելի առաջ գնացած են, ավելի խորը քաղաքակրթության հետևանք, քան թե մենք տեսնում ենք Մովսիսական օրենքի մեջ: Օրինակ Բաբելոնում արդեն վաղուց վերացած է արյան վրեժխնդրությունը, այնինչ այն գոյություն ունի դեռ Իսրայելի մեջ: Որքան բարձր աստիճանի վրա է կանգնած բաբելոնական քաղաքակրթությունը, երևում է այն հանգամանքից, որ Համնուրաբիի օրենսգրքի մեջ բժիշկների համար վարձատրության որոշ չափ, տաքսա է նշանակված: Եվ այդ օրենքները կազմված են, իմի ես ժողովված 2250թվին, որից 1000 տարի հետո էլ դեռ Իսրայելի ժողովուրդը գոյություն չուներ: Բաբելոնական քաղաքակրթության տարածման և ազդեցության մի այլ փառավոր ապացույց տալիս է մեզ 1887թվին Եգիպտոսի Տելլ-Ամարնայում գտնված կավե տախտակները: Այստեղ Ամենոփիս Դ-ի արխիվում գտնվեցին Բաբելոնի, Ասորեստանի, Միջագետքի, Կիպրոսի, այլ և Քանանի վասալ թագավորների նամակները Եգիպտոսի փարավոններին ուղղված: Այդ նամակները գրված են բաբելոնական լեզվով. ուրեմն Բաբելոնի լեզուն եղել են ժամանակի դիվանագիտական լեզուն. մինչև անգամ Քանանի փոքրիկ թագավորները, որոնք ենթարկված էին Եգիպտոսին, իրենց նամակները չեն գրում եգիպտական մատերիալի՝ պապիրուսի վրա, այլ գործ են ածում բաբելոնական կավե տախտակները և գրում են բաբելոներեն: Ասորիքն ու Քանանը ուրեմն ճիշտ նույն ձևով գտնվել են բաբելոնական քաղաքակրթության ազդեցության տակ, ինչպես 18-րդ դարում ամբողջ կրթված աշխարհը և նրա հետ միասին դիվանագետները ֆրանսերեն էին խոսում: Այդ նամակագրությունը 1500/1400 թվականներից է: Քանանը կուլտուրայի տեսակետից բաբելոնական մի նահանգ էր Իսրայելի ժողովրդի այնտեղ մտնելուց առաջ: Մի այլ պատկեր. հետագա ժամանակներում, երբ հանդես են գալիս պարսիկները, հույներն ու հռոմայեցիք, ազգերը խառնվում են և կրոնական հասկացողությունները միանում, այնտեղ էլ դեռ դեր են կատարում բաբելոնական ըմբռնումները: Եթե այստեղ խոսք է լինում յոթ ամենամեծ հանձարների կամ աստվածների մասին, պետք է չմոռանալ, որ դրանք բաբելոնական 7 մոլորակների աստվածություններն են, որ հետո հրեական և քրիստոնեական ավանդության մեջ շարունակում են իրենց գործունեությունը իբրև 7 ամենաբարձր հրեշտակներ կամ հրեշտակապետներ: Բայց դեռ այսօր էլ, թեև թույլ կերպով, մի քանի բաներ հիշեցնում են մեզ բաբելոնական իմաստությունը: Բաբելացիք են եղել մեր քաղաքակրթության ուսուցիչները գլխավորապես աստղագիտության և այն ամեն բաների մեջ, որոնք կապ ունեն դրա հետ՝ մաթեմատիկայի և չափերի մեջ: Երկնային էքվատորը այսօր էլ բաժանվում է համաձայն 12 կենդանակերպերի, և շրջանագիծը 360 աստիճանի. արդի քրիստոնյա ազգերը շաբաթվա 7 օրերը կոչվում են բաբելոնական 7 մոլորակների անունով (Sonntag, Montag, Mardi, Mercredi, Donnerstag, Freitag, Saturday): Մինչև անգամ մեր այժմյան ժամացույցների 12-ի բաժանումը, ինչպես և ժամի բաժանումը 60 մասի կապված է հին բաբելոնական աստեղային հաշվիչների հետ:

Բոլորովին ակներև է Բաբելոնի քաղաքակրթության ազդեցությունն Իսրայելի վրա. ամենից առաջ Իսրայելի մեջ չափը, կշիռն ու փողը բոլորովին բաբելոնական են: Իսրայելի մեջ ևս սուրբ թվեր են 7 և 12-ը, որոնք Բաբելոնում կապված են աստվածությունների հետ. ուշադրության արժանի, որ բաբելոնական ստեղծագործության առասպելը 7 տախտակների վրա է գրված, իսկ Գիլգամեշի ազգային զրույցը 12: Նույն ազդեցությունն է ապացուցում նաև Համմուրաբիի օրենքը. այնտեղ էլ այն սկզբունքն է իշխում, թե աչքի տեղ աչք պետք է հանել, ատամի տեղ ատամը. բաբելացին էլ է որդեգրում մեկին ասելով. «Դու իմ որդին ես», ինչպես և իսրայելացին, կամ մերժում է ամեն հարաբերություն ասելով. «Դու իմ հայր չես» կամ «Դու իմ տերը չես»: Լաբանի և Հակովբի վեճն էլ է հիմնված է բաբելոնական օրենքի վրա. եթե վայրենի գազաններն են սպանում կենդանիներին, վնասը տիրոջն է, և ո՛չ թե պահապանինը. եթե մեկը կասկածում է մյուսի վրա, նրան գող համարելով, իրավունք ունի վկանների առաջ նրա տունը խուզարկելու տալու: Բաբելոնում էլ կինը կարող է չբերության դեպքում իր ամուսնուն մի հարձ տալ և այդպիսով երեխա ձեռք բերել: Բաբելոնական օրենքի ամենապարզ օրինակն է Իսրայելի մեջ Աբրահամի հարձի, Հագարի պատմությունը, որ այդ ձևով մայր է դառնում և բարձրամտում է իր տիրոջ նկատմամբ:

Բայց թողնենք այդ մանր մունր նմանությունները և տեսնենք թե ի՞նչ հարաբերություն ունեն միմյանց հետ բաբելոնական առասպելները աշխարհի ստեղծագործության, առաջին մարդկանց, ջրհեղեղի մասին և աստվածաշնչի առաջին գլուխներում պատմված Իսրայելական առասպելները: Սկսենք ստեղծագործության պատմությունից:

Աստվածաշնչի Ա գլխում՝ նկարագրված է ամենից առաջ այն քառասյին դրությունը, որի մեջ գտնվում է տիեզերքը նախքան արարիչ աստվածը կարգ ու կանոն է սահմանում նրա մեջ: Բնորոշ է այդ սկզբնական դրության համար, որ քառսը պատկերանում է իբրև խավար և ջուր: Այդ նախնական օվկիանոսը եբրայեցին Թիոմ է անվանում, որ մեզ շուտով կպատահի բաբելոնական առասպելի մեջ իբրև Թիհամատ: Այդ մութ քառսի մեջ արարիչ աստվածը առաջին օրն իսկ լույսն է առաջ բերում: Դրանից հետո միացած նախաջրերը բաժանվում են երկու մասի, և զատվում են միմյանցից հաստատությամբ: Այդ բանը ըմբռնելու համար պետք է նկատի ունենանալ, որ հին աշխարհի մարդիկ այն հասկացողությունն ունեին, որ ինչպես երկրի վրա, այնպես էլ երկնականարից վերև օվկիանոս կա: Այդ երկու օվկիանոսները՝ հաստատության վերևը և ներքևը, բաժանում է արարիչ աստվածը և այդպիսով ստեղծում տեսանելի երկինքը: Երրորդ օրը ստեղծվում է երկիրը, որ ջրերի միջից է դուրս գալիս և անմիջապես աստծո հրամանով ծածկվում է բուսականությամբ: Չորրորդ օրը ստեղծվում են երկնային մարմինները և առանձնապես շեշտվում է արևի և լուսնի իշխանության մասին, որ անշուշտ այնպիսի կրոնի մեջ առաջ գալ կարող էր, ուր այդ լուսավորները նաև իբրև աստված էին պաշտվում: Հինգերորդ օրը ստեղծվում են ձկներն ու թռչունները, և վերջապես

վեցերորդ օրը ցամաքային կենդանիներն ու ստեղծագործության գլուխգործոցը՝ մարդը: Վեց օր աշխատում է աստված մարդկանց նման և յոթերորդ օրը՝ շաբաթ օրը, հանգստանում:

Բայց միայն աստվածաշնչի Ա գլխում չէ, որ այս խնդրի մասին խոսք է լինում: Նրա այլ տեղերում եղած զանազան ակնարկներից դեռևս հնարավոր է մի ավելի հին վարիանտ փոքրիշատե պարզ կերպով վերականգնել: Այդ ակնարկները մեծ մասամբ բանաստեղծական գրքերի մեջ են գտնվում և խոսում են Յահվեի կռվի մասին մի ինչ որ առասպելական էակի հետ, որ ներկայանում է ինչպես նախնական օվկիանոսի անձնավորումը: Այդ էակի անունն էլ փոխվում է. մի տեղ նա Ռահաբ է կոչվում, մի այլ տեղ Լեվիաթան, կամ վիշապ, օձ, երբեմն էլ պարզ կերպով մտածված: Առանձին գծեր են այդ նկարագրության մեջ, իհարկե, տարբերվում են, բայց մի գլխավոր միտք բոլորի մեջ էլ ընդհանուր է. այդ այն միտքն է, թե սկզբում Յահվեն կռիվ է ունեցել մի թշնամի էակի հետ, որը նախաջրերի անձնավորումն է, և այդ կռվի հետևանքն է, որ Յահվեն, ստեղծել է երկինքն ու երկիրը: Այդպես՝ ՁԸ սաղմոսի մեջ կարդում ենք (10-12). «Դու տիրես զօրութեանց ծովու, և զխռովութիւն ակեաց նորա դու ցածուցանես. դու խոնարհեցուցանես որպէս վիրաւորս զՌահաբ, ի զօրութիւն բազկի քո ցրուեցեր զթշնամիս քո: Քո՛ են երկինք և քո է երկիր, զաշխարհս լրիս իւրով դու հաստատեցեր: Զհիւսիս և զհարաւ դու՛ արարեր»:

Աչքի է ընկնում առանձնապես, որ նախ հաղթվում է Ռահաբը և ապա ստեղծվում են երկինքն ու երկիրը. ապա Ռահաբը օգնականներ ունի, որոնց նույնպես իր բազկի ուժով փախցնում է Յահվեն:

Եսայի մարգարե ԾԱ 9-10. «Զարթիր, զարթիր, զգեցիր, զզորութիւն բազուկ Տեառն. զարթիր իբրև յաւուրցն իսկզբանէ իբրև յազգացն յաւիտենից: Ո՞չ դու այն ես, որ ջախեցեր զՌահաբ, վիրաւորեցեր զվիշապն: Ո՞չ դու այն ես, որ ցամաքեցուցեր զբազմութիւն ջուրցն անդնդոց, որ արարեր զխորս ծովուն ճանապարհ անցից փրկելոցն և ապրելոցն»:

Անշուշտ այս կտորի մեջ դեր է կատարում նաև Իսրայելի ազատվելը Կարմիր ծովից, բայց Ռահաբի և վիշապի հաղթվելու հիշատակությունն անկասկած Յահվեի կռվի հետ է կապված ստեղծագործությունից առաջ: Նույն նկարագրությունն են անում և Հոբի խոսքերը (ԻԶ. 12-13). «Զօրութեամբ հանդարտեցոյց զծով, իմաստութեամբ իւրով եհար զՌահաբ. հոգւով իւրով զարդարեաց զերկինս և ձեռք նորա անարգեցին զվիշապն փախստեայ»:

Այն դերը, ինչ որ այս կտորների մեջ կատարում է Ռահաբը, այլ տեղերում վերագրված է Լեվիաթանին. այդպես սաղմոս ՀԳ. 13-17. «Դու բղխեցուցեր զաղբիւրս և զվտակս, դու ցամաքեցուցեր զգետս սաստիկս: Քո՛ է տիւ և քո է գիշեր. զլոյս և զարև դու հաստատեցեր. և դու հաստատեցեր զամենայն սահմանս երկրի. զգարուն և զամառն դու՛ ստեղծեր»:

Ուրեմն վիշապի պարտությունը դարձյալ կապված է աշխարհի ստեղծագործության հետ: Այս կտորները պարզ կերպով ցույց են տալիս, որ Իսրայելի մեջ գոյություն է ունեցել մի առասպել

Յահվեի և Թհոմի մասին, որ հետո մոռացության է տրվել, մանավանդ որ նույն պատմությունը Ծննդոց Ա գլխում արդեն կար՝ հարմարեցրած Իսրայելի ժողովրդի հասկացողություններին և նրա միաստվածյան ըմբռնմանը: Այդ մաքուր և զտված հասկացողությանն հարմարվելով է անշուշտ Ծննդոց Ա գլուխը գրի առնողը հետ մղել Յահվեի ու Թհոմի կռիվը, որի գոյությունը դեռևս երևում է Թհոմ անվան հիշատակության և այն գծի մեջ, թե Թհոմ երկու մասի է բաժանվում:

Տեսնենք այժմ, թե ի՞նչ հարբերություն ունի Իսրայելի այս առասպելը բաբելոնական առասպելի հետ: Բաբելոնական զրույցը աշխարհի ստեղծագործության մասին ծանոթ էր մեզ Բերոսոսից (300 թ. մ. թ. ա.), որ հետևյալն էր պատմում այդ մասին. «Սկզբում տիեզերքը խավար էր և ջրերով լցված. այդ քառսի մեջ սկիզբն են առնում զանազան հրեշային էակներ, որոնց բոլորի վրա իշխում է մի կին Թամթե անունով: Ապա հանդես է գալիս Բելը, երկու կես է անում այդ կնոջը և նրա երկու մասերից երկինքն ու երկիրն է կազմակերպում ու կանոնավոր վիճակի մեջ դնում: Սակայն երբ Բելը տեսավ, որ երկիրը դատարկ է և անպտուղ, հրամայեց կտրել աստվածներից մեկի գլուխը. արյունը խառնեց հողի հետ և այդ խառնուրդից ստեղծեց մարդկանց ու կենդանիներին: Ապա նա ստեղծեց նաև արև, լուսին, աստղեր և հինգ մոլորակները»:

Բերոսոսի այդ կարճ պատմությունը բոլորովին հաստատվեց սեպագիր արձանագրություններով, որ գտնվեցին Ասուրբանիպալի (668-626) մատենադարանում: Սեպագիր արձանագրությունների մեջ աշխարհի ստեղծագործության առասպելը պատմված է հետևյալ կերպով.

«Մի ժամանակ, երբ վերևում երկինք չէր կոչվում և ներքևում երկիրը անուն չունեց, երբ դեռ ամենասկզբնական օվկիանոսը՝ Ապսուն և ամեն բանի մայր Նախանդունդ Թիհամատը իրար էին խառնում ջրերը ... առաջ եկան առաջին աստվածները»: Ուրեմն ամեն բանի սկիզբը նախաջուրն է, որ անձնավորյալ կերպով իբրև արական և իգական էություն է պատկերացվում: Առասպելի մեջ այնուհետև մանրամասն նկարագրվում է աստվածների ստեղծագործությունը, Թեոգոնիան, հատկապես հետագայի արարիչ Մարդուկի: Սակայն շուտով այդ նոր ստեղծած աստվածների մեջ մի երկպառակություն է ընկնում, որովհետև Թիհամատը՝ աստվածների մայրը, դժգոհ իրերի նոր դրությունից, ապստամբում է վերին աստվածների դեմ և նրանց մի մասին կարողանում է իր կողմն անցկացնել: Ապա նա ստեղծում է հրեշավոր էակների, որոպեսզի իրեն օգնեն կռվի մեջ: Թիհամատի այդ ապստամբությունը բնականաբար դառնում վերին աստվածների համար հոգսի և վրիժառության առարկա: Բայց աստվածներից ոչ մեկը չի համարձակվում կռվի դուրս գալ Թիհամատի դեմ, մինչև որ Մարդուկը պատրաստակամություն է հայտնում ասպարեզ իջնելու, միայն այն պայմանով, որ Թիհամատին հաղթելուց հետո նրան հանձնվի տիեզերքի իշխանությունը և ճակատագրի որոշումը: Աստվածների համար իր փառավոր հացկերույթ է պատրաստվում և այստեղ գինով արբելանուց

հետո վերջապես խոստանում են կատարել Մարդուկի պահանջը. «Ով Մարդուկ, որովհետև դու ուզում ես մեր փոխարեն վրեժխնդիր լինել, քեզ ենք տալիս տիեզերքի արքայության իշխանությունը»: Ապա Մարդուկը պատրաստվում է կռվի, զինվում է նետ ու աղեղով, եռաժանիով, վերցնում է նաև աստվածային զենքը՝ մի կայծակ, հողմերի պարկը (?) և հրեղեն ձիերը լծած, պատերազմական կառքի մեջ նստած, գնում է Թիհամատի դեմ: Վերջինիս պատահելով Մարդուկը մի անգամ ևս հիշեցնում է նրան իր բոլոր չարությունը և ապա առաջարկում է կռվի դուրս գալ- «Պատրաստվիր, ես և դու պիտի կռվենք միմյանց հետ»: Մենամարտի մեջ հաղթում է Մարդուկը, որը իր սուրը խրում է Թիհամատի մարմնի մեջ և նրա դիակը մի կողմ նետում. ապա հարձակվում է Թիհամատի օգնականների վրա, հաղթում է նրանց և բանտարկում. ի վերջո գալիս է կրկին Թիհամատի դիակի մոտ, երկու մասի բաժանում այն - «Մի կեսը վերցրեց նա և դարձրեց երկնականար, առաջը պատնեշ դրեց, պահապաններ կարգեց, հրամայելով նրանց, նրա ջուրը բաց չթողնել»: Թիհամատի վերին ջրերն ուրեմն պատնեշով բաժանված և վերև քշված կազմում են երկինքը: Առասպելի մեջ այնուհետև պատմված է երկնային մարմինների՝ արևի, լուսնի, մոլորակների ստեղծագործությունը և հիշված թե ինչ բաների պիտի ծառայեն նրանք, հատկապես արևն ու լուսինը: Դժբախտաբար մի մեծ հատված կորած է այստեղ առասպելի մեջ, ուր անշուշտ պատմված է եղել երկրի, բուսականության, մարդկանց ստեղծման մասին. հատկապես մարդկանց մասին վերջերս մի հատված գտնվեց, որի բովանդակությունից երևում է, որ հիրավի բաբելացիք մարդու ստեղծագործությունը նույն ձևով են պատմել, ինչպես ավանդում է Բերոսոսը (300թ. մ. թ. ա.): Այստեղ մենք տեսնում ենք, որ արարիչ աստվածը հրաման է տալիս կտրել աստվածներից մեկի գլուխը, որպեսզի նրա արյունը խառնի հողի հետ և մարդիկ ստեղծի: Ամբողջ առասպելը վերջանում է մի օրհներգությամբ ուղղված Մարդուկին, որ փառաբանում է նրա ստեղծագործությունները առանձին-առանձին և իրեն՝ իբրև աստվածների պետի:

Բաբելոնի և Իսրայելի առասպելների նմանությունը ակներև է բոլորին. երկու ավանդության համաձայն սկզբում ամեն ինչը ջուր է եղել. ծովային անդունդը մի անձնավորյալ սոսկալի էակ է, որ բաբելոներեն Թիհամատ է կոչվում, իսկ եբրայերեն Թիհոմ: Երկու առասպելների մեջ էլ այդ էակը վիշապածն է նկարագրված, երկուսի մեջ էլ խոսվում է օգնականների մասին: Ապստամբություն վերին աստծո դեմ, այստեղ էլ, այնտեղ էլ. այնտեղ Մարդուկն է կռվի դուրս գալիս, այստեղ՝ Յահվեն: Թիհամատն էլ հաղթվում է, Թիհոմն էլ. վերին ու ներքին ջրերը այդ էակի բաժանմամբ նույն են երկու առասպելների մեջ էլ. այստեղ էլ, այնտեղ էլ հաղթությունն անմիջապես հետևում է աշխարհի ստեղծագործությունը: Հիշելի է նաև այն, որ Մարդուկն իբրև լուսի և արևի աստված է հանդես գալիս և այդպիսով հաղթում խավարի զորությանը, իսկ աստվածաշնչի մեջ ամենից առաջ ստեղծվում է լույսը:

Մի անգամ այս նմանությունը նկատելուց հետո, որ չի կարող իհարկե պատահական լինել, հարց է առաջ գալիս, թե ի՞նչ հարաբերություն ունեն նրանք միմյանց հետ: Այդ հարցը կարող է երեք տեսակ պատասխան ունենանալ. ա. Բաբելացիք իրենց առասպելը փոխ են առել իսրայելացիներից. բ. Երկուսն էլ հիմնված է նախնական սեփական ընդհանուր առասպելի վրա և գ. Իսրայելցիք փոխ են առել բաբելացիներից: Առաջին պատասխանը լուրջ կերպով մեջտեղ գալ ամենևին չի կարող, որովհետև բաբելոնական առասպելը շատ ավելի հին է, այդ մենք հետո էլ կտեսնենք, քան թե իսրայելականը: Բ. այլևայլությունը կարող է հավանական լինել և ըստինքյան կարելի բան է, բայց առասպելի մեջ այնպիսի գծեր կան, որոնք անհասկանալի կմնային, թե ի՞նչ ձևով է առաջ եկել, եթե ընդունեինք, որ Իսրայելի ժողովրդի մեջ առասպելը սկսգրնական է, այնինչ բոլորովին հասկանալի են դառնում, եթե ասենք, թե առասպելը ծագել է Բաբելոնում և իսրայելացիք այնտեղից փոխ են առել: Օրինակ Իսրայելի համար բոլորովին անհասկանալի պիտի լինի, թե ինչու առանձնապես ծովը և ջուրը պիտի լինի ամեն բանի սկիզբը, այնինչ այդ բոլորովին բնական ու հասկանալի է Բաբելոնի համար: Որովհետև բաբելացին իր երկրի կլիման տեսնելով, պիտի ասեր. տիեզերքը այն ձևով է առաջ եկել, ինչպես նա այժմ էլ ամեն տարի և ամեն օր առաջ է գալիս: Ինչպես յուրաքանչյուր գարուն գարնան արևի աստված Մարդուկը ձմեռվա անձրևներից հեղեղված ու ծովին (կամ Թիհամատին) նման դարձած երկիրը նորից ցամաքեցնում է և երևցնում, այնպես էլ եղած պիտի լինի ամենաառաջին գարնանը, և տիեզերքը ստեղծված պիտի լինի Մարդուկի և Թիհամատի կռվից հետո: Կամ- որովհետև Մարդուկը միևնույն ժամանակ առավոտյան արևի աստվածն է- ինչպես որ արևը ամեն առավոտ կտրում-անցնում է տիեզերական ծովը և գիշերային քառսից հետո նախ երևցնում է երկինքը, ապա երկիրը, այնպես էլ ստեղծագործության առաջին առավոտը ամենից առաջ ստեղծվել են երկինքն ու երկիրը: Եթե փորձենք նույն պատկերը Պաղեստինի կլիմայով բացատրել, մեծ դժվարության կհանդիպենք. բացի այդ պետք է այս պատկերի համար մի գարնան կամ գարնան արևի Աստված, ինչպես Մարդուկն է, բայց ո՛չ թե Յահվեն:

Սակայն այս առասպելը միակը չէ, որ իսրայելացիք վերցրել են բաբելացիներից: Նույնպիսի նմանություն գտնում ենք նաև Դրախտի գրույցի մեջ, որ պատմված է Ծննդոց Բ և Գ գլուխներում: Այստեղ կարելի է ասել բոլորովին ուրիշ տեսարան է բացվում մեր առաջ. այլևս ծովը չէ ամեն բանի սկիզբը և պետք չէ զսպել այն, որ տիեզերքն առաջ գա. այստեղ ամեն բանի սկիզբը անապատ երկիրն է, ուր ջուր է պետք, որպեսզի բուսականություն առաջ գալ կարողանա: Այստեղ չկա նաև Ա գլխի հասկացողությունը արարիչ աստծու մասին, որ իր լոկ խոսքով ստեղծում է ամեն ինչ: Այստեղ Յահվեն իսկապես հոգնեցուցիչ աշխատանք է կատարում. նա կավից մարդ է շինում, ինչպես բրուտը իր ամանները. ապա նա կյանքի շունչ է փչում նորաշեն մարդու քթածակերից, մի պարտեզ է տնկում և նրա մեջ տեղավորում մարդուն. պարտեզի մեջ են նաև Կենաց ծառը և Գիտության ծառը: Այդ

պարտեզի մեջ է հոսում դրախտի գետը, որ իսկույն չորս ճյուղի է բաժանվում: Ավելորդ են համարում այլևս խոսել պատվիրանազանցության մասին իր հրաշալի նկարագրություններով ու խոսակցություններով կնոջ և օձի մեջ, որի հոգեբանական նուրբ ըմբռնողությունը միշտ էլ հիացմունքի առարկա է եղել:

Բաբելոնական գրույցը, գրի առնված ԺԵ դարում մ. թ. ա. , հետևյալն է պատմում մեզ այս խնդրի մասին:

Ադապան, որ ամենայն հավանականությամբ բաբելոնական առասպելաբանության առաջին մարդն է, հանդես է գալիս այստեղ իբրև ծովերի աստված Էա-ի որդի: Սա է ստեղծել նրան, բարձրագույն իմաստություն պարգևել, բայց առանց հավիտենական կյանք շնորհելու: Ադապայի բնակատեղին է Էա-ի սրբավայրը Էրիդուում՝ Եփրատի և Տիգրիսի բերանին մոտիկ: Այստեղ նա Էա-ի տաճարի քահանա է, զբաղվում է ձկնորսությամբ ծովի վրա. որպեսզի կարողանա սրբավայրին ծուկ մատակարարել: Երբ նա այդպես օրին մեկը դարձյալ ծովի վրա էր, հանկարծ բոլորովին հանդարտ ծովի վրա փչում է հարավային քամին, խորտակում նավը և նա ընկնում է ծովը: Իբրև վրեժ այդ բանի համար, Ադապան կոտրում է հարավային քամու թևերը և վերջինը 7 օր շարունակ դադարում է երկրի վրա փչելուց: Այս դեպքի մասին լսում է երկնքի աստված Անուն, մի պատգամավոր է ուղարկում երկիր, որպեսզի Ադապային իր գահի առաջ պատասխանատվության հրավիրե: Էա-ն այժմ նախօրոք սովորեցնում է Ադապային, թե ինչ է սպասում նրան երկնքում՝ Անուի առաջ. «Երբ դու Անուին կներկայանաս, քեզ կառաջարկեն մահվան կերակուր, չուտես. մահվան ջուր կառաջարկեն, չխմես»: Անուի ներկայացուցիչը գալիս է Ադապայի մոտ և նրան իր հետ երկինք է տանում, անցկացնելով երկնքի դռնից: Երբ Ադապան ներկայանում է Անուին, ամեն բան կատարվում է ճիշտ այնպես, ինչպես Էա-ն ասել էր. այն տարբերությամբ միայն, որ ո՛չ թե մահաբեր կերակուր և ջուր են առաջարկում նրան Անուի հրամանով, այլ ընդհակառակը կյանքի կերակուր և ջուր: Բայց Էա-ի հրամանին հնազանդ՝ Ադապան մերժում է առաջարկած հացը և ջուրը և այդպիսով զրկվում է հավիտենական կյանքից: «Կենաց կերակուր բերեք նրան, որ ուտե. կենաց կերակուր բերին և նա չկերավ. կենաց ջուր բերին նրա համար և նա չխմեց. Անուն զարմացած նայեց նրան և ասաց.- «Օ՛, Ադապա, ինչո՞ւ չկերար ու չխմեցիր. ուրեմն չես ապրի»». ապա նա հրամայեց. «Վերցրե՛ք նրան և ետ տարեք երկիր»:

Սխալ կլիներ անշուշտ այս բաբելոնական առասպելն համարել աստվածաշնչի դրախտի պատմութեան նախօրինակը. բայց մի շարք նման գծեր կան երկուսի մեջ, որոնք ստիպում են մեզ ընդունել, որ Ադապայի գրույցը անշուշտ որոշ ազդեցություն գործել է դրախտի պատմության կազմության վրա: Այդպես կենաց հացն ու կենաց ջուրը և նրանց հակադրությունը մահվան կերակրի ու ջրի հետ (հմմտ. Էա-ի խոսքերը մի կողմից, իսկ Յահվեի ու օձի խոսքերը ծառի պտղից ուտելու

մասին մյուս կողմից): Երկու զրույցի մեջ հիմնական գլխավոր գաղափարներից մեկն է՝ գիտությունը ձեռք բերելուց հետո մարդուն միայն անմահությունն է պակաս, որպեսզի նա բոլորովին աստվածանման դառնա: Ծննդոց Գ. 22.«Եւ ասէ Տէր Աստուած. Ահա Ադամ եղև իբրև զմի ի մէնջ՝ գիտել զբարի և զչար. և արդ՝ գուցէ ձգիցէ զձեռն և առնուցու ի ծառոյն կենաց, ուտիցէ և կեցցէ յաւիտեան»: Այդպես էլ երկնքի աստված Անուն է մտածում. էա-ն Ադապային շնորհել է բարձրագույն իմաստությունը, ինչո՞վ կարելի է միայն այդ պարզև լրացնել. պատասխանն է կենաց հաց: Որովհետև Ադապան մերժում է, կորցնում է նա անմահությունը թե՛ իրեն և թե՛ իհարկե նաև իր հետնորդների համար: Հետաքրքրական է առանձնապես, որ աստվածաշնչի խորամանկ և մոլորեցուցիչ օձը հանդես է գալիս նաև մի բաբելական հին նկարի մեջ (այժմ բրիտանական թանգարանում), որի մեջտեղը բաբելացոց սուրբ ծառն է, աջ ու ձախ մի մարդ ու կին, որ ծառից պտուղներ են քաղում, իսկ կնոջ հետևը սողում է մի օձ: Սեպագիր արձանագրությունների մեջ դեռևս չի գտնված մի զրույց, որ բացատրեր մեզ այդ պատկերը. բայց ամենևին զարմանալի չի լինի, թե մի օր Բաբելոնի ավերակներից մի բնագիր ելնի ու պատմի այդ օձի մասին, թե ինչպես նա մոլորեցրել է առաջին կնոջը սուրբ ծառի տակ:

Բոլորովին նման են միմյանց նաև աստվածաշնչի (Ծննդոց Դ և Ե) նահապետների և բաբելոնական նախնական թագավորների մասին պատմածները: Այստեղ էլ, այնտեղ էլ նրանք թվով տասն են, շատ երկար ապրում են և վերջանում ջրհեղեղի հերոսով: Նրանք են զանազան արիեստների ստեղծողը մարդկանց համար: Զարմանալի կերպով անուններն անգամ և նրանց մասին պատմածները նույնն են երկու զրույցների մեջ էլ: Այդպես՝ աստվածաշնչի մեջ երրորդ նահապետը կոչվում է Ենոչ, որ նշանակում է «մարդ». բաբելոնական Գ թագավորի անունն է Ամելոն, որ նույնպես «մարդ» է նշանակում: Չորրորդ նախահայրը աստվածաշնչի մեջ կոչվում է Քենան, որ «դարբին» է նշանակում. Դ բաբելոնական թագավորը Ամենոնն է, որ նշանակում է «գործավոր, վարպետ»: Ավելի աչքի է ընկնում այն տեղեկությունը, որ կա աստվածաշնչի մեջ Ենովքի մասին. «Եւ գնաց Ենովք ընդ Աստուծոյ, յետ ծնանելոյ նորա զՄաթուսաղա, ամս երեքհարիւր. եւ ծնաւ ուստերս և դստերս: Եւ եղեն ամենայն աւուրք Ենովքայ ամք երեք հարիւր և վաթսուն և հինգ: Եւ քանզի գնայր Ենովք ըստ հաճոյից Աստուծոյ, ո՛չ ուրեք գտանէր, զի փոխեաց զնա Աստուած (Ծննդ. Ե. 22 – 24)»: Այս Ենովքի անձնավորությունը հետագայի հրեական զրույցների կենտրոնն է կազմում. նա համարվում է բարձրագույն իմաստության տեր. գիտակ երկնքի և երկրի գաղտնիքների. նաև աստղագիտության, աստղաբաշխության, գրի ու հաշվի գտնող:

Մինչև վերջին ժամանակներն անհասկանալի էր բոլորովին Ենովքի այդ պատկերը՝ իր 365 տարվա կյանքով: Այժմ սեպագիր արձանագրությունների շնորհիվ բոլորովին պարզված է և այդ: Ենովքը աստվածաշնչի է նախահայրն է: Բաբելացիք էլ իրենց է թագավորի մասին զանազան բաներ

են պատմում: Էնմեդուրանկին-այդպես է նրա անունը-եղել է Արևի աստված Շամաշի քաղաքի՝ Սիպպարի թագավորը: Շամաշը վերցրել էր նրան իր մոտ և սովորեցրել երկնքի ու երկրի գաղտնիքները. գլխավորապես այն արվեստը, որով հնարավոր է երկնքի ու երկրի վրա կատարված նշանների միջոցով գուշակել ապագան: Այդ պատճառով էլ բաբելացոց մեջ այս Էնմեդուրանկին համարվում է կախարդ ու հմայող քահանաների նախահայրը: Մենք տեսանք, որ այդ նույն հատկությունները վերագրում են նաև Ենովքին: Աստվածաշնչի մեջ Ենովքին տրված է 365 տարվա կյանք. այդ բանը տարօրինակ էր, որովհետև մյուս նախահայրերի տարեթվերը շատ ավելի են: Այժմ այդ 365 տարին ևս իր բնական և հասկանալի բացատրությունն է գտնում: Ինչպես որ Էնմեդուրանկին Արևի աստված Շամաշի ծառայության մեջ է, այնպես էլ Ենովքը ստանում է արևի տարվա օրերի թիվը՝ 365, իբրև իր կյանքի տևողության չափ:

Նմանություն կա երկու ավանդությունների մեջ նաև այն տեսակետից, որ, ինչպես ասացինք, թագավորների և նախահայրերի տարիները շատ-շատ են նշանակված: Բաբելոնական ավելի հսկայական թվեր է ասում. հաշվելով ստեղծագործությունից մինչև ջրհեղեղ 432,000 տարի, յուրաքանչյուրին 10 թագավորներից բաժին է տալիս 43,200 տարվա կյանք: Նմանություններն ուրեմն այնքան ակներև են, որ կասկած չի կարող նրանց միմյանց հետ ունեցած ամենայնամասին. և այստեղ էլ պետք է ասենք, որ նախնականը բաբելոնականն է և փոխ առածը իսրայելականը. որովհետև հատկապես Ենովքի տիպը, օրինակ, Իսրայելի կրոնի մեջ անհասկանալի է բոլորովին, այնինչ բաբելոնական կրոնի մեջ՝ իբրև Շամաշի պաշտոնյա, Էնմեդուրանկին ուրիշ կերպ լինել չէր կարող:

Այս խնդրի հետ կապված մի հարց է մնում միայն լուսաբանել. ո՞րտեղից են առաջ գալիս այդ հսկայական թվերը նախահայրերի կյանքի մասին: Հայտնի է, որ հին արևելքում շատ մեծ դեր են կատարում զանազան հաշիվներ աշխարհի հարատևության մասին: Խոսք է լինում տիեզերական տարվա մասին, որ ճիշտ նույն բաժանմունքներն ունի. ինչ որ սովորական տարին, ուրեմն չորս եղանակների է բաժանում. ունի իրեն գարունն ու ամառը, աշունն ու ձմեռը: Այդ մեծ տիեզերական տարվա մեջ առանձին տեղ է բռնում իհարկե ջրհեղեղը: Նա պատկանում է բնականաբար տիեզերքի ձմռանը, այսինքն այն ժամանակին, երբ օրերը ամենից ավելի կարճ են և խավարն ու հորդահոս անձրևներն են տիրում Բաբելոնում. այնինչ ստեղծագործությունը իհարկե տիեզերական տարվա գարնանը պիտի համապատասխանի, մանավանդ, որ բաբելացիք իրենց գարնան արևի աստված Մարդուկին էին վերագրում ստեղծագործությունը: Եթե այժմ հարցնելու լինենք, թե ինչ դիրք ունեն տիեզերական տարվա մեջ 9 նախահայրերը կամ թագավորները, պատասխանը պարզ կլինի. գարնան սկզբից՝ մարտի 8 (21)-ից մինչև ամենակարճ օրը՝ դեկտեմբերի 9- (21) ուղիղ 9 ամիս էր: Ուրեմն 9 թագավորները կամ անդրջրհեղեղյան նախահայրերը տիեզերական տարվա առաջին ինն

ամիսների ներկայացուցիչներն են, իսկ տասներորդը, որի ժամանակ սկսվում է ջրհեղեղը, տասներորդ տիեզերական ամսվա ներկայացուցիչն է:

Որ աստվածաշնչի նախահայրերի տարեթվերը շատ ավելի պակաս են, քան թե բաբելոնական թագավորներինը, առաջ է գալիս այն հանգամանքից, որ աստվածաշնչի տիեզերական տարին շատ ավելի փոքր է, քան թե բաբելոնականը:

Նախապատմական վերջին զրույցի, ջրհեղեղի զրույցի մեջ աստվածաշնչի և Բաբելոնի առնչությունը ամենից ավելի որոշ է և ակներև: Այդ պատճառով էլ կարող ենք այս անգամ բաբելոնականից սկսել և ապա նրա հարաբերությունը պարզել աստվածաշնչի հետ:

Արձակագիր առասպելը գտնվելուց առաջ բաբելոնական զրույցը ծանոթ էր մեզ բաբելոնացի քահանա Բերոսոսի տված տեղեկությունից, որի բովանդակությունը հետևյալն է. «Կռոնոսը երազում երևաց 10-րդ նախաջրհեղեղյան թագավոր Քսիսուտրոսին և հայտնեց նրան, որ Ղայեգիոս ամսի 15-ին մարդիկ պիտի ոչնչանան մի ջրհեղեղի միջոցով. այդ պատճառով հրամայեց նրան մի նավ շինել, նրա մեջ տեղավորվել իր ազգականների հետ, վերցնել նաև կերակուր, թռչուններ և չորքոտանի կենդանիներ: Քսիսուտրոսը լսում է նրան, մի նավ է շինում 15 ստադիում երկարությամբ և 2 ստադիում լայնությամբ և տեղավորվում է նրա մեջ իր կնոջ, որդիների և բարեկամների հետ...: Ջրհեղեղից հետո, երբ ջուրը սկսում է պակասել, նա բաց է թողնում թռչուններից մի քանիսին, որպեսզի իմանա թե արդյոք ցամաքը երևո՞ւմ է, թե ոչ. որովհետև սրանք ո՛չ կերակուր են գտնում և ո՛չ հանգստանալու տեղ, վերադառնում են կրկին նավ: Մի քանի օրից հետո նա նորից արձակում է նրանց, այլևս չեն վերադառնում: Քսիսուտրոսը մտածեց, թե ուրեմն երկիրը երևացել է ջրերի տակից և վերցրեց նավի տախտակներից մի քանիսը. տեսնելով, որ նավը իջել է մի լեռան վրա, ցած իջավ կնոջ, որդիների և նավավարի հետ, համբուրեց երկիրը, սեղան շինեց, զոհեց աստվածներին և իր հետ իջնողների հետ վերացավ: Որովհետև նա և յուրայինները այլևս չվերադարձան, նավի մեջ մնացածները ցած իջան և սկսեցին նրանց որոնել. բայց նա այլևս չերևաց նրանց աչքին, միայն մի ձայն լսեցին օդի մեջ, որ հրամայում էր աստվածավախ լինել, որովհետև Քսիսուտրոսը իր բարեպաշտության պատճառով արժանի է համարվել աստվածների մոտ ապրելու. նույնպես և նրա կինը, աղջիկները և նավավարը: Նրանց հրամայվում է կրկին Բաբելոն վերադառնալ և հայտնում, թե այն երկիրը, ուր նրանք այժմ գտնվում են, Հայաստանի մի մասն է: Այն ժամանակ նրանք էլ աստվածներին զոհ են մատուցանում և ոտով ձանապարհ են ընկնում Բաբելոն»:

Այն զարմանալի նմանությունը, որ կա այս և աստվածաշնչի ջրհեղեղի մեջ, առիթ է տվել առաջ կարծելու, որ Բերոսոսը ազդված է աստվածաշնչից, բայց այդ մասին այժմ խոսք լինել չի կարող, որովհետև գտնված է սեպագիր զրույցը Ասուրբանիպալի կամ Սարդանապալի մատենադարանի մեջ Նինվեում (668-626), որը այժմ պահված է բրիտանական թանգարանում: Սեպագիր

արձանագրության մեջ ջրհեղեղի գրույցի բովանդակությունը հետևյալն է. «Աստվածները, նրանց մեջ հատկապես Բելը, որոշում են մարդկանց խիստ պատժի ենթարկել իրենց մեղքերի պատճառով և ոչնչացնել նրանց մի ջրհեղեղով: Սակայն աստվածներից մեկը՝ Էա-ն ընտրում է մարդկանցից մեկին, Ուտնապշտիմին Շուրիպպակ քաղաքից, որը «շատ իմաստուն» (Ատրախազիս կամ Խազիսատրա, որ=Քսիսուտրոսին) էր, որպեսզի ազատի նրան: Մի երազի միջոցով տեղեկություն է տալիս նա սրան աստվածների վճռի մասին և հրամայում է նրան ազատվելու համար մի նավ շինել և ամեն տեսակ կենդանի էակներից իր հետ վերցնել: «Դու, Շուրիպպակցի մարդ, մի նավ շինիր, թո՛ղ քո կայքը և մտածիր կյանքիդ մասին, թո՛ղ ստացվածքդ և ազատիր կյանքդ, ամեն տեսակ կյանքի սաղմ վերցրու նավիդ մեջ. այն նավը, որ դու այժմ պիտի շինես, թող լավ որոշված լինեն նրա չափերը»: Ատրախազիսը (= Ուտնապշտիմ) կատարում է Էա-ի հրամանը, շինում է նավը հրամայված չափերի համաձայն, ծեփում կարով, բազմաթիվ խցերի է բաժանում այն և նրա մեջ տեղավորում է իր բարեկամներին, այլև ամեն տեսակ ընտանի և վայրենի կենդանիներ: Ջրհեղեղն սկսելուց ոչ շատ առաջ, որ նրան առանձին նշանով իմաց են տալիս, մտնում է նավը, իսկ ղեկավարը սկսում է նավի ղեկավարության գործը: Ջրհեղեղը սկսվում է, որը նկարագրվում է իբրև բացարձակ ազատություն բոլոր տարերային գոյությունների և ջրերի, միացած թանձր խավարի հետ: Ամբողջ երկիրը փոխվում է ծովի, որի երեսին լողում են մարդկանց դիակները. 6 օր տևում է ջրհեղեղը, 7-րդ օրը հանգստություն է տիրում և դադարում: Ջրհեղեղից սարսափում են մինչև անգամ աստվածները, որոնք բարձրանում են ամենաբարձր երկինքը՝ Անուի մոտ և այնտեղ պազում շների նման: Ատրախազիսը բաց է անում օդանցքը և տեսնում է ընդհանուր ավերածը. «նա չոքում է, նստած լաց է լինում և նրա այտերի վրա հոսում են արտասուքները»: Ապա սկսում է երևալ երկիրը. նավը կանգ է առնում Նիզիր (?) սարի վրա, ուր մնում է 6 օր. 7-րդ օրը, պատմում է Ատրախազիսը, «Մի աղավնի արձակեցի և բաց թողի նրան. աղավնին թռավ այս ու այն կողմ, բայց որովհետև հանգչելու տեղ չկար, նորից եկավ: Այն ժամանակ արձակեցի մի ծիծեռնակ և բաց թողի նրան. ծիծեռնակը թռավ այս ու այն կողմը, բայց հանգչելու տեղ չգտավ, վերադարձավ. այն ժամանակ արձակեցի մի ագռավ և բաց թողի. թռավ ագռավը, տեսավ որ ջուրը պակասում է, գիշատեց և կռկռաց, բայց չվերադարձավ»: Ագռավի չվերադառնալը Ատրախազիսին նշան է ծառայում, թե ջուրը պակասել է. յուրայիններով իջնում է նա նավից, բաց թողնելով բոլոր կենդանիներին: Նրա առաջին գործն է լինում գոհ մատուցանել, որի անուշահոտությունից հավաքվում են աստվածները «և ինչպես ճանձեր շրջապատում են գոհողին»:

Սակայն Բելը սաստիկ բարկացած է, որ Ատրախազիսը ազատվել է կորստից, իսկ Էան հանդիմանում է նրան հետևյալ խոսքերով. «Դու, իմաստունդ աստվածների մեջ, հզորդ, որքան անմիտ ես, որ ջրհեղեղ ես հանում. պատժիր մեղավորին իր մեղքի համար, հանցավորին իր

հանցանքի համար. փոխանակ ջրհեղեղ հանելու, ուղարկի՛ր վայրի գազաններին, որ ոչնչացնեն նրանց, ուղարկի՛ր սով ու ժանտախտ, որ կոտորեն նրանց»: Բելը հանդիմանում է էաին, որ նա աստվածների խորհուրդը հայտնել է Ուտնապիշտիմին. բայց էան մերժում է այդ հանդիմանությունը, հայտնելով, որ ինքը չէ հայտնել աստվածների խորհուրդը, այլ «չափազանց իմաստունին» (=Ատրախագիս) երազ է ուղարկել և նա դրանից գուշակել է աստվածների գաղտնիքը: Վերջապես Բելը հանգստանում է և ի վերջո մտնում է նավը, բռնում է Ուտնապիշտիմի ձեռքից, նրա կողքին չոքեցնում է կնոջը, շոշափում է երկուսին էլ, անցնում է երկուսի մեջտեղը, օրհնում է նրանց հետևյալ խոսքերով. «Առաջ Ուտնապիշտիմը մարդ էր, այժմ Ուտնապիշտիմը և իր կինը թող մեզ աստվածներիս նման լինեն. Ուտնապիշտիմը թող ապրի հեռու, գետերի բերանի մոտ»: «Այն ժամանակ վերցրին նրանք ինձ,- այսպես է վերջանում գրույցը- և բնակեցրին հեռու, գետերի բերանների մոտ»:

Նմանություններն այստեղ աստվածաշնչի ջրհեղեղի գրույցի հետ այնքան ակներև են, որ երկար ու մանրամասն համեմատություններ անելու կարիք անգամ չկա. բավական է հիշել թռչունների տեսարանը: Այստեղ էլ ուրեմն գլխավոր հարցն այն է, թե ինչպես պետք է հասկանալ այդ առնչությունը: Այժմ էլ իհարկե խոսք չի կարող լինել այն կարծիքի մասին, թե Իսրայելից են վերցրել բաբելացիք իրենց առասպելը, այդ անկարելի է քաղաքակրթության և կրոնների պատմության տեսակետից: Բաբելոնական առասպելը ջրհեղեղի մասին արդեն գրականության սեփականություն է դարձած այն ժամանակ, երբ իսրայելացիք դեռևս ազգություն չէին կազմում, այլ թափառական ցեղեր էին ասորական և արաբական անապատներում: Պետք է ի նկատի ունենալ, որ բաբելոնական առասպելը հայտնի է մեզ ո՛չ միայն Աստուրբանիպալի մատենադարանից, այլ նրանից հատվածներ կան, գրված 21-րդ դարում մ. թ. առաջ: Երկրորդ կարելությունն այն կլիներ, որ երկուսի համար էլ մի ընդհանուր աղբյուր ընդունեինք. բայց այս դեպքում այդ ավանդությունը սեփականություն պիտի լիներ բոլոր սեմական ցեղերին և առհասարակ հին աշխարհին, այնինչ այդպես չէ. սերտ առնչությունը նկատելի է միայն աստվածաշնչի և Բաբելոնի առասպելի մեջ: Եթե այդպես է, առասպելի բուն հայրենիքը անշուշտ դարձյալ Բաբելոնն է, մանավանդ, որ տեղական կոլորիտն էլ միայն Բաբելոնին է համապատասխան, բայց ո՛չ երբեք Իսրայելի երկրին: Որովհետև մի կողմ թողած, թե արդյոք այդ առասպելին հիմք ծառայե՞լ է որևէ պատմական դեպք, որևէ մեծ հեղեղումն, որ իհարկե դարձյալ միայն Բաբելոնին է համապատասխան, պետք է ասենք, որ ընդհանրապես այդպիսի աշխարհայացք առաջ գալ կարող է միայն այնպիսի երկրում, ուր ջրերը շատ առատ են լինում և երբեմն էլ մեծամեծ վնասներ են հասցնում ազգաբնակչությանը: Իսկ այդպիսի երկիրը Եփրատի և Տիգրիսի ստորին հովիտը, բայց ո՛չ երբեք Պաղեստինը:

Ի՞նչ բանի վրա է հիմնված իսկապես ջրհեղեղի գրույցը: Որևիցե պատմական տեղական դեպքի հիշողություն կապված կարող է լինել նրա հետ, այդ ուրանալ չի կարելի: Բայց գրույցի իսկական վերջնական սկզբնավորությունը անշուշտ դարձյալ զուտ մյուսլոգիական է, և ջրհեղեղն էլ այդ պատճառով ո՛չ թե երկրի վրա պետք է որոնել, այլ երկնքի: Ջրհեղեղի հերոսը, որ իր նավով կամ տապանով կտրում անցնում է ջրերը, սկզբնապես Արևի աստվածն է, որ նավարկում է երկնային օվկիանոսի վրայով: Ջրույցների և առասպելների մեջ այդ երևույթը շատ նկատված է, որ որևիցե աստծո հետ կապ ունեցող երևույթները փոխանցվում են մարդկանց վրա: Որ ջրհեղեղի հերոսը սկզբնապես աստվածների հետ կապ ունեցող էակ է եղել, երևում է այժմյան գրույցի մեջ ևս այն հանգամանքից, որ նա վերջիվերջո աստված է դառնում, աստվածների մոտ է վերանում:

Այս է ընդհանուր գծերով բաբելոնական կրոնի և քաղաքակրթության ունեցած ազդեցությունը Իսրայելի կրոնի, և նրա միջոցով նաև ամբողջ քրիստոնեական աշխարհայացքի վրա: Եթե մենք հարցնելու լինենք, թե ե՞րբ է տեղի ունեցել այդ ազդեցությունը, պատասխան տալը դժվար չի լինի: Ոմանք ասում են, այն շրջանում, երբ ասորեստանցիք վերջին անգամ շատ մոտիկ հարաբերության մեջ մտան Պաղեստինի հետ, կործանեցին Իսրայելի թագավորությունը և այլն, ուրեմն Ը դարու կեսերից մինչև է դարու կեսերը: Ուրիշները Դավթի և Սողոմոնի ժամանակն են համարում այս շրջանը, երբ Իսրայելի մեջ մուտք գործեցին օտար հասկացողություններն ու առասպելները, ուրեմն մոտավորապես Ժ դարը: Բայց ամենից ավելի հավանական ենթադրությունն այն է, որ այս հասկացողություններն ու գրույցները մուտք են գործել Քանան դեռ Իսրայելի այնտեղ հաստատվելուց շատ առաջ. ուրեմն այն շրջանում, որ մենք վերև նկարագրեցինք իբրև Տելլ-Ամարնայի շրջան, 1450-ի և 1350-ի մեջ: Եվ այդ դեպքում Իսրայելն իհարկե միայն միջնորդաբար՝ քանանացիների միջոցով էր ծանոթացել այդ նյութերի հետ և ենթարկվել նրանց ազդեցությանը:

Այդ կարծիքն է հաստատում նաև այն հանգամանքը, որ Իսրայելի մեջ այս գրույցներն ու առասպելները բոլորովին կերպարանափոխվել են և հարմարեցրած են Իսրայելի ժողովրդի ավելի մաքրված ու զտված հասկացություններին աստծու և աշխարհի մասին: Այդպիսի զարգացման համար երկար ժամանակ էր հարկավոր: Այնտեղ մենք տեսնում ենք ամենաթունդ բազմաստվածություն, այստեղ ընդհակառակը կատարյալ միաստվածություն: Բաբելոնական կրոնը բոլորովին ընկած է կախարդության և հմայության ազդեցության տակ, որին բոլորովին հակառակ են Իսրայելի մարգարեները. այնտեղ տիրում է աստվածների պատկերների պաշտամունքը, իսկ այստեղ ոչ մի պատկեր չկա և մարգարեներին հաջողվում է դրսից մտած այդպիսի սովորություններն արմատախիլ անել: Այնտեղ աստվածները կապվում են բնության հետ, իսկ այստեղ արդեն առաջ է եկել այն կրոնական համոզումը, թե աստված բարձր է բնությունից և բնությունը ենթարկվում է նրան:

Եվ միանգամայն անհամատեղելի է բաբելական պատկերացումների հետ մարգարեների այն խոսքը, թե աստված զոհ ու ծիսակատարություն չի պահանջում, այլ սրտի բարեպաշտություն և գործերի արդարություն: «Թող իրավունքը ջրի նման հորդանա և արդարությունը անհուն հեղեղ դառնա»:

ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Ներածություն

Բուն նիւթին անցնելուց առաջ, պէտք է տեղեկանալ, թէ ի՞նչ պատմական աղբիւրներ ունինք յիսուսի անձնաւորութեան, կեանքի և գործունէութեան մասին:

Մեր գլխաւոր աղբիւրները Նոր Կտակարանի գրքերն են: Նոր Կտակարանը մի գիրք չէ, այլ մի փոքրիկ մատենադարան, զանազան գրքոյկներից կազմուած, տարբեր ժամանակներում և տարբեր

հեղինակների ձեռքով գրուած, բազմազան բովանդակութամբ և նպատակներով: Այդ գրքերը հաւաքել է եկեղեցին առաջին դարերում՝ իբրև իւր դասական ժամանակի արտադրութիւններ, առաքելական ժամանակի գրուածքներ, որոնց մէջ վաւերական կերպով պատմուած է իւր սկզբնաւորութիւնը:

Բազմաթիւ նուազ արժէք ունեցող և անհաստատ նիւթերի միջից եկեղեցու հայրերը զգուշութամբ, պատմական ըմբռնողութամբ և զարմանալի տակտով ջոկել են այն, ինչ որ իւր կրօնական բարոյական բովանդակութամբ հաստատ կերպով ամենից աւելի բարձր տեղ ունի և կարող է, վաւերական առաքելական սկզբնաւորութիւն ունենալով, ուղիղ տեղեկութիւններ հաղորդել:

Այնուամենայիւ պատմական քննադատութիւնը նոցա կարծիքներով բաւականանալ չէր կարող: Նոր Կտակարանի բոլոր գրքերը, աւետարանները և առաքելական բոլոր թղթերը, հիմնական խիստ քննադատութեան ենթարկուեցին պատմական, կրօնապատմական և լեզուաբանական գիտութիւնների միջոցներով և մեռոյներով: Այդ պատճառով շատ կարծիքներ այժմ փոխուած են: Այնպիսի խնդիրներ, որ դարեր շարունակ հաստատ և անվիճելի էին համարուել, այժմ անհաստատ, անկարելի կամ անորոշ են դարձել: Սակայն չնայելով բոլոր հարցերին և նրանց բազմազան պատասխաններին, գիտութիւնը սկսեց հետզհետէ անդորր դառնալ, առաջ եկան որոշ հաստատուն եզրակացութիւններ, որոնց հիման վրայ կարելի էր գործը շարունակել: Այդպիսի քննադատութեան ամենախիստ ժամանակն էլ վաւերական ճանաչվեցին Պօղոս առաքելի չորս մեծ թղթերը՝ Գաղատացւոց, առաջին և երկրորդ Կորնթացւոց և Հռովմեացւոց, գրուած մօտաւորապէս տարի վարդապետի մահից յետոյ:

Բայց մեր առանձին նպատակի համար այդ նամակները դժբախտաբար շատ բան չեն տալիս: Նաքա ո՛չ թէ Յիսուսի կեանքի և վարդապետութեան նկարագրութիւններն են, այլ պատահական գրուածքներ՝ տարբեր նպատակներով. միայն երկրորդաբար հանդես են գալիս այնտեղ Յիսուսի կեանքից էլ որոշ գծեր, խօսքեր և գործեր: Սակայն այդ չնչին տեղեկութիւններն էլ մեծ արժէք ունին պատմական քննութեան տեսակէտից. նրանցով գոնէ հնարաւոր է դառնում հաստատ կերպով որոշելու Յիսուսի կեանքի և գործունէութեան ամենագլխաւոր գծերը, որոնց վրայ կարելի է շէնքի շարունակութիւնը կառուցանել:

Եթէ Պօղոս առաքելի չորս թղթերը վաւերական են, որի մասին կասկած չկայ, հաստատ է ուրեմն, որ Յիսուս անունով մի անձնաւորութիւն ապրել է և գործել. մի անձնաւորութիւն, որ անկասկած ամենաբարձր ուժի և արժէքի տէր է եղել և իրեն հետևող համայնքի վրայ ամենամեծ ազդեցութիւնն է թողել: Տեղեկանում ենք նաև, որ նա շրջել է և քարոզել հրեաների մէջ, որ տասներկու աշակերտներ է ունեցել իրեն հետ, որ նորա գործունէութեան շնորհիւ մի համայնք է կազմուել՝ հրէութիւնից տարբեր, որ նա «Մեսիա» էր ուզում լինել, բայց զոհ է գնացել իւր ժողովրդի

իշխանների ատելութեանը և աշակերտներից մէկի մատնութեամբ խաչուել է, և որ նրա համայնքի մէջ այն հաւատն էր իշխում, թէ նա մեռելներից յարութիւն է առել և շուտով պէտք է կրկին գայ: Մէջ է բերում նաև նրա խօսքերից մի քանիսը, որոնցից տեղեկութիւն ենք ստանում, որ մեռնելուց կարճ ժամանակ առաջ «Խորհրդաւոր Ընթրիք» է արել իւր աշակերտների հետ:

Ամենից էականն այն է, որ Պօղոսի թղթերի մէջ մենք մի բարեպաշտութիւն ենք տեսնում, որ իւր աննման ջերմութեամբ բոլորովին տարբերում է հրէութիւնից, կազմելով կրօնի մի աւելի բարձր աստիճան և հնարաւորութիւն տալով մեզ գաղափար կազմել Յիսուսի, իրեն վարդապետութեան էական բովանդակութեան ու բնոյթի մասին:

Ինչպէս ասացինք՝ Պօղոսի թղթերի այդ տեղեկութիւնները շատ ընդհանուր են և շատ քիչ, կենսագրութիւն կազմելու համար. բայց նրանցով մենք ազատում ենք այն երևակայութիւններից, որոնք կամենում էին Յիսուսի ամբողջ կեանքի գրոյց և հնդկական բրահմանական կամ բուդդայական առասպել դարձնել:

Այդ ընդհանուր պատկերը լրացնելու համար մենք պէտք է դիմենք Նոր Կտակարանի առաջին չորս գրքերին կամ աւետարաններին: Դժբախտաբար այստեղ այնպիսի հաստատ հողի վրայ չենք, ինչպիսին ունէինք մեր ոտքերի տակ Պօղոսի չորս մեծ թղթերի նկատմամբ:

Քննութիւնը այստեղ դանդաղ և միայն քայլ առ քայլ առաջ է գնում՝ վստահելին անվստահելուց և պատահականը ոչ պատահականից որոշելու համար:

Ամենից առաջ աչքի է ընկնում այն մեծ տարբերութիւնը, որ կայ այդ աւետարանների տեղեկութիւնների և նրանց ընդհանուր բնաւորութեան մէջ. յատկապէս նկատելի է այն վիճակը, որ բաժանում է առաջին երեք աւետարաններից: Մատթէոսը, Մարկոսն ու Ղուկասն էլ զանազան տարբերութիւններ ունին, բայց ընդհանուր առմամբ նրանց նիւթը և պատմական տեղեկութիւնները զարմանալի կերպով նոյնն են. մինչև անգամ պատմելու պարզ և միամիտ եղանակը, որ անարուեստ է և առանց նպատակների, նոյնն է երեքի մէջ: Նոյնն է նաև նրանց հնդհանուր հորիզոնը, կրօնական հասկացողութիւնները և պատկերացումները: Այդ բոլորը միանգամից փոխւում է չորրորդ աւետարանի մէջ: Ամենապարզ կերպով երևում է տարբերակութիւնը Յիսուսի խօսելու եղանակի մէջ: Այնտեղ՝ Մատթէոս, Մարկոս և Ղուկաս տալիս են մեզ կարճ, որոշ և հակիրճ նախադասութիւններ, որ ունկնդիրների յիշողութեան մէջ անմոռանալի են մնացել, կամ բազմազան կենդանի առակածն խօսակցութիւններ, որոնք աննման են իրենց պատկերաւորութեամբ և թարմ անմիջականութեամբ: Յովհաննու աւետարանի մէջ բոլորովին ուրիշ կերպ է. երկար, հանդիսաւոր ճառ, խորը, ծանր, վերացական, յաճախ սաւառնող, շատ անգամ դիտմամբ երկդիմի, պատկերներով աղքատ և այլաբանութիւն սիրող: Մի խօսքով՝ աւելի մի դպրոցի գլխաւորի հանդիսաւոր ուսումն, քան թէ ժողովրդական քարոզչի ոգևորուած պատգամ: Բացի այդ՝ նկատելի է նաև այն

տարբերությունը, որ առաջին երեք անգամների հասկացողություններն ու պատկերացումները պարզ են և ժողովրդական, այն ինչ չորրորդ անգամին զտնուում է ժամանակի փոփոխության ազդեցության տակ: Այստեղ հանդես է գալիս Աղեքսանդրիայի փոփոխության յափտենական Բանը(Լոգոս), որ Աստուծոյ մէջ եղած բանականութիւնն է համարուում: Այդ գաղափարի օգնութեամբ՝ չորրորդ անգամին կամենում է ժամանակակիցներին հասկանալի դարձնել, որ Յիսուսի մէջ յայտնուեալ է Աստուածաութիւնը:

Դրա վրայ է հիմնուած նորա ամբողջ անգամին և այդ պատճառով էլ Քրիստոսի պատկերը այստեղ բոլորովին ուրիշ է, նորա զուտ անհատական բնաւորութիւնը կորել է և ամեն ինչ ստորադասուում է վերև յիշուած գաղափարին: Այն, ինչ որ առաջին երեք կամ համատես կոչուած անգամների մէջ պարզ է և անմիջական, և կենդանի պատկեր է տալիս, այստեղ դառնում է միայն շրջանակ մի խորհմաստ մտքի համար:

Դրա հետևանքն այն, որ Յիսուսի անձնաւորութիւնը չորրորդ անգամին մէջ բոլորովին հրաշալի և բացարձակ կերպով գերմարդկային է դարձել: Համատես անգամների մէջ էլ այդ գիծը բաւական զօրեղ է, բայց այնտեղ հնարաւոր է դեռ ևս զարգացմանը հետևել և պատմականը որոշել գերբնականից: Մենք կարդում ենք համատես անգամների մէջ օրինակ, որ հրաշք գործելու համար դժուարութիւններ կան և որոշ պայմաններ են հարկաւոր. դէպքեր էլ կան, որ նա հրաշք գործել չի կարողանում: Պարզ կերպով խոստովանում է ինքն էլ, որ չգիտէ, թէ երբ պիտի գայ Աստուծոյ արքայութիւնը և նրա աշակերտներին էլ այդ բանը չի զարմացնում: Բոլորովին այլ կերպ է չորրորդ անգամին մէջ. այստեղ ո՛չ արգելքներ կան և ո՛չ էլ պայմաններ են հարկաւոր. ամեն ինչ յայտնի է նրան և առանձ որ և է աշխատանքի չլուած բաներ են կատարուում նրա ձեռքով: Նա ջուրը գինի է դարձնում և Ղազարոսին յարութիւն է տալիս, որը երեք օր գերեզմանի մէջ լինելով՝ սկսել էր քայքայուել:

Այդ բոլորից երևում է, որ համատես անգամների տեղեկութիւնները պատմական իրականութեանն աւելի մօտ են, քան թէ չորրորդ անգամինը: Այս պատճառով էլ, որքան և չորրորդ անգամին գաղափարները նշանաւոր լինին և զուտ քրիստոնէական, որի համար էլ Յովհաննու անգամինը առանձին տեղ է գրաւել քրիստոնէական եկեղեցու մէջ, այնուամենայնիւ նա չի կարող իբրև պատմական աղբիւր ծառայել:

Այնպես որ, Յիսուսի կեանքի համար մնում են երեք համատես անգամները, որոնց մէջ պահպանուած է պարզ պատմական յիշողութիւն նրա կեանքի և գործունեութեան մասին: Այնուամենայնիւ պէտք է ի նկատի ունենալ, որ առաջին երեք անգամներն էլ զրոյցների և հրաշքների մի ամբողջ շարք ունին իրենց մէջ, որ պէտք է զատել զուտ պատմական տեղեկութիւններից:

Քննութիւնը ցույց է տալիս, որ առաջին երեք անտարանների մէջ էլ պատմական իրականութեանն աւելի մօտիկ է կանգնած Մարկոսի անտարանը. այստեղ ամէ բան աւելի պարզ է և անմիջական, քան թէ միւս երկուսի մէջ, ուր մտել են զանազան փոփոխութիւններ, կրճատումներ և յաւելումներ: Այդ կողմից շատ հետաքրքրական է, որ հրաշասիրութիւնը քանի գնում այնքան աւելանում է Մատթէոսի և Ղուկասի մէջ: Հասկանալի է, որ պատմական իրականութեանն աւելի մօտիկ է կանգնած Մարկոսի Անտարանը. այստեղ ամեն բան աւելի պարզ է և անմիջական, քան թէ միւս երկուսի մէջ, ուր մտել են զանազան փոփոխութիւններ, կրճատումներ և յաւելումներ: Այդ կողմից շատ հետաքրքրական է, որ հրաշասիրութիւնը քանի գնում այնքան աւելանում է Մատթէոսի և Ղուկասի մէջ: Հասկանալի է, որ պատմական իրականութեանն աւելի մօտիկ եղած տեղեկութիւնների մէջ հրաշալին համեմատաբար պակաս դեր կկատարէ, քան թէ միւսների մէջ: Մի փոքրիկ, բայց աչքի ընկնող օրինակ է այդ տեսակէտից Յիսուսի մկրտութեան և սուրբ հոգով օծուելու պատմութիւնը: Մարկոսի մէջ դեռ ևս բաւական պարզ է, որ խօսքը մի ներքին տեսիլքի մասին է. այնտեղ կարդում ենք՝ «Նա տեսաւ երկինքը բացուած»: Մատթէոսի մէջ այն բանը արդէն արտաքին գործողութիւն է դարձել. այնտեղ գրուած է.«Այն ժամանակ երկինքը բացուեց»: Իսկ Ղուկասը չի բաւականանում, որ Աստուծոյ հոգին աղաւնու կերպարանքով իջած լինի. իւր կողմից նա վստահեցնում է «Մարմնաւոր կերպարանքով»:

Նոյնպիսի հարաբերութիւն ենք նկատում ծննդեան և յարութեան պատմութիւնների նկատմամբ: Մարկոսի վերջում պատմուած է կարճ կերպով, թէ ինչպէս հրեշտակը գերեզմանի մօտ սզացող կանանց պատուիրում է գալիլիա գնալ, ու պէտք է նրանք տեսնէին Յարուցեալին: Մատթէոսը սկսում է այդ հրաշքի մանրամասնութիւնները պատմել, թէ ինչպէս հրեշտակը ցած է իջնում, գերեզմանի քարը գլորում և վրան նստում: Նկարագրում է նաև հրեշտակի հագուստները: Այստեղ ոչ միայն կանայք, այլ և աշակերտներն էլ գնում են գերեզմանի մօտ, տեսնում են այնտեղ իրենց Տիրոջը և նրանից հրաման են ստանում Գալիլիա գնալու, որտեղ Յիսուսը կրկին անգամ երևում է նրանց: Մարկոսն ու Մատթէոսը մի հրեշտակի մասին են խօսում: Ղուկասի մօտ նրանք արդէն երկու են դարձել: Յիսուսն այստեղ երևում է իւր աշակերտներին՝ փակուած դռնից ներս մտնելով, թոյլ է տալիս շոշափելու իրեն, մինչև անգամ ուտում է նրանց հետ: Յարութեան պատմութեան վրայ այստեղ աւելանում է նաև Համբարձումը:

Նոյնն է դրութիւնը նաև ծննդեան պատմութեան նկատմամբ: Մարկոսի մէջ ոչ մի հետք չկայ ծննդեան հրաշալի պատմութիւններից. Մատթէոսի մէջ նոքա արդէն իրենց տեղն են գրաւում. իսկ Ղուկասի մէջ մանրամասն զրոյցի բնաւորութիւն են ստանում:

Այդպիսով Մարկոսը ամենահին և առաջին աւետարանն է. և ո՛չ միայն այդ, այլ և Մատթէոսի և Ղուկասի մէջ կարելի գտնել Մարկոսի աւետարանը, որ նրանց համար աղբիւր է ծառայել: Յատկապէս պարզ է այդ բանը Մատթէոսի նկատմամբ:

Եթէ մենք Մատթէոսի աւետարանից հանենք Մարկոսի աւետարանի պատմութիւնները, շատ գեղեցիկ եզրակացութեան կգանք: Մատթէոսի մէջ կմանայ այն ժամանակ մի երկրորդ հին աղբիւր, որն անշուշտ աւելի հին է, քան թէ Մարկոսի աւետարանը. և մինչ Մարկոսը գլխաւորապէս միայն պատմութիւններ է անում, այս գրքոյկը Տիրոջ խօսքերի, առակների և ճառերի մի վաւերական ժողովածու է: Այդ խօսքերի ժողովածուն սկզբում անկախ գոյութիւն ունէր. յետոյ մի հրէայ, օգտուելով նաև Մարկոսի աւետարանից և աւելացնելով ծննդեան և յարութեան մասին եղած գրոյցները, կազմել է երկուսից մեր այժմեան, «ըստ Մատթէոսի» կոչուած աւետարանը:

Մատթէոսից յետոյ գրուել է Ղուկասը. այս աւետարանը ինքն էլ վկայում է, որ համեմատաբար աւելի ուշ է գրուած: Նրա ասելով՝ ականատեսների ժամանակն արդէն անցել է, և իւր աղբիւրները բանաւոր և գրաւոր աւանդութիւններն են, որոնց մէջ ամենագլխաւոր տեղն են բռնում տիրոջ խօսքերը և Մարկոսի աւետարանը: Միայն Ղուկասի մէջ եղած առակները ցոյց են տալից, որ նա օգտուել է նաև ուրիշ վաւերական աղբիւրներից:

Ա. ԳԼՈՒԽ.

ՀՐԷԱՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՅԻՍՈՒՍԻ ՕՐՈՎ.

Հրէաները Յիսուսի ժամանակ գտնուում էին շատ խեղճ դրութեան մէջ: Ամեն տեղ տիրում էր աղքատութիւնն ու թշուառութիւնը: Մի ժաքմանակ հրէայ իմաստունն ասում էր. «Աւելի լաւ է մեռնել, քան թէ մուրալ». իսկ այժմ ով որ ասում էր «Մուրալ ամաչում եմ», հպարտանում էր դրանով:

Աղքատութեան պատճառը հրէական երկիրը չէր: Այժմեան Պաղէստինը մեծ մասամբ անապատ է և անբերրի, բայց այդպէս չէր նա Յիսուսի ժամանակ: Հորվմեացի պատմագիր Տակիտոսը գովում է հրէից երկրի հարստութիւնը և ժողովրդի առողջութիւնն ու զօրութիւնը: Հրէից երկիրը մի սարահարթ էր, որտեղ ցանում էին ցորեն ու գարի և այնքան բերք ստանում, որ կարողանում էր սակաւապետ

երկրագործ ժողովրդին բաւականացնել: Հովիտներում բուսականութիւնը շատ աւելի ճոխ էր և մեծ քանակութեամբ արմաւենի ու ձիթենի կարելի էր գտնել: Ամբողջ երկիրի միջով անցնում էր Յորդանան գետը, որի հարաւային հովիտը, որքան մօտենում էր մեռեալ ծովին, այնքան աւելի անպտուղ անապատի տպաւորութիւն էր թողնում: Աւելի պտղաբեր էր հիւսիսային մասը՝ Գալիլիան, Յիսուսի հայրենիքը: Յեզրեւելի հովիտը ամենապտղաբեր վայրերից մէկն էր: Եղանակը մեղմ, ամբողջ երկիրը մշակուած և պտղաբերութիւնն առատ: Մի խօսքով՝ հրէից ժողովրդի աղքատութեան պատճառը Յիսուսի ժամանակ ուրիշ տեղ պէտք է որոնել:

Մեծ ծանրութիւն էին պատճառում ժողովրդին պետական հարկերը: Հրէաների թագաւորը գտնւում էր Հռովմի գերիշխանութեան ներքոյ և պարտական էր ամեն տարի մեծ քանակութեամբ փող մատակարարել Հռովմի գանձարանին: Հարկերը հաւաքում էր թագաւորն ինքը, ի հարկէ շատ աւելի մեծ քանակութեամբ, քան թէ պէտք է ներկայացնէր Հռովմին: Հրէաները հարկ էին տալիս իրենց ստացուածքի և կարողութեան, առուտորի և արհեստների համար: Ամեն տեղ ճանապարհներին կանգնած էին մաքսաւորները այնքան ատելի էին հրէայ ժողովրդի աչքում:

Չնայելով այդ դրութեան՝ հրէաները շատ մեծ ուրախութեամբ տալիս էին մի ուրիշ կամաւոր հարկ. այդ տաճարի հարկն էր: Կարճ ժամանակուայ ընթացքում Հերովդէսի փառահեղ տաճարը շինող ժողովուրդը մեծ ոգևորութեամբ վճարում էր իւր բաժին տուրքը՝ տաճարի, քահանաների և առհասարակ պաշտամունքի պահպանութեան համար: Նոցա ուրախութիւնը երևում էր նրանից, որ ամենայն տարի անդրանիկների զոհաբերութիւնը տաճարին կատարւում էր Երուսաղէմում. և ամբողջ երկրում եղած հրէաները պարտականութիւն էին համարում, մեծ հանդիսով, այդպիսի անդրանիկները Երուսաղէմ տանել:

Հիւանդութիւններ ևս շատ կային երկրի մէջ: Բոլոր հիւանդութիւնների պատճառը համարւում էին չար ոգիները: Աստուած է ուղարկում բաւար հիւանդութիւններն իբրև պատիժ անիրաւութիւնների համար: Ո՛չ միայն հոգեկան հիւանդներն են համարւում չար ոգով լցուած, այլ նաև համրերն ու ընկնաւորները: Ամենից աւելի հեռու էին փախչում հրէաները այդ հոգեկան հիւանդներից, որոնք թափառում էին անապատներում, ճանապարհների վրայ և ապրում էին գերեզմանոցներում: Շատ ողորմելի էր նաև բորոտների դրութիւնը. ո՛չ ոք իրաւունք չունէր նոցա մօտենալու: Նոքա առանձնացած պիտի ապրէին՝ մինչև բոլորովին առողջանալը:

Ներքուստ ժողովուրդը բաժան-բաժան էր եղած. զանազան կուսակցութիւններ էին առաջ եկել, որոնք աշխատում էին ամբոխին իրենց կողմն անցկացնել և իրենց յետևից տանել: Այդպիսի երեք կուսակցութիւն կար հրէայ ժողովրդի մէջ:

Առաջին կուսակցութիւնը փարիսեցիներն էր: Սոքա կամենում էին հրէական ժողովրդին բոլորովին հեռու պահել յոյների և հռովմայեցիների ազդեցութիւնից: Դրսի աշխարհը կառաւարվում

էր հռովմէական եղանակով և կրթում յունական քաղաքակրթութեամբ: Որքան բազմանում էր հէաների թիւը վաճառականական մեծ կենդրոններում, այնքան աւելի մեծանում էր հրէական ազգային առանձնահատկութիւնները կորցնելու վտանգը: Այդ վտանգից ազատուելու համար Փարիսեցիները մի ազգային կուսակցութիւն են կազմում, իսկական հրէայ համարելով միայն նրան, ով որ կատարում է Մովսիսական օրէնքը: «Առաջին՝ օրէնք. երկրորդ՝ զոհ և երրորդ՝ բարի գործեր»: Եթէ երկու հոգի միասին նստեն և չխօսեն օրէնքի մասին, այդ կլինի արհամարհանք դէպի օրէնքը:

Այդ սկզբունքը յաղթող դարձնելու համար, նոքա կանոնաւոր պրոպագանդա էին անում ամբողջ հրէաստանում, բազմաթիւ քարոզիչներով շրջապատել էին ամբողջ երկիրը և հսկում էին իրենց ներկայացուցիչների միջոցով օրէնքի կատարման վրայ: Ժողովուրդը կուրօրէն հետևում էր նրանց և նրանց հետ միասին կրկնում.«Աբրահամը մեր հայրն է, իսկ Մովսէսը մեր միջնորդը. մենք ատում ենք հեթանոսականը և կատարում ենք այն, ինչ որ հրէական է. իւրաքանչիւր պատուիրան կատարելով մենք ձեռք ենք բերում մի բարեխօս, իսկ չկատարելով մենք ձեռք ենք բերում մի բարեխօս, իսկ չկատարելով մի դատախազ: Մենք հետևում ենք օրէնքին և նրա մեկնիչներին և հեզութեամբ սպասում ենք, թէ ե՞րբ պէտք է Եսիուէն ազատէ մեզ հեթանոսների անաստուած կառավարութիւնից և իւր Օծեալին ուղարկէ Ղաւթի ցեղից»:

Փարիսեցիներն իրենք օգնել էին, որ Հռովմէացիները տիրեն Երուսաղէմին: Նոքա սպասում էին մեղմ վերաբերմունք Օգոստոս կայսեր կողմից. բայց այն օրուանից, երբ Պիղատոսը դարձաւ Հռովմայեցւոց ներկայացուցիչը Երուսաղէմում, նոքա կորցրին իրենց բոլոր յոյսը: Նոքա տեսան, որ Հռովմէական իշխանութեանը դիմադրելը, կամ սեպիական ուժերով ազատուելու հոյսը, ցնորք է միայն: Այդ պատճառով փարիսեցիներն այժմ աղաչում էին Աստծուն, որ նա դատի հեթանոսներին միասնական դատաւորի ձեռքով: Իսկ մինչև այն, ժողովուրդը արժանի պիտի կացուցանէ իրեն՝ միասնական թագաւորի գալստեանը, օրէնքի բոլոր պատուէրները կատարելով և դրած արգելքներին հնազանդուելով:

Երկրորդ կուսակցութիւնը Սադուկեցիներինն էր: Սոքա միացած էին Փարիսեցիների հետ, երբ պէտք էր տաճարի պաշտամունքն ու կրօնը պաշտպանել արտաքին թշնամու՝ Նազարէթից եկած Վերանորոգչի դէմ. բայց իրենց մէջ շատմեծ ատելութիւն կար: Բարձրագոյն իշխանութիւնը, որ քահանայապետների ձեռքին էր, միացած էր Սադուկեցիների հետ: Սոքա տեսնում էին, որ Փարիսեցիները ամբողջ երկիրը իրենց ազդեցութեան տակ ձգելով, հետզհետէ խլում են իշխանութիւնը իրենց ձեռքից. այդ պատճառով նրանց ձգտումները հակառակ էին Փարիսեցիների ցանկութեանը: Ամենից առաջ նոքա կամենում են, որ օրէնք կատարելու մասին այդքան շատ պահանջ չլինի: Ղրսում սեպիակաքն ազգի զաւակները արդեն ըմբռնել են, որ եթէ օրէնքը պիտի տիրէ աշխարհում, այն ժամանակ նա պիտի միանայ այն հասկացողութիւնների հետ, որոնք տիրող

են դրսի աշխարհում: Մեսիական յոյսը մի կողմ պէտք է դնել. աւելորդ է խօսել նաև արդարների յարութեան մասին՝ Մեսիայի գալստեան ժամանակ. միայն ցնորամիտները կարող են երագել, թէ երբ և իցէ հնարաւոր է հռովմէական իշխանութիւնից ազատուել:

«Նզովք Սաղուկեցի ուրացողներին, անէծք Փարիսեցի համբերողներին». այդպէս էր ասում ժողովրդի մէջ մի երրորդ խումբ՝ Նախանձախնդիրների խումբը: «Ձեռքը դէպի սուրը և դէպի երկինք ամեն օր աղօթք՝ ջարդ ու փշուր թող լինեն թշնամիները ապառաժի վրայ»: Սոքա բոլորովին հեռացան Փարիսեցիներից, որոնց հետ սկզբում միացած էին, որոնցհետև նրանց համար անտանելի էր դարձել Փարիսեցիների համբերատարութիւնը. պէտք էր անմիջապէս գործի դիմել և ամեն կերպ աշխատել Հռովմի իշխանութիւնից ազատուել: Այս կուսակցութեան շնորհիւ էր, որ հրէաները քանի գնում այնքան անհանգիստ էին դառնում, մինչև որ Հռովմեացիներին համբերութիւնից հանեցին և Երուսաղէմը կործանել տուին: Նոցա մուլեռանդութիւնը քանի գնում այնքան աւելանում էր. այնպես որ մինչև անգամ Փարիսեցիների օրինապահութեան մասին բացարձակ կերպով կասկածներ էին յայտնում:

Ժողովրդի մնացած մասը, տեսնելով զանազան կուսակցութիւնների այդ անվերջ խառնաշփոթը, յուսահատուել էր և չգիտեր թէ ո՞ր ծրագրին պէտք է հետևի: Այդպիսիներին արնուանում էին «հոգով աղքատ, խոնարի և հեզ մարդիկ», և դոքա արհամարհանքի էին ենթարկուած բոլորի կողմից: Փարիսեցիները դրանց մասին ասում էին. «Այդպիսիները արդար լինել չեն կարող. նոքա մի անէծքի արժանի ամբոխ են, որ չեն ճանաչում օրերնքը»:

Բ. Գ Լ ՈՒ Խ

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՍԿԻՋՔԸ.

Այդպիսի ժամանակ սկսեց Յովհաննէս Մկրտիչը, իւր քարոզը: Իսրայէլի մարգարէների նման, դառնացած ժողովրդի տնօրենութիւններից, Յովհաննէսը դարձի է հրաւիրում նրանց, հակառակ դէպքում սպառնալով ամենախիստ պատիժներ: Հրէաները հաւատում էին, թէ Մեսիանյի միջոցով Աստուած պիտի ազատէ իրենց բոլոր թշնամիների ձեռքից: Ամեն թշուառութիւն վերջ պէտք է ունենար, որովհետև Աստուած չէր կարող իւր ընտրած ու սիրած Աբրահամի որդիներին յուսահատ դրութեան մէջ թողնել:

Յովհաննէսը դուրս է գալիս այդ սխալ հասկացողութեան դէմ և խորտակում է ժողովրդի սին յոյսերը: Նա ասում է ժողովրդին. «Դուք կարծում էք, թէ Աբրահամի նման հայր ունենալը կազատէ՞ ձեզ գալիք բարկութիւնից. Աստուած քարերից էլ Աբրահամի որդիներ կհանէ»: Աստուածային արդարութեան համար ո՛չ թէ ազգային արիւնը նշանակութիւն ունի, այլ մաքուր սիրտն ու բարոյականութիւնը: Ով երկու հանդերձ ունի, թող մէկը չունեցողին տայ. մաքսաւորը աւելի չվերցնի, քան թէ նշանակուած է, զինուորականները թող ոչ ոքի չտանջեն, այլ բաւականանան իրենց ռոճիկով:

Այսպիսի մի տարրական դաս էր տալիս Յովհաննէսը մի այնպիսի ժամանակ, երբ Ս. Գրքի ուսումն ու օրենսգիտութիւնը ամենաբարձր զարգացման էր հասել: Սա մի ապտակ էր Փարիսեցիներին, Սադուկեցիներին և քահանայապետներին, որոնք համարում էին իրենց ժողովրդի առաջնորդ: Նոցա վրայ էր ծանրանում ամբողջ պատասխանատուութիւնը, երբ Յովհաննէսն Աստուծոյ դատաստանն էր յայտնում նրանց: Ինչպէս մի ժամանակ Եսայի մարգարէն կանգնել էր ժողովրդի յանդիման, «Սերմն ժանտ, որդիք անօրէնք» անուանել նոցա և Աստուծոյ պատիժը սպառնացել, այնպէս էլ այժմ Յովհաննէսը: «Յէտ դարձէք ձեր ճանապարհներից. կացինը արդէն դրուած է ծառի արմատին, ով որ լաւ պտուղ չի բերի, կկտրուի և կրակը կձգուի: Գալիս է արդէն դատաւորը, հեծանոցը ձեռին՝ իւր կալը մաքրելու. ցորենը պիտի հաւաքէ իւր շտեմարանների մէջ, իսկ յարող այրէ անշէջ հրով»: Իբրև ապաշխարութեան և մաքրութեան նշան Յովհաննէսը մկրտում էր Յորդանանի մէջ իրեն մոտ եկողներին: Ճշմարիտ խօսքը կաչում էր բոլորին_հարուստ թէ աղքատ, գիտուն թէ տգէտ: Տուն վերադառնալով՝ դեռ շատերը խօսում էին այդ հսկայական քարոզչի և նրա քարոզի մասին, որոշելով Աստուծոյ բարութեանը արժանի գործեր կատարել:

Աւետարանիչներից մէկը (Մարկոս) Յովհաննէս Մկրտչին «Սկիզբն աւետարանի» է անուանում ամենայն իրաւամբ, որովհետև Յովհաննէս Մկրտչի ասպարէզ գալուց առաջ եղածը՝ Յիսուսի մանկութիւնն ու պատանեկութիւնը ծածկուած է մեզնից թանձր խաւարով: Կարելի է ասել՝ մինչև նրա 30 տարեկան դառնալը մենք ոչ մի հաստատուն տեղեկութիւն չունինք նրա մասին: Մի հրաշքների հետ շաղկապուած զրոյց պատմում է մեզ նրա ծննդեան մասին: Այդ զրոյցը ուշ ժամանակի արտադրութիւն է. ո՛չ Պօղոս առաքեալը և ո՛չ էլ Մարկոսի աւետարանը տեղեկութիւն ունին նրանից. կուսական ծննդեան և հրաշքների մասին ոչինչ չի ասում նաև Յովհաննու աւետարանը, թէև նրան չեն

կարող Մատթեոսն ու Ղուկասը ծանօթ եղած չլինել: Այդ պատմությունների գրոյց լինելն երևում է նաև նրանից, Մատթեոսի մէջ եղած դեռևս ևս պարզ տեսիլը «անսերմն յղութեան» մասին, Ղուկասի մէջ մի ընդարձակ պատմութիւն է դառնում, որի մէջ դեռևս նախակարապետ Յովհաննէսի հրաշալի ծնունդն ևս մտնում է: Եթէ այդ հրաշալի պատմութիւնները գոնէ որոշ չափով պատմական իրողութիւններ լինէին, ինչպէ՞ս կարող էր հնարաւոր լինել, որ յետագայում նրա մայրն ու եղբայրները չէին ճանաչում նրա կոչումը, խելագարի տեղ էին դնում և որոնում էին նրան՝ տուն վերադարձնելու նպատակով: Մի նոյնպիսի գրոյց ունինք նրա Եգիպտոս փախչելու մասին. ապա մի պատմութիւն է, թէ ինչպէս 12 տարեկան Յիսուսը Երուսաղէմի տաճարում վէճի է բռնում քահանայապետների և դպիրների հետ և յաղթում է նրանց: Բոլորն էլ այնպիսի գրոյցներ, որոնք պատմում են նաև ուրիշ մեծ հիմնադիրների, օրինակ Բուդդհայի մասին, և դրանով ցոյց տալիս, որ ժողովուրդը նման պատմական հանգամանքներում և նման շարժառիթներով առաջնորդուելով՝ նման գրոյցներ է կազմում իւր հերոսների մասին: Այս է այն բոլորը, որ յայտնի է մեզ Յիսուսի մասին մինչև նրա մկրտութիւնը:

Յիսուսը Նազարէթի էր, մի հիւսնի որդի և մինչև 30 տարեկան հասակը անշուշտ զբաղուել է իւր հօր արհեստով: Ժամանակակից բարձր կրթութիւն նա չի ստացել, բայց կարդացել էր հրէից Ս. Գիրքը և նրան յայտնի էր իւր ազգի անցեալը: Իւր ազգակիցների հետ միասին նա միևնոյն գաղափարն ունէր Աստուծոյ և աշխարհի մասին: Երկրից վերև գտնուում է երկինքը, հրեշտակապետներն ու հրեշտակները, սատանան ու դևերը, որոնք իրենց ազդեցութիւնը գործադրում էին նաև երկրի վրայ: Այնտեղ միայն պիտի բաժանուին արդարներն ու մեղաւորները՝ յաւիտենական կեանք կամ տանջանք կրելու համար: Այս էր Յիսուսի ժամանակակից հրէաների հասկացողութիւնը մարդկային կեանքի և աշխարհի մասին: Այդպէս էին բացատրել Ս. Գիրքը հրէից ժողովարաններում և Յիսուսն էլ այդպէս էր սովորել:

Բայց Յիսուսի համար առանձին նշանակութիւն են ստանում Ս. Գրքի մէջ այն տեղերը, որոնք նրա ներքին աշխարհին նիւթ էին տալիս, այդպէս օրինակ Սաղմոսները և Եսայի մարգարէն. մանաւանդ այն կտորները, որտեղ խօսք է լինում աղքատներին աւետարանելու, գերիներին ազատութիւն քարոզելու և հիւանդներին ու ցաւագարներին բժշկելու մասին: Միւս մարգարէների ազդեցութիւնն էլ երևում է նրա քարոզութեան մէջ: Օրէնքը նրա համար էլ Աստուծոյ կողմից դրուած բարձրագոյն իրաւունքն է, բայց նա իւր ժամանակի դպիրների նման չի ասում թէ Ս. Գրքի «ամենագլխաւոր մասը» Օրենքն է: Ընդհակառակը՝ հանդէս գալով իբրև մարգարէ, նա աւելի մեծ նշանակութիւն է տալիս մարգարէներին և համարձակութիւն է ստանում իրեն հակադրելով Մովսէսին. «Մովսէսը ձեզ այսպէս է ասել, իսկ ես այսպէս եմ ասում»: Ինչպէ՞ս էր Յիսուսը այդպիսի մեծ ինքնագիտակցութիւն ձեռք բերել, անյայտ է մեզ:

Յովհաննէս Մկրտիչն սպասում էր, որ շուտով իրենից յետոյ պիտի գայ ասելի գօրաւորը: Յիրաւի այդ գօրաւորն արդէն ճանապարհին էր և ուրիշների հետ եկել էր մկրտուելու անապատի մեծ քարոզչից: Եւ վերջնի քարոզը նրա վրայ այնպիսի տպաւորութիւն է անում, որ ամբողջ ներքին աշխարհն յեղաշրջում է:

Յիսուսի մկրտութիւնը.__30 տարեկան հասակում հասնում է Յիսուսին Յորդանանի քարոզի ձայնը: Նա թողնում է իւր արհեստը և այլևս չի զբաղւում նրանով: Յորդանանի ափին Յովհաննէսը քարոզում էր արտաքին արդարութեան ոչնչութիւնը, օրենքի նախանձախնդիրների անարդար, թշուառների հեծկլտոցը չլսող վարմունքը: Իսկ շիտակ հոգիներին քարոզում էր «ապաշխարութիւն, մեղքերի թողութիւն և ճշմարիտ փրկութիւն»: Բնական էր որ Յիսուսը գնար այնտեղ, որտեղից այդ քարոզն էր գալիս և մկրտուէր այդ քարոզն արտասանողից: Աննկատելի կերպով մօտենում է նաև Գալիլիացի Յիսուսը ապաշխարութեան քարոզչին և խնդրում է մկրտել իրեն. և մինչ նա մտնում է ջուրը, հոգու սրբութիւն խնդրելով, ընկնում է յափշտակութեան մէջ: Բացուած երկնքից տեսնում է նա Աստուծոյ հոգին իւր վրայ իջնելիս և լսում երկնային խօսքեր, որոնք նրան վերջնական կերպով հաւաստիացնում են, թէ՛ «Ղու ես որդի իմ, ընդ որ հաճեցայ»:

Հրէական հասկացողութեան համաձայն՝ մէկը մարգարէ է դառնում այն ժամանակ, երբ նրա վրա իջնում է Աստուծոյ հոգին, նրան Աստուծոյ գործիք դարձնելու համար: Ինչ որ այդպիսին քարոզէ ժողովրդին, Աստուծոյ խօսք է և վճիռ: Այդ պատճառով էլ մարգարէներն ասում են. «Վկա է Աստուած, որ ես պիտի խօսիմ այն, ինչ որ իմ Տէր Աստուածը պատուիրէ ինձ: Այդ համոզմունքն է, որ նրանց ամուր պատնէշ է դարձնում. մի անյաղթելի, անկործան սիւն ամբողջ աշխարհի դէմ: Նոյն ձևով էլ սկսում է Յիսուսը իւր քարոզը ամենամաքուր անհատականութեան և Աստուծոյ որդիների կատարեալ ազատութեան մասին: Ոչինչ և ո՛չ ոք չէ կարող իբրև միջնորդ մտնել Աստուծոյ և նրա որդիների մէջ. ո՛չ տաճարը իւր զոհերով ու քահանայապետներով, որովհետև տաշարը միայն աղօթքի տուն պէտք է լինի. ո՛չ օրէնքը իւր թոյլատրումներով ու արգելքներով. ո՛չ էլ մեղքը, որովհետև ապաշխարող մեղաւորին աստուածային ողորմութիւնը ծիւնի նման սպիտակ լուանալ կարող է և մեղքը ոչնչանում է Աստուծոյ հետ ունեցած հաղորդակցութեան շնորհիւ: Աստուծոյ որդիների թագաւորութեան մէջ պէտք է վերջանայ սատանայի և նրա հրեշտակների իշխանութիւնը և վերջապէս պիտի հանդես գայ Աստուծոյ արքայութիւնը: Նրա կամքը երկրի վրա վերջապէս պիտի կատարուի. այժմ դեռ պատրաստուելու ժամանակն է, բայց շուտով պէտք է գայ տիրական իշխանութիւնը:

Մկրտուելուց յետոյ Յիսուսը անապատ է գնում, ուր մի ծանր պայքար է մղում իրեն հետ: Նա արդէն որոշել էր թողնել իւր արհեստը և Աստուծոյ արքայութիւնը քարոզել: Այժմ նրա հոգու առաջ են

գալիս այն բոլոր դժուարութիւնները, որոնք անհրաժեշտաբար կանգնած պիտի լինին նրա գործի առաջ: Քահանայութիւնը, դպրութիւնն ու փարիսեցիութիւնը չէին կարող նրա կողմը լինել, նմանապէս ժողովրդի մեծագոյն մասը, որ գտնուում էր նրանց իշխանութեան տակ: Անխուսափելի էր ուրեմն կռիւը, որ կարող էր նրա համար շատ վատ վախճան ունենալ. յամենայն դէպս նա պիտի հրաժարուէր կեանքի քաղցրութիւններից, մարդկանց մէջ դիրք և հեղինակութիւն ձեռք բերելուց: Բայց ինչու՞ հրաժարուել ամեն բանից. մի՞թէ չկա ուրիշ ո՛չ մի ճանապարհ՝ ժողովրդի փրկիչը լինելու և բոլորի կողմից էլ այդպէս համարուելու, փարթամության ու արդարութեան մէջ ապրելու և ամբողջ ժողովրդի հիացմունքն ու պատկառանքը վայելելու համար: Նրա մտքից անշուշտ անցել էր հրէական Մեսիա լինելու ցանկութիւնը, բայց նա յաղթեց սատանայի ձայնին իւր գործունէութեան հէնց առաջին օրերը: Չարի հրեշտակների ծառայութիւնը մերժեց, այդ պատճառով էլ Աստուծոյ հրեշտակներն էին սպասաւորում նրան:

Երբ երկրային գորութիւնները վերջ դրին Յովհաննէս Մկրտչի գործունէութեանը, Յիսուս սկսեց իւր քարոզը, սկզբում իւր հայրենիքի կամ գալիլիական հողի վրայ. «Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»: Մի շաբաթ օր, իւր հայրենի քաղաքում՝ Նազարեթում, վերցնում է նա մարգարէների գիրքը, բաց է անում Եսայի մարգարէի այն կտորը, որ իրեն շատ լաւ ծանօթ էր. «Տիրոջ հոգին է իջել ինձ վերայ և օծել ինձ, աղքատներին ւստիք տալու, գերիներին ազատութիւն քարոզելու, վիրաւորներին բժշկելու և Տիրոջ համար մի ընդունելի տարի յայտարարելու համար»: «Այսօր կատարուած է, ասում է նա, այս խօսքը ձեր բոլորի առաջ»:

Բայց շուտով նա թողեց Նազարեթը և սկսեց իւր քարոզը գալիլիական ծովի արևմտեան ափի վրայ գտնուած ամբողջ ճանապարհով, գրաւեց իւր առաջին մտերին աշակերտներին, որոնց հետևեցին, շատ շուտով, նաև շատ ուրիշ հետաքրքրուող մարդիկ: Այնտեղ, գալիլիական ծովի արևմտյան ափին, շրջապատեցին նրան իւր աշակերտները և հետաքրքիրների բազմութիւնը և նա սկսեց իւր «Լ եր ա ն Ք ա թ ո գ ը»:

Երանի ձեզ, աղքատներիդ, որովհետև ձեզ է պատկանում Աստուծոյ արքայութիւնը: Երանի ձեզ, որ լաց էք լինում այժմ, որովհետև պիտի ծիծաղէք: Մի հիմնական օրենք է իշխում Աստուծոյ արքայութեան մէջ. մի օրենք, որ պարունակում է իւր մէջ ընդհանուրի երջանկութիւնը: Այն, ի ն չ ո թ կ ա մ ե ն ու մ ե ք, ո թ մ ա թ դ ի կ ա ն ե ն ձ ե գ, ն ոյ ն ը ա թ է ք դ ու ք ն թ ա ն ց:

Ամեն մէկը պարտաւոր է իւր չափով ուրիշների երջանկութեան, ընդհանուրի բարօրութեան համար աշխատել: Ամեն բարիք, ամեն հաճոյք, ցաւակցութիւն, հոգացութիւն, ինչ որ սպասում էք ուրիշներից, ինքներդ թափեցէք ձեր մերձաւորի գլխին:

Ի՞նչ ձևով կարող է մի այդպիսի վեհ օրենք իրականութիւն դառնալ: Միայն մի այնպիսի սիրով, որ բոլոր սովորական մարդկային չափերից անց է: Մի սէր՝ առանց եսականութեան, լի

անձնուիրութեամբ, որ կարող է նաև անհնարինն իրագործել, որի նպատակն է թշնամուն էլ մերձաւորի շրջանն առնել և թշնամութիւնը յաղթահարել բարութեամբ: «Սիրեցէ՛ք ձեր թշնամիներին. բարի արէ՛ք նրանց, որոնք ձեզ ատում են. օրհնեցէ՛ք նրանց, որոնց ձեզ անիծում են. աջ երեսիդ խփողին՝ ձախդ դարձրու, վերարկուդ ուզողին՝ տուր նաև բաճկոնդ: Եթէ դուք սիրէք նրանց, որոնց ձեզ սիրում են, ի՞նչ երևելի բան արած կլինիք. չէ՞ որ մեղաւորներն էլ սիրում են նրանց, որոնցից սիրոյ առհաւատչեայ են ստանում»:

Յիսուսը գիտէ, որ թշնամուն սիրել պահանջելով, մարդու համար ամենածանր, անհնարին և նրա բնութեանը հակառակ բան է պահանջում: Բայց նա ճանաչում է այն աղբիւրը, որից ոյժ կարելի է ստանալ՝ անկարելին կեանքում իրականացնելու համար: Ով որ Աստուծոյ որդի է ուզում լինել, նա պէտք է Հօր ձգտումներն ունենայ և պէտք է նրա զգացմունքների թարգմանը լինի թէ՛ եղբայրների և թէ՛ թշնամիների մէջ: Դուք պէտք է Բարձրագոյնի որդիները լինիք. իսկ նա բարի է մինչև անգամ ապերախտների, չարերի նկատմամբ: Տուէ՛ք, ուրեմն, որպէս զի ձեզ էլ տրուի. այն չափով որ դուք կչափէք, կվերադարձվի ձեզ:

Իբրև Բարձրագոյնի որդիներ, մարդիկ ո՛չ թէ պէտք է օգնեն միայն արտաքին կարիքը մեղմացնելու, այլ պէտք է ողորմած լինին, ինչպէս նրանց Հայրը ողորմած է, նաև մարդկանց ներքին բարոյական կարիքների նկատմամբ: Մի՛ դատէք ուրիշներին, որպէս զի դատաստանից վախենալու կարիք չունենաք. մի՛ դատապարտէք և դատապարտուելուց վախենալու պէտք չէք ունենայ: Ի՞նչ ես տեսնում քո եղբօր աչքի միջի շիւղը, իսկ քո աչքի գերանը չես տեսնում. ի՞նչպէս ես ասում քո եղբօրը, թող հանեն քո աչքի շիւղը, այն ինչ քո աչքում գերան կայ. կեղծաւոր, հանիր առաջ գերանը քո աչքից և ապա նայիր եղբօրդ աչքի միջի շիւղն էլ հանելու: Ամեն այդպիսի անողորմութիւն և կոշտութիւն կվերանայ Աստուծոյ արքայութեան մէջ, որովհետև այդ արքայութեան Տէրը իւր որդիների մէջ նոր աստուածային ոգի պէտք է զարթեցնի: Չարի զօրութիւնը հետզհետէ պիտի սահմանափակուի, մինչև բոլորովին ոչնչանալը: Որովհետև չկայ լաւ ծառ, որ վատ պտուղ բերէ, ինչպէս և վատ ծառ, որ լաւ պտուղ տայ. իւրաքանչիւր ծառ ճանաչւում է իւր պտուղներից. փշից թուզ կամ խաղող քաղել կարելի չէ: Բարի մարդը իւր սրտի բարի գանձից բարիք է առաջ բերում, իսկ չարը՝ չարիք:

Մի կարճ ուսմունք է այս, որ Յիսուսը կարևոր է համարում փրկութեան համար: Հրէական արդարութիւնը իւր օրէնքներով բարեպաշտին աւելի մեծ գրաւականներ է տալիս փրկութեանն հասնելու համար. բայց իզուր ցնորք էր այդ ամենը: Ժողովրդի մէջ տիրող բարոյական խառվաշփոթութիւնը ցոյց է տալիս, որ օրէնքը նպատակի չի հասցնում: Հաստատուն կայանը բոլոր փոթորիկների մէջ՝ միայն աներևոյթ Աստուածն է, որի արքայութեան կարգերը յայտնագործելու համար ասպարէզ էր իջել Յիսուսը:

«Թող ո՛չ ոք ինձ Տէր չանուանէ, եթէ նա իմ ասածը չի կատարում: Ով ինձ մօտ է գալիս և իմ խօսքերը լսում է ու կատարում , նման է այն մարդուն, որ իւր տունը հաստատուն կերպով հիմնում է ապառաժի վրա. գալիս է փոթորիկը, հեղեղը անցնում է նրա մօտով և չի կարող նրան վնասել, որովհետև հաստատուն հիմքի վրա է շինուած: Իսկ ով լսում է և չի կատարում իմ խօսքերը, նման է այն մարդուն, որ տուն է շինում աւազի վրայ, առանց կանոնաւոր հիմքի. գալիս է հեղեղը և տունը իսկոյն կործանուում է:

Գ. Գ Լ ՈՒ Խ

ԱՌԱՋԻՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԱՔԱՌՈՒՄՆԵՐԸ

Ինչպէս մի ժամանակ Երեմիա մարգարէին, այնպէս էլ այժմ Յիսուսին ասում է Աստուած. «Ահա դնում եմ իմ խօսքերը քո բերանը և նշանակում եմ քեզ կործանելու և փչացնելու, ոչնչացնելու և խորտակելու, շինելու և հաստատելու համար»:

Լերան քարոզի ծրագիրը միայն շինելն ու հաստատելն էր. կործանիչ ազդեցութիւն ունի միայն իւր լռութեամբ: Եւ նա լռում է այն բաների մասին, որոնք ամենամեծ նշանակութիւնն ունէին հրէական բարեպաշտութեան համար: Յիսուսի առաջին յաջողութիւնների և նրա պայքարի բնաւորութիւնը հասկանալ կարելի է միայն այդ ձևով: Եթէ Յիսուսը Հրէաստանում կամ Երուսաղեմում սկսած լինէր իւր գործունէութիւնը, առաջին գործը կլինէր անշուշտ կռիւ Փարիսեցիների հետ. բայց Գալիլիայում, ուր Փարիսեցիները միայն իրենց ներկայացուցիչներն ունէին, Յիսուսը կարողանում է իւր առաջին գործը տեսնել նոր բան հիմնելու, հաստատելու և շինելու մէջ: Բայց նրա առաջին յաջողութիւնները այնպիսի յոյս են ներշնչում նրան, որ շուտով սկսում է նաև պայքարը ի ծնէ հակառակորդների հետ:

Յիսուսի բնաւորութեան գլխաւոր գծերն են մի կողմից` ցաւակցութիւն խեղճերին, միւս կողմից` վստահութիւն դէպի Աստուած: Նա տեսնում է, թէ ինչպէս ժողովրդին առաջնորդելու կոչուածները արհամարհում են խեղճերին, և նրա սիրտը լցւում է ցաւով` այն հօտի համար, որ հովիւ չունի: Պէտք է մտածել այդ խեղճերի դրութեան բարւոքման մասին: Այստեղ խօսքը միայն բաւական չէ, պէտք է անմիջապէս գործի դիմել, նպատակին հասնելու համար: Նա ապրում է այն հաստատուն յույսով, որ իւր քարոզը անհետևանք մնալ չի կարող, որ շուտով սրտերը պիտի նորոգուին և արտաքին դրութիւնը դէպի լաւը պիտի փոխուի: Թէև չար մտքեր էլ են դուրս գալիս մարդու սրտից, բայց մարդու

կամքը ազատ է՝ ապաշխարութեամբ դէպի Աստուած դառնալու և բարուն հետևելու համար: Միայն Աստուած է բարի, չարը առաջ է գալիս սատանայից և մարդու բնութեանը չի պատկանում. մարդը ստեղծուած է կատարեալ լինելու համար և Յիսուսը ցոյց է տալիս այն ճանապարհը, որ դէպի կատարելութիւնն է տանում:

Այնչափ ոգևորուած է Յիսուսն իւր քարոզով, որ ոչ մի բոլոր է չի կասկածում, թէ ամբողջ ժողովուրդը այս նոր մարգարէական քարոզը պիտի լսէ և հետևի նրան, այնպէս որ արդարութիւնը պիտի թագաւորէ ժողովրդի մէջ, պիտի լսուին խեղճերի հառաչանքներն և Աստուած պիտի սրբէ բոլորի աչքերի արտասուքը: Այդ պատճառով էլ նա շարունակ խեղճերի հետ է, ճանաչելու նրանց կարիքները և օգնելու իւր կարողութեան չափով. նրա շուրջն են շարունակ մեղաւորները, մարդիկ ու կանայք, որոնք փոխանակ Փարիսեցիների սառն ու անտարբեր արհամարհանքին, մխիթարութիւն են գտնում: Յիսուսը միևնոյն ժամանակ մարդ ճանաչող է. նա զգում է, թէ ի՞նչ է ուզում իւր շրջապատը. ի՞նչու հակառակ են իրեն թշնամիները: Նա գիտէ Սիմոնի թոյլ կողմը, բայց նաև՝ թէ ի՞նչը նրան Պետրոս (ժայռ) դարձնել կարող է: Աշակերտների ընտրութեան մէջ միայն մէկի նկատմամբ սխալուել էր, բայց շուտով ըմբռնել, որ նա իրեն պիտի մատնէ. ապրում էր առհասարակ այն գիտակցութեամբ, որ ինքը Աստուծոյ որդի է և նրա առաքեալը:

Այդ պատճառով էլ նրա խօսելու ձևը բոլորովին ուրիշ էր, քան թէ փարիսեցիներինն ու դպիրներինը: Նա խօսում է ինչպէս իշխանութիւն ունեցող մեկը, մի կաղմ է թողնում օրենքն իւր երկար ու բարակ պատուէրներով և դիմում է իսկոյն մարդկային բարեպաշտութեան անմիջական բնագղներին. այն աստուածային օրէնքին, որ Մովսէսից էլ առաջ գոյութիւն ունէր՝ գրուած մարդկանց սրտերի մէջ: Նա իւր վարդապետութիւնը կցում է հնին և յարմարեցնում ընդհանուրի հասկացութեանը, բայց գիտէ միևնոյն ժամանակ, որ ընդդէմ պիտի դուրս գայ այդ հին աւանդութիւններին, եթէ նրանք հակառակ են աստուածային օրէնքներին: Ամենաբարձր և ամենաբովանդակալից բանի համար Յիսուսը գտնում է ամենապարզ ձևը և կարողանում է ընդհանուրի հաւանութիւնն ստանալ:

Աստուծոյ կողմից ուղարկուածը պէտք է վերջապէս զօրութիւն ունենար նաև հրաշք գործելու: Այդ էր Իսրայէլի հասկացողութիւնը, այդ էր կարդացել Յիսուսը Ս. Գրքի մէջ, և թագաւորն ու աղքատը դրանով է ճանաչում Աստուծոյ առաքեալին: Մովսէսը, Եղիան ու Եղիսէն այդպիսի նշաններով էին հաւատացրել, թէ իրենք Աստուծոյ կողմից են գալիս: Նախան մարգարէն ասել էր թագաւորին. «Քո մեղքը ներուած է»: Ո՞րքան անելի իրաւունք ունէր Յիսուսը այդ խօսքերն ասելու, որ խեղճերին ու աղքատներին էր ուսուցանում և աւետարանում, անսահման գութ ցոյց տալիս դէպի հիւանդները: Նրա խօսքերը այնպիսի նշանակութիւն ունին, այնպէս էին ազդում հիւանդների վրայ, որ նրանք առողջանում են:

Ամենապարզ կերպով արտայայտում է Յիսուսն այդ Կափառնաում քաղաքում, մի անդամալոյծի բժշկութեան ժամանակ: Հրէական հասկացողութեան համաձայն, հիւանդութիւնը համարում էր յանցանքի համար Աստուծոյ կողմից ուղարկուած պատիժ. այդ պատճառով էլ՝ պատժուածները կատարելապէս յուսահատուում էին, բոլորովին ընդարմանում էին նրանց կամքը, և այն կարծիքն էր յառաջ գալիս, թէ նրանք բոլորովին կորած են և չեն կարող այլ ևս շարժուել: Մանաւանդ որ՝ իւրաքանչիւր շարժում մի նոր հակառակութիւն լինելով Աստուծոյ կամքի դէմ, կարող էր ավելի վատթար պատիժների պատճառ դառնալ: Այդպիսի մեկին Յիսուսն ասում է. «Ք ո մ ե դ ք եր ը ն եր ու ա ծ ե ն»։ և փրկողի զօրեղ խօսքը այնպիսի ազդեցութիւն է անում հիւանդի վրայ, որ նրա հոգեկան ուժերը կրկին վերակենդանանում են, նա այլևս չի վախենում Աստուծոյ բարկութիւնը շարժելուց, յուսահատութիւնը անհետանում է և փոխուում բացարձակ վստահութեան: «Վեր կաց, գնա՛» ասում է նրան Յիսուսը: Եվ հիւանդը վեր է կենում, առնում է իւր մահիճը և գնում:

Ամենաեռանդուն կերպով նուիրում է Յիսուսը հոգեկան հիւանդութիւնների բժշկութեանը: Հոգեկան հիւանդը համարում էր չար ոգու բնակարան: Կափառնաումի ժողովարանում մի այդպիսի դիւահար, որ իրեն միացած էր զգում իւր մէջ բնակուող դևերի հետ, յարձակում է Յիսուսի վրայ և ասում է. «Ի՞նչ ես ուզում մեզանից, Յիսուս Նազովրեցի, եկել ես մեզ ոչնչացնելու, մենք ճանաչում ենք քեզ՝ Մեսիա՛, Աստուծոյ Սուրբ»։ Յիսուսը պատասխանում է. «Լռի՛ր, չար ոգի, և դու՛րս արի այդ մարդու միջից»։ Հիւանդը տեսնում է իւր առաջ կանգնած մի ավելի մեծ զօրութիւն, որին դէմ դնել չեն կարող իւր մեջ բնակուած դևերը. նրա հաւատը կորչում է, թէ ինքը միացած է դևի հետ և գտնուում է նրա իշխանութեան ներքոյ. այդ պատճառով էլ դևը կորցնում է իւր իշխանութիւնը նրա վրայ և ստիպուած է դուրս գալ նրա միջից:

Ուրիշ տեսակ հիւանդների էլ մխիթարում է Յիսուսը և առողջանալու յոյս ներշնչում: Մարմնական թշուառութիւններից չի սարսափում և ո՛չ մի զգուանք հիւանդութեան ամենասոսկալի երևոյթների նկատմամբ: Այնտեղ, որտեղ ուրիշները երեսները ծածկում են, նրա աչքից արևն է փայլում արդարների և մեղաւորների վրայ: Թշուառութեան և խեղճութեան մէջ եղածն էլ Աստուծոյ պատկերն է կրում և չի կարող արհամարհուել նրա կողմից:

Բայց ավետարաններից տուած տեղեկութիւններից երևում է, որ Յիսուսի բժշկական զօրութիւնը որոշ սահման է ունեցել: Ուր հաւատ չկայ դէպի նրա նրա անձնաւորութիւնը, այնտեղ Յիսուսը հրաշք գործել չի կարողանում. ուրեմն այնպիսի հիւանդներ են բժշկում, որոնք առանձին զօրեղ հաւատով և մեծ վստահութեամբ են մօտենում նրան: Խօսք չի կարող լինել ի հարկէ այնպիսի հրաշքների իրողութեան մասին, որոնք հակառակ են բնական կարգաւորութեանը և մեզ համար աներևակայելի. ինչպէս օրինակ՝ ի ծնէ կոյրի բժշկութիւնը, ջուրը գինի դարձնելը, մեռելներին յարութիւն տալ և այլն: Դոքա բոլորը անարժէք զրոյցներ են, որոնք ոչինչ չեն ավելացնում Յիսուսի անձնաւորութեան վրայ:

Մենք չպետք է մոռանանք այն հանգամանքը, որ Յիսուսը չէր եկել հիւանդներին բժշկելու և հրաշքներ գործելու համար: Նրա նպատակն էր ամենից առաջ՝ Աստուծոյ արքայութիւնը քարոզել և հաստատել մարդկանց սրտերում: Այդ պատճառով էլ յաճախ նա փախչում է նա, հիւանդների ձեռքից ազատուելու համար, որպէս զի կարողանայ ուրիշ տեղեր էլ Աստուծոյ արքայութիւնը քարոզել, «Որովհետև դորա համար են եկել»:

Իւր նպատակներն իրագործելու համար՝ Յիսուսը բնականաբար կարիք պիտի զգար մտերիմների մի խումբ կազմելու, որոնց ցանկութիւնը պէտք է լինէր նրան լիովին ըմբռնել: Յովհաննէս Սկրտիչը աշակերտներ ունէր, որոնք նրա բռնի մահից յետոյ էլ շարունակել էին կամենում նրա գործը: Հրէայ իմաստուններն էլ աշակերտներ ունին, որոնց սովորեցնում են օրենքը և նրա բացատրութիւնները: Յիսուսն ևս որոնում է մի քանի մարդիկ, որոնք իւր անձնաւորութեան ներքին էութիւնը ըմբռնել կարողանան հասկանան, թէ ի՞նչ է նրա կոչումը: Երկու զոյգ ձկնորս եղբայրների հետ պատահամբ ծանօթացել էր նա, որոնք գրաւուել էին նրանով. Սիմոնն ու Անդրէասը և Յովհաննէսն ու Յակոբոսն էին նրանք, որոնց Յիսուսը բաժանել էր իւրայիններից: Ժողովուրդն ասում է, որ ձկնորսներն աւելի բարեպաշտ են, քան միւսները. այս ձկնորսներին հաւատում է նա և ընտրում Աստուծոյ արքայութիւնը քարոզելու համար: Այտեղ էլ նրա անձնաւորութեան ազդեցութիւնը այնքան զօրեղ է, որ կոչուածները թողնում են իրենց պարապմունքը և հետևում նրան: Հինգերորդ աշակերտը դառնում է Ղևին՝ Կափառնաւումի մաքսաւորը:

Բայց Փարիսեցիների ներկայացուցիչներն ամեն տեղ են և Յիսուսի յաջողութիւնները թոյն են նրանց հոգու համար: Անդամալոյծի բժշկութեան ժամանակ նոքա մեծ դժգոհութեամբ լսել էին, թէ ինչպէս մեղքերին թողութիւն է շնորհում. իսկ օրէնքի մասին, որ հրէա արդարի համար ամեն բան էր, ոչինչ չէր ասում այս նոր վարդապետը: Աւելի դատապարտելի էր երևում Փարիսեցիների Յիսուսի վարմունքը իւր շրջապատի հետ: Նրանք Յիսուսի մեղադրել չէին կարող, նա խեղճերի ու հիւանդների ընկերութեան մէջ է անցկացնում իւր ժամանակը, որովհետև իրենք էլ, ժողովրդականութիւն ձեռք բերելու համար, այդպիսիների հետ աշխատում էին լաւ յարաբերութիւն պահպանել: Բայց նրա սեղանակից լինելը մաքսաւորների և մեղաւորների հետ՝ ամենածանր գայթակղութեան առիթ կարող էր դառնալ: Դրանով Յիսուսը արդարութեան և մեղքի համար նոր չափեր էր սահմանում, քան թէ Փարիսեցիներն ունէին: «Բժիշկը ո՛չ թէ առողջների համար է, այլ հիւանդների»: «Արդարներին կանչելու համար չեն եկել ես, այլ մեղաւորներին»:

Բայց Յիսուսը չի խորշում նաև մեղաւոր կանանցից, նոցա համար էլ մխիթարական խօսքեր ունի և այդ արհամարուածները երախտագիտութեան զգացմունքով կապւում են նրա հետ՝ մինչև իրենց կեանքի վերջը: Բնորոշ է Յիսուսի վարուեցողութեան համար այն տեսարանը, որ տեղի է ունենում

փարիսեցի Սիմոնի տանը. մի ընկած կին լաց է լինում նրա ոտների մոտ, արտասուքով թրջում է նրա ոտները և մազերով սրբում: Այդ մեղաւորին էլ Յիսուսն ասում է. « Քո մեղքերը ներուած են»: Փարիսեցի Սիմոնը մի ժամանակ բորոտ էր եղել և այժմ առողջացած էր, բայց այս կնոջ արատը նրան անջնջելի էր թւում. այդ պատճառով էլ նա չհասկացավ Յիսուսի խօսքերը: Յիսուսն ասում է նրան. «Մի սեղանաւոր երկու պարտապան ունէր. մէկը պարտ էր նրան 500 դինար, իսկ միւսը 50. որովհետև նոքա չէին կարող վճարել, երկուսին էլ ներեց: Երկուսից ո՞րն աւելի կսիրէ նրան»: Սիմոնը պատասխանում է՝ «Նա , որին շատ է ներել»: Այդ խօսքերից բռնում է Յիսուս՝ Սիմոնին հասկացնելու համար, որ ինչպէս սէրը կարող է մէկին անկման դուռը հասցնել, այնպէս էլ՝ եթէ ապաշխարութիւնը կմաքրէ նրան, մի անգամ ընկածը կարող է նորից ամենաբարձրը և ամենասուրբը դառնալ, վստահ լինելով ողորմած դատաւորի վրայ: Այդ կնոջ շատ մեղքերը ներուած են, որովհետև նա շատ է սիրել:

Մի նոր բարոյական աշխարհայեացք է բացուած այստեղ: Հրէական կրօնի պաշտպանները չէին կարող նրա յետևից շնչկնել. և կռիւն արդէն պատրաստ էր: Կռիւն աւելանալուն առանձնապէս նպաստում էր նաև այն հանգամանքը, որ շաբաթներ էին անցնում և Յիսուսն ու աշակերտները հրէական պահոց օրերը չէին պահում: Փարիսեցիների և նրանց մարդկանց համար ամենամեծ նշանակութիւնն ունէր այդ: Յովհաննէս Մկրտիչն էլ իւր մտերիմներին պատուիրել էր պահել: Այդ պատճառով հարցնում են նորան. «Ինչու՞ Յովհաննէսի աշակերտներն ու Փարիսեցիները պահում են, իսկ քո աշակերտները ոչ»: Յիսուսը պատասխանում է. «Քանի որ փեսան ներկայ է, հարսնաւորները պաս պահելու կարիք չունին»: Բայց ո՞չ միայն Յիսուսի մտերիմների համար, այլ առհասարակ կանոն պիտի լինի պահել միայն այն ժամանակ, երբ մէկը ներքին կարիք կամ պահանջ է զգում: Բռնի պահեցողութիւնը պէտք է վերջանայ:

Աւելի ծանր է գայթակղութիւնը շաբաթ օրուայ պատճառով: Հրէական արդարների համար շաբաթը սուրբ պահելն ամենամեծ օրէնքներից է: Սկսած Եզեկիէլ մարգարէի օրերից, այդ պատուիրանը համարում էր ամենասուրբ պատուիրաններից մէկը և այդ պատճառով էլ՝ մանրամասն կերպով որոշուած էր, թէ ի՞նչ բան թոյլատրելի է շաբաթ օրը և ի՞նչ անթոյլատրելի: Չնայելով սակայն այդ օրէնքին՝ Յիսուս և իւր աշակերտները կարծես ամենևին չեն ցանկանում շաբաթը պահել:

Մի անգամ շաբաթ օրն անցնում էր Յիսուսն իւր աշակերտների հետ արտերի միջով. աշակերտները հասկերը տրորում էին և ուտում: Հրէական հասկացողութեամբ՝ այդ հունձ անել էր նշանակում. իսկ օրէնքն ասում էր. «Նզովուած է նա, ով շաբաթ օրը հունձ կանէ»: Եթէ մէկը կամենում է արդար լինել, նա պէտք է հեռու պահէ իրեն այդ աշխատանքից, որովհետև ո՞չ ոք իրաւունք չունի ազատելու նրան օրէնքը կատարելուց: Յիսուսն իրեն վաղուց ազատ է զգում նաև այդ կէտում: Նա ուրախութեամբ պահում է շաբաթը, բայց այդպիսի բռնութեան դէմ վկայում են նոյն

իսկ սուրբ գրքերը: Չէ՞ք կարդացել, թե ինչպէս Ղաւիթն և իւր հետևողները քաղցած ժամանակ տաճար մտան և առաջաւորութեան հացը կերան, որը միայն քահանաներն իրաւունք ունէին ուտելու: Վերջապէս քահանաները իրենք շաբաթ օրը աշխատում են տաճարում. մի՞թէ դրանով նրանք շաբաթը չեն պղծում: Եթէ հասկանային, թէ ի՞նչ է նշանակում՝ «Ողորմութիւն եմ կամենում և ո՛չ թէ գոհ», այն ժամանակ անմեղ աշակերտներին չէին դատապարտիլ: Շաբաթը հաստատուել է մարդու համար, ուրեմն մարդը պէտք է լինի նաև շաբաթի տէրը:

Ողորմութիւնը աւելի նախապատիւ է, քան օրէնքը: Այդ պատճառով դառնութեամբ է լցւում Յիսուսի հոգին, երբ նրա հակառակորդները մինչև անգամ հիւանդ բժշկելը շաբաթ օրը արգելուած են համարում: Նա հարցնում է հակառակորդներին. «Ո՞րն է աւելի յարմար. շաբաթ օրը բարի բան անե՞լ, թէ չար. մի կեանք փրկե՞լ, թէ կորցնել»: Հակառակորդների վարմունքը նրա զայրոյթն է շարժում մանաւանդ այն պատճառով, որ հաստատ գիտէ, թէ նոցանից ո՛չ մէկն իւր որդուն կամ եզին հորի մէջ չի թողնի, եթէ փորձանքը շաբաթ օրը պատահած լինի: Մինչև անգամ ամենամոլեռանդ օրինականներն օրէնքի մէջ բացառութիւններ էին մտցրել, որով թոյլ էր տրւում շաբաթ օրը ծանր հիւանդներին օգնել: «Եւ նոքա չկարողացան պատասխանել Յիսուսին»:

Բայց հէնց այդ անյաջողութիւնների պատճառով էլ հակառակորդների թշնամական վերաբերմունքը քանի գնում, այնքան սաստկանում էր: Այս նոր Ռաբբիի յաջողութիւնները, մանաւանդ հոգեկան հիւանդների բժշկութիւնը, նրանց նախանձ է շարժում: Իրենցից մի քանիսն էլ «Ոգիների վրայ իշխանութիւն ունեցող» են համարում. բայց Նազովրեցու գործերը նրանց բոլոր արածները ստուերի մէջ են թողնում: Այդ պատճառով՝ կատաղի ատելութեամբ գոչում են. «Բեհեղզեբուղն է նրա մէջ. և դևերի այդ իշխանի միջոցով է հալածում նա դևերին»: Այստեղ առաջին անգամ պարզ կերպով տեսնում է Յիսուսը, թէ ի՛նչպիսի ստոր հակառակորդների հետ գործ ունի: Նա լցւում է բարկութեամբ, կանչում է հակառակորդներին իւր մօտ, որպէս զի ցոյց տայ նրանց իրենց ասածի անմտութիւնը և միևնոյն ժամանակ զգուշացնէ ամենամեծ մեղքը գործելուց:

Անմտութիւն է նրանց ասածը, որովհետև չարի իշխանութիւնը դեռ ևս վերջնականապէս ոչնչացած չէ. կարո՞ղ է սատանայի պետութիւնը գոյութիւն ունենալ, եթէ Յիսուսը սատանայի միջոցով է հալածում դևերին: Ո՞ր պետութիւնը կամ ո՞ր տունը կարող է կանգուն մնալ, եթէ նրա անդամները կռուի և հակառակութեան մէջ են միմեանց հետ: Կամ ո՞վ կարող է զօրեղի տունը մտնել և նրա կայքը յափշտակել, առանց նրան նախօրոք կապելու: Եւ վերջապէս՝ եթէ Յիսուսը Բեհեղզեբուղի միջոցով է հալածում, ու՞մ միջոցով են նրանց որդիները նոյն բանը կատարում. նոքա կլինին ձեր դատաւորները: Բայց յիրաւի չարի իշխանութիւնը սկսում է յետ քաշուել Աստուծոյ առաքեալի առաջ. «Աստուծոյ հոգով է, որ հալածում են ես դևերին և իմ յաղթութիւնների մէջ պէտք է տեսնէք Աստուծոյ արքայութեան գալուստը»: Միայն մի անբժշկելի խստապարանոցութիւն կարող է մերժել այդ:

«Ճշմարիտ են ասում ձեզ, ամեն յանցանք և ամեն հայհոյութիւն մարդկանց դէմ, կարող է ներուել. իսկ ով որ աստուածային հոգին կհայհոյէ, նա յաւիտենական դատապարտութեան տակ կմնայ»: Այդպէս է ասում Յիսուսն այն փարիսեցիներին, որոնք յայտնել էին թէ պիղծ հոգի կայ նրա մէջ:

Յիսուսը պարզ կերպով տեսնում է, որ փարիսեցիներն անուղղելի են մնացել, չնայելով Յովհաննէս Մկրտչի յորդորներին ու յանդիմանութիւններին. նրանք պէտք է յաղթահարուին և այժմէն իսկ իմանան, որ իւրաքանչիւր անմիտ խօսքի համար հաշիւ պէտք է տան դատաստանի օրը, որովհետև «Քո խօսքը կլինի քո դատապարտութիւնը կամ արդարացումը»: Ով որ լուրջ կերպով ցանկանում է Աստուծոյ արքայութեան այդ հակառակորդների ոչնչանալը, թող վճռական կերպով անցնի Յիսուսի կողմը: «Ով որ ինձ հետ չէ, նա ինձ հակառակ է, և ով որ ինձ հետ միասին չի ժողովում Աստուծոյ արքայութեան ժառանգներին, նա ցրում է»:

Դ. Գ Լ Ո Ւ Խ.

Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Խ Օ Ս Ք Ե Ր Ը

Յիսուսը վարդապետութեան սիստեմ չէ տուել. ո՛չ մանրամասն ուսմունք ամեն բարու աղբիւր Աստուծոյ մասին, ո՛չ էլ չարի էութեան կամ մեղքի մասին: Ամենից գլխաւորն այն էր, որ Աստուած հայր է և նրա սէրը կատարեալ. մեղքը աստուածային սիրոյ հակադրութիւնն է, ուրեմն ամեն եսականութիւն, որի համար օրէնք է միայն իւր հաճոյքը: Ամեն մէկի համար հասկանալի է, թէ ի՞նչ է նշանակում այդ, և մեղքը սկսում է արդէն յաղթահարուել աստուածային սիրոյ մեծութիւնից:

Յիսուսի խօսքերը բարեփոխութեան առաջարկներ չեն. նրա մտադրութիւնը չէ, այս աշխարհի իմաստունների նման, խօսել միայն գործնական տեսակէտից կարելի և հասանելի բաների մասին. նրա մաքուր իդէալը աստուածանման արդարութիւնն է, որի իշխանութիւնը երկրի վրայ հաստատելու համար է գործում Յիսուսը: Աստուած և նրա բարի հրեշտակները պահպանում են այդ արդարութիւնը և թոյլ չեն տալիս ոչ մի առևտուր: Այն, ինչ որ Լերան Քարոզի մէջ համառօտ կերպով ասած էր, այժմ օրինակներով պարզում է Յիսուսը, առանց ուշադրութիւն դարձնելու հակառակորդների վրայ և առանց բացառութիւններով մեղմացնելու այն:

Ամենից առաջ նա աշխատում է կռուել այն հիմնական մոլորութիւնների դէմ, որոնք իշխում են Երուսաղէմում և այնտեղից անցնում են նաև ամբողջ երկիրը: Ճշմարիտն են ասում ձեզ, եթէ ձեր արդարութիւնը շատ աւելի չէ, քան թէ փարիսեցիներինը և դպիրները, երբէք չէք կարողանայ Աստուծոյ արքայութիւնը մտնել: Սկզբում Յիսուսն երազել էր, թէ ժողովրդի հոգևոր առաջնորդներն էլ

հաճութեամբ պէտք է լսեն իւր քարոզները, բայց նա տեսաւ արդէն, որ նոքա բոլորովին հակառակ են իւր վարդապետութեանը. ուրեմն հոգիները պէտք է բաժանուէին և այդ բանը ստիպուած էր Յիսուսը պարզ կերպով ասել: «Երկրի վրայ մի կրակ ձգելու են եկել ես, և այժմ՝ ի՞նչպէս կկամենայի, որ այդ կրակը արդէն բորբոքուած լինէր»:

Որ ոգիներն սկսում են բաժանուել, այդ պէտք է նկատէր Յիսուսը նաև մի այնպիսի կէտում, որ ամենից ասելի ցաւ է պատճառում մարդուն: Այն օրերը, երբ կատաղած հակառակորդները նրան ամեն կերպ դատապարտել էին աշխատում, նրա ամենամօտիկ մարդիկը վշտով լցրին նրա սիրտը: «Նա խելագարուել է», ասում էին մայրն ու եղբայրները և դուրս էին եկել նրան տուն տանելու: Կափառնաւոր քաղաքում նրա իջևանի առաջ կանգնեցին և կանչել տուին նրան. «Տե՛ս, քո մայրն ու եղբայրները կանգնած են դուրսը և քեզ են որոնում»:

Հօրն ու մօրը պատուել աստուածային պատուիրան էր համարում և Յիսուսը՝ շատ ասելի քան Փարիսեցիները, պահանջում էր այդ պատուիրանի կատարումը. բայց այստեղ մի ընտանիք ասելի բարձր մտքով հետաքրքրում է Յիսուսին. այդ այնպիսիների ընտանիք է, որոնք դպիրների պատուիրանների լաբիրինթոսից աշխատում են ճանապարհ գտնել դէպի աստուածային Հօր արքայութիւնը: Նրա նպատակն էր այդպիսիներին իւր շուրջը ժողովել. և իւրաքանչիւր փորձ՝ յետ կասեցնելու նրան այդ մտադրութիւնից, անօգուտ պիտի անցնէր, եթէ մինչև անգամ սիրող մօր կողմից լինէր այն: «Ո՞վ է իմ մայրն, ո՞վքեր են իմ եղբայրները»: Նա նայում է իրեն շրջապատող հաւատարիմների վրայ և ասում է. «Ահա՛ իմ մայրն և իմ եղբայրները. ով որ Աստուծոյ կամքն է կատարում, նա է իմ եղբայրը, քոյրը և մայրը»:

Հակառակորդները մի նոր միջոց մտածեցին՝ ժողովրդին Յիսուսից հեռացնելու համար: Նոքա ուզեցան ժողովրդին հասկացնել, որ այդ Նազովրեցին մի յանդուգն նորմուծիչ է, որ վերացնում է Մովսէսի օրէնքը և անձայր կամայականութեամբ յանդգնում է ձեռք տալ հայրերի կրօնին: Այդպէս էին ըմբռնել հակառակորդները Յիսուսին, որ իւրայիններին հասկացնում էր, թէ պէտք է վերջապէս վերջ դնել փարիսեցիական արդարութիւն կոչուած վարմունքի առաջ բերած անօգուտ տանջանքներին: Այն նոր արդարութիւնը, որ Աստուած է կամենում և Յիսուսի ընտանիքի էլ ցանկութիւնը պիտի լինի, ամենևին հայրերի բարի ժառանգութիւնը կործանող չէ, այլ ընդհակառակը բացարձակ բարութիւն: «Մի՛ կարծէք, թէ ես եկել եմ Օրէնքն ու Մարգարէները ոչնչացնելու. ես կործանելու չեմ եկել, այլ կատարելութեան հասցնելու»: Մարգարէութիւնը կատարելութեան է հասնում նրանով, որ Յիսուսը ոչնչացնում է հրէաների սպասած փառահեղ մեսիական թագաւորութեան յոյսը. իսկ Օրէնքը իւր կատարելութիւնն է գտնում նրանով, որ Յիսուսը հեռացնում է նրանից բոլոր երկրորդական, մանր մունր պատուէրներն ու միայն առաջնորդող սկզբունքներն է ընդհանուրի համար պարտաւորական

դարձնում: Չէ՞ որ Դպիրներն ու Փարիսեցիներն անգամ արդեն զգացել էին այդպիսի նորմուծութեան կարիքը, բաժանելով օրէնքը մեծ ու փոքր պատուիրանների:

Աստուծոյ պատուերը ներքին մարդուն է դիմում, և նրա պահանջն է՝ Մովսէսի օրէնքը բացատրել կատարեալ սիրոյ պատուիրանի համաձայն: Ամեն նեղսիրտ ու թեթևամիտ բան պէտք է վերանայ օրէնքի միջից և մնայ միայն բարին և լաւը: Աստուածային օրէնքը ո՛չ թէ ձեռքի և աչքի համար պիտի ուղեցոյց լինի, այլ մտքերի ու ցանկութիւնների:

Դուք լսել էք, որ նախնիներին ասուած է. «Մի՛ սպանիր. իսկ ով որ սպանէ, հաշիւ պէտք է տայ դատաստանի առաջ»: Բայց ես ասում եմ ձեզ. «Ով որ իւր եղբօր վրայ ի գուր տեղը կբարկանայ, նա պարտական կլինի դատաստանի առաջ պատասխան տալու. ով իւր եղբօրն անպիտան կանուանէ, հաշիւ պիտի տայ ծերակոյտի առաջ. իսկ ով նրան անաստուած կանուանէ, պարտական կլինի գեհեմին: Աստուծոյ որդիները պէտք է սիրեն իրենց մերձաւորին, բարկութիւնը պէտք է դադարի և նրա տեղը բռնէ հաշտութեան և թողութեան զգացմունքը: «Եթէ դուք ներէք մարդկանց՝ նրանց սխալները, ձեր Հայրն էլ ձերը կներէ. իսկ եթէ դուք չներէք, ձեզ էլ ձեր յանցանքները չեն ներուի: Եթէ քո եղբայրը քո դէմ խէթ ունի և դու զոհ մատուցանելու ժամանակ յիշես այդ, թո՛ղ զոհո՞ սեղանի վրայ, գնա՛, հաշտուի՛ր նրա հետ և ապա զոհաբերութիւնդ կատարիր»: «Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստուծոյ որդի կկոչուեն»:

Դուք լսել էք, որ նախնիներին ասուած է. «Մի՛ շնար»: Բայց ես ասում եմ ձեզ. «Ով որևիցէ կնոջ վրայ ծուռ աչքով է նայում, իւր սրտում արդէն շնութիւն է կատարում»: Աստուծոյ որդիները պարտաւոր են սիրել ու պահպանել իրեն մերձաւորի ընտանեկան երջանկութիւնը: Անողորմ կերպով խիստ պէտք է լինին նոքա իրենց նկատմամբ, եթէ յանցաւոր ցանկութիւններն սպառնում են նոցա յաղթահարել: «Եթէ քեզ գայթակղեցնում է քո աջ աչքը, հանի՛ր և դէն ձգիր այն: Մարմնի լոյսն աչքն է. քանի նա ուղիղ է, ամբողջ մարդը լուսաւոր կլինի. բայց հէնց որ նա անպէտքանայ, մարդը կմնայ խաւարի մէջ: Եթէ աջ ձեռդ է գայթակղեցնում քեզ, կտիր՛ր և ձգի՛ր դէն, որովհետև աւելի լաւ է մարմնի անդամներից մեկը չունենալ, քան թէ ամբողջովին գեհեմին բաժին դառնալ»:

Դուք լսել էք դարձեալ, որ նախնիներին ասուած է. «Սուտ մի՛ երդուիր, բայց կատարիր Տիրոջ անունով արած խոստումներդ»: Իսկ ես ասում եմ ձեզ, առհասարակ չպէտք է երդուէք. ո՛չ երկնքով, որովհետև Աստուծոյ աթոռն է. ո՛չ երկրով, որովհետև նրա ոտների պատուանդանն է. ո՛չ էլ Երուսաղէմով, որովհետև նա մեծ թագաւորի քաղաքն է. դուք չպէտք է երդուէք նաև ձեր գլխով, որովհետև մի մազ անգամ չէք կարող սպիտակեցնել կամ սևացնել: «Ձեր խօսքը պէտք է լինի այո՛-ն՛ այո՛, իսկ ոչը՝ ո՛չ»:

Դուք լսել էք, որ նախնիների ասուած է. «Աչքը աչքի փոխարէն, ատամն ատամի փոխարէն»: Բայց ես ասում եմ ձեզ՝ «Չարին առհասարակ հակառակ մի լինիք»: Վատերի կռուելու եղանակին

Աստուծոյ որդիները պէտք է ուրիշ կերպ դիմադրեն: Չարութիւնը նոքա զինաթափ են անում սիրով. և իրենց ամաչեցնող բարութեամբ թէև չեն յաղթում թշնամուն, բայց յաղթում են և ոչնչացնում թշնամութիւնը, կրակ թափելով հակառակորդի գլխին: Ով քեզ ստիպում է մի մղոն ճանապարհ գնալ, երկուսը գնա՛. տո՛ւր նրան ով որ խնդրում է, և երես մի՛ դարձնի նրանից, ով որ քեզանից պարտ է ուզում: «Երանի հեզահոգիներին, որովհետև նրանք կժառանգեն երկիրը»:

Դուք լսել էք, որ նախնիներին ասուած է. «Սիրի՛ր քո մերձաւորին»: Նախնիները կարծում են, թէ իրաւունք ունին թշնամուն ասելու. բայց ես ասում եմ ձեզ. «Սիրեցէ՛ք ձեր թշնամիներին, աղօթեցէ՛ք ձեզ հալածողների համար, որպէս զի Երկնաւոր Հօր որդիները լինիք: Ահա ծագում է նրա արևը չարերի և բարիների վրայ, և անձրև է տալիս արդարներին և մեղաւորներին: Եթէ դուք միայն ձեր ընկերներին սիրալիր կերպով բարևէք, ի՞նչ աւելի բան կանէք, նոյնը և չե՞ն անում միթէ հեթանոսները: Աստուծոյ որդիների համար մերձաւոր են այն բոլորը, որոնք Աստուծոյ արևի տակ են գտնուում. նոցա սիրոյ առաջ ազգութիւնը կամ երկիրը սահման դնել չեն կարող»:

Այդ ուսմունքը գայթակղեցուցիչ կարող էր լինել դպիրների համար, որովհետև նոքա օրէնքից և սովորութիւնից այն էին լսել, թէ միայն «ազգակիցն է մերձաւորը»: Այդպիսի մի դպրի պատմում է Յիսուսը «Ողորմած Սամարացու» առակը և հարցնում է. «Ո՞վ է այն վիրաւորուածի և թշուառի մերձաւորը. քահանան և ղեւտացի՞ն, որ անօգնական թողին նորան ճանապահի վրայ, թե՞ Սամարացին, որ կապեց նրա վերքերն ու պանդոկ տարաւ»: Եւ նրա այդ հարցին օրէնսագէտն էլ ստիպուած էր պատասխանել. «Նրա մերձաւորը Սամարացին է, որ ողորմած զգացմունքով է մօտեցել նրան»: -- «Գնա՛, և դու էլ նոյնպէս վարուիր»: Աստուծոյ արքայութեան մէջ տիրող արդարութիւնն այդ է. պէտք է ուրեմն *արդար լինել, և ո՛չ թէ արդար երեւալ, որպէսզի մարդիկ տեսնեն*:

Խեղճերին օգնելու ներքին բուռն ցանկութիւնից պէտք է բղխէ ողորմութիւն անելը: Այդ պատճառով, ով որ կամենում է ողորմութիւն անել, չպէտք է նախօրօք ժողովարաններում ու փողոցներում հռչակել տայ այդ մասին, ինչպէս կեղծաւորներն են անում, որպէս զի մարդիկ գովեն նրանց. այդպիսիների վարձը հէնց այդ էլ կլինի: Երբ դու ողորմութիւն ես կամենում անել, ձախ ձեռքդ չպէտք է իմանայ, թէ ի՞նչ է անում աջդ. այն ժամանակ կվարձատրէ քեզ քո Հայրը, որի համար ծածուկ բան չկայ: «Երանի ողորմածներին, որովհետև նոքա ողորմութիւն կգտնեն»:

Ներքին բուռն մղումից և հոգեկաան կարիքից պէտք է առաջ գայ աղօթքը: Այդ պատճառով էլ՝ իսկական աղօթքը չի կարող նման լինել կեղծաւորների աղոթքին, որոնք առանձին հաճոյքով ժողովարաններում են աղօթում: Փողոցների անկիւններում կանգնած՝ նոքա սպասում են աղօթքի ժամերին, որպէս զի մարդկանց ցոյց տան իրեն բարեպաշտութիւնը: Ճշմարիտ են ասում ձեզ՝ հէնց այդ կլինի նոցա վարձը: Իսկ երբ դու աղօթել ես կամենում, մտի՛ր սենեակդ, փակի՛ր դուռը և աղոթքդ

արա՛. այն ժամանակ քո Հայրը կվարձատրէ քեզ, որ տեսնում է ամեն գաղտնիք: Պէտք չէ աղօթքի ժամանակ հեթանոսների նման շատախօսել. նոքա կարծում են՝ թէ շատ խօսելու պատճառով կլսուին: Դուք հեթանոսներին չպէտք է նմանուէք, որովհետև ձեր Հայրը առանց ձեր խնդրելուն էլ գիտէ, թէ ձեզ ի՞նչ է պէտք:

Սրտի անձկութեան և նեղութեան ժամանակ ինքն իրեն առաջ կգայ ձեր մէջ պահեցողութեան կարիքը: Եթէ դուք պահել էք կամենում, չպէտք է կեղծաւորների նման թթուէք, որպէս զի մարդիկ տեսնեն ձեր պահեցողութիւնը. սովորականի նման օծի՛ր քո գլուխը և լուա՛ քո երեսը, որպէս զի պահեցողութիւնդ մարդկանց համար չլինի, այլ Աստուծոյ, որ տեսնում է բոլոր գաղտնիքները:

Արդարութիւնը պէտք է առաջ գայ շիտակ սրտից. «Երանի նրանց, որոնք քաղցած են և ծարաւի արդարութեան համար, որովհետև նոքա կկշտանան»: Արդէն լսելի է Աստուծոյ ոտների ձայնը, որ իւր արքայուիւնն է գալիս. «Երանի նրանց, որոնք մաքուր սիրտ ունին, որովհետև նրանք կտեսնեն Աստծուն»:

Բայց մարդկային սիրտը պայքարի մէջ է մեղքի հետ. ի՞նչպէս պէտք է մաքրուի նա: Ինչպէս որ պտուղը կախուած է ծառից, այդպէս էլ նոր արդարութիւնը կախուած է Աստուծոյ արքայութեան մէջ տիրող նոր բարեպաշտութիւնից: Հին ժամանակ առանձին հոգացողութեան և հարցի առարկայ էր, թէ ո՞ր անհատը Աստծուն կարող է մօտենալ և որը ոչ: Ի՞նչպէս պէտք է ժողովուրդը կամ նրա քահանաները պատարագ մատուցանեն. արդեօք Եահուէն մօտի՞կ Աստուած է, թէ հեռու է գնտուում: Շատ անգամ էին մարգարէները շեշտել, թէ Աստուած անսահման հեռու է գտնուում իւր ժողովրդից, որովհետև վերջինս հեռացել է իւր Աստծուց և գնացել է կուռքերի յետևից. բայց մերթ ընդ մերթ լսելի էին լինում նաև մեղմ և մտերիմ հնչիւններ. «Դու մօտեցար ինձ, երբ ես կանչեցի. ասացիր՝ մխիթարուի՛ր» (Ողբք Երեմիայի Գ.57):

Երկու գաղափարները մէկ են դառնում Յիսուսի վարդապետութեան մէջ: Այստեղ շեշտվում է Աստուծոյ բացարձակ վեհութիւնը և կատարեալ մօտիկութիւնը. *Աստուած իւրաքանչիւր անհատի հայրն է*: Հրէական օրէնքը պատուիրում էր օրական երկու կամ երեք անգամ աղօթել Աստծուն: Այդ յարաբերութիւնը այժմ վերանում է: Որդիները միշտ Հօր հետ պէտք է լինին և մի մշտական աղօթք պէտք է կապէ նրանց: Պէտք չեն այլևս ո՛չ քահանաներն ու քահանայապետները և ո՛չ էլ խոստումներն ու զոհերը միջնորդութեան համար: Իւրաքանչիւր անհատ իբրև որդի կարող է անմիջական կերպով Աստուծոյ առաջ կանգնել և այն անսահման վստահութիւնն ունենալ, որ հօրից ստացած վարձատրութիւնը միայն մի պարզ և նրա կողմից:

Այլ ևս գոյութիւն ունենալ չեն կարող ունենալ այն կասկածները Աստուծոյ ողորմութեան մասին, որոնք ճմլում էին Սաղմոսերգուի սիրտը. «Մինչև ե՞րբ, Եահուէ, մինչև ե՞րբ ծածկես քո երեսը»: Աստուծոյ որդիների անհրաժեշտ աղօթքը անպայման կերպով լսելի կլինի: Այնպէս պէտք է խնդրեն

նոքա, ինչպէս որ այրին անհրաւ դատաւ ւորից իւր իրաւունքն է պահանջում: «Խնդրեցէ՛ք, կտրուի ձեզ. փնտռեցէ՛ք և կգտնէ՛ք, բաղխեցէ՛ք և կբացուի»: «Ո՞վ և ձեզանից այն մարդը, որ իւր որդուն քար կտայ, եթէ նա հաց խնդրէ. կամ օձ կտայ, եթէ նա ձուկ ուզէ: Եթէ դուք չար էք և լաւ պարգևներ կարող էք տալ ձեր որդիներին, ո՞րչափ աւելի ուրեմն Երկնաւոր Հայրը բարիք կանէ նրանց, որոնք կխնդրեն»: Յիսուսի հասկացողութեամբ՝ աղօթողն այն համոզմունքը պէտք է ունենայ, որ իւր խնդիրը մերժուել չի կարող. այդ է Աստուծոյ որդիների աղօթքի բնորոշ կողմերից մէկը. միւս բնորոշ կողմն այն է, որ Յիսուսի աշակերտների աղօթքը կարող է և պէտք է կարճ լինի:

Աստուծոյ որդիներն էլ կարիքներ ունեցող մարդիկ են, թէ՛ հոգեպէս և թէ՛ մարմնապէս: Այդ պատճառով էլ մի կողմից օրական հաց են խնդրում մարմնի համար, միւս կողմից մեղքերի թողութիւն՝ հոգու համար: Նոցա բոլոր խնդիրները կիրականանան, եթէ միայն մի բան կատարուի՝ Աստուծոյ սուրբ անունը փառաւորուի նրա թագաւորութեան մէջ: Այդ պէտք է լինի իսկապէս Աստուծոյ որդիների աղօթքի «Ա»-ն ու «Ք»-ն: Թող Աստուծոյ արքայութիւնն աւելի և աւելի տարածուի և ամբողջ մարդկութիւնն իւր մէջ առնի, թող հեռու լինի մարդկանցից ամեն փորձութիւն: Այդ պատճառով դուք այսպէս պէտք է աղօթէ՛ք.

«Հայր, սուրբ լինի քո անունը:

Թող գայ քո թագաւորութիւնը:

Մեր օրական հացը այսօր էլ տուր մեզ:

Եւ թող մեզ մեր յանցանքները,

Որովհետև մենք էլ ներում ենք մեր դէմ յանցանք գործողին:

Եւ դէպի փորձութիւն մի՛ տանիր մեզ»:

Երկու գլխաւոր թշնամի ունի Աստուծոյ պետութիւնը, որոնք վտանգում են մարդկանց հոգին. առաջինը մամոնան է, երկրորդը՝ հոգսը: Երկուսն էլ պէտք է դուրս մղուին Աստուծոյ պետութիւնից: Անողորմ հարուստը պէտք է պատժուի դժոխքում, իսկ աղքատ Ղազարոսին հրեշտակները կառաջնորդեն դէպի դրախտը: Որովհետև մամոնայի սկիզբը անարդարութիւնն է: Միայն այն դէպքում կարելի է թոյլ տալ մամոնայի գոյութիւնը Աստուծոյ արքայութեան մէջ, երբ նա բացարձակ կերպով ծառայում է խեղճերի դրութիւնը բարւոքելու և թշուառութիւնը մեղմացնելու համար: Չ՞է որ այս աշխարհի իմաստուններն էլ բարեկամութիւն են վաստակում մամոնայի միջոցով (անհրաւ տնտես): Միայն լոկ երևոյթ է, թէ մամոնան ազատ է կացուցանում ամեն հոգսից: Ամենից առաջ՝ պէտք չէ մոռանալ, որ մէկի փարթամութիւնն ու առատութիւնը միւսի թշուառութեան և տանջանքների պատճառն է: Բայց հարստութիւն ունեցողների ներքին կեանքն էլ այնպէս է, որ ստիպում է նրանց հետզհետէ օտարանալ Աստուծուց և մտածել հարստութիւնը պահպանելու և աւելացնելու մասին:

Ամբոխի միջից մէկն էլ ասաց Յիսուսին. «Վարդապետ, եղբօրս ասա՛, ժառանգութիւնը բաժանէ ինձ հետ»: Յիսուսը պատասխանում է նրան. «Այ մարդ, ո՞վ է ինձ դատաւոր և ժառանգութիւն բաժանող կարգել ձեր մէջ»: Հեռու պէտք է մնալ ժլատութիւնից, որովհետև ո՛չ ոք հարստութիւնն իւր հետ գերեզման տանել չի կարող: Եթէ մէկն իւր շտեմարանները քանդում է և աւելի մեծերը շինում, որպէս զի կարողանայ այնտեղ տաղաւորել իւր հետզհետէ աւելացող հարստութիւնը, և միևնոյն ժամանակ կարծում է, որ այդ բոլորն ինքը պէտք է վայելէ, այդպիսի մարդուն ասում է Աստուած. «Անմիտ, այս գիշեր հոգիդ կառնեն. ու՞մ սեպհականութիւն պիտի լինի այն, որ դու պատրաստում ես»: Այդպէս կլինի բոլորի դրութիւնը, որոնք երկրաւոր գանձեր են ժողովում, փոխանակ Աստուծոյ առաջ հարուստ լինի աշխատելու: Երկրի վրայ հաւաքած գանձերը ցեցերի, ժանգի և գողերի բաժին են դառնալու. հարստութիւն պէտք է ժողովել երկնքի համար, ուր ցեցն ու ժանգը ուտել և գողերը գողանալ չեն կարող. ուր որ գանձն է, այնտեղ է նաև քո սիրտը: «Ո՛չ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. նա անպատճառ նոցանից մէկին պիտի ատէ, իսկ միւսին սիրէ. դուք չէք կարող Աստծուն ծառայել և միևնոյն ժամանակ մամոնային»:

Աւելորդ են ուրեմն նաև բոլոր երկրային հոգսերը, բայց միևնոյն ժամանակ անմտութիւն են, որովհետև ո՛չ մի արդիւնք ունենալ չեն կարող. ո՞վ կարող է հոգսերով իւր հասակի վրայ մի կանգուն աւելացնել: Պէտք չէ հոգալ թէ ի՞նչ պէտք է ուտել կամ ի՞նչ հագնել, որովհետև Ամենախնամ Արարիչը հոգում է այդ մասին: Տեսէ՛ք երկնքի թռչուններին. ոչ ցանում են, ոչ հնձում և ոչ էլ շտեմարաններում հաւաքում, բայց ձեր Երկնաւոր Հայրը կերակրում է նրանց. թէ՞ որ դուք շատ աւելի արժէք ունիք, քան թէ նրանք: Տեսէ՛ք, դաշտի շուշանը ո՛չ մանում է և ոչ գործում, բայց Սողոմոնն էլ իւր ամբողջ փառահեղութեան մէջ այնպէս չի հագնուել, ինչպէս նա: Եթէ Աստուած այդպէս հոգս է քաշում դաշտի խոտի համար, որ այսօր կայ և վաղը վառարանն է ձգում, ո՞րչափ աւելի ձեզ համար կհոգայ, թերահաւատներ: Աստուծոյ որդիները պէտք է ամենից առաջ Աստուծոյ արդարութիւնը և նրա արքայութիւնը փնտռեն: Մնացածը ինքն իրեն կգայ: Մի՛ հոգաք վաղուան համար. վաղուան օրն ինքն իրեն համար կհոգայ. իւրաքանչիւր օրուայ տանջանքները բաւական են իրեն համար:

Այդպիսի գաղափարները կարող են միայն ծաղրի և հեզնութեան արժանանալ Փարիսեցիների կողմից և ահա նրանք հարցնում են. «Ե՞րբ պէտք է գայ այդ դեռ ևս չտեսնուած արդարութիւնը»: Նրանց կարծիքով այդպէս բան լինել չի կարող, որովհետև մեսիական թագաւորութիւնը սկսուելուց առաջ մեծամեծ նշաններ պէտք է լինէին երկնքի և երկրի վրայ: Յիսուսը պատասխանում է նրանց. «Աստուծոյ արքայութիւնը հրաշքներով և նշաններով չի գալու, որ կարելի լինի ասել, ահա այստեղ է նա կամ այնտեղ: Աստուծոյ արքայութիւնը արդէն ձեր մէջն է»: Նա արդէն ներկայ է և սկսում է նուաճումներ անել. այժմ դեռ ևս սակաւ են նրա յաջողութիւնները, բայց շուտով տիրող կդառնայ նա ամբողջ երկրում: Արգելքներ կան նրա առաջ, ինչպէս երկրի վրայ ամեն աճեցողութիւն առանց

արգելքների առաջ չի գնայ, բայց այդ արգելքները նրա տարածմանը վնասել չեն կարող: Այդ գաղափարը բացատրելու համար Յիսուսն ասում է «Սերմանացանի առակը»:

Բարի սերմերը միատեսակ հողի վրայ չեն ընկնում. մի քանիսն ընկնում են ճանապարհի վրայ և բաժին են դառնում երկնքի թռչունների: Այդպես էլ Յիսուսի քարոզները լսողների մէջ շատերը կան, որոնք ամենևին պատրաստուած չեն նրան ըմբռնելու. գալիս է չարը և տանում այն, ինչ որ սերմանած է նրանց սրտում:

Ուրիշներն ընկնում են քարքարոտ տեղերում և որովհետև հողը շատ չէ, շուտով կանաչում են. բայց արևի ճառագայթներն այրում են և շուտով չորանում են, որովհետև արմատ չունին: Այդպես էլ Յիսուսն ունի ոգևորուած ունկնդիրներ, որոնք ուրախութեամբ են լսում նրա քարոզները, բայց ընդհանուր առմամբ են դրանք, առանց խորը կրօնական կարիքների: Եթէ իրենց համոզմունքների համար նեղութիւն և հալածանք հանեն նրանց դէմ, նրանք իսկոյն կգայթակղուին:

Մի քանիսն էլ սերմերից ընկնում են փշերի մէջ, փշերը բարձրանում են և խեղդում նրանց: Լուրջ ունկնդիրներ էլ ունի Յիսուսը, որոնք պտուղ են խոստանում. բայց աշխարհի հոգսը և հարստութեան ստոր կեղծիքը խեղդում են խօսքը և նա մնում է անհետևանք:

Միայն մի մասն է ընկնում լաւ հողի վրայ: Յիսուսի խօսքերն էլ միայն մասամբ են այնպիսի ունկնդիրներ գտնում, որոնք խորը կերպով ըմբռնում են նրան և պտուղ են բերում հարիւրապատիկ կամ գոնէ մէկին վաթսուն, եօթանասուն:

Բայց արգելքներ կան ո՛չ միայն մարդու սրտում, այլ և դրսից: Չարն աշխատում է Աստուծոյ առաքեալի դէմ թշնամութիւն սերմանել, և նրա ցանած սերմն էլ է ծլում. բայց սխալ կլինէր սկզբից և եթէ բաժանել հաւատարիմ ունկնդիրներին տատանողներից և հակառակորդներից, որովհետև այդպիսով հեշտութեամբ դեռ նոր սկսուող հաւատը և անձնուիրութիւնը կարող է ոչնչանալ: Նոր ծաղկող Աստուծոյ արքայութեան մէջ ճիշտ նոյնն է տեղի ունենում, ինչ որ ցորենի արտում. ցորենի մէջ էլ երևում է փուշը, բայց ով որ չի կամենում փուշը հանելիս՝ ցորենն էլ հետը դուրս քաշել, նա պէտք է թողնի երկուսին էլ միասին աճելու՝ մինչև հունձը:

Պէտք է ուրեմն այն յաղթական գիտակցութիւնն ունենալ, թէ ոչինչ չի կարող արգելք լինել Աստուծոյ արքայութեան տարածմանը: Երկրագործն էլ հանգիստ քնում է ու վեր կենում, մինչ նրա ցանած սերմը ծլում է, ցողուն է արձակում, հասկեր է կապում և լցում՝ հնձի համար պատրաստ դառնալու: Նոյնն է նաև Աստուծոյ արքայութեան մէջ. իւրաքանչիւր ճշմարտութեան համար իւր ժամանակը կգայ. ոչինչ գաղտնի բան չկայ, որ ջայտնուի և ծածուկ՝ որ չկատարուի: Լոյսը նրա համար է, որ լոյս տայ և երևայ. նրա տեղը ո՛չ թէ ամանի տակն է, այլ աշտանակը. ինչպէս որ սարի վրայ եղած քաղաքն էլ թագչել չի կարող, այլ ամեն կողմից տեսանելի է:

Պէտք չէ յուսահատուել, տեսնելով յաջողութեան պակասութիւնը: Որքա՛ն փոքր է մանանեխի հատիկը. աւելի փոքր բան դժուար է գտնել. բայց որքա՛ն շուտով մեծանում է նա և ահագին ծառ դառնում, որ երկնքի թռչունները նրա ճիւղերի մէջ ապաստան են գտնում: Որքա՛ն քիչ թխմոր է պէտք ամբողջ խմորը թուեցնելու համար: Այդպէս էլ՝ ինչքան էլ փոքր է Աստուծոյ արքայութեան սկիզբը, այնուամենայնիւ հաստատ է, որ նա ամբողջ երկրին պիտի տիրէ:

Աստուծոյ արքայութեան մէջ մտնել կարող են միայն այնպիսիները, որոնք հարուստ են. բայց նրանց հարստութիւնը մամոնայի հարստութիւն չէ, այլ կրօնական տրամադրութիւն: Նրանց սիրտը պատրաստ պիտի լինի ընդունելու աստուածային վարդապետութիւնը: Ով որ ունի, նրան կտրուի. իսկ ով որ չունի, եղածն էլ ձեռքից կառնուի: Ամենայն եռանդով պէտք է պահպանել այդ ստացուածքը. որովհետև նրանց լսած Աստուծոյ խօսքն էլ առանց հոգացողութեան կարող է ոչնչանալ:

Հաւատ պէտք է ունենալ. հաւատ նաև դէպի այն աստուածային զօրութիւնների կարողութիւնը, որոնք ամեն օր մեր աչքի առաջ չեն: «Հաւատ պարգևիր մեզ», ասացին նրան իւր աշակերտները. իսկ Յիսուսը պատասխանեց. «Ճշմարիտ են ասում ձեզ, եթէ դուք մանանեխի հատիկի չափ հաւատ ունենայիք, կարող էիք այս թզենուն ասել, դուրս եկ այստեղից և ծովն ընկիր, և ձեր խօսքը կկատարուէր»:

Չկայ ոչ մի արժէք, որ աւելի բարձր լինի, քան թէ Աստուծոյ արքայութիւնը: Այն մարդը, որ թաքնուած գանձի տեղ գիտէ, ուրախութեամբ ծախում է ամեն ինչ, որպէս զի այդ տեղը գնել կարողանայ: Թանգագին մարգարիտ և քարեր որոնող վաճառականն իւր բոլոր ունեցածը կծախէ, որպէս զի ամենաթանգագին մարգարիտը գնէ:

Շրջապատողներից մէկն ասաց Յիսուսին. «Տէր, եթէ այդպէս է, միայն քեզը կկարողանան փրկութիւն գտնել». իսկ նա պատասխանեց. «Աշխատեցէք նեղ դռնով մտնել, որովհետև ասում են ձեզ, շատերը կփորձեն ներս մտնել և չեն կարողանայ: Բայց դու մի՛ վախենար, փոքրիկ հօտ, որովհետև ձեր Հայրը որոշել է ձեզ տալ արքայութիւնը»: Ապա՝ դառնալով իւր մտերիմ աշակերտներին ասում է. «Երանի այն աչքերին, որ տեսնում է այն, ինչ որ դուք էք տեսնում. որովհետև, ասում են ձեզ, մարգարէներից շատերը կուզենային այն տեսնել, ինչ որ դուք էք տեսնում և այն լսել, ինչ որ դուք էք լսում, բայց ո՛չ տեսան և ո՛չ էլ լսեցին»:

Մի կին, լսելով այդ խօսքը, ամբոխի միջից աղաղակեց. «Երանի՛ այն որովայնին, որ քեզ կրեց և այն կրծքին, որ քեզ դիեցուց»: Իսկ նա պատասխանեց. «Այո՛, բայց աւելի երանելի են նրանք, որոնք լսում են Աստուծոյ խօսքը և կատարում»:

Ե. Գ Լ Ո Ւ Խ.

ՀԱԿԱՌԱԿՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ԴԷՍ.

Կափառնաումի դէպքը մեծ վիշտ էր պատճառել Յիսուսին. և ահա նա նորից դէպի հայրենի քաղաքն է գնում, իւր ազգականների մօտ: Նոքա պիտի լսեն, և պիտի լսեն իւր սեպիական բերանից, որ նա կործանող չէ. պիտի լսեն, թէ ինչ ճանապարհով կատարուելու են Օրէնքն ու Մարգարէները: Նոքա ճանաչում են իրեն մանկութիւնից. մի՞թէ իւր բարեկամներն ու խաղընկերները պիտի չհասկանան իրեն: Նա նորից մտնում է Նազարէթի ժողովարանը, բայց ի զուր. այստեղ էլ արդէն պատրաստ է դատապարտութիւնը նրա համար: Նրա հարազատ մայրը հարևաններին և բարեկամներին արտասուքն աչքերին ասել էր, որ իւր որդին խելագարուել է. և մօր արտասուքները դժբախտ որդու վրայ՝ ազդեցութիւն էին գործել: Այն մարդը, որ բարձր է համարում իրեն Փարիսեցիների և Դպիրների ազդեցութիւնից և իբրև Աստուծոյ առաքեալ մի նոր արքայութիւն է քարոզում, չէր կարող իւր հայրենի քաղաքում չդատապարտուել:

Բոլորովին պարզ էր հին հաւատի ներկայացուցչների համար, որ Յիսուսի խօսքերը մի քայլ միայն հեռու են՝ իրենց քարոզած օրէնքի բարեպաշտութիւնը և Մովսէսի օրէնքները խորտակելուց: Այդ է պատճառը, որ Յիսուսի հանդէս գալը Նազարէթի Սինագոգում կռուի առիթ դարձաւ և այդպիսով Յիսուսի վստահութիւնն իւր ժողովրդի վրայ սպառնաց կորցնել: Բնականաբար նա պիտի մտածէր. եթէ հայրենիքում չեն ընդունում իրեն, ի՞նչ վախճան կարող է ունենալ պայքարը դրսում: Այդ պատճառով էլ նա աչքը դարձնում է դէպի հեթանոսները, որոնք հին ժամանակներից ի վեր ամաչեցնում էին Իսրայէլի ժողովրդին: Յիսուսն ասում է հրէաներին. «Դուք ծաղրով ինձ ասում էք, բժիշկ, օգնիր քեզ. մեզ էլ յաղթիր այն հրաշքներով, որ Կափառնաումի բնակիչները պատմում են քո մասին: Բայց Եղիան և Եղիսէն էլ չքաշուեցին իրենց օգնութիւնը հասցնելու հեթանոսներին, քանի որ սեպիական ժողովուրդը անհաւատ էր: Շատ այրիներ կային Եղիայի ժամանակ, երբ երկինքը երեք և կէս տարի կապուած էր և ամբողջ երկիրը սով էր ընկել. բայց Եղիան չուղարկուեց նոցանից և ո՛չ մէկի մօտ, այլ Սիդոնի երկրի Սարեբթա քաղաքի այրու մօտ գտաւ իւր ապաստանարանը: Եղիսէ մարգարէի ժամանակ էլ Իսրայէլի որդիների մէջ շատ բորոտներ կային, բայց նոցանից ո՛չ մէկին չսրբեց, բացի Նեէման ասորուց»: Այդ խօսքերը զայրացնում են նրա հակառակորդներին, իսկ Յիսուսը նոցա կրկնում է սովորական առածը, թէ՛ «Մարգարէն միայն հայրենի քաղաքում և իւր բարեկամների մօտ է անպատիւ մնում»:

Նա այնտեղ հրաշք գործել չկարողացաւ, սկսեց ուրիշ տեղեր քարոզել, բայց այստեղ էլ հիասթափութիւնը պակաս չեղաւ: Անյաջող գնաց նրա գործը Քորազինում և Բեթսայիդայում: Մինչև անգամ Կափառնաումը, որ եղել էր մինչև այժմ նրա գործունէութեան կենդրոնը, ուր նրա տունն էր,

անհաւատարիմ գտնուեց դէպի նա. «Վայ քեզ, Քորազին. վայ քեզ, Բեթսայիդա՛. որովհետև եթէ Տիրոսում և Սիդոնում գործուէին այն հրաշքներն, ինչ որ ձեզ մօտ գործուեցին, քուրձ հագած և մոխրի վրայ նստած կապաշխարէին. բայց Տիրոսի և Սիդոնի բանը դատաստանի ժամանակ ատելի հեշտ կլինի, քան թէ ձերը: Իսկ դո՛ւ, Կափառնաում, չէ՞ որ մինչև երկինք ես բարձրացել. մինչև դժոխք վայր պիտի գլորուիս»:

Այսպիսի անյաջողութիւն դեռ ևս չէր ունեցել Յիսուսն իւր գործունէութեան սկզբից: Բայց նրա հաւատը, այդ փորձութիւնների պատճառով, ո՛չ թէ թուլանում է, այլ ատելի բորբոքում. և նա նոր ուժերով ասպարէզ է ելնում իւր քարոզը շարունակելու համար: Հակառակ մի քանի տեղերի անհաւատարմութեան, միւս կողմից տեսնում է նա ոգևորուած վստահութիւն դէպի իւր անձնաւորութիւնը՝ առողջների և հիւանդների կողմից: Ժողովրդի վիշտը նորից նրա սիրտն է մտնում, որովհետև նրանք թշուառ են և իրենց բախտին թողնուած: «Հունձը մեծ է, ասում է նա իւր հաւատարիմներին, բայց աշխատաւորները քիչ են. այդ պատճառով՝ խնդրեցէք հնձի տիրոջը, որ նա մշակներ ուղարկի իւր հնձի համար»: Ամենից առաջ նորա աշակերտները պիտի փորձուին այդ աշխատանքի մէջ. նոքա պէտք է միանգամ, առանց վարդապետի, որի աստղը կարծես թէ սկսում է մարել, փորձ անեն նորա և իւր վարդապետութեան համար գործելու:

Նոքա իհարկէ հեթանոսների մօտ չեն գնալու և ոչ էլ Սամարացիների քաղաքները, ուր մինչև այդ ժամանակ Յիսուսն ինքն էլ չէր գործել, այլ պիտի երթան ատելի Իսրայէլի տան կորած ոչխարները որոնելու: Ամենամօտիկ շրջակայքում պիտի փորձեն իրենց կարողութիւնն Աստուծոյ արքայութեան քարոզի այդ թոթովող թարգմանները: Թէև նոքա կատարեալ կերպով չեն ըմբռնում իրենց վարդապետի հոգին շարժող ներքին առանձնայատկութիւնը, բայց նոքա հէնց այժմ էլ կարող են քարոզել, որ Աստուած մի առաքեալ է ուղարկել իւր ժողովրդի մօտ, փրկութեան երկար սպասուած օրը վերջապէս յայտարարելու համար. որ այդ պատգամաւորը մի մարդ է ժողովրդի միջից, բայց Աստուծոյ կողմից կարողութիւն ունի մեղքեր ներելու և հրաշքեր գործելու խեղճերի և հիւանդների համար. որ այդ պատգամաւորը՝ Նազարէթցի Յիսուսը, իւր շուրջն է գրաւել արդէն ժողովրդի մեծ բազմութիւն և ունի ընտրեալ առաքեալներ: Փարիսեցիները նրա թշնամիներն են, որովհետև նա ժողովրդին ազատում է նրանց և դպիրների տանջանքներից: Նախանձախնդիրներն էլ նրա բարեկամները չեն, որովհետև նա Աստուծոյ արքայութեան գալուստն է քարոզում, ո՛չ թէ յանուն սրոյ, այլ աստուածային սիրոյ, որ պէտք է նորոգէ մարդկանց սրտերը և կեղծ արդարութեան փոխարէն՝ ճշմարիտ արդարութիւնն առաջ բերէ:

Այդպէս ուղարկում է Յիսուսը նրանց երկու երկու, պատուիրելով՝ վստահ Աստուծոյ օգնութեան վրայ, խեղճերին օգնել և դիւահարներին բժշկել, բայց գլխաւորապէս Աստուծոյ արքայութիւնը քարոզել, որ արդէն մօտեցել է: «Ձրի էք առել, ձրի էլ տուէք. իբրև աղքատներ գնացէք աղքատների

մօտ. ոսկի, արծաթ և առհասարակ փող մի՛ վերցնէք ձեզ հետ: Սրան նրան բարև տալով ժամանակ մի՛ կորցնէք, բայց երբ որ մի գիւղ էք մտնում, տեղեկացէք, թէ որտեղ արժէ գիշերել. երբ որ մի տուն մտնէք, ասացէ՛ք. «Խաղաղութիւն այս տանը»: Եթէ այդ տան մէջ խաղաղութիւն սիրող մի մարդ գտնուի, ձեր տուած խաղաղութիւնը նրա վերայ կհանգչի, իսկ եթէ ոչ՝ կվերադառնայ դէպի ձեզ: Ուր որ գնում էք, այնտեղ էլ կացէք. տնից տուն մի՛ թափառէք. մշակն արժանի է իւր վարձին. ինչ որ տան՝ կերէք: Ով որ մարգարէին ընդունում է նրա մարգարէութեան համար, նա մարգարէի վարձ կստանայ. իսկ ով որ ձեզ իմ անունով մի բաժակ սառը ջուր կտայ, նա իւր վարձը չի կորցնի: Ուր որ ձեզ չեն ընդունի և չեն լսի, դուրս գնացէք այն տեղից և ասացէք. «Մենք թոթափում ենք այն փոշին, որ ձեր քաղաքից կպած է մեր ոտին, և ձեզ համար սարսափելի պիտի լինի այն գիտութիւնը, թէ՛ Աստուծոյ արքայութիւնը մօտեցել է: Սողոմի բանը աւելի հեշտ կլինի այն օրը, քան այդ քաղաքինը: Իբրև ոչխարներ ուղարկում եմ ձեզ գայլերի մէջ. այդ պատճառով օձի նման իմաստուն եղէք և աղաւնու նման միամիտ»:

Աշակերտները յաջողութիւն են ունենում և վերադառնալով իրենց վարդապետի մօտ, ուրախացած ասում են նրան. «Տէ՛ր, քո անունով դներն էլ հնազանդում են մեզ»: Աշակերտների այդ յաջողութիւնը վերականգնում է նորից Յիսուսին և թէև Նազարէթն ու Կափառնաունը նրա համար կորած էին, այնուամենայնիւ ցնծում է նա և կատարեալ վստահութեամբ բացականչում. «Ես տեսայ սատանային ինչ-մի կայծակ երկնից ցած ընկնելիս: Ես ձեզ իշխանութիւն տուի օծերի և կարիճների վրայ անվտանգ ման գալու, բայց դուք դրա համար մի՛ ուրախանաք, այլ ուրախացէ՛ք, որովհետև ձեր անունները գրուած են երկնքում»: Այդ յաջողութեան համար է, որ Յիսուսը զգում է իրեն Աստուծոյ անդրանիկ որդին և կատարեալ վստահութեամբ ու գոհութեամբ աղօթք է մատուցանում նրան. այդ պատճառով է նա իւր մէջ զօրութիւն զգում խորտակելու ամեն մոլորութիւն և սուտ, և երջանկացնելու խեղճերին ու յուսահատուածներին: «Շնորհակալ եմ քեզանից, Հայր, երկնքի և երկրի Տէր, որ ծածկեցիր այդ իմաստուններից և գիտուններից և յայտնեցիր տղաներին»: Ապա դառնալով աշակերտներին՝ ասում է. «Ամեն ինչ ինձ տրուած է Հօրից և որդուն ոչ ոք չէ ձանաչում, բացի Հօրից, ինչպէս որ Հօրը ոչ ոք ձանաչել չէ կարող, բացի որդուց և ում որ որդին կկամենայ յայտնել»: Եւ բոլոր շրջապատողներին՝ «Ինձ մօտ եկէք, բոլոր վաստակաւորներ և ծանրաբեռնուածներ, ես ձեզ կհանգստացնեմ. իմ լուծը վերցրէք ձեզ վրայ և ինձանից սովորեցէք, որովհետև ես հեզ եմ և խոնարհ սիրտ ունիմ. այդպիսով դուք էլ ձեր հոգու հանգիստը կգտնէք, որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը թեթև»:

Այս նոր ոգևորութեան ժամանակ երկու տեսակ հարցերով մօտենում են նրան. հարցնողներից մէկը նրա նախորդը և բարեկամը՝ Յովհաննէսն էր, որ ուզում էր իւր կասկածները փարատել Յիսուսի գործունէութեան մասին: Միւս հարցը գալիս է թշնամիների կողմից:

Յորդանանի մարգարէն ստիպուած էր եղել դադարեցնել իւր գործունէութիւնը, որովհետև Գալիլիայի չորրորդապետն իրեն վրայ էր առել նրա քարոզները և նրան բռնել էր տուել. բայց նրա աշակերտները թոյլտուութիւն ունէին նրա մօտ մտնելու և ելնելու: Այդ աշակերտներից լսել էր Յովհաննէսը, որ Յիսուսը, Յորդանանի մկրտութիւնից յետոյ, սկսել է Աստուծոյ արքայութեան քարոզը և սպառնում է իշխանութիւնը խլել այն մարդկանց ձեռից, որոնց համար Յովհաննէսն ինքն էլ Աստուծոյ բարկութիւնն էր նախագուշակել: Այդ աշակերտների միջոցով Յովհաննէսը լսել էր նաև Նազարէթի մարգարէի յաջողութիւնների մասին. գիտէր, որ հակառակ իշխանաւորների բոլոր սպառնալիքներին՝ գալիլիական ժողովրդի մեծ խմբեր նրան էին հետևում: Բայց վերջին լուրը, որին նա սպասում էր, դեռ ևս չկար: Ե՞րբ պէտք է դատաստան լինի Երուսաղէմի և նրա հեթանոս ու հրէայ իշխանաւորների վրայ: Եթէ այդ Նազարէթցին յիրաւի Աստուծոյ կողմից ուղարկուած Փրկիչն է, էլ ի՞նչու է դանդաղում, Սիօն չի գնում և բազմում Մեսիայի աթոռի վրայ: Ի՞նչու Աստուած նրա ձեռը չի տալիս երկաթի խարազանը՝ հեթանոսներին և հրէաներին ոչնչացնելու և բոլորին պատժելու համար, որոնք ապականում են նրա երկիրը: Յովհաննէսի այս մտքերի արծագանքն է այն հարցը, որ նրա աշակերտները բերում են Յիսուսին. «Դո՞ւ ես, որ պիտի գայ, թէ՞ մի ուրիշին սպասենք»: Յիսուսը պատասխանում է, որ սպասելու ոչինչ չկայ այլ ևս. «Գնացէ՛ք և ասացէ՛ք Յովհաննէսին, որ կոյրերը տեսնում են, կաղերը գնում, բորոտները սրբում, խուլերը լսում, մեռելները յարութիւն առնում և խեղճերը աւետիք են լսում. երանի նրան, ով չի գայթակղուի իմ նկատմամբ»:

Յիսուսի պատասխանը իսկապէս Յովհաննէսի բոլոր ցանկութիւնների և ակնկալութիւնների կատարեալ մերժումն ու բացասումն էր: Նա ընդունում է, որ Յովհաննէսը Իսրայէլի պատմութեան ամենամեծ անձնաւորութիւններից է, գուցէ ամենամեծը. բայց նրա ապագայի յոյսերը Յիսուսինը լինել չեն կարող: Եւ այդ պատճառով էլ, Յովհաննէսի աշակերտների գնալուց յետոյ, նրա մասին մի վկայութիւն է տալիս, որի մէջ արտայայտում է իւր սէրը և յարգանքը դէպի նրա անձնաւորութիւնը, բայց միևնոյն ժամանակ բոլորովին մերժում է նրա հայեացքը: «Անապատ գնացիք ի՞նչ տեսնելու. մի եղեգն, որ հողմից այս ու այն կո՞ղմ է տարուբերում: Ի՞նչ գնացիք տեսնելու. մի մարդ՝ փափուկ զգեստներով զարդարուած. փափուկ զգեստներով մարդիկ պալատներումն են լինում: Ինչո՞ւ համար գնացիք. մի մարգարէ տեսնելու: Այո՛, ասում են ձեզ, նա աւելի էր, քան թէ մի մարգարէ: Նա է, որի համար գրուած է. Ահա ես ուղարկում եմ իմ հրեշտակին քո առաջից, որ քո ճանապարհը պատրաստէ: Ճշմարիտն են ասում ձեզ, աւելի մեծ մարդ, քան թէ Յովհաննէսն էր, կանայք դեռ չեն ծնել. բայց Աստուծոյ արքայութեան մէջ փոքրագոյնը աւելի մեծ է, քան թէ նա »:

Այդպէս որոշ կերպով Յիսուսը դեռ ևս հնի և նորի սահմանը չէր գծել: Յովհաննէսը նրա համար վերջին մարգարէն է. նրանով վերջանում է նաև օրէնքը: Աստուծոյ արքայութեան համար օրէնքների ու պատուիրանների ստրկական կատարումը նշանակութիւն չունի, այլ մարդկային հոգու ներքին

ծգտումն ու տրամադրությունը. և ով որ իւր սրտի մէջ այդպիսի մղումն, զօրութիւն է զգում, նա բռնութեամբ մտնում է Աստուծոյ արքայութեան մէջ: «Օրէնքը և Մարգարէները նշանակութիւն ունին մինչև Յովհաննէս. նրանից յետոյ Աստուծոյ արքայութեան աւետիքն է քարոզում և մարդիկ բռնութեամբ ներս են խուժում»:

Յիսուսը գիտէ, որ դրանով խորտակում է բոլոր կամուրջները իւր յետևից: Նրա դէմ պէտք է լինէր այնուհետև ամբոխի մեծագոյն մասը, որ երեխայի նման չգիտէ, թէ ինչ է ուզում. ո՛չ Յովհաննէսի արածին է հաւանում և ոչ էլ Յիսուսի: Որովհետև Յովհաննէսն եկաւ, հաց չէր ուտում, գինի չէր խմում, նրա համար ասում էին, թէ դիւահար է. եկաւ Յիսուսը, ուտում է և խմում, նրա համար էլ ասում են, թէ՛ ահա մի ուտող-խմող, մաքսաւորների և մեղաւորների բարեկամ մարդ:

Բայց արդէն ասպարէզի վրայ են աւելի լուրջ հակառակորդները, որոնց հետ Յիսուսը ստիպուած էր վերջնական հաշիւ տեսնել: Նրանց անձնաւորութիւնների մասին չէ խօսքը, այլ ամբողջ հասկացողութեան: Կափառնաւորում, որ այժմ պատկանում էր նրա թշնամիներին, նրա դէմ են ելնում փարիսեցիների ներկայացուցիչները և հարցնում են, լի ատելութեամբ. «Ի՞նչու քո աշակերտները դպիրների պատուէրների համաձայն չեն վարում, այլ հաց են ուտում, առանց նախօրօք լուացուելու»: Լուացման պատուէրներն սկզբնական օրէնսգրքի մէջ քիչ էին և մեծ մասամբ օգտակար, բայց վերջին դարերի գիտուններն աւելացրել և ընդարձակել էին այն և բացարձակ անմտութեան հասցրել: Թշնամիների նպատակն էր՝ Յիսուսից մի այնպիսի հակիրճ պատասխան ստանալ, որի համաձայն կարելի լինէր դատապարտել նրան երեխայամիտ ժողովրդի առաջ: Եւ Յիսուսը, զայրացկոտ անհամբերութեամբ, տալիս է այդ պատասխանը: Նա հրաժարուել էր արդէն ամբողջ օրէնքից, այժմ նրանից պատասխան էին ուզում օրէնքի այն մասերի համար, որոնք դպիրների ուսման մէջ էլ ամենից աւելի մակերևոյթային էին: Յիսուսը չէր կարող խնայել նրանց, որովհետև դա բռնութիւն լինելով մարդու արտաքին վարուցողութեան վրայ, մինևոյն ժամանակ ներքին մարդու բրտացումն էր: Նա չէր կարող համաձայնել այն ուսման հետ, թէ տաճարն ամեն բանից բարձր պէտք է լինի, ինչ որ սուրբ է երկրի վրայ. այն ուսման հետ, որը մինչև անգամ բարոյական սկզբունքների և խնդիրների առաջ կանգ չէր առնում, որոնք գրուած են մարդու սրտում աւելի առաջ, քան բոլոր տաճարների գոյութիւնը, «Ճիշտ է մարգարէացել այս կեղծաւորների համար Եսային, թէ «Այս ժողովուրդը պատուում է ինձ միայն շրթունքներով, իսկ սրտերը հեռացած են ինձանից»: Աստուծոյ պատուէրը թողնում էք մի կողմ և աշխատում էք պահպանել մարդկանց աւանդները: Մովսէսն ասել է. «Պատուիր հօրդ ու մօրդ, կամ՝ ով որ հօրն ու մօրն անիծում է, նա պէտք է մահուան դատապարտուի», իսկ դուք ասում էք. «Այն պարգևը, որ ձեզ կարող էի տալ և ձեզ անհրաժեշտ պէտք էր, տաճարին կտամ», և դրանով ազատ էք համարում ձեզ ամեն պարտականութիւնից ծնողների նկատմամբ: Ձեր այդպիսի աւանդութիւններով դուք միայն

ոչնչացնում էք Աստուծոյ պատուէրը: Բայց այդ բանը միայն նրա թշնամիները պիտի չլսեն. նա կանչում է ամբոխին և իրեն վրայ յարձակուողների ներկայութեամբ՝ ամբողջ փարիսեցութեան դատաստանն է անում. «Դրսից եկած ո՛չ մի բան մարդուն պղծել չէ կարող. միայն այն է անսուրբ դարձնում մարդուն, ինչ որ նրա ներսից է գալիս. ով ականջ ունի լսելու, թող լսէ՛»:

Ուրեմն Աստուծոյ առաջ պիղծ է միայն այն, ինչ որ անմաքուր դատողութիւնից է առաջ գալիս: Բարեպաշտութեան համար ուրիշ ո՛չ մի պղծութիւն գոյութիւն չունի. ո՛չ մի նշանակութիւն չունի մանաւանդ. կերակուրների պղծութիւն կոչուածը, որովհետև նոքա միայն որովայնին են վերաբերում: «Իսկ ներսից՝ մարդու սրտից գալիս են չար մտքերը՝ անառակութիւն, գողութիւն, սպանութիւն, շնութիւն, ազահութիւն, չարութիւն, նենգութիւն չարամտութիւն, հայիոյանք, ամբարտաւանութիւն. միայն այդպիսի բաները կարող են պղծել մարդուն»:

Այդ օրուանից սկսած Յիսուսն այլ ևս չի խօսում օրէնքի մասին: Նրա նախկին խօսքերի մէջ ակնարկներ կային զոհերի և պահեցողութեան մասին, այժմ դոքա էլ վերանում են: Նա զոհ կմատուցանէ իրեն, և նոյնը կպահանջէ իւրայիններից, եթէ այդ է Հօր կամքը: Նա ստիպուած կլինի նաև պահել, երբ Աստուած իրեն և աշակերտների գլխին ամենածանր փորձութեան օրերը կբերէ: Եթէ նա մէկ էլ տաճար մտնի, կանէ միայն այն նպատակով, որպէս զի տաճարը վերանորոգէ: Եթէ միանգամ էլ զատկի տօնը կատարէ, բոլորովին նոր իմաստ և բովանդակութիւն կտայ նրան:

Զ. Գ Լ Ո Ւ Խ.

Յ Ի Ս Ո Ւ Մ Ի Մ Ե Ս Ի Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ուրեմն Իսրայէլի ժողովրդի իսկական թշնամին Փարիսեցիութիւնն է: Կոյր է նա, ով որ ասում է, թէ Հռովմայեցիներն են թշնամիները: Հինն ու նորը բոլորովին բաժանուում է և Յիսուսի քարոզած Աստուծոյ արքայութեանը մասնակից լինել կարող են միայն նրանք, որոնք բարեպաշտ են սրտով, և արտաքին պատուիրանների ու անմիտ աւանդութիւնների յետևից չեն ընկած:

Բայց քանի գնում, այնքան աւելի բարդուում են դժուարութիւնները Յիսուսի առաջ: Հայրենիքում նրան մերժել էին և այն քաղաքները, որոնք մի քանի ամիս առաջ նրա ձեռքումն էին, այժմ անցել էին թշնամիների կողմը: Յիսուսը տեսնում էր, որ յաղթութիւնը հեշտ չի լինելու: Չնայելով հետզհետէ աւելացող նոր խմբերի ոգևորութեանը, նա զգում էր, որ իւր ուժերը բաւական չեն յաղթելու համար: Արդէն Գալիլիայում անյաջող էր գնացել նրա գործը. ի՞նչ պիտի լինէր Երուսաղէմում, ուր վերջնական

պայքարը պիտի տեղի ունենար և որը նրա թշնամիների զորութեան կենդրոնն էր: Այնտեղ մինչև անգամ տաճարն իւր փառահեղութեամբ մի լուռ վկայ էր Յիսուսի և նրա նոր քարոզների դէմ: Նա ուրախացել էր, որ իւր աշակերտների առաջին փորձը յաջողութեամբ էր պսակուել. այժմ մտատանջութեան մէջ է ընկնում, թէ ի՞նչ կլինի իւր գործի վախճանը, երբ ինքն այլ ևս աշակերտների մէջ չի լինի:

Միայն մի գիտակցութիւն կար հրէաների մէջ, որ մարդուն անդիմադրելի էր դարձնում: Մինչև այժմ Յիսուսը սարսուռով էր մտածել դրա մասին: Աստուծոյ մարդիկ այն ժամանակ են ընկնում և յաղթահարում, երբ նոքա փոխանակ գործն առաջ տանելու, իրենց գլխին պսակներ հիւսելու մասին են մտածում: Մինչև այժմ հիւանդներն ու դիւահարներն էին եղել, որ նրան Մեսիայի տեղ էին դրել: Բայց այժմ այդ մասին նրա հետ խօսում է ամենամեծն իրենից առաջ. և նրա մէջ կրկին վերակենդանանում են այն մտքերը, որ նրան զբաղեցրել էին Յորդանանի մկրտութեան ժամանակ և Յուդայի անապատներում, իբրև փորձութիւն, մօտեցել էին նրան: Այժմ արդէն ուրիշ ժամանակներ էին: Նա իւրայինների հետ կանգնած էր պայքարի ու կռուի մէջ իւր թշնամիների դէմ, որոնք սպառնում էին նրան ոչնչացնել: Նա չէր կարող այլ կռուի դաշտից խոյս տալ, առանց իւր նպատակին հասնելու: Եւ ահա այս դրութեան մէջ նա ձեռք է բերում այն գիտակցութիւնը, որն անդիմադրելի է դարձնում հրէային :

Բայց նրա մեսիական ակնկալութիւններն այն չեն, ինչ որ սովորաբար սպասում էր հրէական ժողովուրդը: Նա Մեսիա էր արդարութիւնը Սուրբ Երկրում վերականգնելու և մարդկանց հոգու ծարաւը լցուցանելու համար: Նա չէր զգում իրեն իբրև մի յաղթական թագաւոր՝ Դաւթի ցեղից, այլ աւելի խաղաղութիւն բերող թագաւոր և քահանայ, ինչպէս ասած է Սաղմոսի մէջ. «Տե՛ս, ահա գալիս է քո հեզ թագաւորը»: Այդպիսով նա դառնում է հոգիների թագաւորը և իրաւունք է ստանում ասելու՝ «Մի հզօր գաւազան է ուղարկում Եսաիւէն քեզ համար Սիօնից, որպէս զի իշխես քո թշնամիների մէջ»:

Յովհաննէսի հարցումից և թշնամիների հետ ունեցած ընդհարումից յետոյ մի տարօրինակ անհանգստութիւն է տիրում Յիսուսին. մենք տեսնում ենք նրան այնուհետև շարունակ թափառելիս: Նա Տիրոս է գնում, ապա Սիդոն, վերադառնում է Դեկապօլսի կողմերը, ապա դարձեալ գալիլիական ծովի արևմտեան ափերը, գնում է դէպի հիւսիս՝ Հերմոն սարի ստորոտները, ուր գտնւում է «Փիլիպպոսի Կեսարիա» կոչուած քաղաքը:

Այդ ճանապարհորդութեան ժամանակ, Տիրոսի երկրում, մինչև անգամ հեթանոսները խնդրում են նրան օգնել իրենց: Արդէն իւր գործունէութեան սկզբում Յիսուսը գովել է Կափառնաւումի այն Հռովմայեցի հարիւրապետին, որ նրան խնդրել էր բժշկել իւր ծառային: Նրա համար Յիսուսն ասել էր. «Այդպիսի հաւատ Իսրայէլի մէջ դեռ չեն գտել»: Այժմ՝ Տիրոսի երկրում, Փիւնիկեցի կնոջ և նրա

խօսակցութիւնից երևում է, որ այստեղ մի հիւանդ երեխայի օգնելու մասին չէ խօսքը: Հեթանոսների երկրում Յիսուսը կամենում է դադարեցնել իւր գործունէութիւնը. նրա սիրտն ու հոգին ուրիշ բաներով են զբաղուած. «Ես ուղարկուած եմ միայն Իսրայէլի տան կորած ոչխարների մօտ» - Այդ գիտակցութեամբ Յիսուսը մերժում է կնոջ խնդիրը, ի նկատի ունենալով միևնոյն ժամանակ հրէական այն հասկացողութիւնը, թէ հեթանոսներն Աստծուն կփնտռեն և կգտնեն այն ժամանակ, երբ հրէական ժողովուրդը իւր ամբողջ փառքով հանդէս կգայ: -Նախ պէտք է երեխաներին կշտացնել. արդար բան չէ երեխաների ձեռքից հացը առնել և շներին տալ: Կինը պատասխանում է. «Այո՛, Տէր, բայց շներն էլ կերակրում են երեխաների սեղանի փշրանքներով»: Ուրեմն խօսքը հոգևոր կերակրի մասին է և ամբողջ պատմութեան նպատակն է ցոյց տալ, որ հեթանոսներն էլ սկսել էին նրան ճանաչել:

Բայց Փարիսեցիներն ամեն տեղ հետևում էին նրան և այժմ էլ նրա առաջ են դուրս գալիս նշան խնդրելով, որպէս զի ծաղրեն նրա անկարողութիւնը: Բայց Յիսուսը զայրացած մերժում է այդ խնդիրը կատարել և իբրև վերջին նշան՝ նրանց ուշքը հրաւիրում է վերջին դատաստանի վրայ: Այդ դատաստանի ժամանակ հարաւի թագուհին դատի կնստի այս մարդկանց հետ և կդատապարտէ սրանց, որովհետև նա աշխարհի ծայրից եկաւ. Սողոմոնի իմաստութիւնը լսելու, իսկ այստեղ Սողոմոնից էլ մեծը կայ: Նինուէի բնակիչներն անգամ դատաստանի ժամանակ պէտք է վեր կենան և սրանց դատապարտեն, որովհետև նրանք, հեթանոս լինելով՝ Յովնան մարգարէի քարոզութեամբ ապաշխարեցին, իսկ այստեղ Յովնանից էլ մեծն է: Ախա դառնալով իւր մտերիմներին, Յիսուսն ասում է. «Զգոյշ կացէք Փարիսեցիների խնորհից»: Թէև ժողովրդի մեծ բազմութիւնն անսահման վստահութեամբ հետևում էր Յիսուսին, բայց Փարիսեցիները կարողացել էին արդէն շատերին խնորել և Յիսուսին հակառակ մի խումբ կազմակերպել: Ահա այդպիսիներին ասում է նա. «Եթէ արևմուտքում ամպ էք տեսնում, ասում էք թէ անձրև պիտի գայ և այդպէս էլ լինում է. իսկ երբ նկատում էք, որ հարաւային քամին է փչում, ասում էք՝ խորշակ պիտի լինի և այդպէս էլ լինում է: Այդ ինչպէս է որ դուք, կեղծաւորներ, երկնքի և երկրի երեսը քննել գիտէք, իսկ այս ժամանակը ճանաչել չէք կարողանում»:

Անընդհատ թշնամութիւնները նրան վերջ ի վերջոյ այն գիտակցութեանն էին բերել, որ ինքը պիտի մեռնի: Նա տեսնում էր, որ մարգարէների ասածների նման, ամբողջ ժողովուրդն իւր առաջնորդների հետ միասին աչքերը փակել են, որ չտեսնեն և ականջները՝ որ չլսեն: Նա տեսնում էր, թէ ինչպէս քահանայապետները, դպիրները և ամբողջ ծերակոյտը, որոնց լսում էր ժողովուրդը կուրօրէն, իրեն դէմ են դուրս գալու՝ մահուան դատավճիռ կարդալու համար:

Աւետարանները բոլորովին լռում են Յիսուսի ճանապարհորդութեան մասին՝ Բեթսայիդայից մինչև Փիլիպպոսի Կեսարիան: Այստեղ կանգ է առնում նա և եկած համարում աշակերտներին

յայտնուելու ժամը: «Ի՞նչ են ասում մարդիկ իմ մասին. ո՞վ են ես»: Աշակերտները պատասխանում են. «Մի քանիսն ասում են՝ Յովհաննէս Մկրտիչն ես, միւսները՝ Եղիան, ուրիշները՝ թէ մարգարէներից մէկն ու մէկը»: Ապա հարցնում է իւր աշակերտներին. «Իսկ դուք ի՞նչ էք կարծում. ես ո՞վ եմ »: Պետրոսը պատասխանում է. «Ղու Մեսիան ես, Կենդանի Աստուծոյ որդին»: Յիսուսը պատուիրում է նրանց՝ ո՛չ ոքի ո՛չինչ չասել: Աստուծոյ գործն է իւր օծեալին Սիօնի թագաւոր հռչակել. և նա կվճռէ, թէ ինչ միջոցով պիտի լինի այդ. թշնամիները նրա ոտի պատուանդանը պիտի դառնա՞ն, թէ՞ նա պիտի չարչարուի և բռնի մահով մեռնի և ապա՝ երկնքից, իբրև յաղթող, դէպի իւր ժողովուրդը գայ: Յիսուսն սկսել էր հաշտուել այն մտքի հետ, թէ նա կարող է յաղթուել ժողովրդի ծերերից, քահանայապետներից ու դպիրներից. և այդ բանն այժմ պարզ կերպով ասում է իւրայիններին: Բայց Պետրոսն այդ մտքով չէր արել իւր խոստովանութիւնը: «Մեսիա» նրա համար նշանակում էր արքայական իշխանութիւն. և ինչպէս էլ որ լինի, բոլոր հակառակորդների միջից Աստուծոյ Օծեալը յաղթական կերպով մուտք պիտի գործէ Սիօն: Այդ պատճառով՝ նա մի կողմ է քաշում Յիսուսին և սկսում է նրան յանդիմանել. իսկ Յիսուսը յետ է դառնում և ասում նրան. «Հեռու ինձնից, սատանայ, դու չես մտածում Աստուծոյ կամքի մասին, այլ մարդկանց»: Անապատի փորձութեան օրերի յիշողութիւնը մի անգամ էլ կենդանանում է: Այդտեղից երևում է, որ Յիսուսի աշակերտները հետևում էին նրան իբրև խոստացեալ Մեսիայի, այն ինչ Յիսուսը աշխարհային իշխանութիւնն համարել էր չարի դրդումն: Կեսարիայի օրը նրա մտերիմների համար սոսկալի անկման օր կլինէր, եթէ նրանք նկատի չունենային իրենց վարդապետի գործը և պատրաստ չլինէին նրա հետ ամենադառն տանջանքները բաժանելու: Այդ պատճառով էլ նա ասում է իւր բոլոր աշակերտներին. «Ով որ ինձ հետևել է ուզում, նա պէտք է ուրախանայ իւր անձը և հետևի ինձ. որովհետև ով իւր կեանքը ազատել է ուզում՝ նա կկորցնի. իսկ ով որ կորցնում է իմ պատճառով՝ նա կազատէ. ի՞նչ օգուտ է մարդուն, եթէ ամբողջ աշխարհը շահէ, բայց իւր հոգին կորցնէ: Ճշմարիտն են ասում ձեզ, այստեղ կանգնածների մէջ մի քանիսը կան, որոնք մահ չեն տեսնի, մինչև չտեսնեն Աստուծոյ արքայութեան գօրաւոր գալուստը»:

Այսպիսի խօսքերը շփոթեցնում են աշակերտներին, որովհետև նոքա սպասում էին մեսիական փառահեղ թագաւորութեան իրագործմանը, իսկ Յիսուսը նրանց յայտնում էր, որ տանջանքների ու ցաւերի շրջանն է սկսւում: Թէև Յիսուսը նրանց վաղուց պարզ և հանդիսաւոր կերպով ասել էր, թէ ում է ուղարկել Աստուած իւր Մեսիային նախընթաց, այնուամենայնիւ աշակերտները դարձեալ հարցնում են նրան Եղիայի մասին, որը հրէական հասկացողութեան համաձայն՝ Մեսիայի նախակարապետը և ճանապարհը պատրաստողն է լինելու: Աշակերտների վստահութիւնն ու հաւատը այնքան պակասել էր դէպի իրենց վարդապետը, որ նոքա այլ ևս նրա անունով բժշկութիւն կատարել չէին կարողանում :

Յիսուսը պէտք է անշուշտ զգար այդ օրերն այն սարսափելի մենակութիւնը՝ շրջապատող բազմութեան մէջ, որ բոլոր մեծ հոգիների բաժինն է: Բայց այդ այնուամենայնիւ չի յուսահատեցնում նրան, որովհետև մէկը կայ, որ նրան յոյս և վստահութիւն է ներշնչում: Եւ ահա՝ իւր երկնաւոր Հօրից նոր ոյժ և անդիմադրելի զօրութիւն առած, պատրաստ է Յիսուսը Երուսաղէմ գնալու,- վերջին անգամ:

Է. Գ Լ Ո Ւ Խ.

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԺԱՆԱՊԱՐՀԻՆ.

«Որքան արգելում էր աշակերտներին, նրանք այնքան աւելի տարածում էին»: Կեսարիայի դէպքի ազդեցութեամբ, թէ նրանից անկախ, Յիսուսին հետևողների բազմութեան ոգևորութիւնն այնքան աւելանում է, որ ամբողջը մի ժողովրդական շարժման կերպարանք է ընդունում: Հերովդէս Անտիպասը, որ Գալիլիայի չորրորդապետն էր, ստիպուած է զգում իրեն, այդ պատճառով, աւելի ուշադրութեամբ հետեւելու Յիսուսին և նրա հետևողներին: Նա չէր կարող թոյլ տալ, որ մի անկախ ազգային շարժումն առաջ գայ, որովհետև ինքը կարող էր վստահութիւնը կորցնել Հռովմայեցիների առաջ: Այդ պատճառով նա լռեցրել էր Յովհաննէս Մկրտչին. այժմ սկսում է անհանգստանալ նաև Յիսուսի գործունէութեան համար, որովհետև բացի խեղճերի ու հիւանդների ծառայութիւն լինելուց՝ նա կարծես թէ սկսում էր քաղաքական բնաւորութիւն ստանալ: Փարիսեցիներն էլ լուր են բերում նրան Յիսուսի իբրև թէ ապստամբական նպատակների մասին և Հերովդէսը ցանկանում է, որքան կարելի է շուտով, շարժման առաջն առնել: Յիսուսը որոշում է՝ չմնալ այլ ևս Գալիլիայում և անմիջապէս դէպի Ս. Քաղաքը դիմել: «Գնացէ՛ք, ասացէ՛ք այդ աղուէսին, ես բժշկում եմ դիւահարներին այսօր ու վաղը, իսկ երրորդ օրը հասած կլինեն նպատակիս»: Նրա նպատակը Երուսաղէմ գնալն էր:

Նա ազատ էր զգում իրեն թէ՛ թագաւորների իշխանութիւնից և թէ՛ հրէական տաճարի հարկից, թէև այդպիսի մանր բաներում գայթակղութեան առիթ չտալու համար՝ Պետրոսին հրամայում է Կափառնաւունում, որ իւր փոխարէն էլ հարկ վճարէ: Նա ամբողջովին լցուած է այն գաղափարով, որ իւր վերջին գործունէութիւնն Երուսաղէմում պէտք է լինի, որովհետև մարգարէն կարծես անպատճառ Երուսաղէմում պէտք է սպանուի: «Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, որ սպանում էիր մարգարէներին և քարկոծում քեզ մօտ ուղարկուածներին. որչա՛փ կամեցայ քո որդիներին, իմ ժողովրդին, հաւաքել, ինչպէս թութան իւր ծագերին և հաւաքում թևերի տակ, բայց դուք չըկամեցաք»:

Մռայլ զգացմունքներ են պատում Յիսուսի հոգին և երկու անգամ էլ կրկնում է նա այն խօսքերը մահուան մասին, որոնք այնպես շփոթեցրել էին աշակերտներին Փիլիպպեյսի Կեսարիայում: Յիսուսը մտածում է այժմ իւր ուսումն ամրապնդել աշակերտների մէջ, որովհետև չգիտէ, թէ իրեն ի՞նչ վիճակ է սպասում. և այդ պատճառով էլ՝ դեռ ևս Գալիլիայում եղած ժամանակ, միանգամ էլ նկարագրում է հոգու այն ուղղութիւնը, որ դէպի Աստուծոյ արքայութիւնն է տանում:

Դորա համար ամենից առաջ հարկաւոր է երեխայի նման լինել Աստուծոյ նկատմամբ: Աշակերտները վիճել էին, թէ ո՞վ է իրենց մէջ ամենից մեծը: Յիսուսը կանչում է մի երեխայ, կանգնեցնում նրանց մէջ և ասում. «Ճշմարիտ են ասում ձեզ, եթէ դուք չէք ապաշխարի և երեխայի նման չէք լինի, երբէք Աստուծոյ արքայութիւն մտնել չէք կարողանայ». ով որ իրեն այնպէս խոնարհ է պահում, ինչպէս այս երեխան, նա է ամենամեծը Աստուծոյ արքայութեան մէջ: Աստուծոյ արքայութեան մէջ մտնողը պէտք է այն համոզումն ունենայ, որ նա երեխայի պէս անզօր է և սխալուող, բայց և, երեխայի նման, պէտք է վստահ լինի Հօր ներողամտութեան վրայ: Հեզութիւն, հաւատ, երախտագիտութիւն և միամտութիւն պէտք է լինին նրա յատկութիւնները: Այդպիսի չափի առաջ ոչնչանում են բոլորովին մարդկային գաղափարները մեծութեան և փոքրութեան մասին:

Ի՞նչը կարող է մեծ լինել Աստուծոյ մեծութեան առաջ, և ի՞նչը փոքր նրա անսահման բարութեան համար: Ո՛րքան փոքր է Աստուծոյ առաջ այն Փարիսեցին, որ տաճարում Մաքսաւորի ներկայութեամբ աղօթել է կարողանում. «Շնորհակալ են քեզանից Աստուած, որ ես այնպէս չեմ ինչպէս ուրիշները՝ աւազակ, անարդար, շնացող կամ այս Մաքսաւորի նման: Շաբաթն երկու անգամ ծոմ եմ պահում և բոլոր ունեցածիս տասանորդ եմ տալիս»: Այն մաքսաւորը, որ հեզութեամբ անկիւնում կանգնած է և աչքը վերև բարձրացնել չի համարձակում, այլ տրտմութեամբ իւր կուրծքն է ծեծում և ասում է. «Աստուած, ների՛ր մեղաւորիս», աւելի արդարացած կերթայ տուն. եւ ո՛չ թէ Փարիսեցու նման:

Իւրաքանչիւր մարդկային հոգու արժէքը մեծ է Աստուծոյ առաջ. նա գնում է կորածի յետևից: Ինչպէս մէկը՝ որ հարիւր ոչխար ունի և նոցանից մէկը կորցնում է, իննսուն և իննը թողնում է դաշտում և գնում է մէկի յետևից և երբ գտնում է, ուրախանում է և ստիպում է բարեկամներին ու հարևաններին էլ իւր հետ ուրախանալ. կամ ինչպէս մի կին, որ 10 կոպէկից մէկը կորցնում է, ճրագ է վառում, ամբողջ տունը տակն ու վրայ անում, մինչև որ գտնում է և իւր ընկերուհիների հետ ուրախանում է. ասում են ձեզ, «Երկնքումն էլ աւելի ուրախութիւն է լինում մի ապաշխարողի, քան իննսուն և ինն արդարի համար, որոնք ապաշխարութեան կարիք չեն զգում»:

Նոյն մտքով պէտք է հասկանալ «Անառակ Որդու» առակը: Հօր համար շատ մեծ գիւտ էր, երբ իւր մոլորուած որդին վերադարձաւ և զղջալով ասաց նրան. «Հայր, մեղաւոր եմ երկնքի և քո առաջ. այլ ևս արժանի չեմ Քո որդին կոչուելու»: Այդպիսի զղջացողի համար հայրը խնճոյք է պատրաստում,

որովհետև նա կորած էր և գտնուել է, մեռած և նորից կենդանացել: Նա ասելի մեծ է Աստուծոյ առաջ, քան միւս եղբայրը, որ նախանձով չէր ուզում մասնակցել ուրախութեանը:

Բոլոր մարդիկ պէտք է սիրեն միմեանց իբրև եղբայրներ. յատկապէս խեղճերին և աղքատներին չպէտք է արհամարհել, այլ սէր և հովանաւորութիւն ցոյց տալ:

Ով որ հաւատացեալին գայթակղեցնում է, ասելի լաւ կանէ երկնաքարը վզից կախէ և ծովն ընկնի: Գայթակղութիւնը պէտք է գայ. բայց վա՛յ այն մարդուն, որի միջոցով է գալու:

Չպէտք է մերժել նաև այնպիսի բարեկամներին, որոնք բոլորովին միացած չեն Յիսուսի հետևողների հետ. Յովհաննէսը սխալուում է, երբ նա այդպիսի մէկին արգելում է Յիսուսի անունով հրաշքներ գործել: «Ով որ մեզ հակառակ չէ, մեր կողմն է»:

Եղբայրական սէրը պահանջում է, որ մարդն անյիշաչար լինի և ներէ իւր անծի դէմ գործուած անարդարութիւնը: Եթէ քո եղբայրը յանցանք է գործել, յանդիմանիր նրան և եթէ զոջայ՝ ների՛ր: Եթէ մինչև անգամ օրական եօթն անգամ յանցանք գործէ քո դէմ և եօթն անգամ դառնայ ասէ զոջալով՝ «ցաւում եմ», պարտաւոր ես ներել նրան:

Հեռու պէտք է մնալ նաև անձնական իրաւունքը քարասիրտ կերպով բանեցնելուց՝ թոյլ եղբոր նկատմամբ, որովհետև իւրաքանչիւր մարդ ամենամեծ չափով պարտական է Աստուծոյ առաջ: Չպէտքէ նմանել այն ծառային, որ թագաւորին պարտ էր 10,000 տաղանդ և վճարել չկարողանալով, աղաչում էր ներել իրեն. բայց ներուելուց յետոյ՝ իւր ծառայակցի հոգին հանում էր 100 դինարի համար: Այդպիսի ծառային Տէրը կասէ. «Քո ամբողջ պարտքը ներեցի քեզ. պարտական չէի՞ր դու էլ նոյն ձևով վարուելու ծառայակցիդ հետ»:

Այդ խօսքերից յետոյ՝ Յիսուսը ճանապարհ է ընկնում դէպի հարաւ՝ Հրէաստան :

Ճանապարհին էլ Փարիսեցիները նրան հանգիստ չեն տալիս. Նրանք հարցնում են Յիսուսին. «Կարելի՞ է որևիցէ պատճառով արձակել կնոջը»: Նրանց միտքը դարձեալ այն էր. որ ապացուցուի Յիսուսի հակառակութիւնը Մովսիսական Օրէնքի դէմ: Հրէական հասկացողութեան և սովորութեան համաձայն՝ մարդն առանց այլևայլութեան կարող էր արձակել կնոջը. բայց պարտական էր նրան մի գիր տալ, որպէս զի նա հնարաւորութիւն ունենար կրկին ամուսնանալու: Ուրեմն կինը՝ հրէական օրէնքով և հասկացողութեամբ՝ բացարձակ կերպով ենթակայ էր իւր ամուսնու կամայականութիւններին: Վերջին ճանապարհորդութեան ժամանակ փարիսեցիները պատճառ են դառնում, որ Յիսուսը կնոջը մարդուն հաւասար հրատարակէ: Նա գիտէ այն օրէնքը, որի մասին ակնարկում են հակառակորդները. բայց այդ օրէնքը մի կողմ թողած՝ նա ուշադրութիւն է հրաւիրում Ս.Գրքի այն խօսքերի վրայ, որ Եահուէն ասել էր ստեղծագործութեան առաջին օրը. «Չէ՞ք կարդացել, որ սկզբում, մարդիկ ստեղծելիս, Աստուած այնպէս արեց, որ մարդ ու կին լինին և ասաց. այդ պատճառով պէտք է թողնի մարդ հօրն ու մօրը և երթայ իւր կնոջ յետևից: Եւ երկուսը մէկ են:

Նոքա այլ ևս երկուս չեն, այլ մէկ. իսկ ինչ որ Աստուած զուգել է, մարդը չի կարող բաժանել»: Այնպէս որ Մովսիսական Օրէնքը ապահարզանի մասին՝ դրուած է միայն հրէական քարասրտութիւնտը գոնէ փոքր չափով մեղմացնելու և կանանց դրութիւնը բարելաւելու համար:

Թշնամիները ստացան այն, ինչ որ ուզում էին և տրտնջալով հեռացան: Բայց Յիսուսի խօսքերը կանանց համար երջանկութեան դուռն են բաց անում: Պսակն անլուծելի է և կամայական կերպով արձակուածների կոծը վերջապէս պիտի դադարի: Այնքան բարձր է Յիսուսի հասկացողութիւնը կանանց մասին, որ նրա աշակերտներն անգամ չեն հասկանում և դրա համար հարցնում են. «Եթէ այդպէս է մարդու և կնոջ յարաբերութիւնը, աւելի լաւ է ամենևին չամուսնանալ»: Յիսուսը պատասխանում է. «Քչերի համար հասկանալի կլինի այդ. և ամուսնութիւնից ազատ կարող են համարուել միայն այնպիսիները, որոնք իրեն, Յիսուսի նման, մի աստուածային կոչումն ունին, որը կատարելու համար պէտք է ընտանեկան հոգսից և պարտականութիւնից ազատ լինին»:

Բայց միայն կանանց համար չէ նոր երջանկութիւն քարոզում Յիսուսը: Երեխաների դաստիարակութիւնը հրէաների մէջ լուրջ էր և բարեպաշտ, բայց միևնոյն ժամանակ սկզբունքով կոշտ և խիստ: Հրէական իմաստութիւնն ասում էր. «Երեխաների վիզը պէտք է ծռել, քանի նրանք փոքր են: Ով սիրում է երեխային, մտրակը վրայից անպակաս անի: Եթէ կփաղաքշես երեխայիդ, վերջն ստիպուած կլինիս նրանից վախենալու. խաղ կանես նրա հետ, վերջը ստիպուած կլինիս տխրելու: Նա ասում է իւր որդուն, ով խնայում է մտրակը. մտրակի հարուածները կազատեն նրան դժոխքից»: Այդ էր պատճառը, որ երբ Յիսուսի մօտ երեխաներ էին բերում, որպէս զի նա օրհնէ նրանց, աշակերտները բարկանում էին: Իսկ Յիսուսն ասաց. «Թո՛յլ տուէք երեխաներին ինձ մօտ գալու և մի՛ արգելէք նրանց, որովհետև նրանցն է երկնքի արքայութիւնը :

Ով որ կամենում է հետևել Յիսուսին, նա պէտք է թողնի ամեն բան և նրա հետ միասին դէպի մեծ քաղաքը դիմէ, կեղծ արդարութեան ամբողջութիւնների վրայ յարձակուելու համար: Նրան հետևողը պէտք է իմանայ, որ աղուէսները որջ ունին, իսկ երկնքի թռչունները բոյն, բայց նա զլուխը դնելու տեղ չունի: Վերջին բոպէն է նրան հետևելու համար և ո՛չ մի պարտականութիւն չի կարող ուշացնել որոշումը: Թոյլ տուր հոգով մեռածներին իրենց մեռելներին թաղելու, իսկ դու ե՛կ Աստուծոյ արքայութիւնը քարոզելու: Ով որ ձեռքը դրել է մահճին, նա յետ չպէտք է նայի:

Հեռու պիտի լինին Յիսուսից բոլոր այնպիսի մարդիկ, որոնք որևիցէ կերպ կապուած են աշխարհի և իրենց սիրելիների հետ: Յիսուսի աշակերտը լինել չի կարող նա, ով որ նրան հետևել է կամենում, բայց չի կարողանում թողնել հօրն ու մօրը, կնոջը, եղբայրներին ու քոյրերին. աւելի հեռու, ով որ իւր ստացուածքից ձեռք վերցնել չի կարող:

Մի հարուստ երիտասարդ մօտենում նրան և ասում. «Բարի վարդապետ, ի՞նչ պէտք է անեն, որ յաւիտենական կեանք ժառանգեն»: Յիսուսը պատասխանում է. «Ինչո՞ւ ես ինձ բարի անուանում.

միայն մի Աստուածն է բարի. օրէնքները գիտես՝ մի շնար, մի սպանիր, մի գողանար, սուտ մի վկայիր, մի յափշտակիր, պատուիր ծնողներիդ»: Երիտասարդը, որ աւելի բարձրի էր ձգտում, քան այդ օրինականութիւնը, պատասխանում է. «Այդ բոլորը կատարել են մանկութիւնից»: Յիսուսը հաճութեամբ նայում է նրա վրայ և ասում. «Մի բան միայն պակաս է քեզ. գնա՛, բաժանիր ունեցածդ աղքատներին և հետևիր ինձ»:

Երիտասարդը հառաչեց այդ խօսքերի վրայ և տխուր հեռացաւ, որովհետև շատ ստացուածք ունէր: Իսկ Յիսուսը դարձաւ իւր աշակերտներին. «Ի՛նչ դժուարութեամբ կարող են հարուստները Աստուծոյ արքայութեան մէջ մտնել. աւելի հեշտ ուղտը ասեղի ծակից կարող է անցնել»: Աշակերտները զարմացան և սկսեցին միմեանց հետ խօսել, ո՞վ կարող է ուրեմն փրկուել: Յիսուսն ասաց նրանց. «Ինչ որ մարդկանց մօտ անկարելի է համարուի, Աստուծոյ մօտ կարելի է»:

Այդ պատճառով էլ՝ Աստուծոյ պէտք է թողնել վարձատրութեան խնդիրը, առանց սեպիական արժանաւորութիւնների վրայ մատնացոյց անելու: Դրա համար էլ Յիսուսը Պետրոսի այն խօսքին, թէ մենք ամեն բան թողել ենք և հետևել ենք քեզ՝ պատասխանում է. «Աստուծոյ արքայութեան համար կատարուած իւրաքանչիւր գործ իւր արժանաւոր վարձատրութիւնը կգտնի, բայց շատերը առաջիններից՝ վերջինը կդառնան և յետինները՝ առաջին»: Այդ խօսքերի մէջ Պետրոսը մի կողմից մխիթարութիւն է ստանում, որ իզուր չէ իւր անձնուիրութիւնը, միւս կողմից յանդիմանութիւն՝ սեպիական արժանիքը շեշտելու համար, որովհետև Աստուծոյ կատարեալ պետութեան մէջ միայն հեզ հոգի ունեցողներն առաջ կերթան:

Չի կարելի վարձատրութիւն պահանջել տիրոջից, ի նկատի ունենալով նրա անսահման բարութիւնը: Եթէ հրապարակում պարապ կանգնած մարդկանց մէկն իւր այգին է ուղարկում ժամը 6-ին, 9-ին, 12-ին, մի՞թէ նոքա իրաւունք ունին տրտնջալու, եթէ տէրը երեկոյեան նրանց բոլորին հաւասար վարձատրէ: Իւրաքանչիւրը պէտք է իւր պարտականութիւնը կատարէ և այն զգացմունքն ունենայ, թէ «Մի անպիտան ծառայ եմ, ինչ որ պարտական եմ անելու, այն եմ արել»: Ով որ տիրոջ կամքը գիտէ և յապաղում է կատարել, նա աւելի պատասխանատու է, քան թէ չիմացողը: Ում շատ է տրուած, նրանից շատ էլ կպահանջուի:

Վերջապէս Յիսուսի աշակերտները պէտք է հասկանան, թէ ո՞րն է իսկական պատիւը: Նոքա չպէտք է վարուին այն պատուամոլ հիւրի նման, որ սեղանի ծայրն է նստում և յետոյ ստիպուած է լինում մէկ-մէկ մինչև սեղանի անկիւնը իջնել, որովհետև իրենից յետոյ աւելի պատուաւորներն են գալիս. ընդհակառակը համեստ հիւրը հետզհետէ աւելի բարձր տեղ կգրաւ: Ով որ խոնարհեցնում է իրեն, կբարձրանայ. իսկ ով որ բարձրացնում է՝ կխոնարհուի:

Պատիւ չպէտք է համարել նաև բարեկամներին, ազգականներին և հարուստ հարևաններին հրաւիրելը: Յիսուսի աշակերտները պէտք է սիրեն աղքատներին, տնանկներին, կաղերին և կոյրերին. մի խօսքով այնպիսիներին, որոնցից ո՛չ մի սպասելիք չունին:

Զնայելով Յիսուսի այդ խօսքերին, նրա աշակերտներից երկուսը՝ Յովհաննէսն ու Յակովբոսը (Որդիք Որոտման) այնուամենայնիւ կամենում են տեղ գրաւել գալիք արքայութեան մէջ՝ Յիսուսի աջ և ձախ կողմը: Յիսուս պատասխանում է նրանց, թէ դրա համար հարկաւոր է քաջութիւն ունենալ ընկալու այն բաժակը, որ իրեն է վիճակուած և չվախենալու արեան մկրտութիւնից:

Ապա զգուշացնում է իւր աշակերտներին, որ չհետևին քահանայապետներին և դպիրներին՝ փառասիրութեան մէջ: Դուք չպէտք է թոյլ տաք, որ ձեզ Ռաբբի կանչեն, որովհետև ձեր վարդապետը մէկ է, իսկ բոլորդ եղբայրներ էք: Ո՛չ ոքի երկրի վրայ հայր մի անուանէք, որովհետև ձեր Հայրը մէկ է երկնքում: Չպէտք է նաև մէկին առաջնորդ կոչէք, որովհետև ձեր առաջնորդը մէկ է:

Աշխարհի մէջ իշխանութիւն ունեցողները ճնշում են և ընկճում իրենց հպատակներին: Այդպէս չպէտք է լինի ձեր մէջ. ընդհակառակը, ով ուզում է մեծ լինել, թող ծառայէ բոլորին, և ով առաջինն է ուզում լինել՝ աշխատի բոլորի համար: Ինչպէս որ ես չեմ եկել, որ ինձ ծառայեն, այլ որպէս զի ես ծառայեմ և իմ կեանքը փրկանք տամ շատերի համար:

Յիսուսը և իւր հետևողները արդէն հասել էին Երիթով. այստեղ նա ուզում է վերջին անգամ հանգստանալ՝ վճռական պայքարից առաջ: Ինչպէս սկզբից և եթէ Գալիլիայում, այնպէս էլ վերջացնում է Յիսուս իւր կեանքը, իբրև արհամարհուածների և մեղաւորների բարեկամ: Թզենու վրայից ցած է կանչում կարճահասակ Ջաքէոսին և ցանկութիւն է յայտնում հրէական մաքսաւորի մօտ հանգչելու: Ջաքէոսն ուրախութեամբ է ընդունում նրան և խոստանում է իւր կարողութեան կէսն աղքատներին տալու, ումից որ անարդար կերպով ստացել է, քառապատիկը վճարելու: Ուրեմն նա մէկն էր այնպիսիներից, որոնք անարդար մամոնայով բարեկամներ են շահում. մի հարուստ, որի առաջ Աստուծոյ արքայութեան դռները փակ չեն: Այդպիսին աւելի շուտ կփրկուի, քան նրան արհամարհողները, որովհետև Յիսուսն եկել էր փնտռելու և երջանկացնելու նրանց, որոնք կորած են:

Սակայն մօտեցել էր արդէն վճռական րոպէն: Ի՞նչպէս պէտք է ընդունէ նրան Երուսաղէմի ժողովուրդը: Անսահման բարձր քանքարներ է տուել Աստուած այդ ժողովիդին և երկար ժամանակ՝ շահագործելու համար: Արդեօք կատարե՞լ են նոքա իրենց պարտքը: Այժմ հաշուի ժամանակն է և Աստուած էլ այնպէս պէտք է վարուի, ինչպէս հարուստ թագաւորը, որ երկար ճանապարհորդութիւնից առաջ, իւր կարողութիւնը յանձնում է ծառաներին՝ շահագործելու համար: Վերադարձից յետոյ աշխատասէր ծառային նա կվարձատրէ հաւատարմութեան համար, ասելով. «Որովհետև քչի մէջ հաւատարմութիւն են ցոյց տուել, իշխանութիւն կունենաս այժմ շատերի վրայ: Ուրախացի՛ր քո Տիրոջ հետ»: Իսկ այն ծառան, որ, զգուշութիւնը և երկիւղը պատճառ բռնելով, իւր

բաժինը թաղել է և անգործ է մնացել, կարտաքսուի. նրա մասն էլ կառնուի և կտրուի պտուղ բերող ծառաներին:

Ծոյլ ծառան Երուսաղէմի ժողովուրդն էր:

Ը. Գ Լ Ո Ւ Խ.

ՅԱՐՁԱԿՈՒՄՆ ՍԻՕՆԻ ՎՐԱՅ.

Երուսաղէմում, Ս. Քաղաքում, պէտք է տեղի ունենար վերջին ճակատամարտը, որը պիտի որոշէր ժողովրդի վիճակը: Թէև նրա գաղափարներն ու վարդապետութիւնը ոչնչացնում էին ազգային սահմանները, բայց իբրև իւր ժողովրդի հարազատ զաւակ և մարգարէութեան շարունակող, նա դեռ ևս ցանկանում է մինչև վերջին րոպէն իւր ժողովրդի համար գործել: Այդ պատճառով էլ՝ նա մտադրում է խօսելու իւր ժողովրդի առաջնորդների և մեծաւորների հետ: Եթէ այդ իշխանաւորները կհակառակեն, այն ժամանակ Յիսուսը կքարոզէ նրանց իշխանութեան վերջը և խեղճերին և թշուառներին կհրաւիրէ, ինչպէս Գալիլիայում էր արել, դէպի Աստուծոյ արքայութիւնը:

Վերջին րոպէին նա տեսաւ, որ իւր յոյսերը հրէական ժողովրդի համար, բոլորովին ի գուր են: Նա զգաց, որ ազգային սահմանները նեղ են իւր վարդապետութեան համար և ժամանակն եկել է քարոզելու բոլոր ազգերին, բայց հէնց այդ րոպէին վերջացաւ նրա կեանքը: Միայն նրա աշակերտները խաչուածից յանձնարարութիւն ստացան հեթանոսներին կոչելու և տարածեցին նրա աւետարանը հեռաւոր երկրներում:

Զ ա տ կ ի տ ո ն ն է ր: Ամբողջ Հրէաստանից հաւաքուած էին Ս. Քաղաքում և ինչ որ Յիսուսը այստեղ քարոզէր ու կատարէր, արած կլինէր ամբողջ Իսրայէլի ժողովրդի մէջ: Երիթովից ելնելուց յետոյ, երբ Բեթանիա են հասնում, Յիսուսն ուղարկում է իւր աշակերտներից երկուսին Բեթփագէ, իւր բարեկամներից մէկի էջը բերելու: Ամենասովորական կենդանու վրայ ուզում է նա Երուսաղէմ մտնել. մի թագաւոր՝ աչքի համար այնքան խեղճ, որքան հնարաւոր էր. բոլորովին հակառակ հրէաների սպասած Մեսիային: Երուսաղէմին մօտիկ կանգ է առնում Յիսուսը, մի անգամ էլ հաշիւ տալու իրեն, թէ դէպի ո՞ր է գնում և ի՞նչ է սպասում իրեն այնտեղ: Պիտի ճանաչի՞ Երուսաղէմն իսկապէս, որ այսօր իրեն մօտ եկողը Զաքարիա մարգարէի քարոզած հեզ թագաւորն է, և պիտի ուրախանա՞յ այդ պատճառով Սիօնի դուստրը:

Քաղաք մտնելուց առաջ Յիսուսը լաց է լինում. «Գոնէ այսօր ճանաչէիր, թէ ո՞րն է քո խաղաղութիւնը: Բայց այժմ քո աչքերը ծածկուած են»: Գալիլիացիների ամբողջ խումբը մօտենում է քաղաքի գլխաւոր դռանը և ահա նրանք տարածում են իրենց հանդերձները ճանապարհի վրայ,

կանաչ տերևներ և ճիւղեր են թափում նրա առաջ և ցնծութեամբ աղաղակում. «Ահա գալիս է մեր նախահօր Դաւթի թագաւորութիւնը. օրհնուած լինի նա. օգնիր մեզ, Տէ՛ր, որ բարձրունն ես»: Այստեղ էլ Փարիսեցիները մտել էին արդէն նրա խմբի մէջ և պահանջում էին Յիսուսից, որ նա արգելի այդ աղաղակները, բայց Յիսուսը պատասխանում է. «Եթէ սոքա լռեն, քարերը կաղաղակեն»:

Այս դէպքը դառնում է Երուսաղէմի ժողովրդի և ուխտաւորների համար խօսակցութեան առարկայ: Յուզումը տիրում է բոլորին:

Երուսաղէմ մտնելուց յետոյ Յիսուսն անմիջապէս տաճար է գնում: Հնաւանդ սովորութեան համաձայն՝ տաճարի առաջին մասում, որ «հեթանոսների նախասրահ» էր կոչում, ի վաճառ էին հանուած տօնի և զոհաբերութեան կարևոր բոլոր առարկաները՝ զոհի կենդանիներ, աղաւնիներ, խունկ, ձէթ, գինի և այլն: Միւս կողմը սեղանաւորները փող էին մանրում: Յիսուս ուրիշ անգամներ էլ Երուսաղէմում եղել էր և այդ բոլորը տեսել, բայց այս անգամ նա սաստիկ վրդովւում է: Դորա մէջ է տեսնում նա ժողովրդի դժբախտութեան իսկական աղբիւրը: Նա հակառակ է զոհաբերութեան այդ ձևին, թէև գնահատում է այրի կնոջ լուծման, որովհետև նա մաքուր զգացմունքով իւր բոլոր ունեցածն է նուիրաբերում: Բայց ի՞նչ նշանակութիւն ունին այդ զոհաբերութիւնները, երբ որ Աստուծոյ պատուիրաններն են ոտի տակ տրւում և դէպի մերձաւորն ունեցած պարտաւորութիւնները չեն կատարւում: Արդէն մարգարէներն ասել էին, որ տաճարի անունը տալով և ողջակէզ մատուցանելով ո՛չ ոք չի կարող Աստծուն խաբել: Եւ այդ միջոցով կեղծ բարեպաշտները ոչինչ չեն շահի, որովհետև դրսում նոքա կեղեքում են խեղճերին ու աղքատներին: «Ես ատում և արհամարհում եմ ձեր տօները, ասել էր Եսայիէն Ամովսի միջոցով. չեմ ընդունում ձեր ողջակէզներն ու զոհերը: *Թող իրաւունքը յորդանայ ինչպէս ջուր և արդարութիւնը ինչպէս անհուն հեղեղ*»: Նոյնն էր ասել նաև Եսայի մարգարէն: Վերջապէս Իսրայէլի ժողովրդի համար եկել է ժամանակը պտուղ բերելու կամ դատաստանի ենթակուելու. ապա թէ ոչ նա նման է այն թզնունն, որ ժամանակից առաջ ծաղկած է և ոչ մի պտուղ չի բերում. այգու տէրը չի թոյլ տայ, որ այդպիսի թզենի մնայ իւր այգում:

Եւ ահա Յիսուս մտնում է հեթանոսների սրահը, կործանում է բոլոր վաճառականների սեղանները և դուրս է անում բոլորին այնտեղից. «Իմ տունը աղօթքի տուն է, իսկ դուք դարձրել եք այն աւազակների որջ»:

Դրանով ժողովրդի առաջ մի ծանր խնդիր էր դրուած:

Յիսուսը յանդուգն կերպով արշավանք էր սկսել տաճարի պաշտամունքի դէմ. կամ պէտք է հետևեին նրան, կամ լսելով իրենց իշխանաւորներին՝ նրան հայիոյիչ և ապստամբ հրատարակէին ու սպանէին: Որ տաճարի պաշտամունքն այդպէս շարունակուէլ չէր կարող և վերջ ի վերջոյ պէտք է մաքրուէր, ասել էր արդէն մարգարէներից մէկը, բայց մաքրող պէտք է լինէր Աստուած ինքը՝ հրեշտակների հետ, և ոչ թէ մի մարդ: Ջարմանալի է միայն, որ քահանայապետները և ծերակոյտը

դեռ ևս ո՛չ մի միջոց չեն ձեռնարկում Յիսուսի դէմ: Նրանց ձեռքն անշուշտ կապում էր Յիսուսի ազդեցութիւնը ժողովրդի վրայ:

Որքան ժամանակ էր մնում Յիսուսին Երուսաղէմում էլ քարոզելու Աստուծոյ արքայութիւնը, յայտնի չէ. գիտենք միայն, որ նա այստեղ էլ ապաշխարութիւն և դարձ է պահանջում՝ սխալ ճանապարհից: Եթէ այդպէս շարունակեն, կործանումն անխուսափելի կլինի: Ժողովուրդն այստեղ էլ, ինչպէս Գալիլիայում, գնում է նրա յետևից, իւր հիւանդներին բերում էր նրա մօտ, որպէս զի բժշկէ, իսկ երեխաները թնդացնում էին օդը «Ովսաննա՛, Դաւթի Որդի» կոչելով:

Վերջապէս Քահանայապետներն ու Սադուկեցիները, Դպիրներն ու Փարիսեցիները. միանում են ընդհանուր թշնամու դէմ և սկսում է վերջին պայքարը:

Ամենից առաջ մօտենում են Քահանայապետները: Նրանց կարծիքով Յիսուսը պարտաւոր էր իւր ընթացքի համար հաշիւ տալու: «Ի՞նչ իշխանութեամբ ես կատարում այդ բոլորը», հարցնում են նրան: Յիսուսը նրանց հարցին պատասխան չի տալիս, այլ ինքն էլ իւր կողմից մի բան է հարցնում, որից իսկոյն երևում է քահանայապետների անշնորհքութիւնը, ժաղավրդին առաջնորդելու: «Միայն նա կարող է ժողովրդին առաջնորդ լինել, ով որ կաարողութիւն ունի իւր ժողովրդի պատմութիւնը ըմբռնել և հասկանալ», բայց սոքա բացատրութիւն տալ չեն կարողանում նոյն իսկ իրենց օրով կատարուած մի նշանաւոր կրօնական երևոյթի մասին: Միայն մի բան կհարցնեն ձեզ, պատասխան տուէք ինձ, այն ժամանակ ես էլ ձեր պատասխանը կտամ: «Յովհաննէսի մկրտութիւնը երկնքի՞ց էր, Աստուծոյ յանձնարարութեամբ, թէ՞ մարդկային գործողութիւն»: Տիրում է շփոթութիւն: Եթէ ասեն երկնքից էր, պիտի հարցն, ապա ի՞նչու չհաւատացիք նրան. եթէ ասեն մարդկանցից, վախենալու է ժողովրդից, որովհետև նրան բոլորն էլ մարգարէ են անուանում: «Այդ պատճառով նրանք պատասխանեցին՝ չգիտենք»: «Ես էլ չեմ ասի, թէ ի՞նչ իրաւունքով եմ այս բոլորը կատարում». ասաց Յիսուսը: «Ճշմարիտն են ասում ձեզ, մաքսաւորներն ու մեղաւորները աւելի հեշտութեամբ արքայութիւն կմտնեն, քան թէ դուք, որովհետև Յովհաննէսն արդարադատութիւն էր քարոզում և օրէնքին ձեռք չէր տալիս, այնուամենայնիւ չհաւատացիք նրան: Ի՞նչ էք կարծում, մի մարդ երկու որդի ունէր, որոնց պատուիրեց այգին գնալ աշխատելու. մէկն ասաց «չեմ գնայ», բայց յետոյ զղջաց և գնաց, իսկ միւսն ասաց՝ «լաւ», բայց յետոյ չգնաց: Երկուսից ո՞րը կատարեց հօր կամքը: Պատասխանը պէտք է լինէր անշուշտ՝ առաջինը. իսկ ամբողջ առակի միտքն էր, որ ժողովրդի առաջնորդները նման են երկրորդին: Նոքա չեն ցանկանում իրենց պահպանութեան տուած այգու պտուղը տալ. ընդհակառակն՝ անպատում և վիրաւորում են տիրոջ կողմից պտուղը տանելու եկածներին. իսկ երբ տէրը ճարահատուած որդուն է ուղարկում, մտածում են նրան էլ սպանել. այդպիսի այգեպանին կոչնչացնէ տէրը և այգին կտայ ուրիշներին: Աստուծոյ արքայութեան մէջ առաջինները պէտք է լինեն խեղճերը, կոյրերը, աղքատները, կաղերը և այլն: Այդպիսիներն են

արժանանում թագաւորի հարսանիքին, որովհետև նոքա, որոնք պէտք է գային, առօրեայ անմիտ հիմունքներ բերելով, հեռու են պահում իրենց հարսանիքից:

Իսկոյն նկատուում է, որ Քահանայապետներն անյաջողութեան են հանդիպել և օգնութեան կարօտ են: Այժմ Փարիսեցիներն են ասպարէզ գալիս, նրան խորամանկութեամբ որոգայթի մէջ ձգելու համար: «Վարդապետ, գիտենք որ ճշմարտախօս ես և մարդկանցից չես վախենում, ոչ էլ աչառու ես. ասա՛ մեզ, պէ՞տք է կայսրին հարկ վճարել, թէ ոչ»: Եթէ Յիսուսը ո՛չ ասէր, պիտի մատնուէր իսկոյն հռովմէական իշխանութեան ձեռքը. իսկ եթէ այո՛, հրէաների ատելութիւնը պէտք է բորբոքուէր նրա դէմ, որովհետև նոքա մեծ դժուարութեամբ էին հեթանոսներին հարկ վճարում: Յիսուսը Փարիսեցիների նման ժողովրդի փրկութիւնը պետութեան անկումից չի սպասում: Փրկութեան համար ամենակարևոր նշանակութիւնն ունի ժողովրդի ներքին տրամադրութիւնը և հոգեկան ուղղութիւնը: Այդ պատճառով էլ՝ արտաքին պետական կարգ ու կանոնին հնազանդուել կարևոր է. «Ի՞նչ էք փորձում ինձ, ցոյց տուէք ինձ մի դահեկան: Ո՞ւմն է այս պատկերը կամ գիրը»: Պատասխանում են «Կայսրինը»: Յիսուսն ասում է. «Գնացէ՛ք կայսրինը կայսրին տուէ՛ք, բայց Աստծունն էլ Աստծուն»: Աւետարանիչը պատմում է, որ Փարիսեցիներն այդ պատասխանի վրայ զարմացած՝ թողին և հեռացան:

Այժմ Սաղուկեցիներն են փորձում իրենց ոյժը: Նոքա ուզում են Յիսուսին ծիծաղելի դարձնել. «Վարդապետ, Մովսէսն ասում է՝ եթէ մէկը անգաւակ մեռնում է, նրա եղբայրը պարտաւոր է այրուճ կնութեան առնել և եղբօրը զաւակ տալ: Այդպէս՝ մի անգամ եօթն եղբայր միևնոյն կնոջ ամուսինը դարձան և բոլորն էլ անգաւակ մեռան. ասա՛, Յարութեան ժամանայ եօթից որի՞ն պիտի պատկանի այդ կինը»: Յիսուսն այդ ծաղրական հարցից ազատուում է նրանով, որ պատասխանում է, թէ՛ «Յարութեան ժամանակ պսակուել չկայ, այլ բոլորն էլ երկնային հրեշտակների նման պիտի լինին»:

Աւետարանիչներից մէկը պատմում է, որ դպիրներից մի քանիսը շատ գոհ են մնացել այդ պատասխանից: Այդպիսիներից մէկը, կամենալով աւելի բան սովորել Յիսուսից, մօտենում է նրան և հարցնում. «Ասա՛ մեզ, ո՞րն է ամենաառաջին պատուիրանը»: Այն, ինչ որ Յիսուսը իւր քարոզութեան սկզբից ասել էր, կրկնում է այժմ. «Առաջին պատուիրանն է. քո Տէր Աստուածը մէկ է և նրան պէտք է սիրես բոլոր սրտով և հոգով և բոլոր զօրութեամբ. իսկ երկրորդը, դրա նման՝ սիրիր ընկերոջդ, ինչպէս քո անձը. սոցանից աւելի մեծ պատուիրան չկայ»:

Հրէական հասկացողութեան համաձայն՝ Մեսիան պէտք է գար Ղաւթի ցեղից, մի հզօր թագաւոր, ի կատար ածելու ժողովրդի բոլոր ակնկալութիւնները: Իսկ Նազարէթի հիւսն որդին ասում է այժմ, թէ ցնորք է այդ բոլորը, և հակառակ Ղաւթի իրեն ասածին. ի՞նչպէս կարող է Մեսիան Ղաւթի որդի լինել, քանի որ Ղաւթը Սաղմոսի մէջ նրան Տէր է անուանում: «Եահուէն ասաց իմ Տիրոջը. նստի՛ր աջ կողմս, մինչև քո թշնամիներիդ ոտներիդ պատուանդան շինեն»:

«Զգոյշ կացէ՛ք Փարիսեցիներից և Դպիրներից. Մովսէսի աթոռի վրայ դրանք են նստել, բայց նրանք փակում են Աստուծոյ արքայութեան դռները մարդկանց առաջ: Իրենք չեն մտնում, իսկ մտնել ցանկացողներին էլ արգելք են հանդիսանում: Մի գաղափարակից որոնելու համար այդ կեղծաւորները ծով ու ցամաք են անցնում, բայց այդպիսի մէկին գտնելուց յետոյ, նրան դժոխքի բաժին են դարձնում, երկու անգամ աւելի վատ, քան թէ իրենք են: Ամեն բան կատարում են մարդկանց աչքին երևալու համար: Սիրում են նախաթոռ լինել ժողովարաններում և առաջին տեղերը նստել հրաւերների ժամանակ: Այրիների տներն են ուտում, բայց միևնոյն ժամանակ երկար աղօթքներ են կարդում: Նրանց դատաստանն էլ այդ վարմունքների համաձայն պէտք է լինի»:

Ի՞նչ է անցնում Երուսաղէնում, յայտնի չէ: Այսքանը միայն պարզ է, որ ժողովուրդը կարճ ժամանակուայ ընթացքում երես է դարձնում Յիսուսից: Քահանայապետների ներկայացուցիչները, Փարիսեցիների և Դպիրների հետ միասին, անշուշտ կարողացել էին համոզել ժողովրդին Յիսուսի ձեռնարկութեան վտանգաւորութիւնը և ժողովրդի հասկացողութեան դէմ լինելը: Յատկապէս ծանր ազդեցութիւն կարող էր գործած լինել Յիսուսի այն միտքը, թէ հրէական ժողովրդի թշնամին ո՛չ թէ Հռովմայեցիք են, այլ տաճարը: Բոլորը նրան «Դաւթի որդի» էին անուանել Երուսաղէմ մտած օրից. «Դաւթի որդի» էին կանչում նրան երեխաները տաճարի մէջ, բայց նա խորտակել էր ամբողջ մեսիական ակնկալութիւնները:

Յիսուսի համար քանի գնում այնքան պարզ էր դառնում, որ պարտութիւն պէտք է կրէ: Բայց հաւատացողը հեշտութեամբ յետ չի կանգնում դրած նպատակից: Եւ ահա, բուռն ներքին պայքարից յետոյ, Դանիէլի գրքի մէջ արտայայտուած ակնկալութիւնների համաձայն, նրա մէջ այն համոզմունքն է առաջ գալիս, որ երկրի վրայ յաղթուածին Աստուած պէտք է նորից երկնքից ուղարկէ, դատաստան անելու իւր ժողովրդի վրայ: Այն ժամանակ կգայ Մեսիայի օրը և այս տաճարի աւերակներից առաջ կգայ մի նոր աստուածապաշտութիւն, մի նոր ժողովուրդ, Աստծուն հաճելի:

Աշակերտների համար էլ պարզ էր, թէ ինչպիսի հսկայական համարձակութիւն էր թոյլ տուել իրեն իրենց վարդապետը: Նոքա էլ զգում էին վերահաս վտանգը, և ահա երբ Յիսուսը դուրս է գալիս տաճարից, ցոյց են տալիս նրան տաճարի ամուր շինուածքը և ասում. «Վարդապետ, տե՛ս, ի՛նչպիսի քարեր են և ի՛նչպիսի շինուածք»: Իսկ Յիսուսը պատասխանում է. «Քարերի մեծութեա՞նն էք նայում, քարը քարի վրայ չի մնայ, որ չքանդուի»: Իսկ երբ նրա աշակերտները հարցնում են թէ ե՞՞րբ պիտի լինի այդ, Յիսուսը նրանց առաջ մի պատկեր է նկարում մութ ապագայի մասին: Ինքը պէտք է մեռնի. երկիւղ, աղմուկ և շփոթութիւն պէտք է ընկնի ամբողջ ժողովրդի և նրա աշակերտների մէջ. նոր սուտ մեսիաներ պէտք է հանդէս գան և երկպառակութիւն մտցնեն ժողովրդի մէջ, նեղելով Յիսուսի հետևողներին: «Զգոյշ կացէ՛ք, որպէս զի ձեզ ոչ ոք չմոլորեցնի: Ձեզ դատի պիտի մատնեն, թշնամանքի և արհամարհանքի իմ պատճառով, և ով որ մինչև վերջը համբերել կարողանայ, նա

երջանկութիւն կգտնի: Ճշմարիտ են ասում ձեզ, այս սերունդը չի վերջանայ, մինչև որ այս բոլորը կկատարուի. երկինքն ու երկիրը կանցնին, բայց իմ խօսքերը չեն անցնի: Միայն դատաստանի ժամանակը ոչ ոք չգիտէ, բացի Հօրից: Այնպէս յանկարծակի պիտի գայ այն օրը, ինչպէս ջրհեղեղը. այդ պատճառով արթուն կացէ՛ք և զգոյշ եղէ՛ք, քանի ժամանակ կայ»:

«Ինչպէս որ մի մարդ ճանապարհ է գնում, տունը թողնելիս՝ ծառաներին պատուէր է տալիս իրենց աշխատանքը կատարելու և դռնապանին էլ արթուն լինել է հրամայում, այնպես էլ ես ասում եմ ձեզ. «Արթուն կացէ՛ք, որովհետև չգիտէք, երբ կգայ տան տէրը. երեկոյեա՞ն, կէս գիշերի՞ն, աքլորականչի՞ն, թէ՞ առաւօտը: Եթէ նա յանկարծ գայ, քնած չգտնի ձեզ: Բայց ինչ որ ձեզ եմ ասում, ասում եմ բոլորին՝ արթուն կացէ՛ք»:

Ջատկից երկու օր առաջ քահանայապետներն ու դպիրները վերջնականապէս որոշում են Յիսուսին բռնութեամբ սպանել: Միայն մի շաբաթ ժամանակ է մնում նորան. խորամանկութիւնը պահանջում է, որ այդ բանտը տօնի ժամանակ տեղի չունենայ, որպէս զի ժողովրդական խռովութեան առիթ չլինի:

Բայց մի անսպասելի միջադէպ փոխում է նրանց ծրագիրը և նրանք որոշում են շուտով գլուխ բերել արինահեղութիւնը: Նազովրեցու աշակերտներից մէկը՝ Կերիոթցի Յուդան առաջարկում է նրանց փողով, գիշեր ժամանակ, յամենայն դէպս ժողովրդից հեռու, հնարաւոր դարձնել իւր Տիրոջ կալանաւորումը:

Ե՞րբ էր Յուդան Յիսուսի աշակերտների շարքն անցել, յայտնի չէ: Նրա հայրենիքը՝ Կերիոթը գտնուում էր Յուդայի երկրում. գուցէ Յուդան, միակ ոչ Գալիլիացի աշակերտը, ամենից վերջն էլ միացել էր Յիսուսին, երբ նա վերջին անգամ Երուսաղէմ գնալիս մտել էր Յուդայի երկիրը: Աւետարաններից մէկն ասում է, թէ նա գ ո ղ էր. միայն դրանով էլ կարելի է բացատրել նրա կատարած մատնութեան գործը:

Յիսուսն արդէն կարծես նախազգում է վտանգը. նա տեսնում է, որ Կերիոթցին հաւատարիմ աշակերտ լինել չի կարող: Յուդան դեռ ևս ականատես էր, թէ ի՞նչպէս Բեթանիայում՝ բարեկամ Սիմօնի տանը, մի յարգող կին վերջին անգամ թանգագին իւր լցնելով նրա գլխին՝ իւր յարգանքն է արտայայտում: Երբ որ աշակերտների մի մասի մէջ տրտունջ է առաջ գալիս, թէ կարելի էր դրա փոխարէն 300 դինար ստանալ աղքատների համար, Յիսուսն ասում է նրանց. «Թոյլ տուէ՛ք, ի՞նչ էք ուզում այդ կնոջից. նա մի բարի գործ արաւ իմ նկատմամբ. աղքատները միշտ ձեզ հետ են և բարիք

անել կարող էք նրանց, երբ որ ուզենաք. բայց ես միշտ ձեզ հետ չեմ. նա ինչ որ կարող էր , այն էլ արեց»:

Սա վերջին հանդիսաւոր րոպէն էր, հրաժեշտից առաջ: Յուդան թողեց գնաց, իշխանաւորների հետ իւր առուտուրը վերջացնելու: Մի անգամ էլ նա վերադարձաւ աշակերտների շրջանը: Իսկ երբ Յիսուսը մի անգամ էլ մենակ մնաց 12-ի հետ, ստիպուած զգաց իւր հոգու վերքը բաց անելու և յայտնելու, որ այն կնոջ զոհաբերութեան սատանայական հակադրութիւնը տեսնում է իւր աչքի առաջ.

դ աւ ա ճ ա ն ու թ իւ ն ` իւր ի ս կ աշ ա կ եր տ ն եր ի շր ջ ա ն ու մ :

Յիսուսի համար պարզ էր, որ իւր բանը վերջացած է. այդ պէտք է իմանային նաև աշակերտները: Այժմ կարևոր էր մահուան հրաժեշտը տօնելը և մահը յաղթահարելը: Պէտք էր տօնել իբրև մի զոհաբերութիւն, որ լրացնում է ժողովրդի համար կատարած գործը. պէտք էր յաղթահարել, այն վստահութեամբ, որ այդ զոհաբերութիւնը ո՛չ թէ պէտք է բաժանէ նրան իւրայիններից, այլ պիտի սրբագործէ Աստուծոյ նոր դաշինքը իւր ժողովրդի հետ, վերջ դնելով պասէքի դաշինքին, որ նոյնպէս սրբագործուած էր զոհի արեամբ: Եւ այս նոր դաշինքը, որի ժամանակ Աստուծոյ արքայութեան վերջնական գալստեան. դորանով նա իւրայինների հետ միացած կլինի յաւիտեանս: Եթէ Յիսուսը խոյս տար այն զոհից, որ Աստուած պահանջում էր նրանից, ամեն բան կորած կլինէր: Ամեն բան ձեռք կբերուէր, եթէ նա անյողոյող դատուցանէր իւր զոհը: Որովհետև այս կամաւոր մահը մի այնպիսի լեզու կխօսի, որ, աւելի զօրաւոր, քան թէ կենդանի մնացածի բոլոր խօսքերն ու գործերը, կարող է մոլորուած խիղճը ուղղել, թմրածներին արթնացնել, աշակերտների սիրտը վստահութեամբ լցնել և հակառակորդներին յաղթահարել:

Նիսանի 14-ին, անխմոր հացի տօնի առաջին օրը, երբ իւրաքանչիւր տուն Պասէքի գառն է զենում, պատրաստել է տալիս նաև Յիսուսը, օրէնքի համաձայն, նոյնը բարեկամներից մէկի տանը: Բայց ինչ որ նա այդ առթիվ պիտի յայտնէ, իրերի նոր կարգաւորութիւնն է:

Երեկոյեան ուտելու ժամանակ՝ Յիսուսը կամենալով դաւաճանութիւնը դատապարտել և սիրոյ հաղորդակցութիւնը բաժանել ուրացողից, ասում է. «Ճշմարիտն եմ ասում, ձեզնից մէկը, որ ինձ հետ ուտում է, պէտք է մատնէ ինձ»: Յուզուած գոչում են հաւատարիմները մէկը միւսի յետևից. «Մի՞թէ ես եմ»: «Մէկը ձեզնից, որ ինձ հետ միասին ձեռք մեկնում է դէպի կերակուրը: Այո՛, ես պէտք է գնամ, ինչպէս որոշուած է. բայց վա՛յ այն մարդուն, որ պէտք է մատնէ ինձ. աւելի լավ կլինէր նրա համար, եթէ ծնուած չլինէր»:

Ապա իւրայինների սիրտն ու միտքը կարմիր արիւնոտ մեղքի անդունդներից դէպի մաքուր, աստուածային մտքի բարձունքները հանելու համար, վեր է կենում, վերցնում է բաղարջը և Աստուծոյ փառք տալով կտրում է, տալիս է իւրայիններին և ասում. «Առէ՛ք, այս է իմ մարմինը»: Այդպէս պէտք է կոտրուի այժմ նրա մարմինը. բայց այդ մահից աստուածային զօրութիւններ պիտի բղխեն շատերի փրկութեան համար:

Դարձեալ մի նոր աղոթքով վերցնում է նա վերջին բաժակը կարմիր գինով և շրջեցնում սեղանակիցների մէջ. «Այս է իմ նոր ուխտի արիւնը, որ թափում է շատերի համար: Ճշմարիտն են ասում ձեզ, այլ ևս չեն խմի խաղողի բերքից, մինչև նոր կխմեն Աստուծոյ արքայութեան մէջ»: Այժմ բռնի մահուան արիւնն է հոսում, շուտով՝ երջանիկ կեանքի ուրախութեան գինին, նոր ուխտի երջանիկ ժողովրդի մէջ:

Դրանից յետոյ վեր են կենում և ճանապարհ ընկնում դէպի Ձիթենեաց սարը: Յիսուսը, ամբողջովին խորասուզուած իւր մտքերի մէջ, նայում է իւր աշակերտներին, որ նրան վերջին անգամ ուղեկցում են, և տեսնում, թէ ինչպէս տատանում են և ճեղքում իւր շուրջը բոլոր մարդկային նեցուկները, ի՛նչպիսի թոյլ անօթներ են իւր հոգու համար այս աշակերտները: Մինչև անգամ Պետրոսը, ամենից ոգեւորուածը հետևողների մէջ, պիտի կարողանա՞յ դիմանալ գալիք հալածանքների մէջ. «Սիմո՛ն, Սիմո՛ն. ասում է նա սրան, _ տե՛ս, սատանան ուզում է ձեզ էլ իւր իշխանութեան տակ առնել, ցորենի նման խախալելու համար. բայց ես քեզ համար խնդրել եմ, որ քո հաւատը չպակասի. և դու երբ յետ կդառնաս, սի՛րտ տուր քո եղբայրներին»: -Տէ՛ր, ասում է Պետրոսը, քեզ հետ պատրաստ եմ մինչև մահ գնալ: -Ասում են քեզ, հէ՛նց այս գիշեր, հաւը չխօսած, կուրանաս ինձ:

Վերջապէս՝ կամենալով ոյժ ներշնչել միւսներին, ասում է նրանց. «Երբ ես ձեզ ուղարկեցի առանց մաղախի և կօշիկների, որևիցէ պակասութիւն ունեցա՞ք»: Նոքա պատասխանեցին. «Ո՛չ մի»: Իսկ այժմ, շարունակում է Յիսուսը, -կամենալով նախապատրաստել նրանց գալիք նեղութիւնների, թշնամութիւնների և դառն պայքարի հանդէպ-, այժմ ով մաղախ ունի, թող վերցնի. իսկ ով չունի, թող վաճառէ իւր վերարկուն և սուր գնէ. որովհետև, ասում են ձեզ, ինչ որ ինձ է վերաբերում, պիտի կատարուի:

Աշակերտները կարծում են, թէ նա այդ թոպէի մասին է մտածում և զէնք է ուզում՝ թոպէ առ թոպէ սպասուող հակառակորդների դէմ. այդ պատճառով երկու սուր են բերում, գուցէ զոհի դանակներ, և ցոյց տալիս Յիսուսին: Այն ժամանակ Յիսուսը «բաւական է» ասելով՝ կարճ կերպով կտրում է խօսակցութիւնը: Նեղութիւնը կսովորեցնէ նրանց, թէ ինչ պէտք է անել:

Մթութեան մէջ թողեց Յուդան հեռացաւ: Միւսները Տիրոջ հետ հասան Գեթսեմանի պարտէզը: «Կացէ՛ք այստեղ, ասում է Յիսուսը, մինչև ես աղօթեմ». և վերցնելով Պետրոսին, Յակովբոսին և

Յովհաննէսին, սկսում է վերջին յուսահատական պայքարը իրեն հետ: «Տրտում է հոգիս մինչև մահ, մնացէ՛ք այստեղ և արթուն կացէ՛ք». և գիշերային լռութեան մէջ, նրանց ականջին հնչում է մի քանի քայլ հեռացած Յիսուսի աղօթքը: Ծունկ խոնարհած աղաչում է նա Աստծուն, որ այս ժամը այնուամենայնիւ անցնի իրենից, եթէ հնարաւոր է. «Աբբա՛, Հայր, ամեն ինչ հնարաւոր է քեզ համար. հեռացրո՛ւ ինձանից այս բաժակը, բայց ո՛չ թէ ինչպէս ես, այլ ինչպէս դու ես ուզում»: Երկու անգամ լսում են մտերիմները այս աղօթքը. բայց մինչև Աստուծոյ Որդին խաղաղութեան մէջ շարունակում է իւր մարդկային պայքարը մահուան սարսափի դէմ, վերջին օրերի յուզումներից և չափազանց լարումից յոգնած աշակերտները սկսում են ննջել. նմանապէս Պետրոսը: «Սիմո՛ն, դու ննջու՞մ ես. չկարողացա՞ր մի ժամ արթուն մնալ. արթուն կացէ՛ք և աղօթեցէ՛ք, որ փորձութեան մէջ չընկնիք»:

Յիսուսի համար այժմ արդէն վերջնականապէս պարզուած էր, որ մարգարէն նահատակ պէտք է լինի և ճշմարտութիւնը յաղթում է իւր վկայի արեամբ: Սակայն թէև նրա հոգին յօժար է, բայց մարմինը տկար: Երեք անգամ Յիսուսը յոգնածներին արթնացնում է. երրորդ անգամ, երբ արդէն վճռական րոպէն հասել էր: Այն ժամանակ նա հաւաքում է իւր բոլոր աշակերտներին և ասում նրանց. «Ահա մեղաւորների ձեռքն են տրւում ես. վեր կացէ՛ք, երթանք. տեսէ՛ք, գալիս է մատնիչը»:

Յիրաւի շուտով դրանից յետոյ գալիս է Յուդան տաճարի պահապանների մի զինուած խմբի հետ և նախօրօք որոշուած նշանի համաձայն՝ Ռաբբի կոչելով և համբուրելով մատնում է իւր վարդապետին՝ Յիսուսին նրանց ձեռքը: Մի թեթև կռուից յետոյ, որի ժամանակ աշակերտներից մէկը քահանայապետի ծառայի ականջն է կտրում, Յիսուսը մնում է կալանաւորուած՝ թշնամիների ձեռքում, իսկ բոլոր աշակերտները փախչում են: Միայն Պետրոսն է հետևում իւր կալանաւորուած վարդապետին մինչև Կայիափա քահանայապետի տունը, ուր ծերակոյտի մի մասը դեռ սպասում էր սկսած գործի վախճանին: Բանը յաջող էր: Ահա բերում են Նազովրեցուն: Որքան կարելի է շտապով դատաստանի ատեան են կազմում: Մահուան վճռի դէպքում պէտք է ներկայ լինէին գոնէ ծերակոյտի 23 անդամները. բայց անկարելի չէ, որ այս պատասխանատու, ծանր խնդրում ամբողջ ծերակոյտը, բացի քահանայապետից 70 հոգի, դատավարութեանը մասնակցելու կանչուած լինին:

Մինչ Յիսուսը տան ներսումն է, բակում սպասում է Պետրոսը, թէ ի՞նչ է լինելու այս բոլորի վերջը: Նրա արածը մի յանդգնութիւն էր, որի պատճառը մի կողմից սէրն էր դէպի Վարդապետը, միւս կողմից մի քիչ առաջ զօրեղ կերպով շարժած անձնասիրութիւնը: Բակի մէջ կրակ է արած և շուրջը բոլորել են Կայիափայի ծառաներն ու տաճարի պահակախմբից մարդիկ: Պետրոսն էլ մօտենում է նրանց կրակի մօտ տաքանալու:

Յանկարծ նրան ճանաչում են. ամենից առաջ մի աղախին, որ նրան լաւ դիտելուց յետոյ՝ երկու անգամ երեսին ասում է, թէ դու էլ Գալիլիացի Յիսուսի հետ էիր: Նրան միանում են միւսները. Ի հարկէ դու էլ նրանցից ես. լեզուդ էլ մատնում է քեզ, որ Գալիլիացի ես:

Պետրոսը յամառութեամբ և երդումներով ուրախացաւ: Այդ մարդուն ես չեմ ճանաչում: Այդ խօսքերն ասելիս անշուշտ նա լսեց իւր ներսում Յիսուսի ասածը, որ նախագուշակել էր բոլորը, բայց այդ ձայնից աւելի զօրեղ էր երկիւղի զգացումը: Նրա երդումները շփոթեցրին շրջապատողներին և նա կարողացաւ փախուստ տալ: Դուրս գնալուց յետոյ, նա դառն կերպով լաց եղաւ:

Լուսաբացին սկսուեց դատավարութիւնը ծերակոյտի առաջ:

Ամենից կարևորն այն էր իշխանաւորների համար, որ դատը հնար եղածին չափ շուտ վերջանար: Հակառակ իրենց նախկին մտադրութեանը՝ նրանք համարձակուել էին տօնի եռուն ժամանակ ձերբակալել Գալիլիացուն: Վաղուց էին իրենք մահուան դատապարտել նրան: Շուտով պէտք է ընկնի նա, եթէ այդ անկումը հաստատ է լինելու:

Հրէական արդարադատութիւնը պահանջում է երկու օրուայ դատավարութիւն՝ մահուան վճիռ կայացնելու դէպքում: Բացի դրանից դեռ պէտք է հռովմէական իշխանութիւնն էլ վճիռը հաստատէր: Այդ բոլորին սպասել երկար կքաշէր:

Հրէական արդարադատութեամբ Յիսուսին կարելի էր մահուան դատապարտել թէկուզ միայն նրա համար, որ նա բոլոր ժողովրդի առաջ հայիոյել էր տաճարը՝ աւագակների որջ անուանելով այն: Բայց Պիղատոսն ինքը տաճար կողոպտող է. կհաստատէ՞ նա այդ հիման վրայ կայացրած մահուան դատավճիռը:

Վերջապէս՝ հրէական հասկացողութեամբ Մեսիա լինելու վստահութիւնը առհասարակ յանցանք չէր կարող համարուել. ու՞ր մնաց թէ մահուան պատժի արժանի:

Միայն մի կերպ կարելի է շուտով և հաստատապէս նպատակին հասնել: Նազովրեցուն պէտք էր Հռովմայեցու դատաստանին յանձնել՝ իբրև կայսերական վեհափառութեան դէմ յանցանք գործողի: Մի սոսկական հրէայ, նա համարձակուել էր իրեն թագաւոր հրատարակել Երուսաղէմում և արքայական պատիւներ էր ընդունել: Կարո՞ղ էր Պիղատոսն այդ բանն անուշադիր թողնել և նրան ծանր կերպով չպատժել: Հարկաւոր էր միայն, որ Յիսուսը ծերակոյտի առաջ իւր բերանով ասէր, թէ ինքը հրէաների թագաւորն է: Այն ժամանակ Պիղատոսն ստիպուած պէտք է լինի իրենց լսելու: Եթէ դիմադրէ, կսպառնան նրա վրայ գանգատ ուղարկելու Հռովմ: Նա չի կարող չլսել իրենց:

Մեղադրութեան ծրագիրն այնպէս լաւ էր կազմուած, որ հարցաքննութիւնն այժմ շատ կարճ կարող էր լինել: Մի նախադասութիւն էր պէտք լսել նրա բերանից և ապա գործն անմիջապէս յանձնել բարձրագոյն ատեանին:

Երբ ծերակոյտի միջից կալանաւորուածի դէմ շատ մեղադրանքներ են յարուցանում, բայց չեն կարողանում վկաների համերաշխ ցուցումներով ապացուցանել, վեր է կենում քահանայապետը և վերջին, ամեն ինչ վճռող հարցն է առաջարկում. «Դու Մեսիա ես, Բարեբանեալի Որդին»:

Եւ Յիսուսն ասաց. «Ես եմ. և դուք կտեսնէք մարդու որդուն նստած զօրութեան աջ կողմը, ամպերի վրայով գալիս»:

Իսկ Քահանայապետն ասաց. էլ ի՞նչ վկայութիւն է պէտք մեզ:

Վ ճ ո ու ա ծ է:

Կալանաւորին պէտք է շղթայակապ տանել կուսակալի մօտ, իբրև պետական յանցաւորի:

Պիղատոսը, որ առհասարակ Կեսարիա քաղաքում էր նստում, զատկի տօնի պատճառով անձամբ Երուսաղէմ էր եկել: Ամեն կողմից, հեռուից և մօտից ժողովուած անհամար հրէաների մէջ կենդանի խռովութեան ու ապստամբութեան ոգին այդ էր պահանջում, զգուշութեան համար:

Արագութեամբ տարածուած է գիշերային յարձակման և Յիսուսի ձերբակալութեան լուրը քաղաքում և առաւօտը ժողովրդի մի մեծ բազմութիւն դիմում է դէպի հռովմէական կուսակալի պալատը: Այստեղ ծերակոյտի պատգամաւորները բանակցում են Պիղատոսի հետ: Նրանց գործը յաջողում է, որովհետև ո՛չ միայն կարողանում են մարդասպան Բարաբբասին արձակել տալ, այլ և, մեծ դժուարութիւններից յետոյ, վճիռ են անել տալիս «Բոլոր սրբութիւնների թշնամի» Նազարէթցի Յիսուսի դէմ:

Ամբողջ գործին Պիղատոսը սկզբից մինչև վերջը վերաբերում է հեզնութեամբ և պարզ արհամարհանքով դէպի հրէական ժողովրդի առաջնորդներն ու ծերակոյտի անդամները: Նրա տպաւորութիւնն Յիսուսի մասին այն է, որ նա մի ցնորամիտ երևակայող է, միանգամայն անվտանգ հռովմէական պետութեան համար: Ի՞նչ թագաւոր կարող է լինել այդ գունատ, տանջուած Գալիլիացին: Պէտք է ազատ թողնել նրան:

Բայց հեշտ չէ քահանայապետներին հակառակելը. մանաւանդ կենդրոնական իշխանութեան ցանկութիւնն է համերաշխ լինել նրանց հետ: Այդպիսի մտքերը փոխում են Պիղատոսի տրամադրութիւնը և ահա նա տեղի է տալիս իրեն արհամարհած ամբոխի աղաղակների առաջ և որոշում է կատարել նրանց պահանջը: *Արժէ՞ մի հասարակ Գալիլիացու համար վտանգել իւր դրութիւնը Հրէաստանում:*

Պիղատոսը դատապարտում է Յիսուսին, որին անմեղ էր գտել, ամենաանարգ մահուան՝ խաչի վրայ: Փայտի վրայ կախուածը համարում է Աստուծոյ կողմից նզովուած: Բայց հրէաները փայտից կախում էին միայն մեռցրածի դիակը: Կենդանի մարդուն փայտից կախելը հռովմէական պատիժ էր, յատկապէս կայսերական վեհափառութեան դէմ յանցանք գործողների համար:

Պատիժն իրագործելու տեղ ընտրում են Գողգոթան, մի բլուր, որպէս զի հեռուից տեսնեն բոլորը կախուած դիակը և սարսափ զգան:

Հռովմէական սովորութիւնն էր դատապարտուածին գանակօժել, կախելուց առաջ: Շատերը չէին դիմանում և մեռնում էին այդ տանջանքներից: Յիսուսը դիմանում է բոլորին և ուժասպառ,

առանց իւր խաչափայտը կրել կարողանալու, որ ստիպում են տանել պատահական անցորդ Կիրենացի Սիմոնին, բարձրանում է դէպի Գողգոթա: Այստեղ նրան խաչ են հանում, երկու կողքից երկու աւազակներ: Երկու ձեռքերի մէջ ամրացրած տախտակի վրայ գրուած էր նրա յանցանքը, որի համար մեռնում էր. «Հրէաների թագաւորը»: Մի ծաղրական մակդիր Հռովմայէցու կողմից թէ՛ Յիսուսի իրեն և թէ՛ հրէական մեծամեծների համար: Այնուամենայնիւ հրէաները ծաղրում են խաչուածին, որ ուրիշներին փրկելուց յետոյ, իրեն ազատել չէր կարողանում. «Թող իջնի խաչից Իսրայէլի թագաւորը, որ տեսնենք ու հաւատանք»:

Նրա վերջին խօսքերն էին. «Էլի՛, էլի՛, լա՞մա սաբաքթանի», որ նշանակում է՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչու՞ թողուր ինձ: Շուրջը կանգնած հրէաները կարծում էին, թէ Եղիային է կանչում:

Աշակերտներին ո՛չ ոք ներկայ չէր: Մայրն ու եղբայրներն էլ չկային: Յարգող կանանց մի խումբ հեռուից դիտում էին Վարդապետի վերջին ըոպէները. ամենից առաջ Մարիամ Մագթաղենացին:

Պիղատոսը թոյլ է տալիս, որ Յիսուսի բարեկամներից մէկը, Յովսէփ Արեմաթացին, դիակը ամփոփէ գիշերը վրայ հասնելուց առաջ, սեպիական գերեզմանոցում:

Վարդապետի մահից մի քանի օր յետոյ, նրա հաւատարիմները կրկին սկսում են ժողովուել: Գալիլիացի հետևողներն էլ միասին են, կորցրած Վարդապետին յիշելու համար:

Այդտեղ երևում է նրանց Յիսուսը:

Յիսուսը երևացել է միայն իւրայիններին: Մատթէոսի աւետարանը պատմում է, որ Յիսուսի մահուան ժամանակ՝ մեռելները դուրս են եկել իրենց գերեզմաններից և տեսնուել են Երուսաղէմի փողոցներում: Յիսուսի մասին աւետարանն այդպիսի բան չի պատմում: Միայն հաւատն է տեսել նրան:

Ամենից առաջ Յիսուսը երևաց Պետրոսին, ապա՝ մտերիմ աշակերտներին, յետոյ՝ միանգամից 500 հաւատացեալների, ապա՝ Յակոբոսին և ի վերջոյ մի անգամ էլ բոլոր առաքեալներին: Այդպէս է պատմում Պօղոս առաքեալը և աւետարանները, բացի Մարկոսից, լրացնում են այս տեղեկութիւնը զանազան տեսակ: Մի կէտում սակայն ո՛չ մի տարբերութիւն չկայ: Այդ այն է, որ բոլոր առաքեալների համոզմամբ էլ այդ ներքին տեսիլները, որոնց բացատրութեան համար իբրև օրինակ կարող է ծառայել Պօղոս առաքեալի տեսիլը Դամասկոսի ճանապարհին, որ միայն ինքն էր տեսել, բայց ո՛չ իւր

շրջապատողները, փառաւորուած Մեսիայի կենդանութեան ակնյայտնի արտայայտութիւններն են, որով աստուածային յաղթողը յաղթահարում է մահը:

«Յ ի ս ու ս ն ի ս կ ա պ է ս յ ա թ ո թ ի լ ն է ա ռ ե լ»: Նորա հետևողներն ապրում են այդ հաւատով, կապուած իրենց Տիրոջ հետ և սպասելով նրա գալստեանը, մինչև որ, նրա մահից յետոյ եկող առաջին Պենտեկոստէին՝ այդ հաւատից ծնունդ առաւ Երուսաղէմում Յիսուսի առաջին համայնքը:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ՈՒ ԲՆՈՒՅԹԸ*:

* Մի հատված “Փիլիսոփայական պատմության” այն դասընթացից, որ կարդացել է հեղինակը Գևորգյան Ճեմարանում 1907/08 և 1908/09 ուսումնական տարում:

Քրիստոնեական եկեղեցու, մասնավորապես նրա դավանանքների կազմավորման համար, շատ մեծ կարևորություն ունի միջնադարյան քրիստոնեական փիլիսոփայության ընդհանուր զարգացումն ու բնույթը:

Ջանազան կրոնական հասկացողությունների պայքարից հաղթող դուրս գալով, քրիստոնեությունը մեծ ազդեցություն է գործում մաև ժամանակի փիլիսոփայության վրա, որի հետևանքով արևմտյան փիլիսոփայությունը դարեր շարունակ քրիստոնեական ծառայության մեջ է մտնում: Այդ փիլիսոփայությունն այժմ իր գլխավոր նպատակը տեսնում է քրիստոնեական հավատո դավանանքների բացատրության և հիմնավորման մեջ: Դրա պատճառը հետևյալն էր:

Երբ որ ազգերի գաղթականությունը ոտի տակ տվեց և կործանեց հռովմեական պետությունը և վերջինս քաղաքական ուժ չունեցավ դիմադրելու հյուսիսային բարբարոսներին, այն ժամանակ գիտական քաղաքակրթությունն էլ կործանման վտանգի մեջ ընկավ, որովհետև այն ցեղերը, որոնց ձեռքն անցավ այժմ իշխանության դեկը հասկացողություն չունեին ո՛չ փիլիսոփայական նուրբ գաղափարների և ո՛չ էլ հունական գեղարվեստի գեղեցիկ ստեղծագործությունների մասին: Իսկ անտիկ քաղաքակրթությունն էլ այնպես բաժան-բաժան եղած էր ներքուստ, նրա կենսունակությունն այնպես էր խորտակված, որ նա անընդունակ էր բիրտ հաղթողներին իրեն աշակերտ դարձնելու:

Այդպիսով, հունական ոգու ստեղծագործությունները անհետ կերպով կորստյան մատնված կլինեին, եթե հին աշխարհի խորտակման հետ միաժամանակ մի նոր հոգևոր գորություն առաջ եկած չլինեիր, որին ենթարկվեցին հյուսիսի որդիները և որը կարողացավ ամուր ձեռքով քաղաքակրթության բարիքները ընդհանուր ավերածության և խորտակման դարերում անկորուստ պահպանել ապագայի համար: Ինչ որ չկարողացավ անել պետությունը, արեց կրոնը: Գերմանները, որոնց համար դեռևս անմատչելի էին գեղասիրության հայեցողության նուրբ ազդեցությունները և գաղափարական մտածողությունները, իրենց խորին զգացմամբ ցնցվեցին ավետարանի քարոզից, որ իր աննման պարզության ամբողջ թափով ազդեց նրանց վրա:

Միայն կրոնական այդ զգայացունց հուզմունքի շնորհիվ այժմ Եվրոպայի ազգերը սկսեցին հին գիտությունը յուրացնելու գործողությունը: Միայն եկեղեցու միջոցով նոր աշխարհը աշակերտելու գնաց հնի մոտ: Այդ հարաբերության բնական հետևանքն այն էր, որ անտիկ քաղաքակրթության հոգևոր բովանդակությունից սկզբում այն կենդանի մնաց, ինչ որ մտել էր քրիստոնեական եկեղեցու վարդապետության մեջ. իսկ այն, ինչ որ հակառակ էր նրան, անողոք կերպով դուրս մղվեց: Այդպիսով, իհարկե, նոր ազգերի, դեռևս շատ բան չըմբռնող և չմարտող, զգացմունքի ու մտքի համար խառնաշփոթության ճանապարհը իմաստուն կերպով փակվեց, բայց շատ հոգևոր արդյունքներ

խորասուզվեցին անթափանց խավարի մեջ, որից նրանք շատ դարեր հետո դառն աշխատանքով ու համառ կռվով միայն կրկին հանդես բերվեցին:

Այդ մեծ նպատակը՝ եվրոպական ազգերի մտավոր կրթությունը, եկեղեցին կարող էր գլխավորապես այն պատճառով իրագործել, որ նա կրոնական մի փոքրիկ համայնքի աննկատելի սկզբնավորությունից հետզհետե զարգանալով, զորեղ կազմակերպություն էր դարձել և միակ իշխանությունն էր, որ քաղաքական կյանքի անկման շրջանում էլ հաստատուն և ինքն իր ուժերի վրա վստահ մնաց: Մանավանդ որ այդ կազմակերպության առաջնորդող սկզբունքն այն էր, թե եկեղեցու կոչումն է ամբողջ մարդկությանն ընծեռել փրկությունը և, բնականաբար, ուրեմն նա իր գործը պիտի համարի բարբարոսների կրոնական կրթությունը: Դրանով քրիստոնեական եկեղեցին գերմանական և ռոմանական ազգերին միջոց տվեց հույների ժառանգությունն ստանալու:

Սակայն միջնադարը գիտության նկատմամբ ունեցած ներքին հարաբերության մեջ հույներին ճիշտ հակառակ ճանապարհ բռնեց: Հնում գիտությունն առաջ էր եկել զուտ ճանաչողական կարիքից և միայն հետագայում հետզհետե ծառայել էր գործնական կարիքների, բարոյական նպատակների և կրոնական կարոտի զգացման զարգացմանը: Միջին դարը սկսվում է ճանաչողության բոլորովին գիտակցական ստորադասությամբ հավատի մեծ նպատակներին: Այստեղ գիտության նպատակն է մտքի աշատանքով պարզել և գաղափարներով արտահայտել այն, ինչ որ մարդը հաստատուն և անվիճելի կերպով ունի զգացմունքով և ներքին համոզմունքով: Բայց հենց այդ մտավոր աշխատանքի ժամանակ հետզհետե արթնանում է, սկզբում անվստահ ու ամոթխած, ապա ավելի զորեղ ու ինքնավստահ կերպով, զուտ ճանաչողական կարիքը, որ նախ իր ուժն է փորձում հավատի պատկերացումների շրջանակից հեռու գտնվող ասպարեզներում և ապա կրկին հաղթական կերպով հանդես է գալիս որոշելու և հակադրվելու միմյանց գիտության ու հավատի, փիլիսոփայության և աստվածաբանության սահմանները:

Որովհետև եկեղեցու նպատակն էր իր վարդապետությունը գիտական սիստեմի վերածել, հիմնավորել ու զարգացնել (Օգոստինոս), այդ պատճառով էլ միջնադարյան փիլիսոփայությունը՝ այդ նպատակին հետևելով, ստեղծում է եկեղեցական դպրոցական գիտությունը կամ սքոլաստիկան: Բայց որովհետև նրա մեջ դեր է կատարում նոր-ալլատոնական այն սկզբունքը, որ ըստ էության կրոնական համայնքի վրա չէ ուշք դարձնում, այլ նպատակ ունի ճանաչողության միջոցով անհատին երջանիկ հաղորդակցության մեջ դնել աստվածության հետ, այդ պատճառով միջնադարյան փիլիսոփայության մեջ շատ մեծ դեր է կատարում նաև միստիկան: Այդ երկուսը՝ սքոլաստիկան և միստիկան, լրացնում են իրար, առանց մերժելու միմյանց: Միայն թե սքոլաստիկան գլխավորապես ուղղափառ է եղել, իսկ միստիկան ավելի հակումն է ունեցել հերետիկոսական ուղիով ընթանալու:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում միջնադարյան փիլիսոփայության առաջին շրջանը կամ պատրիստիկան (եկեղեցական հայրերի) փիլիսոփայությունը, որի բովանդակությունը քրիստոնեական աստվածաբանության կազմած դավանական շենքի հաստատումն է, մի շենք, որի կազմավորման մեջ շատ մեծ դեր է կատարել տարածված փիլիսոփայական աշխարհայացքի հետ ունեցած փոխադարձ շփումը: Այս շրջանում փիլիսոփայությունը ներկայանում է միայն որպես աստվածաբանության օժանդակ մի գիտություն: Այդ շրջանն սկսվում է առաքելական կոչված հայրերի գրվածքներով՝ Ա. և Բ. դարերից և իր նշանավոր ներկայացուցիչներով տևում է մինչև Ե. դարը, բայց դեռ մինչև Թ. դարն էլ երկրորդական եկեղեցական հայրերի միջոցով պահպանելով իր որոշ ազդեցությունը:

Տեսնենք, ուրեմն, համառոտակի, թե ինչ էր այդ՝ պատրիստական փիլիսոփայություն կոչված իմաստասիրության էությունը:

Պատրիստական դարաշրջանի աշխարհայացքի կենտրոնն են կազմում Քրիստոսի անձնավորության և նրա վարդապետության մասին եղած ավանդությունները: Այդ վարդապետության հիմքը հրեական միաստվածությունն էր, իսկ այն զորությունը, որ նրան բարձր էր դասում և տարբերակում էր բոլոր այն ժամանակ եղած կրոնական պատկերացումներից, մի կողմից այն վստահությունն էր դեպի Աստծու սերն ու շնորհը, որ միայն նրան է հատուկ, մյուս կողմից՝ ապագայի հույսերը, որոնցով նա հավատացյալներին անտարբեր է դարձնում արտաքին կյանքի բոլոր փոփոխական պատահարների հանդեպ: Այս կրոնը հետզհետե տարածվելով անտիկ քաղաքակրթության և գիտության ծանոթ կրթված դասակարգի մեջ, փոխադարձ հարաբերության մեջ է մտնում ոչ միայն իր շուրջն եղած բազմազան կրոնական պաշտամունքների, այլ հատկապես նաև ժամանակակից կրթության վրա իշխող հունական փիլիսոփայության հետ: Սրանից նոր կրոնին է անցնում զանազան գաղափարներ, ինչպես **լոգոս, նուս**, որոնք սահմանակից լինելով նրա սեփական փիլիսոփայական ըմբռնումներին, ձուլվում են և կարիքի համաձայն գործադրվում ու փոփոխությունների ենթարկվում: Այստեղ ավելանում են նաև այնպիսի բաղկացուցիչ տարրեր, որոնց դիրքն անորոշ է - Պլատոնի իդեաների ուսմունքը, նոր-պլատոնականների էմանացիայի պատկերացումները, ստոյիկյան բարոյագիտությունը, Արիստոտելի միաստվածությունը,-այս բոլորը մի փիլիսոփայական աշխարհայացք է կազմում, որ շատ մասերով ցեղակից է քրիստոնեական պատկերացումներին, ուրիշ կողմերով կասկածելի է թվում կամ ուղղակի հակառակ է նրան: Այդպիսով, քրիստոնեական հավատո դավանանքների զարգացման ընթացքում ամենագլխավոր գործոններից է դառնում անտիկ փիլիսոփայության հետ վարած բանակռիվը և այն փոխադարձ հարաբերությունը, որի ժամանակ քրիստոնեությունը կամ ընդունում է կամ մերժում փիլիսոփաների վարդապետությունները: Հավատո ուսմունքները դավանանքի բնավորություն են ստանում

առհասարակ փիլիսոփայության հետ ունեցած այս հարաբերության պատճառով, որովհետև այդ առթիվ եկեղեցու վարդապետների համար էլ անհրաժեշտ պահանջ է դառնում իրենց համոզմունքները փիլիսոփաների նման որոշ բանաձևերով արտահայտել:

Ժամանակի փիլիսոփայության հետ ունեցած այս հարաբերությունն է, որ քրիստոնեության քաղաքակրթական կրոնի բնավորություն է տալիս՝ բառիս ամենավեհ իմաստով. սա մի կրոն է, որը բնության կրոնների նման առաջ չի եկել միայն կրոնական զգացմունքի ընդհանուր և բնական մոտիվներից, այլ այդ զգացմունքի և ժամանակի ամբողջ քաղաքակրթության ամենազլխավոր գործոնների միմյանց հետ ունեցած փոխադարձ հարաբերությունից: Քրիստոնեության կուլտուրական կրոն լինելն արտահայտվում է նաև նրանով, որ հավատի դավանանքների զարգացումը տեղի է ունենում ոչ միայն դրսի, արտաքին պաշտամունքների և փիլիսոփայական վարդապետությունների հետ ունեցած անընդհատ մրցմամբ, այլ շատ անգամ նաև լրություն է գտնում հենց քրիստոնեական համայնքների մեջ մղված մի ներքին կռվով, որի ժամանակ, սակայն, հատկապես առանձին դեր են կատարում հին փիլիսոփայությունից առաջացած ազդեցությունները: Որովհետև հենց այդ ազդեցություններն են, որոնք շատ հաճախ առիթ են դառնում տարբեր հայացքների և այդպիսով նաև հերձվածների կազմության քրիստոնեական եկեղեցու մեջ: Կարծիքների այս տարբերության և հերձվածների հակառակ՝ քրիստոնեական համայնքների մեջ վաղուց կարիք էր զգացվում մի ընդհանուր դավանական նորմի, որ ամենից առաջ արտահայտություն է գտնում և իրականություն դառնում առանձին նշանավոր եկեղեցական հայրերի անձնական ազդեցությամբ, ապա՝ երբ որ քրիստոնեությունը պետական կրոն է դառնում, պետության ազդեցությամբ և, վերջապես, երբ եկեղեցին իր սեփական կազմակերպությունն է առաջ բերում, նրա ազդեցությամբ: Այս կարևոր իրողությունը շատ մեծ նշանակություն է ստանում եկեղեցու դավանական գործունեության համար: Դեպի միևնույն նպատակն է ձգտում այդ գործունեությունը, որքան էլ որ տարբեր անձնավորությունների շնորհիվ առաջ եկած լինի այն: Այդ հիմնական նպատակը, դեպի որը ձգտում է սկզբից ևեթ իր փիլիսոփայական բովանդակությամբ եկեղեցու ամբողջ դավանական գործունեությունը, բոլորովին պարզ կլինի, եթե համենատենք այն ներգործությունների հետ, որ անտիկ փիլիսոփայության զանազան ուղղությունների միջոցով այստեղ ազդեղություն են գործում և միևնույն ժամանակ կանոնավոր կերպով իրենց արտահայտությունն են գտնում քրիստոնեական հերձվածների վիճաբանությունների մեջ:

Պատրիստական ժամանակի փիլիսոփայական մտածողության զարգացման ընդհանուր բնավորությունը, որչափ որ այն արտահայտություն է գտնում տիրող դարձած և հակադիր հայացքների մեջ հաղթական դուրս եկած դոգմաներում, բոլորովին համապատասխան է վերևում նկարագրած դրությանը: Այն ժամանակվա տիրող ուղղություններից մեկի նպատակն էր հավատի

դավանանքը ռացիոնալական դարձնել, մյուսը կամենում էր նրան մի հայեցողական, երևակայությանը մատչելի միստիկական ձև տալ: Բայց այդ բոլոր ձգտումներին հակառակ հաղթական ուսմունքի վերջնական ձգտումն է մնում՝ պահպանել հավատքի դավանանքը իբրև բացարձակ միստիկական բան, որը ո՛չ բանականության միջոցով ըմբռնվել և ո՛չ էլ երևակայության միջոցով հայեցողության առարկա լինել և պատկերացվել կարող է: Ռացիոնալիստական և Ֆանտաստիկ-միստիկական ըմբռնմանը ուղղափառ վարդապետությունը հակադրում է զուտ միստիկական հասկացողությունը: Սակայն այստեղ, ինչպես ասացինք, գործ ունենք անտիկ փիլիսոփայության ազդեցությունների հետ, որոնց շնորհիվ առաջ են գալիս թե՛ ռացիոնալ դարձնելու փորձերը և թե՛ ֆանտաստիկական միստիկան: Ռացիոնալիզմն առաջին դարերում հենվում էր Արիստոտելի փիլիսոփայության վրա, որ իր միաստվածության գաղափարով նման էր հրեական ըմբռնմանը Աստծու մասին: Շատ բան էլ ստոյիկյան վարդապետությունից է դրդում այդ ուղղությամբ գնալ, մանավանդ որ ստոյիկյան բարոյագիտությունն էլ հաճախ համապատասխանում է քրիստոնեականին: Իսկ ֆանտաստիկական միստիկան, բացի արևելյան կրոնական պաշտամունքներից, այս շրջանում հիմնվում է մեծ մասամբ նոր-ալատոնական փիլիսոփայության և նրա նման քրիստոնեական գնոստիկյանների հայացքների վրա: Ուղղափառ հավատը հակառակ է գնում այդ երկու ուղղությանն էլ. նա չի կամենում ո՛չ բանականությամբ ըմբռնել և ո՛չ էլ երևակայության միջոցով պատկերացնել, այլ ձգտում է պահպանել մի զուտ միստիկական, բացարձակ անըմբռնելի և աննկարագրելի իդեա: Դրանով էլ նա փիլիսոփայական տեսակետից ևս առանձնահատուկ բնույթ է ստանում հին փիլիսոփայության այդ ուղղությունների հանդեպ: Սակայն այդ առանձնահատկությունը շնորհողը մի որոշ դրական միտք չէ, այլ թե՛ ռացիոնալիզմի, և թե՛ ֆանտաստիկական միստիկայի միաժամանակ մերժումը: Բայց այդ տարբեր ուղղությունների դեմ մղվող պայքարից մի բան ևս պարզվում է, որ դրանք իսկապես իրար ավելի նման են և համապատասխան, քան թե նրանցից որևէ մեկը վերև հիշված զուտ անըմբռնելի ու աննկարագրելի միստիկային: Ռացիոնալիստն ավելի կհամաձայնի ֆանտաստիկական բացատրություն թույլ տալ, քան բոլորովին կիրաժարվի նրանից: Այդ պատճառով էլ Տերտուլիանոսի «Credo quia absurdum est» (Հավատում եմ, որովհետև արևուրդ է) արտահայտությունը ուղղված է իսկապես երկուսի դեմ էլ, միաժամանակ թե՛ ռացիոնալիստների, և թե՛ ֆանտաստիկական միստիկների, և շատ հաջող բնորոշում է պատրիստական մտածողության գլխավոր ձգտումը: Հիրավի, քրիստոնեական եկեղեցու բազմաթիվ հերձվածներից մեկի՝ Արիոսի և նրա հետևողների ուսմունքի մեջ պարզ կերպով միասին ազդեցություն են գործել այդ երկու մոտիվները՝ ռացիոնալիստականը և ֆանտաստիկականը: Բայց արիոսականությունը դատապարտվում է և այնուհետև բոլոր դավանական վերջնական վճիռներն այն ուղղությամբ են արվում, ինչպես որոշվել էր Նիկիայի

տիեզերական ժողովում 325 թվականին, այդպիսով պահպանելով քրիստոնեական հավատի համակարգի մեջ ներքին հետևողականությունը:

Քրիստոնեական փիլիսոփայությունը միմյանց հետևից լուծում է այս զուտ միստիկականության հիման վրա կրոնական մետաֆիզիկայի գլխավոր պրոբլեմները՝ կոսմոլոգիականը (տիեզերաբանականը), թեոլոգիականը (աստվածաբանականը) և էթիկականը (բարոյագիտականը): Բնության կրոնները ամեն տեղ տիեզերաբանական պրոբլեմի հանդեպ են դնում արարչագործության առասպելներ, որոնց միջոցով արարչագործությունը պատկերացվում է իբրև սկզբից ևեթ եղած մի նախանյութի՝ քաոսի, կարգավորություն: Նույն գաղափարի ներկայացուցիչ էր նաև Պլատոնը իր առասպելական-փիլիսոփայական ստեղծագործության ուսմունքով Տիմեոսի մեջ: Նորպլատոնականությունը սկզբնական կարգավորության փոխարեն դնում է էմանացիան-տիեզերքի բխումն աստվածությունից, որով նյութը (մատերիան) էլ արարչագործության շնորհիվ առաջ եկած մի արտադրություն է դառնում: Արարչագործությունը, սակայն, մի զգայական պրոցես է, որի պատճառով էլ միջնորդ էություններ են ընդունվում՝ Աստծու զուտ հոգևոր էությունը մարմնավոր աշխարհի հետ կապելու համար: Մյուս կողմից՝ մենք տեսանք, որ Արիստոտելը տիեզերքի հավիտենականությունը ընդունելով և աստվածային էության անսահմանությունը փոխանցելով տիեզերքին, մեջտեղից բոլորովին վերացնում էր ստեղծագործության գաղափարը: Այս բոլոր գաղափարները դեր են կատարում քրիստոնեական փիլիսոփայության սկզբնավորության մեջ, հատկապես, էմանացիայի պատկերացումները նկատելի են գնոստիկյանների և Կղեմես Ալեքսանդրացու ուսմունքի մեջ, իսկ տիեզերքի հավիտենականության գաղափարի ներկայացուցիչն է իր ժամանակի ամենամեծ քրիստոնյա գիտնական Օրիգենեսը: Սակայն եկեղեցու մեջ երկրորդ դարից սկսած իշխող է դառնում Լիոնի եպիսկոպոս Իրենիոսի քարոզած այն վարդապետությունը, որ տիեզերքը ստեղծվել է ոչնչից: Սա մի զուտ միստիկական գաղափար էր, որ թույլ չէր տալիս ո՛չ հայեցողական և ո՛չ էլ բանականությամբ ըմբռնելի բացատրություն, բայց Աստծու ըմբռնումը ավելի վեհ, տիեզերքի ստեղծագործության իրողությունը ավելի հսկայական և գերմարդկային էր դարձնում:

Նույն ուղղությամբ է լուծում եկեղեցին նաև աստվածաբանական պրոբլեմը: Այստեղ ամենաէական հարցն այն է, թե ինչ հարաբերության մեջ է Աստված միջնորդ էությունների՝ Քրիստոս-լոգոսի և նուսի կամ Սուրբ Հոգու հետ: Այժմ ևս մի կողմից հանդես են գալիս գնոստիկականության և ապա արիոսականության մեջ էմանացիայի պատկերացումները, որոնք ցեղակից էին քրիստոնեության ըմբռնումներին: Շնորհիվ միջնորդության գաղափարի՝ գնոստիկյանների հասկացողությամբ տիեզերքն ստեղծելուց առաջ աստված ստեղծել է Լոգոսին և նուսին, այնպես որ նրանք մի տեսակ ստորադաս, աստծուց տարբեր միջնորդ էություններ են աստծու և աշխարհի միջև: Դրա համար էլ այս ուղղությունը սուբօրդինացիանիզմ՝ ստորադասության վարդապետության, մերթ

էլ հոմոյուզիայի՝ էության նմանության (ոչ նույնության-հոմոուզիայի) ուսմունք է կոչվել: Մյուս կողմից՝ քրիստոնեական աշխարհի վրա ազդեցություն են գործում միիշխանական (մոնարխիանիզմ) զանազան հերձվածները, կամ այն ուսմունքը, որ Արիստոտելի և հրեական միաստվածության նման քարոզում էր աստծու բացարձակ միիշխանությունը: Այս ուսմունքի համաձայն՝ Քրիստոսը կամ իրական մարդ է եղել, ուրեմն աստծուց միանգամայն տարբեր, կամ լոգոսն ու նուսը պետք է միևնույն աստվածության տարբեր երևույթներ համարվեն: Սակայն այս զանազան ուղղությամբ ընթացող բացատրության փորձերն էլ վերջնականապես հետ են մղվում Նիկիայի (325 թ.) ժողովում ընդունված Աթանասյան երրորդության դավանանքով, որ քարոզում է աստվածության երեք անձնավորությունների հոմոուզիան էության միությունը կամ նույնությունը. մի միություն տարբերության մեջ (երեք անձինք և մի բնություն, մի աստվածություն), որ բոլորովին մերժում է ամեն հայեցողական կամ գաղափարական (բանականության վրա հիմնված) բացատրություն, բայց ընդառաջ է գնում հավատի այն կարիքին կամ պահանջմունքին, որ ցանկանում է երեք գաղափարները միևնույն վեհության մեջ տեսնել և հակառակում է նրանց լիովին միացմանը՝ երկյուղ կրելով, թե դրանով կպակասի մեկի կամ մյուսի կրոնական արժեքը: Այդ պատճառով էլ պատահականություն չպետք է համարել այն հանգամանքը, որ դոգմայի այդ ձևին հաղթություն պարգևող Աթանասը ոչ թե եկեղեցու գիտնական գլուխներից էր, այլ իր պայքարի ժամանակ երրորդության գաղափարի համար, ամենևին նկատի չառնելով նրա փիլիսոփայական տեսակետից ըմբռնելի չլինելը, լոկ հետևում էր իր ներքին կրոնական ձգտմանը:

Երրորդության դավանանքի օրինակի համաձայն էլ լուծվում է քրիստոսաբանական պրոբլեմը: Քրիստոս երկու թե մեկ բնություն ունի և ինչ հարաբերություն ունեն նրանք իրար հետ: Եկեղեցին որոշում է, որ դրանք միացած են միևնույն անձնավորության մեջ. Քրիստոսը Աստված է, միաժամանակ և մարդ. ոչ մեկը երկուսից, բայց և յուրաքանչյուրը երկուսից:

Երրորդ, գործնական տեսակետից, ամենից ավելի կարևոր կրոնական պրոբլեմը բարոյագիտականն է (էթիկականը), որ շատ տարբեր կարծիքներից հետո իր վերջնական լուծումն է գտնում Օգոստինոսի փիլիսոփայության մեջ: Սրա փրկության ուսմունքն ևս մի լուծում է, որ բացարձակապես անըմբռնելի է բանականության համար: Այստեղ նա միացնում է երկու միմյանց բոլորովին հակասող գաղափարներ: Մի կողմից՝ մարդու կախումն Աստծուց, որ կրոնական կարիքն է պահանջում, մյուս կողմից՝ իր մեղքը գիտակցող զգացմունքի պահանջը, որ ինքն իրեն պատասխանատու է զգում իր հանցանքի համար: Երկու հակընդդեմ գաղափարներ, որոնց միացումը հնարավոր է դարձյալ միմիայն զուտ միստիկական ճանապարհով: Օգոստինոսը պրոբլեմը այն ձևով է լուծում, որ ուսուցանում է, թե մարդկանց սկզբնական ազատությունը հանցագործության շնորհիվ կորել է. այդ հանցագործության հետևանքներն իբրև ժառանգական

մեղք, հակառակ անհատների կամքին, շարունակում են իրենց գոյությունը, որովհետև առաջին մարդը, որի կամքն ազատ էր, ի չարը գործ դրեց այդ ազատությունը, և դրանով մարդկային ամբողջ բնությունն այնպես փչացավ, որ նա ուրիշ կերպ վարվել չի կարող, նա պետք է անպատճառ հանցանք գործի (*non posse non peccare*): Մի Ադամի մեջ մեղք է գործել ամբողջ մարդկությունը, և ամբողջ մարդկությունն էլ, առանց բացառության, նրա հետ միասին կորցրել է կամքի ազատությունը: Այսպիսով՝ ժառանգական մեղքը նախնական հանցանքի պատիժն է: Հենց դրանից էլ հետևում է, որ ամբողջ մարդկությունն էլ փրկության կարիք ունի: Բայց այդ փրկությունը լինում է ոչ թե մարդկանց սեփական գործերի կամ վաստակների պատճառով, այլ բացառապես աստվածային շնորհի ազդեցությամբ: Մարդը մինչև անգամ չի կարող սեփական ուժով բարի գործելու սկիզբը դնել, որովհետև ամենայն բարի միայն Աստծուց է գալիս: Այսպիսով, թե՛ հանցանքը, և թե՛ ներումը կատարվում է մարդկային հոգուց դուրս իբրև գերբնական պրոցես աստվածային շնորհաց միջոցով, հանցանքը, որովհետև առանձին անհատը սկզբից ևեթ, ի ծնե, նրա մեջ է նախամարդու պատճառով, շնորհը, որովհետև այն ընձեռվում է հանցավորին առանց սեփական վաստակի, լոկ Քրիստոսի փրկագործության միջոցով:

Այսպիսով, այս լուծումն ևս նպատակ ունի կրոնական կարիքին բավարարություն տալու, որովհետև նա ամենագորեղ արտահայտություն է տալիս թե՛ մեղքի գիտակցությանը և թե՛ առ Աստված ունեցած պարտավորությանը, որին ոչ մի ռացիոնալիստական բացատրությամբ հասնել չի կարելի: Այդ բանը պարզ կերպով երևում է այն վիճաբանություններից, որ այս փրկագործության ուսմունքի շուրջն առաջ եկան Օգոստինոսի և նրա հակառակորդ Պելագիոսի միջև: Որովհետև, իսկապես ռացիոնալիստական է Պելագիոսի այն միտքը, թե մեղավորը՝ մասնակից լինելով իր հանցանքին՝ բարի գործերի միջոցով պետք է մասնակից լինի նաև իր փրկության գործին: Այդ ուսմունքով մարդկային հանցանքի ու պատժի գաղափարների հարաբերակցությունը փոխանցված է Աստծու պետության մեջ: Իսկ Օգոստինոսի ուսմունքը միասնական է, որովհետև նա լիովին մերժում է ամեն նմանություն երկրային հարաբերությունների հետ և հանցանքի ու շնորհաց գիտակցությանը ամենագորեղ կրոնական արտահայտությունն է տալիս՝ բացարձակ նշանակություն վերագրելով մարդկանց մեղքին մի կողմից, և Աստծու շնորհին մյուս կողմից:

Որովհետև Օգոստինոսի պրոբլեմն այլևս այնպես բացարձակ կերպով տրանսցենդենտ չէ, ինչպես էին կոսմոլոգիականն ու թեոլոգիականը, քանի որ մարդու բնության խնդիրն է մեջտեղ գալիս, այդ պատճառով Օգոստինոսի մտածողությունն ավելի ու ավելի թեքվում է դեպի զուտ փիլիսոփայական պրոբլեմները: Հոգեբանությունը, մտածողության և կամքի, իմացության աղբյուրների և մարդկային գործունեության շարժառիթների խնդիրները հետազոտության նյութ են դառնում նաև անկախ իրենց կրոնական նշանակությունից: Պատրիստական շրջանի

աստվածաբանական մտահայեցողության վերջնական կետը լինելով՝ Օգոստինոսի սիստեմը իր մեջ միացնում է նաև այնպիսի իդեաներ, որոնք փիլիսոփայության հետագա զարգացման համար ամենակարևոր նշանակություն են ստանում: Այդպիսի, մասամբ նոր փիլիսոփայության մեջ վերսկսված, մտածողության եղանակն առաջ է գալիս նրանից, որ հին փիլիսոփայությունից վերցված գաղափարները Օգոստինոսն հարմարեցնում է քրիստոնեական հավատի համակարգին և նրանց ուրիշ բնույթ է տալիս: Դրանով դրական կատարելություն է գտնում հունական փիլիսոփայության և քրիստոնեական հավատի փոխադարձ ազդեցությունն ու խառնուրդը: Հելլենական լավագույն կրթություն ստացած այդ մեծ եկեղեցական հոր ջանքերով քրիստոնեական կրթության օգտին են ծառայեցվում հատկապես փիլիսոփայության այն տարրերը, որոնք ներքուստ ցեղակից էին քրիստոնեության աշխարհայացքին, իսկ փիլիսոփայության որոշ գաղափարներ միաժամանակ քրիստոնեական պատկերացումների ազդեցությամբ կարևոր փոփոխություններ են կրում և զարգացումն ընդունում: Բնականաբար, իբրև գաղափարներով քրիստոնեությանն ամենից ավելի մոտ, պլատոնական փիլիսոփայությունն է, որ սկսում է ազդեցություն գործել: Օգոստինոսի փիլիսոփայության մեջ ուշագրավ կերպով վերանորոգվում են մի կողմից՝ հատկապես Պլատոնի իդեաների ուսմունքը, մյուս կողմից՝ պլատոնական պետական կազմակերպության վարդապետությունը:

Պլատոնի իդեաների ուսմունքից Օգոստինոսն առանց այլևայլության վերցնում է իդեաների գերզգայական և նախօրինակային նշանակությունը, որ կարելի է ներդաշնակորեն միացնել քրիստոնեական աշխարհայացքին: Բայց երբ նա այդ նշանակությունը միացնում է քրիստոնեական արարչագործության գաղափարի հետ, իդեաները նրա համար դառնում են արարչի մտքերը արարչագործությունից առաջ: Աստծու մտքի մեջ արարչագործությունը ի հավիտենից անտի նախակազմված է: Այդպիսով, իդեաները զուտ հոգևոր (geistig) բովանդակություն են դառնում: Այս անցումն, իհարկե, որոշ չափով արդեն նախապատրաստված էր նոր-պլատոնականության էմանացիայի պատկերացումների մեջ: Բայց իդեաների բնույթը իբրև Աստծու զուտ հոգևոր մտքեր, պարզ կերպով կարող էր հանդես գալ միայն քրիստոնեական արարչագործության ուսմունքի ազդեցությամբ: Այդ ձևով՝ Օգոստինոսի իդեաների գաղափարը ճիշտ միջին տեղն է բռնում պլատոնական, բոլորովին օբյեկտիվ և այդ խոսքի կատարելապես սուբյեկտիվ դարձած արդի նշանակության մեջ: Օգոստինոսի իդեաները նախ սուբյեկտիվ են, ապա օբյեկտիվ, ի վերջո, նրանք կրկին սուբյեկտիվ են դառնում, երբ մարդկային մտքի մեջ որպես գաղափար են կազմում: Երբ մենք գաղափարներ ենք կազմում, արարչի իդեաների մասին ենք մտածում: Մտքերը Աստծու մեջ եղել են իրերից առաջ, մեր մեջ են նրանք իրերից հետո. միայն հայեցողությամբ գիտակցում ենք մենք նրանց:

Իդեաների նշանակության փոխվելով՝ փոփոխության են ենթարկվում նաև հոգու գաղափարը: Պլատոնի մոտ հոգին ինքը հատկություն ունի որոշ չափով ստեղծագործող միջնորդ էություն համարվելու, որ իբրև արարիչ գորություն կանգնած է իդեաների և զգայական աշխարհի միջև: Այդ գաղափարն իհարկե անկարելի էր հաշտեցնել քրիստոնեական աշխարհայացքի բացարձակ արարչագործության մտքի հետ: Բայց այստեղից էլ հեշտությամբ հոգին, իբրև մարդկային մտածողության և ճանաչողության հիմք, կարող էր այն իդեաներից մեկին փոխարկվել, որ Աստված մտածում է ստեղծագործությունից առաջ: Այդպիսով, հոգիներն անկախ սուբստանցներ են դառնում, իրեր, որոնք մտածում են Աստծու ստեղծագործող մտածողության մեջ: Դրանով փոփոխության է ենթարկվում նաև հոգու գաղափարի առանձնահատուկ բովանդակությունը: Հոգին այստեղ մի մտածող էակ է դառնում. ոչ թե, իրնչպես պլատոնական փիլիսոփայության մեջ էր, մարմնի կենսատու սկզբունք կամ տիեզերքի վրա փոխանցվելով՝ իբրև տիեզերական հոգի, առհասարակ նյութի կենսատու սկզբունքը: Ուրեմն, այստեղ հոգեկան այն կարողություններից, որ Արիստոտելն էր որոշել, նկատի ունենալով հոգու գաղափարն իբրև կյանքի սկզբունք, նշանակություն է ստանում միայն նուսը, մտածող հոգին: Իսկ իբրև մտածող էություն հոգին բոլորովին կապված է անհատական ինքնագիտակցության հետ: Այդպիսով, Օգոստինոսի սխտեմի մեջ տիեզերական հոգին ոչ մի տեղ չունի: Այս գաղափարի շնորհիվ Օգոստինոսը դառնում է արդի մտածողության սկզբնապատճառներից մեկը: Հոգին այն է, որ գիտակցում է ինքն իրեն: Այդ պատճառով էլ Օգոստինոսի փիլիսոփայական իմացության ելակետը, ինչպես հետագայում Դեկարտինը, գիտակցության կամ մտածողության ինքնավստահությունն է, որի վրա և հիմնվում է մարդկային հոգու մտավոր բնույթը: Գիտակցության ինքնավստահությունը նրա կարծիքով ստացվում է գլխավորապես կասկածելու գործողությամբ. եթե ես կասկածում եմ, գիտեմ, որ ես, կասկածողս, գոյություն ունեմ: Եթե ես մինչև իսկ ամեն բանի մեջ սխալվեմ, այդ բանում սխալվել չեմ կարող, որովհետև սխալվելու համար պետք է ես լինեմ, գոյություն ունենամ: Դրանով արդեն ստեղծված էր նորագույն գաղափարը հոգու մասին, որին թեև սքոլաստիկական Արիստոտելի փիլիսոփայության ազդեցության շնորհիվ դավաճանել էր, բայց որը նոր ժամանակի սկզբից սկսած իշխում է փիլիսոփայության մտածողության վրա: Այդ գաղափարի մեջ հենց այս ժամանակից առանձնապես շեշտվում է և մինչև վերջն էլ մնում նրա միակողմանի ինտելեկտուալիստական ձևը, որ բնականաբար հատուկ պետք է լիներ հոգու «մտածող էության» լինելու սահմանումին:

Պլատոնական փիլիսոփայության երկրորդ կարևոր մասը, որ Օգոստինոսի վարդապետության մեջ քրիստոնեական աշխարհայացքին հարմարեցվելով վերանորոգվում է, պլատոնական պետական կազմակերպության ուսմունքն է: Պլատոնը քարոզել էր մի իդեալական պետական կազմակերպության մասին, որի մեջ իմաստունները՝ փիլիսոփաները, պետք է իշխանությունը

վարեին: Բայց քրիստոնեական միջնադարի փիլիսոփան հոգևորականն է, իսկ այն բոլոր պարտականությունները, որ Պլատոնը դնում էր պետական կազմի մեջ, քրիստոնեական եկեղեցին իր ամենասրբազան պարտականությունն է համարում. այսպես՝ հոգու հպատակների մտավոր դրության, կրթության ու դաստիարակության, բարոյական կյանքի մասին, այլև նախապատրաստություն հանդերձյալ կյանքի համար: Այսպիսով, պլատոնական պետությունը ընդարձակվում դառնում է ընդհանուր մարդկային պետություն: Եկեղեցին Աստծու պետությունն է՝ «Civitas Dei», այդ պատճառով էլ նա պլատոնական պետության նման մարդկանց ստեղծածը չէ, այլ հիմնադրված է Աստծու կողմից: Այս աստվածային պետությանը, բնականաբար, պետք է ստորադասվի մարդկային պետությունը: Եկեղեցին իր աստվածային սկզբնավորության համաձայն՝ հավիտենական է և անսահման, իսկ աշխարհիկ պետությունը անցողական է, տեղական և ընդմիջ տենթակա է ազգային սահմանափակումների:

Այս խորհրդածություններին աստվածային և աշխարհիկ պետությունների հարաբերակցության մասին Օգոստինոսն իր «De Civitate Dei» գրվածքի մեջ տալիս է տիեզերական պատմության փիլիսոփայության մեջ մի ուրվագիծ, մի պատմության փիլիսոփայություն, որի մեջ դարձյալ ամենամեծ դերն է կատարում այն ընդհանուր աշխարհայացքը, դեպի որը մղում էր այս ասպարեզում էլ եկեղեցու գաղափարը: Օգոստինոսի այս պատմական ուրվագծի մեջ մտնում են երկրի բոլոր ազգերը. հեթանոսությունն էլ իր տեղն է գտնում նրա մեջ: Սակայն Օգոստինոսը լավ չի ըմբռնում հունական էությունը և արհամարհական դատողություններ է տալիս հռոմեական աշխարհի մասին: Տիեզերական պատմության իսկական թատերաբեմն ու նպատակը, նրա կարծիքով, հրեության ու քրիստոնեության պատմությունն է: Նրա կենտրոնը կազմում է Քրիստոսի հանդես գալը: Բոլոր առաջ եղածը նախապատրաստություն է նրա նկատմամբ, բոլոր հետո եղածը՝ լրացումն ու կատարելություն: Աշխարհի ստեղծագործության վեց օրերի համաձայն տիեզերական պատմությունն էլ վեց շրջանի է բաժանվում, որոնցից վերջինն սկսվում է Քրիստոսով և պիտի վերջանա վերջին դատաստանով, ապա պիտի իշխե ընտրյալների և նախախնամությամբ փրկվածների համար աստվածային շաբաթը կամ Տիրոջ խաղաղությունը, իսկ չփրկվածները պետք է վերջնականապես բաժանվեն սրբերից և մատնվեն անվերջ ահավոր տանջանքների: Այսպիսով, Օգոստինոսն իր գաղափարներով ամենակարևոր նշանակությունն է ստանում թե՛ հավատի դավանության ներքին բովանդակության համար և թե՛ եկեղեցական կազմակերպության և եկեղեցու կոչումն ու նպատակը որոշելու խնդրի մեջ: Հետագա դարերում նրա մտքերը շատ մեծ ազդեցություն են գործում ընդհանուր հասկացողությունների վրա: Եթե միջնադարյան եկեղեցու կազմակերպությունը շատ կողմերում հիշեցնում է մեզ Պլատոնի իդեալական պետությունը, դրա պատճառը, բացի պատմական պայմաններից առաջ եկած անհրաժեշտությունից, որոշ չափով նաև այն անմիջական ազդեցությունն

էր, որ թողել էր այս պլատոնական փիլիսոփայությամբ կրթված անձնավորության վրա Պլատոնի իդեալական պետությունը, երբ նա սկսել էր քրիստոնեական տեսակետով նկարագրել իր պատմության փիլիսոփայությունը և պետական կազմակերպության մասին ունեցած ուսմունքը:

Այս էր միջնադարյան պատրիստական փիլիսոփայության էությունը, որ մենք ուրվագծեցինք համառոտակի:

Անցնենք այժմ ՍՔՈԼԱՍՏԻԿԱՅԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆԸ

Սքոլաստիկական փիլիսոփայության տարբերությունը պատրիստականից ամենալավ կերպով բնորոշվում է այն բանաձևով, որ 11-րդ դարի ամենամեծ սքոլաստիկ փիլիսոփան՝ Անսելմուս Քենտրբերիացին է արտահայտել իր ձգտումների նպատակը ցույց տալու համար: Երկու ուղղությունների այդ փոխհարաբերությունը պարզ կլինի մանավանդ, եթե համեմատելու լինենք այս բանաձևը 2-րդ դարի վերջին Տերտուլիանոսի ասածի հետ, որ այնքան հակիրճ կերպով բնորոշում է եկեղեցական փիլիսոփայության ձգտումն ու նպատակը: «Credo quia absurdum est» եղել էր հին եկեղեցական հոր վարդապետությունը: Սքոլաստիկական աստվածաբանի բանաձևը դառնում է «Credo ut intelligam»: Սրա համար էլ առաջին տեղը բռնում է հավատը, բայց նրան անմիջապես հետևում է գիտությունը. ամբողջ ջանքն այստեղ այս է, որ ապացուցվի թե հավատի հայտնագործված ճշմարտությունները միևնույն ժամանակ բանականությունից բխող անհրաժեշտ իմացություններ են: Իսկ որովհետև հավաստի դավանության բովանդակությունը միանգամ ընդմիջտ հաստատուն է և որոշ, ամբողջ սքոլաստիկական փիլիսոփայության աշխատանքն էլ դեպի այդ նպատակն է դիմում:

Սքոլաստիկայի առաջին ծաղկման շրջանում՝ 11-րդ դարում, դա նրա միակ նպատակն է և նա բացառապես աստվածաբանություն է դառնում: Հենց պրոբլեմների գերբնական բնույթը, որի շուրջը նրանք կատարում են իրենց աշխատանքը, գրգռում և վարժեցնում է նրանց սրամտությունը: Այսպիսով, այս փիլիսոփայությունը այն մեթոդի գտնողն է դառնում, որ խոր ազդեցություն է գործել նաև նոր փիլիսոփայության զարգացման մեջ: Այդ մեթոդը օնտոլոգիական է, որ իրի ճշմարտությունը ձգտում է ապացուցել հենց իր իսկ գաղափարի միջոցով: Շատ բնական էր, որ ժամանակի փիլիսոփայությունը ինքն իրեն այդ մեթոդին հանգեր, որովհետև հավատի գերբնական առարկաների բնույթը բոլորովին գերզգայական (գերփորձական) լինելով՝ ուրիշ փաստարկում կամ

արգումենտացիա չէր կարող թույլ տալ, բացի զուտ գաղափարականից: 12-րդ դարի վերջից սկսած փիլիսոփայության մեջ հետզհետե ավելի մեծ ազդեցություն են ձեռք բերում աշխարհիկ շահագրգռություններ և 13-րդ դարում աստվածաբանության կողքին գլխավորապես բնափիլիսոփայությունն է, որ գիտության զբաղմունքի առարկա է դառնում: Աշխարհիկ շահագրգռությունների տարածվելուն օգնության է հասնում այն հանգամանքը, որ հետզհետե սկսում են ծանոթանալ, հատկապես 13-րդ դարի սկզբից, Արիստոտելի ֆիզիկական և մետաֆիզիկական գրվածքների հետ: Դրանով իհարկե կամաց-կամաց փոխվում է նաև փիլիսոփայության տեսակետը: Մտածողության եղանակը ավելի ռեալիստական և էմպիրիստական է դառնում: Դրա անմիջական հետևանքն այն է լինում, որ կասկածով են սկսում վերաբերվել հավատի դավանության օնտոլոգիական ապացույցներին: Մտածողության այդ եղանակը, ավելի ու ավելի տարածվելով ու ընդարձակվելով, 14-րդ դարում վերջապես մի սկեպտիկայի է հասնում, որ աշխարհի գիտության հարցերի նկատմամբ ընդհանրապես վերցրած գերադասում է փորձը, իսկ հավատի ճշմարտությունները հին եկեղեցական հասկացողության համաձայն պահպանել է ուզում որպես զուտ միստիկական և անըմբռնելի ճշմարտություններ: Այսպիսով, ուրեմն, մի տեսակ բաժանում է դրվում հավատի և գիտության սահմանների մեջ, և դրանով միևնույն ժամանակ ճանապարհ է հարթվում սքոլաստիկայի ոչնչացման և աշխարհիկ գիտությունների անկախ զարգացման համար, որ և նոր ժամանակի սկզբնավորության բնորոշ նշանն է: Սրա համաձայն սքոլաստիկայի ամբողջ զարգացումը կարելի է երեք շրջանի բաժանել. առաջին կամ այլատոնական սքոլաստիկայի ժամանակ, որ իր զարգացման գագաթնակետին է հասնում 11-րդ դարում. երկրորդ կամ արիստոտելյան սքոլաստիկայի ժամանակ, որին պատկանում է հատկապես 13-րդ դարը և, վերջապես, երրորդ կամ սքոլաստիկայի անկման ժամանակաշրջան, 14 և 15-րդ դարերը:

Հետագա ժամանակների սքոլաստիկներն այս երեք շրջանների փոխհարաբերությունը միմյանց հետ բնորոշել են բանաձևերով, որոնց մեջ արտահայտություն են գտնում այն տարբեր բացատրությունները, որ այս ժամանակաշրջաններում տվել են ընդհանուր գաղափարներին: Սքոլաստիկայի առաջին շրջանում, օրինակ, իշխող ուղղության տենդենցը կարելի է արտահայտել «*Universalia sunt realia*» բանաձևով: Այդ նշանակում է, թե ընդհանուր գաղափարները (*Universalia*) ներկայացնում են իրերի էությունը և այդ պատճառով էլ նախադրում են իրապես առարկաների գոյությունը և նրանց գաղափարները: Այդ ըմբռնողությունը համապատասխան է այլատոնական իդեանների ուսմունքի էական մտքին և իբրև հիմք է ծառայում օնտոլոգիական մեթոդին այն տեսակետով, որ վերջինս փորձում է զուտ գաղափարների միջոցով ապացույցել հավատի առարկաների իրականությունը, օրինակ, Աստծու գոյությունը: Մտածողության այս ուղղությունը ավելի է բնորոշվում «*Universalia sunt ante rem*» բանաձևով: Գաղափարները իրերից

առաջ են, քանի որ նրանք այն պայմաններն են, որոնց միջոցով իրերը գոյություն ունեն և մտածվել կարող են:

Երկրորդ շրջանը, ընդհանուր առմամբ, մնում է այն ըմբռնման վրա, թե իրերի էությունը հասկացվում է գաղափարների միջոցով, այդ պատճառով այժմ ևս գործածական է մնում «*Universalia sunt realia*» բանաձևը: Բայց իր առաջնորդող փիլիսոփայի՝ Արիստոտելի հետ միասին, այս սքոլաստիկական ընդունում է գաղափարների ներկայությունը (*Ymmanenz*) իրերի նյութական գոյության մեջ: Այդ պատճառով էլ վերև հիշված առաջին բանաձևը այստեղ ավելի պարզ կերպով բնորոշվում է մի երկրորդ՝ «*Universalia sunt in re*» բանաձևով: Երբեմն, սակայն, այս շրջանի տեսակետը այն ձևով է արտահայտություն գտնում, որ ընդհանուր գաղափարները (*Universalia*) եռատեսակ գոյության ունակ են դառնում: «*Universalia sunt ante rem*» բանաձևը ճշմարիտ է այժմ էլ, եթե նկատի է առնվում Աստծու մտքերը ստեղծագործությունից առաջ. ճիշտ է «*Universalia in re*» բանաձևը, եթե դիտենք իրերը, որովհետև նրանք կազմված են միաժամանակ նյութից և ձևից: Բայց ճշմարիտ է նաև «*Universalia post rem*» բանաձևը, երբ մտածում ենք այն գաղափարների մասին, որ մարդկային միտքն է կազմում զգայական իրերի ազդեցության շնորհիվ:

Սքոլաստիկայի երրորդ շրջանում, վերջապես, ճշմարիտ է համարվում միայն բանաձևը՝ «*Universalia sunt post rem*»: Գաղափարները գոյություն ունեն առհասարակ միայն մեր մտքում, իրերի մեջ նրանք բնավ գոյություն չունեն, նրանցից դուրս իհարկե, ևս առավել ոչ: Ընդհակառակը, նրանք ավելի մեր կատարած իրերի համեմատության արդյունքն են, որոնց մենք կոչում ենք ընդհանուր արտահայտություններով կամ անուն ենք տալիս: Այդ պատճառով էլ վերջին բանաձևին իր բովանդակությամբ լիովին համապատասխանում է «*Universalia sunt nomina*» բանաձևը:

Այս փոխհարաբերությունների համաձայն՝ առաջին շրջանի իշխող տեսակետը սովորաբար համարվում է «էքստրեմ ռեալիզմ», երկրորդ շրջանինը՝ «չափավոր ռեալիզմ» և երրորդ շրջանինը՝ «նոմինալիզմ»: Առանձնահատուկ նշանակություն են ստանում այս արտահայտությունները սքոլաստիկական փիլիսոփայության մեջ իրենց միակողմանի հարաբերությամբ դեպի գաղափարները. իսկ ընդհանուր առմամբ սքոլաստիկական չափազանց ռեալիզմը մոտավորապես նույնն է, ինչ որ այժմյան ռեալիզմը, իսկ նոմինալիզմը սկեպտիկական էմպիրիզմն է:

Սքոլաստիկայի առաջին շրջանում, որ էքստրեմ ռեալիզմի շրջան անվանեցինք, իշխող է մտածողության մի եղանակ, որ բոլորովին նման է պլատոնական իդեաների ուսմունքին. նկատվում է նաև մի թեթև զիջում դեպի նորպլատոնական պատկերացումները: Այստեղ նշանակություն ունի հատկապես այն հանգամանքը, որ հին փիլիսոփայությունից Արևմուտքին ավանդված սակավ նյութը մեծ մասամբ այնպիսի նորպլատոնականների միջոցով է գալիս, ինչպես Պորփյուրիոսն էր կամ նրանից օգտվող Բոեցիոսը: Այս ուղղության ամենանշանավոր ներկայացուցիչներն են Անսելմ

Քենտրբերիացին և Վիլհելմ Շամպոյեցին: Անսելմ Քենտրբերիացին օնտոլոգիական մեթոդի հնարողն է, որ իր այդ մեթոդով ոչ միայն Աստծու գոյությունը, այլև այնպիսի քրիստոնեական առանձնահատուկ հավատալիքներ է կամենում ապացուցել, ինչպիսիք են Երրորդության կամ փրկագործության գաղափարը:

Անսելմի, ինչպես և առհասարակ այս շրջանի մտածողության հիմնական սկզբունքները հետևյալներն են. ընդհանուր գաղափարները մի բուրգ են կազմում, որի գագաթնակետը՝ իբրև ամենից ավելի ընդհանուրը՝ աստվածության գաղափարն է, բայց վերացականացման այդ վերջին արդյունքը՝ բացարձակ ընդհանուրը անսահմանելի է, ուրիշ խոսքով՝ Աստծու մասին կարելի է միայն այն ասել, ինչ որ նա չէ: Այդ զուտ փիլոնական գաղափարը շարունակվում է, սակայն, այն ձևով, թե այս ամենաբարձր գոյությունը անեղ է, բայց միևնույն ժամանակ ստեղծագործող բնությունն է, որովհետև այդ ամենաընդհանուրը ստեղծում է իրենից իրերի բազմությունը, որոնք այդպիսով ուրիշ բան չեն, բայց եթե նրա երևույթը:

Այդպիսով, առաջ է գալիս մի տրամաբանական պանթեիզմ. աշխարհի բոլոր իրերը «աստվածահայտնություններ» են. աշխարհը նույնն է, ինչ որ Աստված, միայն զարգացած) իբրև փոփոխության առանձին երևույթները (Deus explicitus): Միևնույն բնությունը (ստեղծագործող միություն՝ Աստված է, իսկ իբրև ստեղծագործված բազմություն՝ աշխարհ: Իսկ Անսելմի օնտոլոգիական ապացույցը Աստծու գոյության մասին հետևյալն է. որքան ավելի է ընդհանրականությունը, այնքան ավելի է նաև իրականությունը: Դրանից հետևում է, որ եթե Աստված ամենաընդհանուր էական է, ուրեմն և ամենաիրականն է. եթե նա բացարձակ ընդհանուր էական է, ուրեմն և բացարձակ իրականն է՝ (ens realissimum): Այդպիսով, նա իր գաղափարի համաձայն, ոչ միայն համեմատական ամենամեծ իրականությունն ունի, այլև բացարձակ իրականությունը, այսինքն՝ մի իրականություն, որից ավելի մեծն ու բարձրը չի կարող մտածվել: Սակայն դրա հետ միացած են նաև կատարելության գնահատությունը: Գոյության աստիճանները կատարելության աստիճաններն են. որքան ավելի մի բան «է», այնքան ավելի կատարյալ է այն և ընդհակառակն՝ որքան կատարյալ է մի բան, այնքան ավելի «է» այն: Ամենաբարձր գոյության գաղափարը, ուրեմն միևնույն ժամանակ բացարձակ կատարելության գաղափարն է. մի կատարելություն, որից ավելի բարձրն ու մեծը չի կարող մտածվել՝ (ens perfectissimum).

Այս նախադրյալներից Անսելմը եզրակացնում է, որ լոկ Աստծու գաղափարից, իբրև ամենակատարյալ և ամենաիրական էակի, անհրաժեշտաբար հետևում է նրա գոյությունը: Քանի որ ընդհանրապես գոյություն կա, պետք է լինի մի ամենաբարձր և բացարձակ գոյություն, իսկ ինքը միայն իր միջոցով և իր էության շնորհիվ գոյություն ունի: Առանձին գոյությունները կարող են իբրև անգործ մտածվել և այդ պատճառով էլ իրենց գոյության իրականությանը պարտական են ոչ թե իրենց,

այլ մի ուրիշին՝ բացարձակին. իսկ ամենակատարյալը կարող է միայն իբրև գոյություն ունեցող մտածվել և այդպիսով գոյություն ունի իր սեփական բնության անհրաժեշտությունից: Այս ապացույցի հիմքը, գոն՝ ուրեմն ի վերջո էլեատական գլխավոր սկզբունքն է. («է» և չի կարող այլ կերպ մտածվել, քան թե գոյություն ունեցող:

Սքոլաստիկայի առաջին շրջանի մյուս նշանավոր ներկայացուցիչը, ինչպես ասացինք, Վիլիելմ Շամպոյեցին է, որ ռեալիզմի պաշտպան է հանդիսանում 11-րդ դարում, հակառակ Ռոսցելլինոսի, որի մոտ արդեն գլուխ է բարձրացնում նոմինալիստական մտածողության եղանակը, մի մտածողություն, որ հիշեցնում է պատրիստական ժամանակի ձգտումները Աթանասյան երրորդության գաղափարի դեմ ուղղված: Սքոլաստիկայի այս առաջին ծաղկման շրջանը բացառապես աստվածաբանական ուղղություն ունի: Մյուս գիտություններից միայն տրամաբանությունն է, որ Արիստոտելի տրամաբանական գրվածքների ուսումնասիրության շնորհիվ զբաղմունքի առարկա է դառնում:

Սքոլաստիկայի երկրորդ շրջանը բնորոշվում է նրանով, որ հետզհետե սկսում է զարգանալ հետաքրքրությունը դեպի աշխարհիկ գիտությունը և կամաց-կամաց պահանջ է առաջ գալիս աստվածաբանությունը լրացնել գիտության բոլոր ճյուղերը պարփակող մի փիլիսոփայությամբ: Հետաքրքրության այդպիսի ընդլայնումը հետևանք էր ժամանակի ընդհանուր քաղաքակրթական պայմանների: Բայց ավելի ևս ուժ ու զորություն էր ստանում այն Արիստոտելի գրվածքների ուսումնասիրությամբ, որ նախկին դարերի արաբական փիլիսոփաների (Ավիցեննա, Ավեռոես) թարգմանություններից լատիներենի էին վերածվում և վերջինների մեկնությունների շնորհիվ ավելի ևս մատչելի դառնում ժամանակի գիտական աշխարհին: Աշխարհիկ գիտություններից այս սքոլաստիկոս փիլիսոփաների գրվածքների մեջ ամենամեծ տեղն է բռնում բնական գիտությունները: Սակայն այս սքոլաստիկոսների բնագիտական գործերը լոկ Արիստոտելի ֆիզիկական գրվածքների մշակում ու մեկնություններն են, առանց սեփական ուսումնասիրություններ և դիտողություններ ավելացնելու, որ նրանց մտքով անգամ չի անցնում: Այդ հանգամանքը ուշագրավ է այն տեսակետից, որ ցույց է տալիս, թե ինչպիսի դժվարություն է ելնում նոր զարթնած բնագիտական հետաքրքրության դեմ ազատ կերպով արտահայտվելու, քանի որ մինչև այդ գիտության մեջ իշխել էին հեղինակությունները և զուտ գրական ուսումնասիրությունները: Այնպիսի դրություն ստեղծվում, որ ընդհակառակն՝ երբ իշխող մտածողությունից անկախ մնացած մարդիկ հիմնվում են սեփական ուսումնասիրությունների և դիտողությունների վրա, այդպիսիները առանց այլևայլության հերքված են համարվում Արիստոտելի հեղինակությամբ և անունով: Արիստոտելը Քրիստոսի նախակարապետն է համարվում բնական բաների մեջ (Praecursor Christi in rebus naturalibus). այդ

պատճառով էլ հակառակությունը նրա դեմ ճիշտ նույն ձևով խոտելի է և դատապարտելի, ինչպես հերետիկոսական վարդապետությունը քրիստոնեական ուղղափառ ուսմունքի դեմ:

Այս շրջանի ամենագլխավոր փիլիսոփաներն են ԺԲ դարում իբրև նախաշավիղ Աբելարդը, իսկ ԺԳ դարում Ալբերտուս Մագնուսը և հատկապես Թովմաս Աքվինացին, սքոլաստիկայի ամբողջ շրջանի ամենաազդեցիկ գրողը:

Աբելարդը, իր ժամանակի ամենանշանավոր և ամենից ավելի ազդեցություն ունեցող մտածողներից մեկը, ծնված 1079 թվականին և մեռած 1142-ին, Վիլիելմ Շամպոյեցու և Ռոսցելլինի աշակերտն էր: Սակայն հակառակ դուրս եկավ թե մեկին, և թե մյուսին և դարձավ ընդհանուր գաղափարների շուրջն առաջ եկած վեճի (Universalienstreit) կենտրոնը: Աբելարդի կարծիքով՝ ընդհանուր գաղափարները չեն կարող իրեր, բայց չեն կարող նաև լոկ խոսքեր լինել: Խոսքը (vox) իբրև հնչյուն ինքստինքյան եզակյա բան է. ընդհանուր նշանակություն կարող է ստանալ այն միայն միջնորդաբար, երբ արտահայտություն է դառնում (Aussage=sermo): Բայց խոսքն իբրև արտահայտություն կարող է գործածվել միայն շնորհիվ ըմբռնող մտածողության (conceptus), որը զգայական ճանաչողության բովանդակությունների համեմատությունից հանում է այն, ինչ որ ըստ էության հարմար է իբրև արտահայտություն գործածվելու: Ուրեմն ընդհանուրը գաղափարական արտահայտություն է (begriffliche Aussage=sermenismus) կամ հենց գաղափարն ինքը (Konseptualismus): Ավելի նշանավոր է Աբելարդը նրանով, որ նա իսկապես իր ժամանակի ազատ գիտության ներկայացուցիչը և նոր առաջ եկած սեփական, անկախ ճանաչողության մարգարեն: Աբելարդը գլխավորապես ռացիոնալիստ է. ճշմարտության նորման նրա համար մտածողությունն է, իսկ դիալեկտիկայի նպատակն է զանազանել ճշմարիտը ստից: Թեև նա էլ ընդունում է ավանդության շնորհիվ պահված հայտնությունը, բայց շեշտում է, թե մենք միայն այն պատճառով ենք հավատում աստվածային հայտնությանը, որովհետև բանական է այն:

Դիալեկտիկայի առարկան այն չէ միայն, որ նա հավատո բովանդակությունը մարդկային մտքին ըմբռնելի դարձնի, ինչպես Օգոստինոսի հետևողությամբ ըմբռնում էր Անսելմը, այլ նա իրավունք ունի նաև քննադատելու և կասկածելի կետերում որոշում կայացնելու իր օրենքների համաձայն: Այդպես, նա իր գրվածքներից մեկի մեջ միմյանց հանդեպ է դնում եկեղեցական հայրերի տարբեր կարծիքները, որպեսզի նրանք դիալեկտիկորեն ոչնչացնեն միմյանց և հավատալի մնա միայն այն, ինչ որ հնարավոր է միայն ապացուցել: Օրինակ «Դիալոգուս» վերնագիրը կրող գրվածքի մեջ իմացական բանականությունը համարում է կրոնների պատմության իդեալական վերջաբանը, դրանով շեշտում է հատկապես, որ քրիստոնեության բովանդակությունը պետք է համարվի միայն սկզբնական բարոյական օրենքը, որ վերանորոգել է Հիսուսը իր ամբողջ մաքրությամբ: Այդպիսով նա ազատ հայացք է ստանում նաև հին աշխարհն ըմբռնելու համար: Որչափ և քիչ բան գիտեր հույների

մասին, բայց հիացած էր նրանցով. նրանց փիլիսոփաներին համարում էր քրիստոնյաներ քրիստոնեությունից առաջ և Սոկրատեսի ու Պլատոնի նման մարդկանց ներշնչված ընդունելով՝ բնականաբար հարց է տալիս, թե արդյոք նրանցից չէ՞ առնված գոնե մասամբ քրիստոնեական ավանդությունը: Քրիստոնեությունը նրա համար հունական փիլիսոփայության ժողովրդականացումն է (Demokratisierung):

Այս շրջանի երկրորդ նշանավոր անձնավորությունը Ալբերտ Բոլլշտեդտացին էր (Albertus Magnus 1193-1280): Սրա փիլիսոփայությունը հասկանալու համար պետք է նկատի ունենալ ժամանակի այն շարժումը, որ արաբական փիլիսոփայությունից Արևմուտք անցնելով՝ ամենից ավելի զբաղեցնող խնդիրներից մեկն էր դարձել: Այդ խնդիրը բնական և հայտնագործված կրոնների հարցն էր: Փիլիսոփան, որ բնական կրոնին է հասել իր մտածողության շնորհիվ, տեսնում է միևնույն ժամանակ, որ այն, ինչ որ ինքը ճանաչել է պարզ կերպով գաղափարական մտածողությամբ, այն ունի պատմական մարդկությունը և հավատում է պատկերավոր խորհրդավորության մեջ: Մի խոսքով՝ առաջ է գալիս այն հասկացողությունը, թե երկուսի մեջ էլ արտահայտություն է գտնում միևնույն ճշմարտությունը տարբեր ձևերով: Տարբեր արտահայտությունների պատճառով հավատացյալները չեն ըմբռնում փիլիսոփայական կրոնի գաղափարները, իսկ փիլիսոփաները չեն կարողանում ճշմարտություն համարել հավատացյալների խորհրդավոր պատկերացումները: Եթե այդ դեպքում աստվածաբանությունը դրական կրոնի ուսմունքների կարգավորված և ջատագովված նկարագրությունն է գիտության ֆորմուլ-օրենքների-արիստոտելյան տրամաբանության համաձայն, այն ժամանակ առաջ է գալիս այն դրությունը, որ մի բան աստվածաբանության տեսակետից ճշմարիտ կարող է լինել, ինչ որ փիլիսոփայության տեսակետից սխալ է և ընդհակառակը: Այդ է իսկապես աստվածաբանական և փիլիսոփայական երկակի ճշմարտության ուսմունքը, որ տիրող է ամբողջ հետագա միջնադարում և մի համարժեք (ադեկվատ) արտահայտություն էր ժամանակի դրության, որի մեջ առանձնապես նկատելի է միջնադարյան երկու տարբեր հեղինակությունների՝ հելլենական գիտության և եկեղեցու ավանդությունների հակադրությունը:

Այդ հակադրության լիակատար գիտակցությամբ Ալբերտը մոտենում է իր գործին: Նա ըմբռնեց. որ այլևս անկարելի է մեջտեղից վերացնել բնական և հայտնագործված կրոնների տարբերությունը և անհնարին աստվածաբանության և փիլիսոփայության միացումը: Բայց նա հույս ուներ և բոլոր ուժով աշխատում էր, որ այդ տարբերությունը գոնե բացարձակ հակադրություն չդառնա: Նա մի կողմ դրեց աստվածաբանական միստիկաները, երրորդության ու մարդեղության վարդապետությունները ռացիոնալականացնելու փորձերը, բայց մյուս կողմից՝ սրբագրեց նաև փիլիսոփաների ուսմունքը այնպիսի կարևոր կետերում, ինչպես աշխարհի հավիտենականության կամ ժամանակավորության խնդիրն էր, և այսպիսով, մոտեցրեց այն եկեղեցական ուսմունքին: Նրա

նպատակն էր ցույց տալ, որ այն բոլորը, ինչ որ փիլիսոփայության մեջ ճանաչվում է «բնական լույսի» շնորհիվ, ճշմարիտ պետք է համարվի նաև աստվածաբանության մեջ. բայց միևնույն ժամանակ շեշտում էր, որ մարդկային հոգին միայն այն կարող է լրիվ ճանաչել, որի սկզբունքները նա իր մեջ ունի, այնպես որ, այնպիսի խնդիրներում, որոնց մեջ փիլիսոփայական ճանաչողությունը ոչ մի վերջնական եզրակացության գալ չի կարող և ստիպված է կանգնել զանազան կարելիությունների հանդեպ, վճռական նշանակություն է ստանում հայտնությունը: Հայտնությունը բանականությունից վեր է, բայց բանականության հակառակ չէ:

Նույն ուղղության հետող է նաև նշանավորագույնն սքոլաստիկոսը՝ Թովմաս Աքվինացին (1225/27-1274): Իր սրամտությամբ ու պարզ, որոշ մտածողությամբ, միևնույն ժամանակ սիստեմի վերածելու մեծ տաղանդ ունենալով՝ Թովմաս Աքվինացին աշխատում է միացնել և մի ընդհանուր աշխարհայացքի վերածել ժամանակակից փիլիսոփայությունն ու քրիստոնեական հավատի դավանանքները: Խնդիրը նրա համար շատ լուրջ էր և նա՝ ընդունելով Արիստոտելի աշխարհայացքը, չի ուզում ոչինչ կորցնել նաև հավատի դոգմաներից: Ամենից առաջ նա ընդունում է հունական փիլիսոփայության ըմբռնումը հոգու մասին: Մարդու բարձրագույն նպատակը ճանաչողությունը, իմացությունն է, որ մարդկանց դեպի երջանկություն է տանում. իսկ երջանկությունը Աստծու կատարյալ գիտությունն է: Դրա համաձայն էլ՝ մարդու էությունը ոչ թե կամքն է, այլ իմացությունը: Ինտելեկտն է, որ կամքին ուղղություն է տալիս և մտավոր բնույթ է դրոշմում, և հոգու ավելի բարձր կարողություն է, քան կամքը: Այդպիսով, հիմնական հայացքը դառնում է հունական ինտելեկտուալիզմը: Բայց մարդկային բանականությունը կամ փիլիսոփայությունը կարող է ինքն իրեն միայն կրոնի մի քանի ճշմարտություններն ընդունել, այն էլ անկատար ու դանդաղորեն: այստեղ մեջ է մտնում հայտնագործված ճանաչողությունը՝ այն լրացնելու և ավելի կատարյալ դարձնելու համար: Ամբողջ հայտնությունը պարունակված է Սուրբ գրքի մեջ, որ ներշնչված է Աստծուց: Աստված է նրա հեղինակը. այդ պատճառով էլ նա միակ հաստատուն և պարտադիր հեղինակությունն է, որի միջոցով մարդը վստահ կերպով կարող է ճշմարտությունը ճանաչել: Հավատո հանգանակը այդ ճշմարտությունների ժողովածուն է, որ հերետիկոսական կարծիքների ու բացատրությունների հանդեպ ապահովված է Նիկիայի և այլ ժողովների որոշումներով և Սուրբ հայրերի գրվածքներով: Հավատո ճանաչողությունը բանականությունից վեր է, դրա համար էլ հնարավոր չէ այն մարդկային բանականությամբ ապացուցել: Բայց աստվածաբանությունը պետք է հերքի հավատո հակառակորդներին և դավանանքները բացատրի ու հավանական դարձնի փիլիսոփայական ճանաչողության օգնությամբ, որին նրանք հակառակ լինել չեն կարող:

Հետաքրքրական է թովմաս Աքվինացու բարոյագիտությունը իբրև մի նշանակալից օրինակ այս շրջանի էկլեկտիկական փիլիսոփայության: Աշխարհիկ առաքինությունները նա, պլատոնական սիստեմի համաձայն, չորս գլխավոր առաքինությունների է բաժանում-հմաստություն, քաջություն, չափավորություն և արդարություն, բայց ընդունում է միևնույն ժամանակ և գործադրում նաև Արիստոտելի ուսմունքը միջին ճանապարհի մասին: Ապա՝ նրա կարծիքով, աշխարհիկ առաքինություններից ավելի բարձր են կանգնած Պողոս առաքյալի կամ աստվածաբանական առաքինությունները-հավատ, հույս և սեր:

Պետական կազմակերպության նկատմամբ թովմաս Աքվինացին հետևում է Օգոստինոսին և մեջ է բերում նրա աստվածպետության գաղափարը՝ Civitas Dei: Բայց նա փորձում է համաձայնեցնել այն միջնադարյան կայսրության և եկեղեցու հարաբերություններին: Դրանով պետությունը ավելի ընդհանուր, մասամբ եկեղեցուն ստորադաս, մասամբ համադաս նշանակություն է ստանում: Այդ հարաբերությունն արտահայտվում է այնուհետև սովորական դարձած արևի և լուսնի համեմատությամբ: Արևը եկեղեցին է, իսկ լուսինը՝ աշխարհիկ պետությունը: Չնայելով սակայն այդ հանգամանքին՝ դարձյալ թովմաս Աքվինացին, որ աշխարհիկ պետության ժամանակավոր և սահմանափակ բնույթը առանձին թափով շեշտում է՝ աստվածային պետության հավիտենականության հանդեպ: Այդպես վարվել նա կարող է այն պատճառով, որ աշխարհիկ պետության նկատմամբ ընդունում և գործադրում է դաշինքի գաղափարը:

Աքուստիկայի Գ շրջանի առաջնորդը իռլանդացի կամ նորթումբերլանդացի (որոշ չէ) Հովհաննես Դունս Սկոտուսն է (մոտ 1270-1308. այս թվին նա տեղափոխվում է Քյոլն և շատ շուտով մեռնում. առաջ գործել է Օքսֆորդում և 1304-ից սկսած Փարիզում): Արդեն ԺԳ դարու վերջին կամաց-կամաց գլուխ է բարձրացնում նոմինալիստական մտածողության եղանակը, որի առաջին արտահայտությունները երևում են թովմաս Աքվինացու և Դունս Սկոտուսի դպրոցների մաքառման մեջ: Այդ վիճաբանությունը շատ նման է այն պայքարին, որ մի ժամանակ տեղի էր ունեցել Օգոստինոսի և Պելագիոսի միջև մարդկային գործերի արժեքի գնահատության պատճառով: Բայց այժմ փոխված են այն մոտիվները, որոնք վեճի պատճառ էին դարձել, և այդ բանը բնորոշ է ժամանակի համար: Օգոստինոսը ուզում էր փրկությունը լոկ աստվածաին շնորհի գործունեությանը վերագրել, մինչ Պելագիոսը աստվածահաճո գործերին գոնե այն չափով մասնակցություն էր ուզում շնորհել, որ նրանք էլ գործակցում են փրկության պրոցեսի առաջացմանը: Այժմ թովմասականությունը տրամադիր է այդ վերջինը ընդունել, բայց բոլորովին մերժում է Դունս Սկոտուսի այն ավելի առաջ գնացող պահանջը, թե պետք է մարդկային ազատ կամքը համարել թե՛ շնորհի և թե՛ դատապարտության պատճառը: Այդպիսով, Օգոստինոսի նախասահմանության (պրեդեստինացիայի) վարդապետության հանդեպ թովմասը չափավոր դետերմինիզմի

ներկայացուցիչն է, իսկ Սկոտուսը բացարձակ ինդետերմինիզմ (=կամքի ազատություն) է քարոզում: Այդ պատճառով էլ թովմասականների և սկոտիստների պայքարը ըստ էության մի վեճ է դառնում կամքի ազատության մասին, որի ժամանակ նկատելի է, թե ինչպես դետերմինիստականը հառաջանում է դեպի ծայրահեղ հետևություններ, որոնց հասնելուց հետո նա այլևս չի կարող համաձայնել եկեղեցական վարդապետությանը՝ աստվածային շնորհի ընտրության մասին: Դրա վրա ավելանում է նաև այն հանգամանքը, որ այս նոր վեճի ժամանակ դերերը փոխված են հավատո մոտիվների նկատմամբ: Պելագիոսը ռացիոնալիստական մտածողության ներկայացուցիչն էր Օգոստինոսի գուտ միստիկական հայեցակետի և եկեղեցական ուղղափառ վարդապետության դեմ, այժմ ընդհակառակը՝ սքոլաստիկայի իշխան թովմասը ռացիոնալական ուղղությունն է պաշտպանում, այնինչ Սկոտուսը միստիկայի պաշտպանն է: Ինդետերմինիստական վարդապետությունն ուսուցանում է, որ փրկությունն առաջ է գալիս սեփական կամքի սրբացումով, և դրանով պարզ կերպով ցույց է տալիս, որ հավատացող ներքին տրամադրությունը այլևս չի կարողանում իր մխիթարությունը գտնել բացարձակ կախման զգացմունքի մեջ, ինչպես առաջ էր, այլ նրա համար հավատո մի անհրաժեշտ կարիք է դարձել իր սեփական գործունեության վրա վստահություն ձեռք բերելը:

Սկոտուսի վարդապետության մեջ անհատական կամքը մարդու մի ազատ, անկախ գործ է համարվում. դրանով նա առանձին արժեք ու նշանակություն է տալիս մասնավորին ու թանձրացյալին, որը փոխանցելով ընդհանուր աշխարհայացքի մեջ, բոլորովին հակառակ կլինի և անհամաձայն այն չափավոր ռեալիզմին, որի ներկայացուցիչներն էին ԺԳ դարու մեծ եկեղեցականները: Որովհետև հենց որ մարդկային բնության ըմբռնումը փոխանցենք արտաքին բնության վրա, կամքի յուրաքանչյուր առանձին գործունեությանը կհամապատասխանի կոնկրետ իրողությունը, առանձին իրը: Եթե այնտեղ իրականություն է միայն մասնավորը, նույնն է նաև այստեղ: Իսկ եթե միայն առանձին իրն է ռեալ, այն ժամանակ գաղափարները իրական բաներ չեն, այլ միայն սուբյեկտիվ մտքի ստեղծագործություններ, անուններ, որոնցով մենք արտահայտում ենք մի շարք իրեր: Այսպիսով Սքոլաստիկայի երրորդ շրջանում սկոտիստական ինդետերմինիզմից առաջ է գալիս նոմինալիզմը, որ ԺԴ դարու սկզբից սկսած հետզհետե տիրող աշխարհայացք է դառնում, ամենազլխավոր աշխարհայացք ունենալով այս շրջանի ամենանշանավոր սքոլաստիկոս Ուիլյամ Օկամին (+ հավանորեն 1349 թվին): Մինչև այժմ երկու նշանավոր օրդեններն էին, որ պայքար են մղում միմյանց դեմ - դոմինիկյաններն ու ֆրանցիսկյանները: Սկոտուսն ու Օկամը վերջին օրդենին պատկանելով և շոտլանդացի կամ անգլիացի լինելով, դեմ են ելնում դոմինիկյան թովմաս Աքվինացուն ու նրա դպրոցին, որ իշխում էր Իտալիայում և մնացյալն Եվրոպայում:

Այդպիսով, միևնույն ժամանակ նկատելի են դառնում ազգային տարբերությունները և գիտության մեջ էլ բացվում է նոր ժամանակի արշալույսը, որի մեջ տարբեր ազգերի առանձնահատկությունները շատ ավելի մեծ դեր են կատարում, քան թե գոնե գիտության տեսակետից մտավոր միություն կազմող միջնադարյան աշխարհում հնարավոր էր: Այդ մտքով անգլիական նոմինալիզմը` նոր փիլիսոփայության սկզբում հանդես եկած անգլիական փորձնական փիլիսոփայության նախակարապետն է: Նոմինալիզմը` գլխավոր ուշադրությունը կենտրոնացնելով մասնավորի և փորձնականի վրա,- որը և որոշում է նրա դիրքը սքոլաստիկայի վեճերի մեջ` ընդհանուր գաղափարների մասին,- բնականաբար չէր կարող այլևս այնպես վերաբերվել հավատո դավանանքներին, ինչպես նախկին հասկացողությունները: Այդ խնդրում արդեն ժԳ դարու կլասիկական սքոլաստիկական մի քայլ հետ էր գնացել` որ անհողդոդ կերպով գործ էր ածում օնտոլոգիական մեթոդը:

Օրինակ, թեև Թովմաս Աքվինացին էլ այն համոզմունքն ունի, թե ընդհանուր կրոնական ճշմարտությունները, որոնք կան բոլոր ազգերի կրոնների մեջ-Աստծու գոյությունն ու հոգու անմահությունը-ապացուցելի են լոկ իրենց բնությունից, բայց նա գերադասություն է տալիս ավելի կոսմոլոգիական, քան թե օնտոլոգիական ապացույցին, որ և բնորոշ է նրա ժամանակի բնագիտական ուղղությանը հակված մտքի համար: Իսկ հատուկ քրիստոնեական հավատո ուսմունքները-երրորդությունը, Քրիստոսի երկու բնությունների միությունը, մարդեղությունն ու փրկությունը-վստահելի են և ապահով ոչ թե գաղափարների միջոցով, այլ իբրև հայտնագործված ճշմարտություններ, և հենց իբրև այդպիսիք էլ ապացուցում են քրիստոնեական կրոնի ավելի բարձր արժեքը: Այստեղից մինչև Օկամի ընդունած նոմինալիզմի տեսակետը միայն մի չնչին քայլ է մնում, որի ըմբռնմամբ հավատի վերաբերյալ բոլոր բովանդակությունները-մինչև անգամ Աստծու և անմահության հավատը-անհասանելի են մարդկային ճանաչողությանն ու մտքին: Սրանով նոմինալիզմը վերահաստատում է ըստ էության պատրիստական շրջանի ըմբռնումը հավատո ճշմարտությունների զուտ միստիկական բնութ ունենալու մասին,-իհարկե ոչ անփոփող ձևով: Ժամանակի մեծ փոփոխությունը այստեղ արտահայտություն է գտնում նրանով, որ հավատի նկատմամբ մեծ ազդեցություն է սկսում ձեռք բերել նոմինալիստների ինդետերմինիզմը և շեշտում է դրա հետ կապված` հավատո մոտիվների սուբյեկտիվ լինելը, իսկ գիտության նկատմամբ ընդունվում է, որ աշխարհիկ գիտությունը մի անկախ, հավատից բաժանված գոյություն ունենալու իրավունք ունի: Հավատի մեջ միստիկական, գիտության մեջ էմպիրիկական և եթե պետք լինի նաև սկեպտիկական,-ահա սքոլաստիկական նոմինալիզմի կնճռոտ խնդիրները լուծելու լոզունգը: Դրանով բոլորովին բաժանվում են հավատի և գիտության սահմանները, և այդ բաժանումը շատ ավելի սրվում է նրանով, որ երկուսի համար բոլորովին տարբեր սկզբունքներ են գործադրվում,

հավաստի մեջ իշխում է բացարձակ վստահությունը, որ ամենևին չի շփոթվում հավաստի ճշմարտությունների անըմբռնելի լինելուց, ընդհակառակն՝ հենց այդ հատկության մեջ է տեսնում նրանց ճշմարտության հավաստիքն ու գրավականը, իսկ գիտության մեջ պետք է իշխի գգուշավոր կասկածը, որ միայն այն է վստահելի ընդունում, ինչ որ դիմագել է փորձին ու քննադատությանը:

Հավաստի ու գիտության սահմանները բաժանելով՝ նոմինալիզմը վերացրեց այն նախադրյալը, որ մինչև այդ ժամանակ եղել էր սքոլաստիկայի կենսական սկզբունքը: Հավաստի ճշմարտությունները անըմբռնելի հայտարարելով՝ նոմինալիզմը անկարելի է համարում նաև քրիստոնեական հավաստի բովանդակությունը գիտական սիստեմի վերածելը, որ սքոլաստիկայի միակ նպատակն էր: Դրա փոխարեն նա ազատ ճանապարհ է հարթում աշխարհիկ գիտության առաջ և ինքն արդեն որոշ ուղղություն է բռնում նրա մեջ: Այսպիսով, նոմինալիզմը մի կողմից ավարտելով միջնադարյան փիլիսոփայության զարգացումը, մյուս կողմից բաց է անում նոր փիլիսոփայության ուղին: Իսկ սքոլաստիկական փիլիսոփայությունն ինքը դրանով, իհարկե, վերջնականապես և բոլորովին չանհետացավ: Հետագա դարերում քանի նա գլուխ է բարձրացնում, լինում է միշտ հակառակ նոմինալիզմի և հիմնված գլխավորապես Թովմաս Աքվինացու համակարգի վրա: Այդ հանգամանքի շնորհիվ է, որ Թովմաս Աքվինացու փիլիսոփայությունը այսօր էլ պաշտոնապես ճանաչված է որպես կաթոլիկ եկեղեցու ուղղափառ փիլիսոփայություն:

Ավարտելով միջնադարյան փիլիսոփայության զարգացման համառոտ նկարագրությունը, անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել դեպի նոր փիլիսոփայություն անցնող երևույթների և կուլտուրական պայմանների մասին: Անցման շրջանի մի շարք երևույթներ արդեն նշեցինք վերևում. դրա վրա պետք է ավելացնել, որ նոր փիլիսոփայության առաջացումն ու զարգացումը նախապատրաստվում է առանձնապես երկու կարևոր դեպքերում: Դրանցից առաջինը՝ հունական կլասիկական շրջանի գեղարվեստի ու գիտության վերակենդանացումն է, երկրորդը՝ եկեղեցական բարեփոխումը:

Արդեն ԺԴ դարու սկզբից գեղարվեստն սկսել էր հին աշխարհի օրինակների համաձայն կենդանանալ և առաջադիմել. իսկ ԺԵ դարու կեսից արևմտյան աշխարհն սկսում է ծանոթանալ հունական կլասիկական հնության և նրա մեծ հիշատակարանների հետ: Սկսվում է մի հաղթական առաջընթաց հունական լեզվի, բանաստեղծների ու մտածողների Իտալիայից դեպի ամբողջ Արևմտյան Եվրոպա: Փիլիսոփաների մեջ հատկապես Պլատոնն է, որ մի կողմից՝ իր գեղարվեստական արձակով, մյուս կողմից՝ իր իդեաների ուսմունքի բարձրաթիչ համարձակությամբ զորեղ կերպով դեպի իրեն է ձգում ժամանակի մարդկանց, որոնք նրան դնում են վանականների սքոլաստիկական գիտության շնորհիվ կանոնական իրավունք ստացած

Արիստոտելի հանդեպ և մերժում վերջինի հեղինակությունը՝ բոլորովին հեռանալով նրանից: Այդպիսով, գիտական վերածնությունը կամ ռենեսանսն սկսվում է մի խանդավառ պլատոնականությամբ, որը բացի դրանից առանց քննության նորպլատոնական զանազան ուսմունքներ սկսում են ներմուծել Պլատոնի վարդապետության մեջ, կամ Պլատոնի մտքերը բացատրում է նորպլատոնականության համաձայն, որովհետև վերջինիս մտածողության մեջ էլ, հար և նման վերածնության շրջանին, ավելի երևակայությունն է իշխում, քան թե բանականությունը: Այս հնագույն պլատոնականության առաջին կենտրոնը դառնում է Ֆլորենցիայի պլատոնական ճեմարանը, որ ժԵ դարու կեսին հիմնում են միմյանց հետ միացած հունական աստվածաբաններն ու իտալական գիտնականները: ԺԶ դարի սկզբից, սակայն, դրությունը փոքր-ինչ փոխվում է, որովհետև կլասիկական շրջանի ուսումնասիրության տարածվելու հետ միասին՝ զորանում է նաև նրա ազդեցությունը, և առաջ է գալիս մի ավելի լայնասիրտ տրամադրություն, որ նման ոգևորությամբ բովանդակել է կամենում ոչ միայն հույները և հռովմեացիների ամբողջ փիլիսոփայական գրականությունը, այլև հին Արևելքը, որչափ որ այն մատչելի կարող էր լինել այս շրջանի գիտության համար. մանավանդ որ, ավանդության համաձայն այդ դժվար մատչելի աշխարհը համարվում էր խորհրդավոր գաղտնի ուսմունքների հայրենիքը և դրա համար էլ առանձին կախարդական գրավչություն ուներ բոլորի համար: Բայց այս պլատոնիզմն ու նրան հետևող վերածնության շրջանի էկլեկտիկականությունը դրական նշանակություն չունեն փիլիսոփայության զարգացման համար: Այնուամենայնիվ շատ մեծ է նրանց նշանակությունը իբրև նոր փիլիսոփայության ուղին նախապատրաստողներ: Նրանք ոչ միայն բոլորովին խորտակում են արդեն իսկ անցած սքոլաստիկական գիտության մեջ, այլև - որ ամենից կարևորն է - հեղինակության կապանքներից ազատում են մարդկանց միտքը և նրանց ցույց են տալիս անկախ մտածողության օրինակը: Առհասարակ բոլոր առաջ եկած նոր ուղղությունների մեջ նկատվում է մի ընդհանուր գիծ, ամենքն էլ աշխատում են ազատվել հների հեղինակությունից և շեշտում են սեփական դիտողության և անկանխակալ մտածողության անկախ իրավունքը ամեն տեսակ ավանդության և հեղինակության դեմ: Մենք տեսանք, որ նոր սկսվող հումանիզմի պլատոնականությունը իսկապես միայն սքոլաստիկայի կողմից սուրբ ու անհերքելի ճանաչված Արիստոտելի հեղինակությունը փոխում է մի ուրիշ հեղինակության հետ, որն ավելի համանման է իր մտածողության եղանակին: Սակայն Արիստոտելի հեղինակությունը տապալելն էլ ըստ ինքյան բավական խոշոր մի ծառայություն էր, քանի որ դրանով պարզվում էր, որ կարելի է նույնպիսի քննադատության ենթարկել նաև նոր հեղինակությանը՝ Պլատոնին: Այդ պատճառով էլ՝ որչափ և քննադատությունից զուրկ է այս շրջանում առաջ եկած և հաճախ պաշտպանված այն կարծիքը, թե հին ժամանակների բոլոր իմաստունները հավասար չափով լավ են և բոլորն էլ իսկապես միևնույն ճշմարտությունն են

ուսուցանում, միայն տարբեր ձևերով, այնուամենայնիվ այդ բանն անգամ կարևոր նշանակություն է ստանում, որովհետև հենց որ մարդիկ տեսնեն և զգային, որ հին ժամանակների իմաստունների ուսմունքների միջև տարբերություններ կան, բնականաբար պետք է քննության ենթարկելին ավանդական վարդապետությունները և անկախ մտածողության վարժվելին: Դրանով հետզհետե խորտակվում է այն մտավոր միությունը, որ առաջ է բերել քրիստոնեական եկեղեցին միջնադարում և սկսում են մեծ թափով զարգանալ առանձնահատկությունները թե՛ անհատների, և թե՛ ազգերի մեջ: Միջնադարյան միացուցիչ կենտրոնացումը սկսում է տեղի տալ ապակենտրոնացման առաջ, որի մեջ կյանքն ավելի հարուստ և բազմաբովանդակ է դառնում: Այդ բանը երևում է մինչև իսկ արտաքին հանգամանքներից. Հռոմն ու Փարիզը դադարում են այլևս ամբողջ արևմտյան քաղաքակրթության գերիշխող կենտրոնները լինելուց, ինչպես և լատիներենն այլևս դադարում է ամբողջ կրթված աշխարհի միակ լեզուն լինելուց: Գլուխ են բարձրացնում Օքսֆորդը (Ֆրանցիսկյանների կենտրոնը), Վիեննան, Հայդելբերգը, Պրագան և առաջնորդող ազգերի լեզուներն էլ լատիներենին հավասար պատիվ են պահանջում:

Այս բոլորի վրա մի կողմից էլ ավելանում է տպագրության գյուտը, որի շնորհիվ գրական կյանքն այնպիսի չափեր է ընդունում և այնպիսի ճյուղավորված շարժում դառնում, որ բնականաբար ոչնչանում են հին, նեղ շրջանակ ունեցող դպրոցներն իրենց սերնդե սերունդ ավանդվող գիտությամբ: Այդպիսով, փիլիսոփայությունը վերածնության շրջանում կորցնում է նաև իր դասակարգային բնավորությունը և իր ամենամեծ արտահայտություններով դառնում է անհատների ազատ գործունեություն: Գիտական քննության միակ նպատակն էլ կրկին դառնում է իրականության ճանաչողությունը, ուրեմն՝ սկսում է դեր խաղալ նորից զուտ տեսական հետաքրքրությունը: Եվ ինչպես որ հունական մտածողության սկզբում, այնպես էլ այժմ, ամենից ավելի ուժեղ թափով հանդես է գալիս ձգտումն դեպի բնագիտություն և բնության իսկական ճանաչողություն, առանց կողմնակի հետաքրքրությունների: Հիմնական ձգտումների այդպիսի նմանությունը ստիպում է նոր ժամանակի ոգուն՝ նորը որոնելիս ամենից առաջ կանգ առնել հնի վրա, և այդ պատճառով էլ, հակառակ միջնադարյան բոլոր ավանդությունների, ամենայն եռանդով նորոգվում են հունական փիլիսոփայության համադրությունները: Բայց այդ վերադարձը դեպի հինը միայն միջոց է դառնում միջնադարյանից ազատվելու և դեպի նորը ճանապարհ բաց անելու համար:

Կլասիկական աշխարհի գիտության վերանորոգության հետ միասին՝ մարդկային միտքը կաշկանդումներից ազատող մի այլ զորություն էլ է հանդես գալիս այս շրջանում, դա եկեղեցական բարեփոխության շարժումն է: Ինչպես որ հումանիստական շարժման բնորոշ գիծը հին լեզուների և գրականության ուսումնասիրության վերակենդանացումն է, այնպես էլ այստեղ առանձնապես աչքի է ընկնում այն, որ բարեփոխիչները ամեն ինչ հիմնել են կամենում քրիստոնեական հավատի

ամենասկզբնական աղբյուրների վրա, ուրեմն՝ մի տեսակ վերադարձ են քարոզում դեպի Նոր կտակարան և նախնական քրիստոնեություն: Բոլորովին նման հումանիզմի առաջին շրջանի պլատոնականության, եկեղեցական ռեֆորմացիան էլ մի հեղինակությունը փոխում է լույս մյուսով, երբ շեշտում է Սուրբ գրքի հեղինակությունը՝ ավանդության և եկեղեցական նվիրապետության ամեն ինչ այլափոխող ճնշման հանդեպ: Բայց որովհետև սկզբից ևեթ գործնական միտումներն ուղղված էին եկեղեցական կյանքի մեջ առաջ եկած զեղծումների, կրոնական կյանքի մակերևութանալու և եկեղեցու աշխարհականացման դեմ, որի հակառակ շեշտվում էր քրիստոնյայի զուտ ներքին հարաբերությունը Աստծու հետ, այդ պատճառով եկեղեցական ռեֆորմացին էլ մտքերն ազատող մի զորություն է դառնում, որ հոսոզիտե գիտությանն էլ ազատ ասպարեզ է տալիս՝ ժամանակի ընթացքում նրանից այլևս չպահանջվելով կապված մնալ հավատի որոշ դավանանքների հետ և այդ սահմաններից դուրս չգալ:

Այդպիսով, հույն փիլիսոփայության վերակենդանացումը նոր ժամանակի մարդկանց ցույց է տալիս այն բազմազան ճանապարհները, որոնցով ընթացել է մարդկային միտքը ընդհանուր պրոբլեմները լուծելու ժամանակ: Դրանով հին փիլիսոփայության ծանոթությունը մի տեսակ նախապատրաստություն է դառնում նորագույն մտածողության զարգացման համար: Իսկ ռեֆորմացիան՝ խլելով հոգևորականության ձեռքից գիտությունը մշակելու արտոնությունը, որ մինչև այդ ժամանակ նրանց ձեռքին էր, միջոց է տալիս, որ փիլիսոփայությունը աշխարհիկ գիտություն դառնա:

Նոր ժամանակը հակադրության մեջ ընկնելով միջնադարյան գիտության հետ, զգուշությամբ աշխատում է խույս տալ աստվածաբանական հարցերից, որպեսզի դրա փոխարեն կարողանա աշխարհիկ գիտության ասպարեզում շատ ավելի մեծ անկախություն ձեռք բերել:

Այդ երկու մոմենտները՝ մի կողմից հին փիլիսոփայության օրինակելի ազդեցությունը իբրև ամբողջ մարդկային իմացությունը բովանդակող և տիեզերական ու մարդկային պրոբլեմները միացուցիչ տեսակետներով բացատրող գիտություն, մյուս կողմից՝ հումանիզմի ու ռեֆորմացիայի միացյալ ջանքերով փիլիսոփայությունն աշխարհիկ գիտություն դարձնելը սկզբից ևեթ որոշող դեր են կատարում նոր փիլիսոփայության զարգացման մեջ: Երկուսը միացած՝ պատճառ են դառնում, որ մի երրորդ զորություն սկսի ամենից ավելի մեծ ազդեցություն գործել փիլիսոփայության զարգացման վրա: Այդ երրորդ զորությունը բնագիտությունն է, որ ամենից առաջ կարողացավ իրեն ազատել թե՛ եկեղեցու ղեկավարությունից, և թե՛ հին փիլիսոփայության հեղինակությունից: Նոր փիլիսոփայությունը բնագիտության առաջնորդությամբ է ձեռնարկում առաջին անկախ փորձերը: Եվ շատ բնական է, որ բնագիտությունն ամենից ավելի ազդեցություն գործեր փիլիսոփայության զարգացման վրա, քանի որ նա ամենից ավելի է հեռանում մինչև այն ժամանակ եղած հին աշխարհի

և Միջնադարի գիտությունից և միևնույն ժամանակ այս շրջանում են տեղի ունենում մեծ բնագիտական գյուտերը, աշխարհագրական հորիզոնի ընդլայնումը, Կոպերնիկոսի նոր տիեզերական սիստեմը, Գալիլեյի, Կեպլերի և ուրիշների նշանավոր ֆիզիկական հետազոտությունները և մաթեմատիկական մեթոդների զարգացումը: Մինչ մի կողմում մաթեմատիկական աշխատում է փիլիսոփայությունը դարձնել մի վերացական, զուտ ռացիոնալ սկզբունքներով առաջնորդվող գիտություն, մյուս կողմը կանգնած է բնության փորձնական, էմպիրիկական հետազոտությունը, որի սկզբունքները յուրացնել է ձգտում փիլիսոփայական մտածողությունը:

Այսպես բացվեց ուղին մարդկային ազատ ու անկախ, ամեն տեսակ կաշկանդումներից զերծ մտածողության առաջ և սկսվեց նոր փիլիսոփայության հսկայաքայլ զարգացումը: